

ՊԼԱՏՈՆ

ԵՐԿԵՐ
ԶՈՐՍ ՀԱՏՈՐՈՎ

ՀԱՏՈՐ ԻՈՍ

ՄԱՐԳԻՄ ԿԱԶԵՆՑ - ՓՐԻՆՏԻՆՈՆ

1915.info

‘ԻՄԱՑՈՒԹՅՈՒՆ’ ԳՐԱԴԱՐԱՆ

փիլիսոփայություն



Փրինքինքն

ΠΛΑΤΩΝ

ΦΙΛΗΒΟΣ ΤΙΜΑΙΟΣ ΙΩΝ

Αρμενική μετάφρασις από τα
Ελληνικά και σημειώματα
ΣΕΡΓΕΙ ΣΤΕΦΑΝΙΑΝ

ΕΡΕΒΑΝ 2011
ΣΑΡΚΙΣ ΧΑΤΣΕΝΤΣ • ΠΡΙΝΤΙΝΦΟ

ՊԼԱՏՈՆ

ԵՐԿԵՐ ՉՈՐՍ ՀԱՏՈՐՈՎ

Հատոր III

Հին հունարենից թարգմանեց և
ժամոթագրությունները գրեց՝
ՍԵՐԳԵՅ ԱՏԵՓԱՆՅԱՆ

ԵՐԵՎԱՆ 2011

ՍԱՐԳԻՍ ԽԱՉԵՆՑ • ՓՐԻՆԹԻՆՅՈՒՆ



ՖԻԼԵՐՈՍ

ՍՈԿՐԱՏԵՍ, ՊՐՈՏԱՐՔՈՍ, ՖԻԼԵՐՈՍ

Սոկրատես. Տե՛ս, Պրոտարքոս, թե ինչ դատողություն 11
ես հիմա ցանկանում ընդունել Ֆիլեբոսից և մեր դատողու-
թյուններից որ մեկին ես ուզում առարկել, եթե այն սրտովդ
չլինի: Կուզե՞ս միասին ամփոփենք դրանցից յուրաքանչյուրը:

Պրոտարքոս. Իհարկե:

b

Սոկրատես. Ֆիլեբոսն ասում է, թե բոլոր կենդանի էակ-
ների համար բարիք են ուրախությունը, հաճույքը, վայելքը և
բոլոր այն բաները, որ ազգակից են այս սեռին¹: Իսկ ըստ մեր
առարկության այդպես չէ, և բարիք են խոհեմությունը, միտքը,
հիշողությունը և սրանց ազգակից ամեն ինչ՝ ճիշտ կարծիքը և
ճշմարիտ դատողությունները, որոնք հաճույքից ավելի մեծ և
նախընտրելի բարիք են բոլոր նրանց համար, ովքեր կարող c
են հասու լինել դրանց: Նրանց համար, ովքեր հաղորդակից
են նման բաներին,– այժմ ապրողներին և նրանց, որ պիտի
ապրեն,– ավելի օգտակար ոչինչ չկա: Մի՞թե ես ու դու սա
չէինք ասում, Ֆիլեբոս:

Ֆիլեբոս. Հենց դա, Սոկրատես:

Սոկրատես. Իսկ դու, Պրոտարքոս, ընդունու՞մ ես փաս-
տարկը:

Պրոտարքոս. Պետք է ընդունենմ, քանի որ մեր գեղե-
ցիկ Ֆիլեբոսը տեղի տվեց:

Սոկրատես. Իսկ հարկավոր չէ՞ արդյոք ամեն գնով հաս- d
նել նշված պնդումների ճշմարտությանը:

Պրոտարքոս. Իհարկե հարկավոր է:

Սուկրատես. Ուրեմն համաձայնենք նաև հետևյալի շուրջ:

Պրոտարքոս. Ինչի՞:

Սուկրատես. Մեզանից յուրաքանչյուրը կփորձի այժմ ցույց տալ հոգու այնպիսի վիճակ և դրություն, որոնք կարող են երջանիկ դարձնել բոլոր մարդկանց կյանքը: Ի՞նչ կասես:

Պրոտարքոս. Թող այդպես լինի:

Սուկրատես. Այդ դեպքում գործի անցեք և ցույց տվեք երջանկության վիճակը, իսկ մենք ցույց կտանք խոհեմության վիճակը:

Պրոտարքոս. Շատ լավ:

- e** **Սուկրատես.** Իսկ եթե հանկարծ ի հայտ գա սրանցից առավել բարձր բան և ավելի ազգակից լինի հաճույքին, մենք երկուսս էլ վստահորեն տեղի կտանք և ո՞ր կյանքը կընտրենք:
- 12** **Եվ չի՞ հաղթի արդյոք հաճույքների մեջ անցնող կյանքը խոհեմ կյանքին:**

Պրոտարքոս. Կհաղթի:

Սուկրատես. Իսկ եթե այն ազգակից է խոհեմությանը, չի՞ հաղթի խոհեմությունը հաճույքին և չի՞ պարտվի հաճույքը: Կհամաձայնե՞նք սրան, թե՞ ոչ:

Պրոտարքոս. Կարծում եմ, կհամաձայնենք:

Սուկրատես. Իսկ Ֆիլեբոսն ի՞նչ է կարծում: Ի՞նչ կասես:

Ֆիլեբոս. Ինձ թվում է և միշտ էլ թվալու է, որ բոլոր դեպքերում կհաղթի հաճույքը: Բայց դու, Պրոտարքոս, ինքդ գիտես:

- b** **Պրոտարքոս.** Խոսքը մեզ տալով, ո՞վ Ֆիլեբոս, դու այլևս չես կարող համաձայնել կամ չհամաձայնել Սուկրատեսին:

Ֆիլեբոս. Ծիշտ ես ասում: Ես մաքրագործող զոհաբերություն եմ անում ու վկայակոչում հենց դիցուհուն:

Պրոտարքոս. Եվ մենք հաստատում ենք քո խոսքերը: Սուկրատես, փորձենք ավարտին հասցնել այն, ինչ հետևում է այստեղից, անկախ այն բանից՝ Ֆիլեբոսի սրտով կլինի դա, թե ոչ:

Սոկրատես. Փորձենք, և սկսենք հենց դիցուհուց, որը Ֆիլերոսի ասելով Ափրոդիտեն է և որի իսկական անունն է Հաճույք³:

Պրոտարքոս. Շատ ճիշտ է:

Սոկրատես. Աստվածների անունները, ո՛վ Պրոտարքոս, ինձ միշտ անմարդկային երկյուղ են ներշնչում՝ ավելի խոր, քան ամենամեծ սարսափը: Այժմ ես անվանում եմ Ափրոդիտեին այնպես, ինչպես իրեն է հաճելի: Ինչ վերաբերում է հաճույքին, ինձ հայտնի է, որ այն բազմազան է: Եվ քանի որ ցանկացանք սկսել դրանից, մենք պիտի քննենք դրա բնությունը: Սովորաբար լսում ենք, որ այն մեկն է, սակայն ընդունում է բազմապիսի ձևեր, որոնք ինչ-որ կերպ տարբերվում են միմյանցից: Բայց տե՛ս, մենք ասում ենք, որ հաճույք է վայելում, մի կողմից՝ անժուժկալ մարդը, իսկ մյուս կողմից՝ խոհեմը, որը հաճույք է ստանում իր խոհեմությունից: Հաճույք է վայելում նաև անմիտը, որը լեցուն է անմիտ կարծիքներով ու հույսերով, և հաճույք է ստանում նաև բանականը, որ հաճույք է ստանում խորհելուց: Մի՞թե արդարացիորեն անմիտ չէ նա, ով ասում է, թե հաճույքի այդ երկու տեսակները նման են միմյանց⁴:

Պրոտարքոս. Իհարկե, այդ հաճույքները ծագում են հակադիր բաներից, ո՛վ Սոկրատես, սակայն հակադիր չեն միմյանց: Քանզի ինչպե՞ս կարող է որևէ հաճույք, լինելով ինքնանույնական, ամենից շատ նման չլինել հաճույքին:

Սոկրատես. Բայց չէ՞ որ, բարեկամս, գույնը նույնպես նման է գույնին: Եվ եթե յուրաքանչյուր գույն գույն է, ապա բոլոր գույները նույնն են, մինչդեռ բոլորս գիտենք, որ սևը տարբերվում է սպիտակից և լիովին հակադիր է նրան: Որևէ տիպար նույնպես նման է տիպարին, քանի որ բոլոր տիպարները մեկ սեռից են, սակայն սրա որոշ մասեր հակադիր են մյուսներին, որոշ մասեր էլ ունեն հազարավոր տարբերակներ: Նույնը կարելի է ասել նաև շատ ուրիշ բաների մասին: Ահա ինչու մի՛ հավատա պնդմանը, որը ի մի է բերում բոլոր հակադրությունները: Վախենամ, մենք չենք գտնի հաճույքներ, որոնք հակադիր չլինեն ուրիշ հաճույքների:

Պրոտարքոս. Գուցե: Սակայն ինչու՞ դա պիտի վնասի մեր խորհրդածությանը:

Սուկրատես. Որովհետև, կասենք մենք, դու նույն անունով ես կոչում տարբեր բաները: Ասում ես, թե հաճելի ամեն **b** ինչ բարիք է: Ոչ ոք չի հակաճառի, որ հաճելին հաճելի է, սակայն, ինչպես նշեցինք, հաճելիի մեջ շատ բան չարիք է և շատ բան՝ բարիք: Բայց դու դրանք բոլորը բարիք ես կոչում, թեպետ իհարկե կհամաձայնես, որ դրանք նման չեն իրար, եթե որևէ մեկը քեզ համոզի փաստարկներով: Ի՞նչն է ուրեմն նույնական հոռի և լավ հաճույքների մեջ, որ թույլ է տալիս քեզ դրանք բոլորն էլ բարիք կոչել:

Պրոտարքոս. Այդ ի՞նչ ես ասում, Սուկրատես: Մի՞թե կարծում ես, թե հաճույքը բարիք համարողը կհամաձայնի **c** սրան և կհանդուրժի քո այն փաստարկը, իբր որոշ հաճույքներ լավն են, իսկ որոշ հաճույքներ էլ՝ վատը:

Սուկրատես. Բայց քո ասելով դրանք նման չեն մեկը մյուսին, իսկ որոշ հաճույքներ նույնիսկ հակադիր են միմյանց:

Պրոտարքոս. Ոչ, քանի որ հաճույք են:

Սուկրատես. Նորից վերադառնում ենք նույն փաստարկին, ո՛վ Պրոտարքոս, համաձայն որի մի հաճույքը չի տարբերվում մյուսից և բոլոր հաճույքները նման են: Իսկ քիչ առաջ բերված օրինակները բնավ չազդեցին մեզ վրա, այնպես որ կհավատանք քեզ և կշարունակենք հարցեր տալ, ինչպես **d** կատարյալ տգետներ և խորհրդածություններում անփորձ սկսնակներ:

Պրոտարքոս. Ի՞նչ նկատի ունես:

Սուկրատես. Այն, որ եթե քեզ նմանակելով և պաշտպանվելով, ես հանդգնեմ ասել, թե ամենից քիչ նմանը ամենամանն է, կասեմ նույնը, ինչ դու ես ասում, և մենք հարկ եղածից ավելի միամիտ կլինենք, իսկ մեր խորհրդածությունը, դուրս պրծնելով, կփախչի: Դարձյալ ետ բերենք այն, գուցե այդ դեպքում ինչ-որ կերպ համաձայնության գանք նմանության **e** շուրջ⁵:

Պրոտարքոս. Ասա, ինչպե՞ս:

Սուկրատես. Դիցուք, Պրոտարքոս, դու կրկին հարցնում ես ինձ:

Պրոտարքոս. Ի՞նչ եմ հարցնում:

Սուկրատես. Խոհեմությունը, իմացությունը, խելքը և բոլոր նման բաները, որոնք ես ի սկզբանե բարիք ճանաչեցի, երբ ինձ հարցրին, թե ինչ է բարիքը, մի՞թե նույն բախտին չեն արժանանա, ինչ քո խորհրդածությունը:

Պրոտարքոս. Ինչպե՞ս:

Սուկրատես. Բոլոր իմացությունները կթվան բազում, իսկ որոշ իմացություններ՝ միմյանց ոչ նման: Կլինեն նաև այնպիսիք, որոնք հակադիր են միմյանց: Բայց մի՞թե ես արժանի կլինեի այժմ վարելու այս զրույցը, եթե դրանից վախենալով ասեի, թե չկա իմացություն, որ նման չէ ուրիշ որևէ իմացության, ինչի հետևանքով խորհրդածությունը խույս կտար մեզնից, ինչպես կորած պատմությունը⁶, իսկ մենք կփրկվեինք ինչ-որ անհեթեթության շնորհիվ:

14

Պրոտարքոս. Դա չպետք է տեղի ունենա, և սակայն, հարկ է փրկվել: Ինձ դուր է գալիս, որ իմ և քո փաստարկները հավասար պայմաններում են: Թո՛ղ լինեն բազում և իրար ոչ նման հաճույքներ և բազում ու տարբեր իմացություններ:

Սուկրատես. Ուրեմն, Պրոտարքոս, չթաքցնենք իմ և քո փաստարկի տարբերությունները, այլ մեջտեղ հանելով՝ հանդգնենք բացահայտել, թե ինչը պետք է կոչել բարիք՝ հաճույքը, խոհեմությունը, թե՞ երրորդ ինչ-որ բան: Չէ՞ որ մենք հիմա չենք մրցում, որպեսզի հաղթի իմ կամ քո փաստարկը, այլ երկուսս էլ պետք է պայքարենք հանուն ճշմարտության⁷:

b

Պրոտարքոս. Այո, պետք է պայքարենք:

Սուկրատես. Արի փոխադարձ համաձայնությամբ ավելի ամուր դարձնենք հետևյալ փաստարկը:

c

Պրոտարքոս. Ի՞նչ փաստարկ:

Սուկրատես. Այն, որ բոլոր մարդկանց անհանգստություն է պատճառում՝ ոմանց կամովին, իսկ ոմանց՝ ակամա:

Պրոտարքոս. Ավելի հստակ խոսիր:

Սոկրատես. Նկատի ունեմ իր բնությամբ զարմանալի այն փաստարկը, որին քիչ առաջ դեմ առանք: Չէ՞ որ տարօրինակ կլիներ ասել, թե մեկը բազում է, իսկ բազումը՝ մեկ, և հեշտ է առարկել նրան, ով կառաջադրի այդ դրույթները:

Պրոտարքոս. Նկատի ունես այն դեպքը, երբ որևէ մեկն ասում է, թե ես՝ Պրոտարքոսս, բնությամբ լինելով մեկ՝ միա-
d ժամանակ նաև բազում եմ և այդ բազմաթիվ Պրոտարքոսներն իմ մեջ հակադիր են միմյանց, և պնդում է, թե միննույն Պրոտարքոսը և՛ մեծ է, և՛ փոքր, և՛ ծանր է, և՛ թեթև, և այդպես շարունակ:

Սոկրատես. Դու, Պրոտարքոս, խոսեցիր մեկին և բա-
զումին վերաբերող զարմանալի հատկությունների մասին⁸, իսկ
մենք ըստ էության համաձայնեցինք, որ այդ հարցերը պետք
չէ շոշափել. լինելով մանկական խաղ և լինելով դյուրին՝ դրանք
e միաժամանակ նաև մեծ խոչընդոտ են խորհրդածության հա-
մար: Պետք չէ մերժել նաև նրան, ով խորհրդածությամբ ան-
դամների և մասերի է բաժանում որևէ իր և համաձայնելով, որ
դրանք բոլորը մեկ իր են, այնուհետև ծիծաղելով սկսում է
ապացուցել հրեշավոր դրույթի անհրաժեշտությունը, ըստ որի
մեկը բազում և անսահման է, իսկ բազումը սոսկ մեկ է:

Պրոտարքոս. Բայց ուրիշ ի՞նչ ես ասում դու, Սոկրա-
տես, այդ դրույթի մասին, որ դեռ չի գտել տարածում և ճա-
նաչում:

15 **Սոկրատես.** Ես, զավակս, նկատի չունեմ այն դեպքը, երբ որևէ մեկը հաստատում է գոյացողի և կործանվողի միասնությունը, ինչպես ասացինք քիչ առաջ: Այդպիսի միասնությունը, ինչպես նշեցինք, համընդհանուր համաձայնությամբ մերժելու հարկ չկա: Սակայն եթե ոմն փորձում է առաջադրել մեկ մարդ, մեկ ցուլ, մեկ գեղեցկություն և մեկ բարիք, ապա այդպիսի և նման ուրիշ միասնությունների վերաբերյալ ծագում են բազում վեճեր:

Պրոտարքոս. Ինչպե՞ս:

Սուկրատես. Նախ, հարկավոր է արդյոք ընդունել, որ այդպիսի միասնություններ գոյություն ունեն: Այնուհետև, ինչպե՞ս են դրանք առանձին-առանձին լինելով մեկ և հավետ նույնական, լինելով անսկիզբ և անկործան՝ կազմում միասնություն, որը հարկ է համարել կա՛մ ցրված գոյացող և անսահման իրերի մեջ և դարձած բազում, կա՛մ էլ անջատված ինքն իրենից, մի բան, որ միանգամայն անհնար է թվում, քանի որ այդ դեպքում դրանցից յուրաքանչյուրը հայտնվում է միաժամանակ և՛ մեկի, և՛ բազումի մեջ: Այսպիսի մեկը և բազումը, այլ ոչ այն մյուսները, Պրոտարքոս, որոնց մասին խոսեցինք, կարող են լինել ամեն տեսակ դժվարությունների պատճառ, եթե մենք չենք գալիս որոշակի համաձայնության, և հակառակը՝ դժվարությունները վերանում են, եթե համաձայնում ենք:

Պրոտարքոս. Ուրեմն մենք պիտի ջանքեր գործադրենք հենց ա՞յս ուղղությամբ, Սուկրատես:

Սուկրատես. Ինձ այդպես է թվում:

Պրոտարքոս. Վստահ եղիր, որ մենք բոլորս այս հարցում համաձայն ենք քեզ հետ: Իսկ Ֆիլեթոսին գուցե ամենից ճիշտ կլիներ հարցեր չտալ և չչարժել այն, ինչը լավ է դրված⁹:

Սուկրատես. Շատ լավ: Ինչի՞ց սկսենք մեր կռիվը այս երկար ու բարդ վեճի շուրջ: Գուցե հետևյալի՞ց:

Պրոտարքոս. Ինչի՞ց:

Սուկրատես. Մենք պնդում ենք, որ մեկի և բազումի նույնությունը ծագում է խոսքի մեջ և ներկա է բոլոր քննություններում մշտապես՝ անցյալում և այժմ: Այն չի դադարի, ինչպես որ չի սկսվել հիմա, այլ, ինչպես կարծում եմ, մեր խոսքի անմահ և չժերացող հատկություն է: Առաջին անգամ դա ճաշակած երիտասարդը այն վայելում է որպես իմաստնության ինչ-որ գանձ, խանդավառվում է հաճույքից և կարողանում է ամեն կերպ շարժել իր խոսքը՝ մերթ պտտելով այն և խառնելով ամեն բան, մերթ դարձյալ արձակելով և բաժանելով մասերի, դժվարության մեջ գցելով առաջին հերթին և

ամենից շատ հենց իրեն, իսկ այնուհետև նաև զրուցակցին՝ լինի նա երիտասարդ, տարեց, թե հասակակից: Նա չի խնայում ո՛չ հորը, ո՛չ մորը, ո՛չ էլ ունկնդիրներից որևէ մեկին, առհասարակ ոչ մի կենդանի էակի՝ ո՛չ մարդու, ո՛չ գազանի, և անգամ բարբարոսները, եթե գտնվեր թարգմանիչ, չէին փրկվի նրանից:

16 Պրոտարքոս. Սոկրատես՝ս, մի՞թե չես տեսնում, որ մենք այստեղ մի ամբողջ բազմություն ենք և բոլորս էլ երիտասարդ ենք: Չե՞ս վախենում, որ Ֆիլեբոսի հետ միասին կհարձակվենք քեզ վրա, եթե շարունակես կշտամբել մեզ: Համենայն դեպս մենք հասկանում ենք, թե ինչ նկատի ունես, այնպես որ եթե գոյություն ունի որևէ հնարք վերացնելու մեր զրույցից այս **b** պառակտումը և նրա համար գտնելու ավելի լավ ճանապարհ, ջանք գործադրիր այդ ուղղությամբ, և մենք կհետևենք քեզ ուժերի ներածին չափով: Չե՞ որ մեր այս զրույցն անկարևոր չէ, ո՛վ Սոկրատես:

Սոկրատես. Իհարկե ոչ, զավակներս, եթե ձեզ դիմում է Ֆիլեբոսը: Չկա և չի լինի ավելի լավ ճանապարհ, քան այն մեկը, որի սիրահարն եմ ես և որը հաճախ խույս է տվել է ինձնից՝ միայնակ թողնելով դժվարության մեջ:

Պրոտարքոս. Ի՞նչ ճանապարհ է դա: Միայն թե ասա:

c Սոկրատես. Այն բավականին հեշտ է ցույց տալ, սակայն օգտվել նրանից՝ անչափ դժվար: Մինչդեռ այն ամենը, որ երբևէ հայտնի է դարձել շնորհիվ արվեստների, լույս աշխարհի է եկել հենց այդ ճանապարհով: Տես՝ս, թե ինչ եմ ասում:

Պրոտարքոս. Դե, խոսի՛ր:

Սոկրատես. Աստվածային շնորհը, ինչպես ինձ է թվում, աստվածները նետեցին մարդկանց ոմն Պրոմեթևսի ձեռքով պայծառագույն հրի հետ¹⁰: Եվ հները, որ մեզնից ավելի լավն էին և բնակվում էին աստվածների կողքին, փոխանցել են մեզ պատումը, ըստ որի հավերժ գոյություն ունեցող կոչվածը բաղկացած է մեկից ու բազումից և բովանդակում է սերտաճած սահմանն ու անսահմանությունը¹¹: Եվ մենք, եթե ամեն ինչ կարգաբերված է այդպես, միշտ պետք է փնտրենք ամեն բանի

հիմքում դրված գաղափարը և գտնենք, բռնենք և տեսնենք՝ d
արդյո՞ք այդ մեկ գաղափարից բացի չկան նաև երկուսը, երե-
քը կամ ուրիշ թվով գաղափարներ, և նույնը փորձենք անել
նաև նշված միասնությունների համար, մինչև որ սկզբնական
միասնությունը երևա ոչ թե որպես մեկ, բազում և անսահման,
այլ որպես որոշակի քանակություն: Իսկ անսահմանի գա-
ղափարը չի կարելի կիրառել բազմության նկատմամբ, քանի
դեռ չենք տեսել դրա ամբողջ թիվը, որն ընկած է անսահմանի
և մեկի միջև: Միայն այդժամ բոլորի միջից յուրաքանչյուր մեկ
կարող է մուտք գործել անսահմանի մեջ: Ինչպես ասացի, e
աստվածները պատվիրեցին մեզ այսպես քննել, ուսումնասիրել
և ուսուցանել միմյանց: Սակայն մերօրյա իմաստունները սահ-
մանում են մեկն ինչպես պատահի, հարկ եղածից շատ ավելի
արագ կամ շատ ավելի դանդաղ: Միջանկյալը նրանցից փախ- 17
չում է, մինչդեռ սա է, որ մեզ թույլ է տալիս բաժանել դիալեկ-
տիկական խորհրդածությունը երիստիկականից:

Պրոտարքոս. Ասածիդ մի մասը, Սոկրատես, կարծում
են, հասկացա, իսկ մյուս մասի առնչությամբ դեռ պիտի լսեն
քո պարզաբանումները:

Սոկրատես. Պարզաբանումը, ո՛վ Պրոտարքոս, կտամ
գրերի օրինակի վրա, այնպես որ ըմբռնիր գրերի օգնությամբ, b
որոնք սովորել ես մանուկ հասակում:

Պրոտարքոս. Ինչպե՞ս:

Սոկրատես. Չայնը, որ ելնում է մեր բերանից, մեկն է և
միաժամանակ քանակությամբ անսահման է բոլորի և յուրա-
քանչյուրի մոտ:

Պրոտարքոս. Եվ ի՞նչ:

Սոկրատես. Սակայն ո՛չ առաջինը, ո՛չ էլ մյուսը մեզ չի
դարձնում իմաստուն՝ ո՛չ այն, որ մենք գիտենք ձայնի անսահ-
մանության մասին, ո՛չ էլ այն, որ մենք գիտենք, թե այն մեկ է.
մեզմից յուրաքանչյուրին գրագետ է դարձնում լուկ այն, որ մեզ
հայտնի է ձայների քանակն ու որակը:

Պրոտարքոս. Շատ ճիշտ է:

Սոկրատես. Սակայն միևնույն իմացությունը մեզ գիտակ է դարձնում նաև երաժշտության մեջ:

Պրոտարքոս. Ինչպե՞ս:

- c **Սոկրատես.** Համաձայն այդ արվեստի՝ հնչողությունը նրանում մեկն է:

Պրոտարքոս. Անշուշտ:

Սոկրատես. Բայց մենք սահմանում ենք երկու ծայն՝ ցածր, բարձր, և երրորդը, որ միջինն է: Այդպես չէ՞:

Պրոտարքոս. Այդպես է:

Սոկրատես. Սակայն իմանալով միայն այսքանը, դու չես լինի երաժշտության գիտակ, իսկ դա չիմանալու դեպքում երաժշտության քո ոչ մի իմացություն չի լինի արժեքավոր:

Պրոտարքոս. Իհարկե չի լինի:

- d **Սոկրատես.** Սակայն, բարեկա՛մս, երբ իմանաս, թե որքան և ինչպիսիսն են բարձր և ցածր հնչյունների միջակայքերը, որոնք են դրանց սահմանները և ինչ համադրություններ են դրանք կազմում,– այդ համադրությունները հայտնաբերած մեր նախնիները դրանք փոխանցել են մեզ՝ հետնորդներին, և պատվիրել են կոչել ներդաշնակություններ, իսկ մարմնի շարժումներին հատուկ մյուս այդպիսի վիճակները, որոնք նրանց ասելով պիտի չափվեն թվերով, կոչել են ռիթմ և չափ, ընդ որում այդպես պատվիրել են դիտարկել նաև ամեն միասնություն և բազմություն,– երբ, ահա, ըմբռնես այս ամենը, կդառնաս իմաստուն, իսկ երբ ըմբռնես գոյի մեկ այլ միասնություն՝ այն դիտարկելով նույն եղանակով, իմաստուն կդառնաս նաև այդ հարցում: Իսկ առանձին իրերի անսահմանությունը և անսահմանությունը դրանցից յուրաքանչյուրի մեջ ամեն անգամ անորոշ, անիմաստ և ոչ հաշվետու է դարձնում քո միտքը, այնպես որ դու երբեք և ոչ մի դեպքում չես նկատում թիվը¹²:

Պրոտարքոս. Ֆիլեբոս, ինձ թվում է, Սոկրատեսը շատ լավ արտահայտեց հենց նոր ասվածը:

Ֆիլեբոս. Ինձ էլ է այդպես թվում: Բայց ինչու՞ է այս

փաստարկը հասցեագրված մեզ և ի՞նչ է ուզում ասել:

18

Սուկրատես. Ֆիլեբոսի հարցը տեղին է, Պրոտարքոս:

Պրոտարքոս. Իհարկե: Պատասխանի՛ր նրան:

Սուկրատես. Այդպես էլ կանեն, սակայն քիչ առաջ ասվածին մի կարճ անդրադարձից հետո: Ինչպես նշեցինք, եթե ոմն ինչ-որ բան է ըմբռնում, ապա պիտի իսկույն նկատի առնի ոչ թե անսահմանի բնությունը, այլ որևէ թիվ, և հակառակը՝ եթե ստիպված է նախ ըմբռնել անսահմանը, պիտի մտածի ոչ թե մեկի, այլ թվի մասին, — քանի որ յուրաքանչյուր թիվ ունի բազմություն, — և ի վերջո ելնելով այդ ամենից՝ հանգի մեկին: Կրկին ցույց տանք ասվածը գրերի վրա:

b

Պրոտարքոս. Ինչպե՞տ:

Սուկրատես. Ոմն՝ աստված կամ աստվածային մարդ, — ասում են, դա թևք անունով մի եգիպտացի էր, — հասկացավ, որ ծայնն անսահման է և ծայնավորներն այդ անսահմանության մեջ բազում են, այլ ոչ թե մեկ, և որ մյուս հնչյուններն անծայն են, թեպետ հաղորդակից են ինչ-որ ծայնի և որոշակի քանակությամբ են: Երրորդ տեսակին թևքը դասեց այն տառերը, որոնք մենք կոչում ենք համր: Այնուհետև բաժանեց բաղաձայններն ու համրերը, նույն կերպ նաև ծայնավորներն ու կիսածայնավորները, մինչև որ պարզեց դրանց թիվը և յուրաքանչյուրն առանձին ու բոլորը միասին կոչեց «տառեր»: Տեսնելով, որ մեզնից ոչ ոք ոչ մի տառ չի սովորում առանձին վերցրած, բոլոր մյուսներից անջատ, թևքը նկատեց, որ գոյություն ունի կապ, որը միասնություն է հաղորդում դրանց բոլորին. այդ կապը նա կոչեց քերականություն¹³:

c

d

Ֆիլեբոս. Այժմ ես ավելի հստակ հասկացա միտքը, Պրոտարքոս: Սակայն ինձ հիմա էլ պակասում է այն, ինչ պակասում էր քիչ առաջ:

Սուկրատես. Քեզ, Ֆիլեբոս, հասկանալի չէ ասվածի կապը մեր քննության հե՞տ:

Ֆիլեբոս. Այո, հենց դա է, որ ես ու Պրոտարքոսը արդեն վաղուց փնտրում ենք:

Սոկրատես. Ուրեմն դուք փնտրում եք այն, ինչն արդեն վաղուց, ինչպես ասացիր, շատ մոտ է ձեզ:

e Ֆիլեբոս. Ինչպե՞ս:

Սոկրատես. Մի՞թե մեր գրույցն ի սկզբանե խոհեմության և հաճույքի մասին չէր, ավելի շուտ այն մասին, թե դրանցից որն է նախընտրելի:

Ֆիլեբոս. Անշուշտ այդ մասին:

Սոկրատես. Եվ մենք ասացինք, որ դրանք երկուսն էլ մեկ են:

Ֆիլեբոս. Այո:

Սոկրատես. Ուրեմն սա հենց այն է, ինչ առաջադրեց նախորդ խորհրդածությունը. ինչպե՞ս են խոհեմությունն ու հաճույքը մեկ և բազում, և ինչպե՞ս է, որ իսկույն չեն դառնում անսահման, այլ նախքան անսահման դառնալը նրանցից յուրաքանչյուրը ձեռք է բերում ինչ-որ թիվ:

- 19 Պրոտարքոս.** Դյուրին հարց չէ, ո՛վ Ֆիլեբոս: Չգիտեմ, թե ինչպես խճճեց մեզ Սոկրատեսը: Տե՛ս, թե մեզնից ով պիտի պատասխանի այդ հարցին: Գուցե զավեշտական լինի, եթե ես խոսք վերցնելով՝ հետո չկարողանամ պատասխանել և նորից քեզ վերադարձնեն հարցը: Բայց շատ ավելի զավեշտական կլինի, եթե մեզնից ոչ ոք չկարողանա պատասխանել: Մտածիր, ինչպե՞ս վարվենք: Ինձ թվում է, Սոկրատեսը մեզ հիմա հարցնում է հաճույքի տեսակների մասին՝ գոյություն ունեն դրանք արդյոք, թե ոչ, որքան են և ինչպիսին: Նույնը վերաբերում է նաև խոհեմությանը:

Սոկրատես. Շատ ճիշտ ես ասում, Կալլիասի¹⁴ որդի: Եթե մենք չկարողանանք անել դա մեկի, մյուսի, նույնականի և հակադիրի առնչությամբ, ապա, ինչպես ցույց տվեց նախորդ խորհրդածությունը, մեզնից ոչ ոք ոչնչի պիտանի չէ:

- c Պրոտարքոս.** Ինձ թվում է՝ դա ճիշտ է, Սոկրատես: Խոհեմ մարդուն վայել է իմանալ ամեն բան, սակայն դեռ կա նաև երկրորդ նավարկությունը¹⁵, որի ընթացքում նա չպիտի մոռանա ինքնաճանաչողության մասին: Նկատի ունեն հետևյալը: Այս

գրույցը, Սոկրատես, դու առաջարկեցիր մեզ բոլորիս և ինքդ էլ մասնակցեցիր պարզելու համար, թե որն է մարդկային ձեռքերումներից լավագույնը: Ֆիլեբոսն ասաց, որ հաճույքը, վայելքը, ուրախությունը և մյուս նման բաներն են լավագույնը, իսկ դու առարկեցիր՝ ասելով, թե լավագույնը ոչ թե դրանք են, այլ այն, ինչը մենք հաճախ սիրով վերհիշում ենք՝ միանգամայն իրավացիորեն առանձին-առանձին ուսումնասիրելու համար հիշողության մեջ կողք-կողքի դրվածը: Դու, ինչպես երևում է, ասում ես, որ իրավամբ հաճույքից ավելի մեծ բարիք պիտի ճանաչվի խելքը, իմացությունը, ըմբռնումը, արվեստը և դրանց ազգակից ամեն բան: Սրանք է հարկավոր ձեռք բերել, և ոչ այն մյուսները: Երբ այս երկու պնդումները բարձրաձայնվեցին, մենք կատակեցինք, թե քեզ տուն չենք թողնի, քանի դեռ այդ պնդումները չեն գտել իրենց բավարար հանգուցալուծումը: Դու համաձայնեցիր և խոստացար այդ հարցում մեր տրամադրության տակ լինել, իսկ մենք երեխաների պես ասում ենք, որ ճիշտ տրվածը ետ չես առնի: Թո՛ղ, ուրեմն, այդպես խոսելու քո ձևը:

Սոկրատես. Ո՞ր ձևը նկատի ունես:

Պրոտարքոս. Դժվարություններ ես հարուցում և հարցնում այն մասին, ինչին մենք այս պահին չենք կարող պատասխանել: Հո չենք մտածի, թե այս ամենի վերջը մեզ բոլորիս փակուղի դնելն է: Հետևաբար, եթե մենք չենք կարող դա անել, դու արա, խոստացել ես: Տե՛ս, կուզե՞ս և կարո՞ղ ես արդյոք տարբերակել հաճույքի և իմացության տեսակները և պարզաբանել մեր առաջ ծառայած հարցը, թե՞ թողնենք սա:

Սոկրատես. Քո խոսքերից հետո այլևս վախենալու պատճառ չունեն: «Կուզես» արտահայտությունը ազատում է ամեն վախից: Եվ բացի այդ, ինձ թվում է, որ ոմն աստված ինձ մի բան հիշեցրեց:

Պրոտարքոս. Ինչպե՞ս, ինչի՞ մասին:

Սոկրատես. Դեռ շատ վաղուց երագում կամ գուցե հարթմնի ես լսել եմ և հիմա մտաբերում եմ հաճույքի և

c խոհեմության մասին հետևյալ խոսքը. այդ երկուսից և ոչ մեկը բարիք չէ, այլ կա երրորդ մի բան, որը տարբեր է դրանցից և, սակայն, երկուսից էլ ավելի լավն է: Եթե այս ասույթը մեզ համար պարզ է, հաճույքը չի կարող պաշտպանել իր հաղթանակը, քանի որ բարիքը նույնական չի լինի դրան: Այդպես չէ՞:

Պրոտարքոս. Այդպես է:

Սոկրատես. Այդ դեպքում մենք, կարծում եմ, ստիպված չենք լինի բաժանել հաճույքի ձևերը: Առաջիկայում դա ավելի պարզ կդառնա:

Պրոտարքոս. Շատ լավ ասացիր, այդպես էլ շարունակիր:

Սոկրատես. Նախ համաձայնության գանք մի քանի մանրուքների շուրջ:

Պրոտարքոս. Ի՞նչ մանրուքներ:

d **Սոկրատես.** Բարիքի բախտը անհրաժեշտաբար կատարյալ է, թե՞ անկատար:

Պրոտարքոս. Ամենակատարյալ, ո՛վ Սոկրատես:

Սոկրատես. Եվ ի՞նչ, բարիքն ինքնաբա՞վ է:

Պրոտարքոս. Իհարկե, և դրանով տարբերվում է գոյություն ունեցող ամեն ինչից:

Սոկրատես. Այդ դեպքում, ինձ թվում է՝ միանգամայն անհրաժեշտ է ասել, որ ճանաչող ամենայն բան փորձում է որսալ և հասնել նրան, ցանկանում է պահել ու յուրացնել և հոգ չի տանում ոչնչի մասին, բացի նրանից, ինչը ձեռք է բերվում բարիքի հետ միասին:

Պրոտարքոս. Սրան անհնար է հակաճառել:

e **Սոկրատես.** Դիտարկենք ու քննենք հաճույքի կյանքը և խոհեմ կյանքը առանձին-առանձին:

Պրոտարքոս. Ի՞նչ նկատի ունես:

Սոկրատես. Դիցուք, կյանքը հաճույքի մեջ զուրկ է խոհեմությունից, իսկ խոհեմ կյանքը զուրկ է հաճույքից: Իսկապես, եթե այդ երկուսը բարիք են, դրանք ոչնչի կարիք չունեն:

Իսկ եթե դրանք որևէ բանի կարիք ունեն, մեզ համար չեն լինի 21
իսկական բարիք:

Պրոտարքոս. Իհարկե:

Սուկրատես. Փորձե՞նք ասվածը դիտարկել քեզ վրա:

Պրոտարքոս. Փորձենք:

Սուկրատես. Այդ դեպքում պատասխանի՛ր:

Պրոտարքոս. Հարցրու՛:

Սուկրատես. Կհամաձայնեի՞ր արդյոք, ո՛վ Պրոտարքոս,
կյանքն ապրել՝ վայելելով մեծագույն հաճույքները:

Պրոտարքոս. Ինչու՞ ոչ:

Սուկրատես. Դու կհամարեի՞ր, որ քեզ էլի ինչ-որ բան է
պակասում, եթե ունենայիր այդ ամենը:

Պրոտարքոս. Բնավ:

Սուկրատես. Տե՛ս, խորհել, մտածել, կշռադատել,– մի՞թե
սրանց և ազգակից մյուս բաների կարիքը չէիր ունենա: **b**

Պրոտարքոս. Ինչի՞ համար: Չէ՞ որ ունենալով ուրա-
խություն՝ ես կուներնայի ամեն ինչ:

Սուկրատես. Ուրեմն այդպես ապրելով՝ դու ողջ կյան-
քում մշտապես կվայելեիր մեծ հաճույքներ և մեծ ուրախու-
թյուն՞:

Պրոտարքոս. Այո:

Սուկրատես. Սակայն ձեռք չբերելով ո՛չ խելք, ո՛չ հիշո-
ղություն, ո՛չ իմացություն և ո՛չ էլ ճշմարիտ կարծիք և զուրկ
լինելով ամեն խոհեմությունից՝ դու նախ չէիր իմանա՝ ուրա-
խանում ես, թե չես ուրախանում:

Պրոտարքոս. Անհրաժեշտաբար:

Սուկրատես. Եվ նմանապես ձեռք չբերելով հիշողություն՝ **c**
դու անհրաժեշտաբար չէիր հիշի նաև այն, որ երբևէ ուրա-
խացել ես, իսկ տվյալ պահին առկա հաճույքի որևէ հիշողու-
թյուն չէիր պահպանի: Ձեռք չբերելով ճշմարիտ կարծիք՝ դու,
ուրախանալով, չէիր կարծի, թե ուրախանում ես, և զուրկ լինե-
լով դատողունակությունից՝ չէիր կարողանա դատել, որ ուրա-
խանալու ես նաև հետագայում: Կապրեիր ոչ թե մարդու, այլ

ինչ-որ կակղամորթի կամ մեկ ուրիշ ծովային կենդանու կյանք, նրանցից, որոնց մարմինը պատված է խեցիով: Այդպե՞ս է, թե՞ ունենալով սա, մենք կմտածենք այլ կերպ:

d **Պրոտարքոս.** Բայց ինչպե՞ս:

Սոկրատես. Արժե՞ ընտրել այդպիսի կյանք:

Պրոտարքոս. Քո այդ փաստարկից, Սոկրատես, ես լիովին պապանձվեցի:

Սոկրատես. Չվիատվենք, և փոխարենը դիտարկենք խելքի կյանքը:

Պրոտարքոս. Ի՞նչ կյանքի մասին ես խոսում:

e **Սոկրատես.** Դիցուք, մեզնից որևէ մեկն ընտրել է կյանք, որում ձեռք է բերել խոհեմություն, խելք, իմացություն և ամեն ինչի հիշողություն, սակայն անհաղորդ է հաճույքին՝ ինչպես մեծ, այնպես էլ փոքր չափով, նաև ցավին և բոլորովին անտարբեր է այս ամենի հանդեպ:

Պրոտարքոս. Այդպիսի կյանքը, Սոկրատես, իմ կարծիքով, արժանի չէ ընտրության և, ըստ իս, ուրիշին նույնպես չի կարող արժանի թվալ:

22 **Սոկրատես.** Իսկ երկուսի խառնու՞րդը, Պրոտարքոս, ի՞նչ կասես կյանքի մասին, որը միավորում է այդ երկուսը:

Պրոտարքոս. Նկատի ունես հաճու՞յքը, որը միավորում է խելքն ու խոհեմությունը:

Սոկրատես. Հենց դրա մասին եմ խոսում:

Պրոտարքոս. Ամեն ոք կընտրի այդպիսի կյանք, այլ ոչ այն նախորդները, և չի լինի այնպես, որ մեկն ընտրի, իսկ մյուսը՝ ոչ:

Սոկրատես. Հասկանու՞մ եմք արդյոք հիմա, թե ինչ է բխում այս դատողությունից:

b **Պրոտարքոս.** Լիովին: Առաջադրվեց երեք կյանք, որոնցից առաջին երկուսը մարդկանցից և կենդանիներից ոչ ոքի համար ո՛չ բավարար է, ո՛չ էլ նախընտրելի:

Սոկրատես. Մի՞թե արդեն պարզ չէ, որ այդ կյանքերից և ոչ մեկը չունի բարիք: Քանզի ունենալու դեպքում այն կլիներ

Ֆիլեբոս

բավարար, կատարյալ և բույսերի ու կենդանիների կողմից ընտրության արժանի, որոնք միշտ կկարողանային ապրել այդպիսի կյանք: Իսկ եթե մեզնից որևէ մեկն ընտրեր ուրիշ կյանք, կգործեր ընտրության արժանիի բնությանը հակառակ. կամավոր դա կարող է լինել չհմացությունից, իսկ [ակամա]՝ չար բախտի քմահաճույքով:

Պրոտարքոս. Կարծես թե այդպես է:

Սոկրատես. Ինձ թվում է, որ ասվածը բավական է հասկանալու համար, որ Ֆիլեբոսի դիցուհուն¹⁶ հարկ չկա համարել բարիքին նույնական: c

Ֆիլեբոս. Սակայն քո այդ խելքը, ո՛վ Սոկրատես, նույնպես բարիք չէ և արժանի է նույն մեղադրանքներին:

Սոկրատես. Ինձ՝ թերևս, Ֆիլեբոս: Թեպետ սա, կարծում եմ, ճշմարիտ և միաժամանակ աստվածային խելք չէ, այլ մեկ ուրիշ խելք է: Ես չեմ առարկում, որ խառը կյանքի դեպքում առաջին հաղթանակը խելքինն է, սակայն մենք պիտի քննենք և որոշենք՝ ինչպես վարվել երկրորդ մրցանակի հետ. գուցե գտնելով խառը կյանքի պատճառը՝ մեզնից որևէ մեկը համարի այն խելք, իսկ ուրիշը՝ հաճույք, և այդպիսով, թեպետ դրանք երկուսն էլ բարիք չեն, գուցե դրանցից մեկը համարի բարիքի պատճառ: Այստեղ ես ավելի կընդդիմանայի Ֆիլեբոսին՝ ասելով, որ խառը կյանքի մեջ, — ինչ էլ լինի այն, ինչի շնորհիվ այդ կյանքն արժանի է ընտրության և բարիք է, — ոչ թե հաճույքն է առավել ազգակից և նման բարիքին, այլ խելքը: Ըստ այդմ, ավելի ճիշտ կլիներ ասել, որ հաճույքին չի պատկանում ո՛չ առաջին, ո՛չ էլ երկրորդ մրցանակը: Ավելի հեռու է մրցանակային տեղից երրորդը, եթե իհարկե մենք այժմ պետք է հավատ ընծայենք իմ խելքին: d

Պրոտարքոս. Բայց, Սոկրատես, ինձ հիմա թվում է, որ հաճույքը տապալված է՝ ասես հաղթված քո խոսքերից, քանզի մարտի բռնվելով հանուն մրցանակի, նա արդեն պարտվել է: Ինչ վերաբերում է խելքին, ապա, իմ կարծիքով, հարկ է ասել, որ վերջինս իրեն խոհեմաբար պահելով՝ չընկավ մրցանակի e 23

ետևից, քանի որ այդ դեպքում նրան կվիճակվեր նույնը: Իսկ ահա հաճույքը, զրկվելով երկրորդ մրցանակից, առհասարակ կարժեզրկվի իր երկրպագուների աչքերում, չէ՞ որ նրանց էլ այլևս չի թվում գեղեցիկ:

Սոկրատես. Եվ ի՞նչ: Ավելի լավ չէ՞ թողնել այն և ցավ չպատճառել այսքան մանրակրկիտ դիտարկմամբ և մերկացմամբ:

Պրոտարքոս. Անմիտ բան ես ասում, Սոկրատես:

b **Սոկրատես.** Որովհետև անհնարին բան եմ ասում ու ցավ պատճառում հաճույքի՞ն:

Պրոտարքոս. Ոչ միայն. դու նույնիսկ չգիտես, որ քանի դեռ չես ավարտել խորհրդածությունը, մեզմից ոչ ոք քեզ բաց չի թողնի:

Սոկրատես. Մի տե՛ս, Պրոտարքոս: Ուրեմն մեզ քննելու դեռ բավականաչափ բան է մնացել, և հազիվ թե դա ավելի հեշտ լինի ներկայիս քննությունից: Թվում է, ի պաշտպանություն խելքի համար երկրորդ մրցանակի, մենք պիտի գտնենք ուրիշ հնարք, նախորդ խոսքում օգտագործածներից տարբեր մետեր: Թեպետ մի քանիսը գուցեև պահպանենք: Չարժե՞:

Պրոտարքոս. Ինչպե՞ս չէ:

c **Սոկրատես.** Փորձենք զգուշորեն ճշտել մեր քննության սկիզբը:

Պրոտարքոս. Ի՞նչ սկիզբ նկատի ունես:

Սոկրատես. Համայնի մեջ գոյություն ունեցող ամեն բան մենք բաժանեցինք երկու մասի կամ, ավելի շուտ, եթե դեմ չես, երեքի:

Պրոտարքոս. Ի՞նչ հիմունքով, ասա՛:

Սոկրատես. Վերցնենք մեր պնդումներից մի քանիսը:

Պրոտարքոս. Որո՞նք:

Սոկրատես. Մենք ասացինք, որ աստված մատնանշում է մե՛րթ գոյի անսահմանությունը, մե՛րթ սահմանները:

Պրոտարքոս. Իհարկե:

Սոկրատես. Ուրեմն, վերցնենք այդ երկու տեսակները,

իսկ երրորդը կգոյանա դրանց խառնուրդից: Երևում է, զավեշ- d
տական մարդ եմ, եթե անում եմ այս բաժանումներն ու թվար-
կումները:

Պրոտարքոս. Ի՞նչ նկատի ունես, բարեկամս:

Սոկրատես. Կարծում եմ, պետք է ավելացնել չորրորդ
տեսակը:

Պրոտարքոս. Ասա՛, ո՞րը:

Սոկրատես. Գտի՛ր երեք տեսակների միախառնման
պատճառը և համարի՛ր այն չորրորդ տեսակ:

Պրոտարքոս. Իսկ չե՞ս զգա մաս հինգերորդի կարիքը,
որը կկարողանա տարբաժանել դրանք:

Սոկրատես. Թերևս: Սակայն հիմա դրա մասին չեմ e
մտածում: Իսկ եթե հարկ լինի, թույլ կտա՞ս, որ հետամուտ
լինեմ դրան:

Պրոտարքոս. Ինչու՞ ոչ:

Սոկրատես. Նախ մենք չորս տեսակներից կառանձնաց-
նենք երեքը, իսկ հետո՝ երեքից երկուսը, նկատելով, որ դրան-
ցից յուրաքանչյուրը բաժանվում է բազում մասերի, և դարձյալ
կմիավորենք դրանք, փորձելով հասկանալ ն՛ մեկը, ն՛ բազումը:

Պրոտարքոս. Եթե դու ավելի հստակեցնեիր խոսքդ, ես
գուցե հետևեի քեզ:

Սոկրատես. Իմ առաջադրած երկու տեսակները նույնա- 24
կան են քիչ առաջ նշվածներից՝ մեկը որպես անսահման, մյուսը
որպես սահման ունեցող: Փորձեմ բացատրել, թե ինչպես է, որ
անսահմանը բազում է: Իսկ սահման ունեցողը դեռ կսպասի:

Պրոտարքոս. Այո, կսպասի:

Սոկրատես. Տե՛ս, այն, ինչ քեզ առաջարկում եմ դի-
տարկել, դժվար է և վիճելի, բայց, միևնույն է, դիտարկի՛ր:
Նախ տե՛ս, կարո՞ղ ես արդյոք մտածել որևէ սահման առավել
տաքի և առավել պաղի առնչությամբ, թե՞ դրանց մեջ բնակ-
վող առավելն ու պակասը, քանի դեռ բնակվում են, թույլ չեն
տալիս հասնել ավարտին: Քանզի եթե գտնվեր վերջ, ապա b
երկուսն էլ կավարտվեին:

Պրոտարքոս. Միանգամայն իրավացի ես:

Սոկրատես. Մենք միշտ ասում ենք, որ առավել տաքի և առավել պաղի մեջ միշտ կա առավելն ու պակասը:

Պրոտարքոս. Իհարկե:

Սոկրատես. Ուրեմն մեր խոսքը միշտ ցույց է տալիս, որ դրանք չունեն ավարտ: Իսկ եթե անավարտ են, ապա, իհարկե, անսահման են:

Պրոտարքոս. Շատ ճիշտ է, Սոկրատես:

- Սոկրատես.** Լավ է, սիրելի Պրոտարքոս, որ դու հասկացար և հիշեցրիր ինձ, որ այդ «շատը», որ արտասանեցիր, ինչպես նաև «նվազը», ունեն միևնույն ուժը, ինչ «առավելն» ու «պակասը»: Որտեղ էլ սրանք գտնվեն, չունեն որևէ քանակ, այլ միշտ առաջ են բերում «առավել ուժեղը» կամ «առավել թույլը», «առավել շատը» կամ «առավել պակասը», իսկ քանակը ոչնչացնում են: Եթե դրանք, ինչպես ասացի, չվերացնեն քանակը, այլ թույլ տան, որ քանակը և չափ ունեցող բաները
- d** զբաղեցնեն առավելի և պակասի, շատի և նվազի տեղը, ապա իրենք կկորցնեն իրենց տեղը: Քանզի ստանալով քանակ՝ նրանք այլևս չեն լինի ո՛չ առավել տաք, ո՛չ առավել սառը: Չէ՞ որ քանակը կանգնած է և չի շարժվում: Համաձայն նույն դատողության՝ տաքը և իր հակադրությունը միաժամանակ անսահման են:

- Պրոտարքոս.** Երևում է, Սոկրատես, ինչպես և ասում
- e** էիր, հեշտ չէ հետազոտել դրանք: Բայց նորից ու նորից կրկնելու դեպքում հարցնողն ու հարցվողը գուցե համաձայնության գան:

Սոկրատես. Լավ ես ասում, փորձենք այդպես անել: Եվ որպեսզի չերկարացնենք մեր ճանապարհը, փորձենք որպես անսահմանի բնության օրինակ վերցնել հետևյալ նշանը:

Պրոտարքոս. Ի՞նչը նկատի ունես:

Սոկրատես. Բոլոր այն բաները, որ մեզ առավել կամ պակաս, շատ կամ քիչ, չափազանց կամ նման են թվում, մենք պետք է դասենք անսահմանի սեռին որպես միասնության,

քանի որ, ինչպես արդեն ասացինք նախապես, պիտի հավա- 25
քենք բոլոր ցրված և տրոհված իրերը և հնարավորության
դեպքում նշենք դրանք որպես միասնական բնություն:

Պրոտարքոս. Հիշում եմ:

Սոկրատես. Իսկ այն իրերը, որոնք չեն ընդունում առա-
վելը կամ պակասը, այլ ընդունում են դրանց հակադիրը՝ նախ
հավասարը և հավասարությունը, այնուհետև կրկնակին և այն
ամենը, որ թիվ է թվի և չափ է չափի համար, պիտի դասվի **b**
սահմանափակին: Այդպես վարվելը ճիշտ է, ի՞նչ կասես:

Պրոտարքոս. Շատ ճիշտ է, ո՛վ Սոկրատես:

Սոկրատես. Լավ: Այս երկու տեսակների խառնուրդից
առաջ եկող երրորդ տեսակը ինչպիսի՞ն է, ի՞նչ կասենք:

Պրոտարքոս. Կարծում եմ, դա դու կասես:

Սոկրատես. Աստված կասի, իհարկե, եթե աստվածնե-
րից որևէ մեկը լսի իմ աղոթքները:

Պրոտարքոս. Ուրեմն աղոթիր և քննիր:

Սոկրատես. Քննում եմ, և ինձ թվում է, Պրոտարքոս,
որ աստվածներից մեկը բարեկամացել է մեզ:

Պրոտարքոս. Ի՞նչ նկատի ունես, ու՞ր է ապացույցը: **c**

Սոկրատես. Հիմա կասեմ: Իսկ դու հետևիր դատողու-
թյանս:

Պրոտարքոս. Դե, խոսի՛ր:

Սոկրատես. Մենք քննարկում էինք առավել տաքը և
առավել պաղը: Այդպես չէ՞:

Պրոտարքոս. Այո:

Սոկրատես. Ավելացրու դրանց նաև առավել չորը և
առավել խոնավը, առավել շատը և առավել սակավը, առավել
արագը և առավել դանդաղը, առավել մեծը և առավել փոքրը
և բոլոր այն բաները, որ մենք դասեցինք առավելն ու պակասը
միավորող բնությանը:

Պրոտարքոս. Նկատի ունես անսահմանի տեսա՞կը: **d**

Սոկրատես. Այո: Իսկ հիմա միախառնիր սրան հաջորդ
տեսակը՝ սահմանի զավակը:

Պրոտարքոս. Ո՞րը:

Սուկրատես. Այն, որը քիչ առաջ պիտի հանգեցնեինք մեկի, ինչպես պայմանավորվել էինք անսահմանի համար, բայց չարեցինք: Գուցե հիմա անենք դա, եթե երկու տեսակներ միավորվելով՝ ի հայտ են բերում երրորդը:

Պրոտարքոս. Ի՞նչ երրորդ տեսակ, ի՞նչ նկատի ունես:

Սուկրատես. Հավասարի և կրկնակիի և այն ամենի, ինչը վերջ է դնում հակադրությունների միջև առկա տարբերություններին և համաչափ ու համահունչ դարձնելով դրանք առաջ է բերում թիվ:

Պրոտարքոս. Հասկանում եմ: Ինձ թվում է, դու ասում ես, որ դրանց խառնուրդը առաջ է բերում ինչ-որ սեռեր¹⁷:

Սուկրատես. Քեզ ճիշտ է թվում:

Պրոտարքոս. Դե, շարունակի՛ր:

26 Սուկրատես. Մի՞թե հիվանդությունների ժամանակ դրանց ճիշտ համադրությունը առաջ չի բերում առողջություն:

Պրոտարքոս. Իհարկե:

Սուկրատես. Բարձրի և ցածրի, արագի և դանդաղի մեջ, որոնք անսահման են, մի՞թե դրանց գումարը առաջ չի բերում սահման և չի ծնում կատարյալ երաժշտություն:

Պրոտարքոս. Անկասկած:

b Սուկրատես. Իսկ ցրտի և շոգի համադրման դեպքում չափազանցն ու անսահմանը վերանում են, և առաջ են գալիս չափավորն ու համաչափը:

Պրոտարքոս. Ինչպե՞ս չէ:

Սուկրատես. Մի՞թե տարվա եղանակները և մեր ունեցած ամենայն գեղեցիկը չի գոյանում անսահմանի և սահմաններ ունեցողի խառնուրդից:

Պրոտարքոս. Իհարկե:

Սուկրատես. Ես բաց եմ թողնում բյուրավոր ուրիշ բաներ, օրինակ՝ առողջությանը գումարված գեղեցկությունն ու ուժը, ինչպես նաև հոգու բազմաթիվ ուրիշ գեղեցիկ հատկություններ: Չէ՞ որ, հրաշալի՛ Ֆիլեբոս, դիցուհին, տեսնելով ան-

ժուժկալությունը և ամեն տեսակի արատները, երբ չկան սահմանափակումներ ո՛չ հաճույքի, ո՛չ էլ հագեցման մեջ, օրենք և կարգ հաստատեց: Եվ չնայած դու ասում ես, որ այդ դիցուհին¹⁸ c պատիժներ է բերում, ես ասում եմ հակառակը և պնդում, որ նա փրկություն է բերում: Ի՞նչ ես կարծում, Պրոտարքոս:

Պրոտարքոս. Քո ասածը, Սոկրատես, իմ սրտով է:

Սոկրատես. Արդ, ես խոսեցի երեք տեսակետի մասին, եթե հասկանում ես:

Պրոտարքոս. Ինձ թվում է, հասկանում եմ. մի միասնությունը դու համարում ես անսահմանություն, իսկ մյուս միասնությունը՝ գոյության մեջ եղած սահման: Սակայն ես բոլորովին չեմ հասկանում, թե ինչ նկատի ունես երրորդ միասնության տակ:

Սոկրատես. Որովհետև, սիրելիս, քեզ զարմացրել է այդ d երրորդ տեսակի լիությունը: Անսահմանի մեջ կան բազում սեռեր, բայց քանի որ դրանք կրում են առավելի և պակասի հատկություններ, անսահմանը թվում է մեկ:

Պրոտարքոս. Ճիշտ է:

Սոկրատես. Իսկ սահմանը բազմություն ունի, և մենք չենք դժգոհել, որ դրա բնությունը մեկը չէ:

Պրոտարքոս. Այլ կերպ կարո՞ղ է լինել:

Սոկրատես. Ոչ մի դեպքում: Խոսելով երրորդի մասին՝ ես նկատի ունեի այն ամենը, ինչը բխում է այդ երկու սեռերից որպես միասնություն, որը մուտք է գործում գոյություն սահմանի հետ առաջացող չափերի շնորհիվ:

Պրոտարքոս. Հասկացա:

Սոկրատես. Սակայն մենք ասացինք, որ երեք սեռերից e բացի պետք է դիտարկել նաև չորրորդը: Դիտարկենք միասին: Քեզ չի՞ թվում, որ զոյացող ամեն բան գոյանում է ինչ-որ պատճառով:

Պրոտարքոս. Թվում է: Մի՞թե առանց դրա կարող է ինչ-որ բան գոյանալ:

Սոկրատես. Իսկ արարողի բնությունը տարբերվում է

պատճառից ուրի՞շ ինչ-որ բանով, բացի անունից, և ճիշտ չի՞ լինի արդյոք արարողը և պատճառը համարել նույն բանը:

Պրոտարքոս. Ճիշտ կլինի:

- 27** **Սոկրատես.** Եվ արարվողի և գոյացողի միջև մենք, համաձայն քիչ առաջ ասվածի, բացի անունից տարբեր ոչինչ չենք գտնի: Այդպես չէ՞:

Պրոտարքոս. Այդպես է:

Սոկրատես. Մի՞թե արարողն իր բնությամբ միշտ այդպիսին չէ, և արարվողը գոյանալով մի՞թե չի հետևում նրան:

Պրոտարքոս. Անշուշտ:

Սոկրատես. Պատճառը ուրիշ է և տարբեր է նրանից, ինչը ծառայում է իրեն գոյացման ժամանակ:

Պրոտարքոս. Ինչպե՞ս չէ:

Սոկրատես. Ուրեմն գոյացողը և այն, ինչից գոյանում է ամեն բան, բաժանվում են երեք սեռերի:

Պրոտարքոս. Իհարկե:

- b** **Սոկրատես.** Իսկ այդ ամենը կերտողին մենք կոչում ենք չորրորդ պատճառ, որովհետև պարզվեց, որ սա բավականաչափ տարբեր է նախորդներից:

Պրոտարքոս. Այո, տարբեր է:

Սոկրատես. Քանի որ չորս սեռերը սահմանված են, ճիշտ կլինի հիշողությամբ հերթով թվարկել դրանք:

Պրոտարքոս. Իհարկե:

Սոկրատես. Առաջին սեռը ես կոչում եմ անսահման, երկրորդը՝ սահման, իսկ երրորդը, որ գոյանում է այդ երկուսի

- c** խառնուրդից, էություն: Չեմ սխալվի, եթե միախառնման և գոյացման պատճառը կոչեն չորրորդ սեռ:

Պրոտարքոս. Իհարկե ոչ:

Սոկրատես. Այդ դեպքում ինչի՞ մասին շարունակենք խոսել և ինչու՞ ցանկացանք հանգել սրան: Մի՞թե ոչ հանուն նրա, որ ուզում էինք պարզել, թե ինչին է պատկանում երկրորդ մրցանակը՝ հաճույքի՞ն, թե՞ բանականությանը: Այդպես չէ՞:

Պրոտարքոս. Այդպես է:

Ֆիլեբոս

Սոկրատես. Եվ հիմա, բաժանունը կատարելուց հետո, գուցե ավելի ճիշտ կլիներ որոշել առաջին և երկրորդ մրցանակների հարցը, որից էլ սկսեցինք այս քննարկումը:

Պրոտարքոս. Թերևս:

d

Սոկրատես. Շատ լավ: Հաղթող մենք ճանաչեցինք հաճույքի և բանականության խառնուրդ հանդիսացող կյանքը: Այդպես չէ՞:

Պրոտարքոս. Այդպես է:

Սոկրատես. Մի՞թե այժմ չենք տեսնում, թե ինչ կյանք է դա և ինչ սեռի է պատկանում:

Պրոտարքոս. Ինչպե՞ս չէ:

Սոկրատես. Մենք, կարծում եմ, կասենք, որ այդ մասը պատկանում է երրորդ սեռին, քանի որ այն ոչ թե ինչ-որ երկու սեռերի խառնուրդ է, այլ ամբողջ անսահմանի, որը կապակցված է սահմաններով, այնպես որ հաղթական այդ կյանքը իրավացիորեն երրորդ մասն է:

Պրոտարքոս. Շատ ճիշտ է:

Սոկրատես. Լավ: Իսկ ի՞նչ է քո այդ հաճելի և անխառն կյանքը, Ֆիլեբոս: Նշված սեռերից որի՞ն դասենք այն, որպեսզի մեր ասածը ճիշտ լինի: Բայց նախ պատասխանիր ինձ:

e

Ֆիլեբոս. Ասա՛:

Սոկրատես. Հաճույքը և ցավը ունե՞ն սահման, թե՞ պատկանում են բաներին, որոնք ընդունում են առավելն ու պակասը:

Ֆիլեբոս. Այո, Սոկրատես, դրանք պատկանում են առավելն ընդունող բաներին: Քանզի հաճույքը չէր լինի բացարձակ բարիք, եթե ի բնե չլիներ անսահման ինչպես քանակով, այնպես էլ ուժգնությամբ:

Սոկրատես. Բայց ցավը նույնպես, Ֆիլեբոս, չէր լինի բացարձակ չարիք: Եվ մենք երկուսս ուրիշ ի՞նչ պիտի դիտարկենք, եթե ոչ անսահմանի բնությունը, որը բարիքի որոշ բաժին է հաղորդում հաճույքներին: Թող հաճույքը քեզ մոտ վերաբերի անսահմանի սեռին: Պրոտարքոս և Ֆիլեբոս, իսկ

28

նախորդիվ նշված սեռերից ո՞ր մեկին դասենք խոհեմությունը, իմացությունը և խելքը, ընդ որում այնպես, որ դա չլինի սրբապղծություն: Ինձ թվում է, վտանգը մեծ է, և մենք պիտի կարողանանք ճիշտ պատասխանել այս հարցին:

- b** **Ֆիլեբոս.** Դու շատ բարձր ես դասում քո աստծուն, Սուկրատես:

Սուկրատես. Իսկ դու, բարեկամս, քո դիցուհուն: Սակայն պատասխանի՛ր հարցին:

Պրոտարքոս. Սուկրատեսը իրավացի է, Ֆիլեբոս, և դու պիտի համաձայնես նրան:

Ֆիլեբոս. Բայց մի՞թե դու չհամաձայնեցիր խոսել իմ փոխարեն, Պրոտարքոս:

Պրոտարքոս. Իհարկե, բայց հիմա ես փոքր-ինչ դժվարանում եմ և խնդրում եմ քեզ, Սուկրատես, որ դու լինես մեր մարգարեն, որպեսզի մենք չընտրենք սխալ մեկին և չասենք անպատեհություններ:

- c** **Սուկրատես.** Համաձայն եմ, Պրոտարքոս, քանզի խնդրածդ դժվար բան չէ: Բայց մի՞թե կատակով փառաբանելով իմ աստծուն՝ ես, ինչպես ասում է Ֆիլեբոսը, վախեցրի քեզ, երբ հարցրի, թե որ սեռին են պատկանում խելքն ու իմացությունը:

Պրոտարքոս. Այն էլ ինչպես, Սուկրատես:

Սուկրատես. Բայց դա հեշտ բան է: Բոլոր իմաստունները, որոնք իսկապես մեծարում են իրենք իրենց, համաձայն են, որ խելքը մեզ մոտ երկնքի և երկրի արքան է: Եվ գուցե իրավացի են¹⁹: Եթե ցանկանում եք, ավելի հիմնավոր քննենք այդ սեռը:

- d** **Պրոտարքոս.** Խոսիր, ինչպես կամենում ես, և մի՛ մտահոգվիր, թե ընդարձակ խոսքը կծանձրացնի մեզ:

Սուկրատես. Լավ ասացիր: Սկսենք հետևյալ հարցից:

Պրոտարքոս. Ո՞ր:

Սուկրատես. Պրոտարքոս, ինչպե՞ս կասենք՝ բոլոր իրերը և այսպես կոչված ամբողջը կառավարվում են անմիտ ու պատահական ուժով, թե՞ հակառակը, ինչպես ասում էին մեր

նախնիները՝ ամեն բան կառավարվում է խելքով և ամենայն ինչ համակարգող զարմանալի խոհեմությամբ:

Պրոտարքոս. Քո նշած երկու տարբերակները, սիրելի՛ e
Սուկրատես, ընդհանուր ոչինչ չունեն, և այն, ինչ հիմա ասացիր, ինձ սրբապիղծ է թվում: Իսկ ասել, թե խելքն է կառավարում ամեն ինչ, արժանի է աշխարհի պատկերին՝ արեգակին, լուսնին, աստղերին և ողջ երկնային շրջապտույտին: Ուրիշ ինչ-որ բան ես ո՛չ կասեի, ո՛չ էլ կմտածեի:

Սուկրատես. Կուզե՞ս, մենք էլ համաձայնենք նախնիների 29
խոսքին, այսինքն՝ որ ամեն բան այդպես է, և ոչ միայն կրկնենք առանց զգուշանալու ուրիշների ասածները, այլև նրանց հետ ենթարկվենք որևէ խելամիտ մարդու²⁰ քննադատության, որը կասեր, որ իրերը ոչ թե կարգի, այլ անկարգության մեջ են:

Պրոտարքոս. Ինչպե՞ս չուզեմ:

Սուկրատես. Այդ դեպքում հետևիր մեր հետագա քննությանը:

Պրոտարքոս. Ասա՛:

Սուկրատես. Ինչ վերաբերում է բոլոր կենդանի էակների մարմինների բնությանը, ապա դրանց կազմում մենք տեսնում ենք հուր, ջուր, օդ և... հող, ինչպես ասում են փոթորկի են- b
թարկվածները:

Պրոտարքոս. Շատ ճիշտ է, և մեզ էլ իրականում ստիպում է փոթորկվել այս խորհրդածության դժվարությունը:

Սուկրատես. Ուրեմն մեր մեջ եղած յուրաքանչյուր սեռի մասին մենք կասենք հետևյալը:

Պրոտարքոս. Ի՞նչ:

Սուկրատես. Որ դրանցից յուրաքանչյուրը մեր մեջ փոքր է, տկար ու ոչ մի տեղ անխառն չէ և որ իր ուժը արժանի է իր բնությանը: Ասելով դա մեր մեջ եղած մեկ սեռի մասին, նույնը մտածիր նաև մյուս բոլորի մասին: Դիցուք, մեր մեջ կա հուր, հետևաբար հուր կա ամեն ինչում:

Պրոտարքոս. Ինչպե՞ս չէ:

c Սոկրատես. Հուրը մեր մեջ թույլ է և սուղ, իսկ Համայնի մեջ զարմացնում է իր չափերով, գեղեցկությամբ և հրին հատուկ ուժով²¹:

Պրոտարքոս. Միանգամայն ճշմարիտ ես ասում:

Սոկրատես. Եվ ի՞նչ, մեր մեջ եղած հրի՞ց է սնվում, ծնվում և սկիզբ առնում Համայնի հուրը, թե՞ հակառակը՝ քո, իմ և բոլոր մյուս կենդանի էակների հուրը կախված է Համայնի հրից:

d Պրոտարքոս. Այդ հարցին չարժե անգամ պատասխանել:

Սոկրատես. Ծիշտ է, քանզի, կարծում եմ, նույնը կասես և կպատասխանես այստեղ կենդանի էակների և Համայնի մեջ եղած հողի և քիչ առաջ նշված մյուս տարրերի մասին:

Պրոտարքոս. Քանզի այլ կերպ պատասխանողներից ո՞վ կարող է խելամիտ համարվել:

Սոկրատես. Հավանաբար ոչ ոք: Բայց տե՛ս, թե ինչ է այստեղից բխում: Այն ամենը, որ հիմա նշեցինք, մեկի մեջ համադրված տեսնելով՝ մի՞թե այդ մեկը չկոչեցինք մարմին:

Պրոտարքոս. Ինչպե՞ս չէ:

e Սոկրատես. Նույնը մտածիր նաև տիեզերք կոչվածի մասին: Համադրված լինելով նույն տարրերից, այն նույնպես մարմին է:

Պրոտարքոս. Շատ ճիշտ ես ասում:

Սոկրատես. Մեր մարմինը այդ մարմնի՞ց է սնվում, թե՞ այդ մարմինն է սնվում մեր մարմնից՝ յուրացնելով այն տարրերը, որոնց մասին խոսում ենք:

Պրոտարքոս. Այդ հարցին, Սոկրատես, նույնպես չարժե պատասխանել:

30 Սոկրատես. Դե ինչ, իսկ արժե՞ արդյոք պատասխանել հետևյալ հարցին, ի՞նչ ես մտածում:

Պրոտարքոս. Ո՞ր հարցին:

Սոկրատես. Չե՞նք ասի, թե մարմինը հոգի ունի:

Պրոտարքոս. Պարզ է, որ կասենք:

Սոկրատես. Որտեղի՞ց, սիրելի՛ Պրոտարքոս, մարմինը

հոգի կվերցնեն, եթե Համայնի մարմինը հոգեզուրկ լիներ²² և չունենար այն ամենը,— ընդ որում բազում առումներով ավելի կատարյալ,— ինչ ունի մեր մարմինը:

Պրոտարքոս. Պարզ է, ուրիշ ոչ մի տեղից, ո՛վ Սուկրատես:

Սուկրատես. Չէ՞ որ, Պրոտարքոս, չկարծելով, թե չորս սեռերից՝ սահմանից, անսահմանից, խառնուրդից և չորրորդ սեռից՝ պատճառից, հենց այս վերջինն է մեր մեջ եղածին տալիս հոգի, շարժում մարմինը, բժշկում տկար մարմինը և ամեն ինչ համադրում ու ապաքինում, և չկոչելով սա ամենայն իմաստություն, մենք չենք մտածի, թե երկնքում մեծ քանակությամբ գոյություն ունեցող գեղեցիկ և մաքուր սեռերի մեջ է մտահղացվել ամենագեղեցիկ և ամենափառաշեղ իրերի բնությունը:

Պրոտարքոս. Դա միանգամայն անիմաստ կլիներ:

Սուկրատես. Ուրեմն չասենք այդպես: Ավելի լավ կլինի հաստատել, ինչպես արդեն շատ հաճախ արել ենք, որ Համայնի մեջ կա մեծ անսահմանություն և բավականաչափ սահման, ինչպես նաև ոչ անկարևոր պատճառ, որը կարգավորում և դասավորում է տարիները, տարվա եղանակներն ու ամիսները. այդ պատճառը արդարացի կլիներ կոչել իմաստություն և խելք:

Պրոտարքոս. Միանգամայն արդարացի:

Սուկրատես. Սակայն ո՛չ իմաստությունը, ո՛չ էլ խելքը երբևէ չէին գոյանա առանց հոգու²³:

Պրոտարքոս. Իհարկե:

Սուկրատես. Արդ, դու կասես, որ Ջևսի բնության մեջ պատճառի ուժով կա արքայական հոգի²⁴ և արքայական խելք, իսկ ուրիշ աստվածների մեջ՝ ուրիշ գեղեցիկ բաներ, որոնք սիրելի են նրանցից յուրաքանչյուրին:

Պրոտարքոս. Ինչպե՞ս չէ:

Սուկրատես. Եվ մի՛ կարծիր, Պրոտարքոս, թե սա լույս իմ հորինածն է. այն հաստատված է հների կողմից, որոնք ասում էին, թե իրենց դաշնակիցը՝ խելքը, իշխում է Համայնին:

Պրոտարքոս. Իհարկե:

- Սոկրատես.** Եվ այն պատասխան է տալիս իմ հարցին՝
e պնդելով, որ խելքը չորս սեռերից այն մեկն է, որը կոչվեց բոլոր իրերի պատճառ: Այժմ դու ստացար մեր պատասխանը:

Պրոտարքոս. Ստացա, ընդ որում՝ շատ բավարար պատասխան, թեպետ չհասկացա, ինչպես պատասխանեցիր:

Սոկրատես. Երբեմն, ո՛վ Պրոտարքոս, կատակը թույլ է տալիս շունչ առնել դժվար զրույցի ընթացքում:

Պրոտարքոս. Լավ է ասված:

- 31** **Սոկրատես.** Խելքը, բարեկամս, ինչ սեռի էլ պատկանի և ինչ ուժ էլ ունենա, մենք արդեն բացատրեցինք:

Պրոտարքոս. Լիովին:

Սոկրատես. Եվ քիչ առաջ նույն կերպ բացատրվեց նաև հաճույքի սեռը:

Պրոտարքոս. Իհարկե:

Սոկրատես. Հիշենք երկուսի մասին էլ, որ խելքը ազգակից է պատճառին և գրեթե նույն սեռից է, իսկ հաճույքը ինքն ըստ ինքյան անսահման է և այն սեռից է, որն իր մեջ և ինքն ըստ ինքյան չունի և երբեք չի ունենա ո՛չ սկիզբ, ո՛չ մեջտեղ, ո՛չ էլ վերջ:

Պրոտարքոս. Հիշենք, ինչպե՞ս չէ:

- b** **Սոկրատես.** Այնուհետև մենք պետք է պարզենք, թե ինչի մեջ են խելքն ու հաճույքը և որ վիճակն է առաջ բերում դրանք: Սկսենք հաճույքից: Գիշտ այնպես, ինչպես մենք սկսեցինք դրա սեռից, այնպես էլ հիմա կսկսենք հենց իրենից: Բայց մենք երբեք չէինք կարողանա բավարար չափով հետազոտել հաճույքը տառապանքից առանձին:

Պրոտարքոս. Եթե հարկավոր է այդպես շարժվել առաջ, այդպես կշարժվենք:

Սոկրատես. Քե՞զ էլ, ինչպես և ինձ, դրանց ծագումն այդպիսին է թվում:

- c** **Պրոտարքոս.** Ինչպիսի՞ն:

Սոկրատես. Ինձ թվում է, թե տառապանքն ու հաճույքը

իրենց բնությանը ծագում են ընդհանուր սեռից և միաժամանակ:

Պրոտարքոս. Հիշեցրու մեզ, սիրելի՛ Սոկրատես, թե նշված սեռերից որ մեկը նկատի ունես, ասելով ընդհանուր:

Սոկրատես. Կհիշեցնեն ուժերիս ներածին չափով, սիրելիս:

Պրոտարքոս. Հրաշալի է:

Սոկրատես. Ընդհանուր մենք կոչում ենք նշված չորս սեռերից երրորդը:

Պրոտարքոս. Այն, որի մասին հիշատակեցիր անսահմանից ու սահմանից հետո և որին, ինչպես կարծում եմ, դասեցիր առողջությունն ու ներդաշնակություն^ոնը:

Սոկրատես. Շատ ճիշտ ես: Իսկ հիմա հնարավորինս **d** ուշադիր եղիր:

Պրոտարքոս. Ասա, խնդրում եմ:

Սոկրատես. Երբ մեր՝ կենդանի էակներիս մեջ խաթարվում է ներդաշնակությունը, այդժամ խաթարվում է նաև բնությունը և առաջ են գալիս տառապանքները:

Պրոտարքոս. Նման է ճշմարտության:

Սոկրատես. Իսկ երբ ներդաշնակությունը վերականգնվում է և վերադառնում իր բնությանը, հարկ է ասել, որ առաջ է գալիս հաճույքը,– եթե կարիք կա կարևորն արտահայտել հակիրճ:

Պրոտարքոս. Կարծում եմ, իրավացի ես, Սոկրատես, **e** սակայն փորձենք ավելի հստակ արտահայտել ասվածը:

Սոկրատես. Ավելի հեշտ է հասկանալ ընդհանուր և ակնհայտ արտահայտությունները, այնպես չէ՞:

Պրոտարքոս. Որո՞նք:

Սոկրատես. Սովը կործանում և տառապա՞նք է:

Պրոտարքոս. Այո:

Սոկրատես. Իսկ ուտելը, որը վերածվում է հագեցման՝ հաճույք:

Պրոտարքոս. Այո:

32 **Սուկրատես.** Ծարավը նույնպես կործանում ու ցավ է, իսկ կրկին ընդունվող հեղուկի ուժը՝ հաճույք: Քայքայումն ու տարրալուծումը, որ դեմ է բնությանը և առաջ է գալիս տապից, մենք զգում ենք որպես տառապանք, իսկ բնական վերականգնումն ու զովացումը՝ որպես հաճույք:

Պրոտարքոս. Իհարկե:

Սուկրատես. Հեղուկի անբնական սառչելը կենդանի էակի համար տառապանք է, իսկ վերադարձը նույն բնական վիճակին՝ հաճույք: Մի խոսքով՝ տե՛ս, տեղի՞ն է թվում քեզ արդյոք փաստարկը, թե անսահմանից և սահմանափակից է բնականորեն գոյանում կենդանի տեսակը,– այսինքն այն փաստարկը, որ բերեցինք քիչ առաջ,– այնպես որ, երբ անսահմանն ու սահմանափակը պառակտվում են, գոյանում է տառապանքը, իսկ դրանց վերամիավորումն ու ամեն բանի վերադարձը նույն վիճակին ծնում է հաճույք:

Պրոտարքոս. Թող այդպես լինի: Որոշ իմաստով ինձ թվում է, թե ամեն ինչ հենց այդպես է:

c **Սուկրատես.** Իսկ չընդունե՞նք, որ այդ վիճակներից յուրաքանչյուրն իր մեջ ունի ցավի և հաճույքի մեկ տեսակ:

Պրոտարքոս. Ընդունենք:

Սուկրատես. Իսկ հիմա ենթադրիր, որ հենց հոգու մեջ կա այդ վիճակների նախակռահում, որը տալիս է հաճելի բաների դուրեկան և քաղցր կանխավայելք, իսկ տառապանքների նախակռահումը առաջ է բերում վախ և տառապանք:

Պրոտարքոս. Իսկապես, սա հաճույքի և ցավի ուրիշ տեսակ է, որը ծագում է հոգու նախակռահման շնորհիվ, առանց մարմնի միջնորդության:

Սուկրատես. Դու ճիշտ հասկացար: Ես կարծում եմ, որ այդ երկու տեսակների մեջ ցավն ու հաճույքը, լինելով զուտ և անխառն, ցույց են տալիս՝ հրապուրիչ է արդյոք հաճույքի ամբողջ սեռը, թե մենք այն պիտի վերագրենք մինչ այժմ հիշատակված սեռերից մեկին: Իսկ հաճույքն ու տառապանքը,

ինչպես տաքն ու սառը և բոլոր մյուս նման բաները պետք է համարենք մերթ ցանկալի, մերթ ոչ ցանկալի, քանի որ դրանք բարիքներ չեն և միայն երբեմն դրանցից ոմանք ընդունում են բարիքների բնություն:

Պրոտարքոս. Շատ ճիշտ ես ասում, հենց այդպես է պետք հետամուտ լինել նրան, ինչ փնտրում ենք այժմ:

Սոկրատես. Նախ պարզենք հետևյալը: Եթե մեր ասածը իրականություն է և կործանումը բերում է ցավ, իսկ վերականգնումը՝ հաճույք, մտածենք, թե ինչ վիճակներ են լինում յուրաքանչյուր կենդանի էակի մոտ, երբ սա ո՛չ կործանվում է, ո՛չ էլ վերականգնվում: Ուշադիր եղիր պատասխանելիս: Մի՞թե անհրաժեշտ չէ, որ ամեն կենդանի էակ այդ ժամանակ ո՛չ տառապի, ո՛չ հաճույք ստանա՝ ո՛չ շատ, ո՛չ էլ քիչ:

Պրոտարքոս. Անհրաժեշտ է:

Սոկրատես. Ուրեմն հաճույքի և տառապանքի վիճակներից բացի գոյություն ունի երրորդ վիճակ²⁵:

Պրոտարքոս. Իհարկե:

Սոկրատես. Այդ դեպքում լավ հիշիր դա, որովհետև հաճույքի մասին դատելու համար անկարևոր չէ՝ հիշում ենք արդյոք դա, թե ոչ: Եթե ցանկանում ես, հակիրճ կխոսենք այդ մասին:

Պրոտարքոս. Բայց ի՞նչ:

Սոկրատես. Դու գիտես, որ ոչինչ չի խանգարում խոհեմ ապրել կյանքը:

Պրոտարքոս. Նկատի ունես կյանքը առանց ուրախության և առանց տառապանքների՞:

Սոկրատես. Համենատելով կյանքերը մենք արդեն ասացինք, որ նա, ով ընտրել է բանական և խոհեմ կյանք, չպիտի ուրախանա՝ ո՛չ շատ, ո՛չ քիչ:

Պրոտարքոս. Հենց այդպես ասացինք:

Սոկրատես. Ուրեմն, նա պիտի ապրի այդպիսի կյանք, և գուցե անհեթեթ չի թվում, որ դա բոլոր կյանքերից ամենաաստվածայինն է:

Պրոտարքոս. Հավանական է, որ աստվածները ո՛չ ուրախանում են, ո՛չ էլ հակառակը:

- c **Սոկրատես.** Այո, հավանական է, որովհետև ո՛չ ուրախանալը, ո՛չ էլ հակառակը հարիր չէ նրանց: Սակայն պատեհ առիթի դեպքում մենք կքննենք դա նաև առաջիկայում և խելքին կտանք երկրորդ մրցանակը, եթե չենք կարող տալ առաջինը:

Պրոտարքոս. Շատ ճիշտ ես ասում:

Սոկրատես. Ինչ վերաբերում է մյուս տեսակին, ապա ասացինք, որ այն պատկանում է հենց հոգուն և գոյանում է ամբողջապես հիշողության շնորհիվ:

Պրոտարքոս. Ինչպե՞ս:

- Սոկրատես.** Երևում է, մենք պիտի նախ վերցնենք հիշողությունը, իսկ նախքան հիշողությունը՝ զգայությունը, եթե ուզում ենք, որ այդ ամենը մեզ պատշաճ կերպով պարզ դառնա:

Պրոտարքոս. Ի՞նչ նկատի ունես:

Սոկրատես. Դիցուք, մեր մարմնական կրթերի մի մասը ամեն անգամ մինչև հոգուն հասնելը մարում է մարմնի մեջ, իսկ մյուս մասը մուտք է գործում հոգի և առաջ է բերում ցնցման պես մի բան՝ մերթ երկուսի մեջ միաժամանակ, մերթ յուրաքանչյուրի մեջ առանձին:

Պրոտարքոս. Թող այդպես լինի:

- Սոկրատես.** Ամենից ճիշտ կլիներ ասել, որ մարմնի և հոգու մեջ մուտք չգործող կրթերը թաքնվում են մեզնից, իսկ դրանց մեջ մուտք գործողները չեն թաքնվում:

Պրոտարքոս. Իհարկե:

Սոկրատես. Թաքնվածը ոչ մի դեպքում մի՛ հասկացիր այնպես, իբրև թե նկատի ունեն մոռացության առաջացումը: Քանի որ մոռացությունը հիշողության կորուստն է, իսկ այն բանի հիշողությունը, որի մասին խոսում ենք հիմա, դեռ չի գոյացել: Իսկ խոսել այն մասին, ինչ գոյություն չունի և չի ունեցել, անհեթեթ է: Այդպես չէ՞:

Պրոտարքոս. Այդպես է:

Սուկրատես. Ուրեմն պարզապես փոխիր անունները:

Պրոտարքոս. Ինչպե՞ս:

Սուկրատես. «Թաքնվել հոգուց» ասելու փոխարեն, երբ հոգին անմասն է մնում մարմնի ցնցումներին, կոչիր այն, ինչը **34**
հիմա մոռացություն²⁶ ես կոչում, անզգայություն:

Պրոտարքոս. Հասկացա:

Սուկրատես. Իսկ երբ միևնույն վիճակի մեջ հոգին և մարմինը, ունենալով ընդհանուր գոյություն, ունեն ընդհանուր շարժում, դու սխալ չէիր արտահայտվի կոչելով այդ շարժումը **b**
զգայություն:

Պրոտարքոս. Միանգամայն իրավացի ես:

Սուկրատես. Ուրեմն արդեն հասկացա՞նք, թե ինչն ենք ցանկանում կոչել զգայություն:

Պրոտարքոս. Իհարկե:

Սուկրատես. Հիշողությունը զգայության պահապան կոչողը իմ կարծիքով իրավացի էր:

Պրոտարքոս. Շատ ճիշտ է:

Սուկրատես. Եվ չասե՞նք, որ հիշողությունը տարբերվում է վերհուշից²⁷:

Պրոտարքոս. Թերևս:

Սուկրատես. Եվ մի՞թե ոչ սրանով...

Պրոտարքոս. Ինչո՞վ:

Սուկրատես. Երբ հոգին ինչ-որ բան է կրում մարմնի հետ համատեղ և այնուհետև առանց մարմնի, ինքնուրույն, լավագույն ձևով վերարտադրում, մենք դա կոչում ենք վերհուշ: Այդպես չէ՞:

Պրոտարքոս. Իհարկե:

Սուկրատես. Եվ երբ հոգին զրկվում է զգայության կամ իմացության հիշողությունից ու այնուհետև դարձյալ այն վերականգնում ինքնուրույն, մենք դա կոչում ենք վերհուշ: **c**

Պրոտարքոս. ճիշտ ես ասում:

Սուկրատես. Այդ ամենը ասացի՞նք հետևյալի համար:

Պրոտարքոս. Ինչի՞:

Սուկրատես. Որպեսզի լավագույնս և խորագույնս հասկանանք հոգու հաճույքն առանց մարմնի, ինչպես նաև տենչանքը: Քանզի ասվածի արդյունքում, կարծում եմ, երկուսն էլ սկսում են ավելի լավ ուրվագծվել:

Պրոտարքոս. Այժմ, Սուկրատես, խոսենք այն մասին, թե ի՞նչ է սրանից բխում:

Սուկրատես. Ինչպես երևում է, շատ բան կա քննելու՝
d կապված հաճույքի ծագման և դրա բոլոր ձևերի հետ: Բայց հիմա, կարծում եմ, նախ պետք է անդրադառնալ տենչանքին և պարզել՝ ինչ է դա և որտեղ է գոյանում²⁸:

Պրոտարքոս. Իհարկե քննենք, չէ՞ որ դրանից ոչինչ չենք կորցնի:

Սուկրատես. Կկորցնենք, Պրոտարքոս, երբ գտնենք այն, ինչ հիմա փնտրում ենք, կկորցնենք այս հարցերի հարուցած դժվարությունները:

Պրոտարքոս. Լավ պաշտպանվեցիր: Փորձենք առաջ շարժվել:

e **Սուկրատես.** Արդյո՞ք քաղցը, ծարավը և շատ ուրիշ բաներ մենք կոչեցինք տենչանքներ²⁹:

Պրոտարքոս. Կոչեցինք:

Սուկրատես. Ի՞նչն էր նույնական այդ երկուսի դեպքում, որ մենք տեսանք և նույն կերպ անվանեցինք միանգամայն տարբեր բաները:

Պրոտարքոս. Ձևսը վկա, դա հեշտ չէ ասել, Սուկրատես, սակայն պետք է ասել:

Սուկրատես. Վերադառնանք այնտեղ, որտեղից սկսեցինք:

Պրոտարքոս. Ո՞ւր:

Սուկրատես. Մի՞թե մենք ամեն անգամ չենք ասում. «Ինչոր բան ծարավում է»:

Պրոտարքոս. Ինչպե՞ս չէ:

Սուկրատես. Ուրեմն այդ «ինչ-որ բանը» դատարկվու՞մ է:

Պրոտարքոս. Իհարկե:

Սուկրատես. Հետևաբար ծարավը տենչա՞նք է:

Պրոտարքոս. Այո, խմիչքի:

Սոկրատես. Խմիչքի՞, թե՞ խմիչքով լցվելու:

Պրոտարքոս. Կարծում եմ, լցվելու:

Սոկրատես. Ուրեմն մեզնից նա, ով դատարկվում է, ինչպես երևում է, տենչում է իր կրածի հակադիրը, քանզի դատարկվելով՝ ցանկանում է լցվել:

Պրոտարքոս. Միանգամայն պարզ է:

Սոկրատես. Եվ ի՞նչ: Առաջին անգամ դատարկվողը որտեղի՞ց կարող է զգայությամբ կամ հիշողությամբ հասու լինել լցվելուն, չէ՞ որ ո՛չ ներկայում, ո՛չ էլ անցյալում նա երբևէ չի կրել այդ վիճակը:

Պրոտարքոս. Ուրեմն ինչպե՞ս:

Սոկրատես. Բայց մենք ասում ենք, որ տենչացողը ինչ-որ բան է տենչում:

Պրոտարքոս. Ասում ենք:

Սոկրատես. Եվ տենչում է ոչ այն, ինչ կրում է, քանզի զգում է ծարավ և, ուրեմն, դատարկվել է, իսկ տենչում է լցվել:

Պրոտարքոս. Այո:

Սոկրատես. Նշանակում է, լցվելուն հասու է լինում ծարավածի ինչ-որ մասը:

Պրոտարքոս. Անհրաժեշտաբար:

Սոկրատես. Մարմինը դա չի կարող անել, որովհետև դատարկվում է:

Պրոտարքոս. Այո:

Սոկրատես. Ուրեմն մնում է, որ հոգին հասու դառնա լցվելուն, և ակնհայտ է, որ հիշողությամբ: Ուրիշ ինչո՞վ պիտի հասու դառնար:

Պրոտարքոս. Թերևս ոչնչով:

Սոկրատես. Հասկանու՞մ եք, թե ինչ դուրս եկավ մեր այս քննությունից:

Պրոտարքոս. Ի՞նչ:

Սոկրատես. Մեր ասելով՝ մարմինը չունի տենչանքներ:

Պրոտարքոս. Ինչպե՞ս:

Սուրբատես. Որովհետև ամեն կենդանի էակ տենչում է իր վիճակի հակադիր վիճակը:

Պրոտարքոս. Այն էլ ինչպես:

Սուրբատես. Իսկ տենչանքը, որ միտված է հակադիր վիճակին, ցույց է տալիս, որ գոյություն ունի այդ հակադիր վիճակների հիշողություն:

Պրոտարքոս. Իհարկե:

- d** **Սուրբատես.** Ցույց տալով տենչանքի առարկաներին միտված հիշողությունը՝ մեր խորհրդածությունը ապացուցում է, որ բոլոր կենդանի էակների ամեն տենչանք, ձգտում և դրանց իշխելու կարողություն պատկանում է հոգուն:

Պրոտարքոս. Շատ ճիշտ է:

Սուրբատես. Ուրեմն մեր խորհրդածությունը չի ընդունում, որ մեր մարմինն է զգում ծարավ, քաղց կամ նման ուրիշ ինչ-որ բան:

Պրոտարքոս. Իրավացի ես:

Սուրբատես. Այս առնչությամբ նկատի առնենք նաև հետևյալը: Մեր խորհրդածությունը, ինչպես երևում է, ցանկանում է բացահայտել դրանց մեջ կյանքի ինչ-որ տեսակ:

- e** **Պրոտարքոս.** Ինչի՞ մեջ, ի՞նչ տեսակ նկատի ունես:

Սուրբատես. Լցվելու և դատարկվելու մեջ և այն ամենի, ինչը վերաբերում է կենդանի էակների փրկությանն ու կործանմանը, և եթե կենդանի էակներից որևէ մեկը գտնվում է այդ վիճակներից մեկում, տառապում է, իսկ երբ վիճակը փոխվում է՝ ուրախանում:

Պրոտարքոս. Այդպես է:

Սուրբատես. Իսկ միջանկյալ վիճակում ի՞նչ է լինում:

Պրոտարքոս. Ինչպե՞ս թե միջանկյալ:

- Սուրբատես.** Իր կրած վիճակի պատճառով նա տառապում է, բայց հիշում է հաճույքի մասին, և երբ հաճելին սկսվի, տառապանքը կդադարի, սակայն նա դեռ չի լցվի: Այդ դեպքում ի՞նչ: Կասե՞նք, որ գտնվում է միջանկյալ վիճակում, թե՞ ոչ:

Պրոտարքոս. Կասեմք:

Սուկրատես. Ուրեմն տառապում է նա, թե՞ զվարճանում:

Պրոտարքոս. Ձևսը վկա, տառապում է կրկնակի՝ մարմնով կրելով այդ վիճակը, իսկ հոգեպես լինելով նախասպասման մեջ:

Սուկրատես. Ինչպե՞ս, ո՛վ Պրոտարքոս, ի՞նչ նկատի ունես կրկնակի տառապանք ասելով: Չի՞ լինում արդյոք, որ մեզմից ինչ-որ մեկը, դատարկվելով, հույս է փայփայում լքվել, իսկ երբեմն հակառակը՝ հուսալքության մեջ է:

b

Պրոտարքոս. Իհարկե:

Սուկրատես. Չե՞ս կարծում, որ հուսալով լքվել՝ մարդը ուրախանում է հիշողությամբ և միաժամանակ, լինելով դատարկված, տառապում է:

Պրոտարքոս. Անհրաժեշտաբար:

Սուկրատես. Այդժամ մարդը և մյուս կենդանի էակները ն՛ տառապում են, և՛ ուրախանում:

Պրոտարքոս. Թերևս:

Սուկրատես. Իսկ երբ մարդը, լինելով դատարկված, չունի լքվելու հու՞յս: Չի՞ լինում այդժամ վշտի կրկնակի վիճակ, որը դու հիմա նկատեցիր և պարզապես կրկնակի համարեցիր:

c

Պրոտարքոս. Շատ ճիշտ է, Սուկրատես:

Սուկրատես. Փորձենք նշված վիճակները քննել հետևյալ կերպ:

Պրոտարքոս. Ինչպե՞ս:

Սուկրատես. Կասե՞մք, որ այդ տառապանքներն ու հաճույքները ճշմարիտ են, թե՞ որ դրանք կեղծ են: Թե՞ կասենք, որ դրանց մի մասը ճշմարիտ է, իսկ մյուսը՝ ոչ³⁰:

Պրոտարքոս. Ինչպե՞ս, ո՛վ Սուկրատես, ինչպե՞ս կարող են հաճույքներն ու տառապանքները կեղծ լինել:

Սուկրատես. Պրոտարքոս, իսկ ինչպե՞ս են ճշմարիտ և կեղծ լինում վախերը, նախասպասումները կամ կարծիքները³¹:

Պրոտարքոս. Կարծիքների հարցում համաձայն են, իսկ վախերի ու նախասպասումների՝ ոչ:

d

Սուրբատես. Ի՞նչ նկատի ունես: Մենք, երևում է, դժվարին քննարկում ենք սկսում:

Պրոտարքոս. Իրավացի ես:

Սուրբատես. Այդ դեպքում, ո՛վ մեծ մարդու զավակ, հարկ է պարզել՝ համապատասխանում է այն արդյոք մեր նախորդ դատողությանը:

Պրոտարքոս. Թերևս հարկ է:

Սուրբատես. Ուրեմն պետք է հրաժեշտ տալ բոլոր երկարաբանություններին, որ չեն առնչվում խնդրո առարկային:

Պրոտարքոս. Ճիշտ է:

e Սուրբատես. Տե՛ս, ինձ միշտ զարմացրել է այն, ինչ ասացինք քիչ առաջ:

Պրոտարքոս. Ի՞նչ նկատի ունես:

Սուրբատես. Մի՞թե հաճույքների մի մասը կեղծ չէ, իսկ մյուսը՝ ճշմարիտ:

Պրոտարքոս. Այդ ինչպե՞ս:

Սուրբատես. Ո՛չ երազում, ո՛չ էլ հարթմնի, ո՛չ մոլեգնության, ո՛չ էլ ողջամտության մեջ, ինչպես ասում ես, ոչ ոք, եթե չի ուրախանում, չի մտածում, թե ուրախանում է, կամ եթե չի տառապում, չի մտածում, թե տառապում է:

Պրոտարքոս. Մենք բոլորս հենց այդպես ենք կարծում, Սուրբատես:

Սուրբատես. Բայց ճի՞շտ է դա արդյոք: Պետք չէ՞ պարզել՝ ճիշտ է այդպես ասելը, թե՛ ոչ:

Պրոտարքոս. Ես կասեի, որ պետք է:

37 Սուրբատես. Ուրեմն ավելի հստակ սահմանենք հաճույքի և կարծիքի մասին քիչ առաջ ասվածը: Չէ՞ որ «կարծիք կազմելը» գոյություն ունի:

Պրոտարքոս. Այո:

Սուրբատես. Իսկ «հաճույք զգա՞լը»:

Պրոտարքոս. Այո:

Սուրբատես. Իսկ գոյություն ունի՞ այն, ինչի մասին մենք կարծիք ենք կազմում:

Պրոտարքոս. Ինչպե՞ս չէ:

Սուկրատես. Իսկ այն, ինչից հաճույք ենք ստանում:

Պրոտարքոս. Իհարկե:

Սուկրատես. Հետևաբար կարծիք կազմողը, անկախ **b**
նրանից՝ ճիշտ է այդ կարծիքը, թե ոչ, իրականում երբեք չի՞
կորցնում այն:

Պրոտարքոս. Ինչպե՞ս կարող է կորցնել:

Սուկրատես. Նաև հաճույք ստացողը, անկախ նրանից՝
ճիշտ է ստանում այդ հաճույքը, թե ոչ, իրականում, ակնհայտ
է, երբեք չի կորցնում այն:

Պրոտարքոս. Այո, դա էլ այդպես է:

Սուկրատես. Ուրեմն մենք պետք է դիտարկենք, թե ինչ-
պես է կարծիքը լինում կեղծ և ճշմարիտ, իսկ հաճույքը՝ միայն
ճշմարիտ, այն դեպքում, երբ երկուսն էլ՝ ինչպես կարծիք
կազմելը, այնպես էլ ուրախանալը, իրական են:

Պրոտարքոս. Այո, պետք է դիտարկենք:

Սուկրատես. Դու նկատի ունես, որ հարկ է դիտարկել, **c**
թե ինչու կարծիքին կարող է հատուկ լինել ինչպես կեղծիքը,
այնպես էլ ճշմարտությունը, և ինչու կարծիքը ոչ թե սոսկ
կարծիք է, այլ որոշակի հատկություն ունեցող կարծի՞ք:

Պրոտարքոս. Այո:

Սուկրատես. Բայց մենք պետք է նաև համաձայնության
զանք այն հարցի շուրջ, թե արդյոք ամեն բան օժտված է ինչ-
ինչ հատկություններով և միայն հաճույքն ու տառապանքն են
այն, ինչ են, առանց որևէ հատկությունների:

Պրոտարքոս. Ակնհայտ է:

Սուկրատես. Սակայն բոլորովին էլ դժվար չէ տեսնել, որ
նրանք ունեն հատկություններ: Արդեն վաղուց ասել ենք, որ
և՛ հաճույքը, և՛ տառապանքը լինում են ինչպես շատ մեծ, **d**
այնպես էլ շատ փոքր:

Պրոտարքոս. Միանգամայն:

Սուկրատես. Բայց եթե այդ վիճակներից յուրաքանչ-
յուրին ավելանա արատավորությունը, ո՛վ Պրոտարքոս, չե՞նք

ասի, որ ն' կարծիքը, ն' հաճույքը կդառնան արատավոր:

Պրոտարքոս. Ինչպես չէ՞, Սոկրատես:

Սոկրատես. Իսկ եթե դրանց ավելանա ճշտությունը կամ ճշտության հակադիրը, չե՞նք ասի արդյոք, որ կարծիքը ճիշտ է, և հաճույքը նույնպես:

Պրոտարքոս. Անհրաժեշտաբար:

e **Սոկրատես.** Իսկ եթե այն, ինչի մասին մենք կարծիք ենք կազմում, մոլորեցնում է, ճիշտ չի՞ լինի համաձայնել, որ մոլորյալ կարծիքը ճիշտ չէ և ճիշտ չէ կազմված:

Պրոտարքոս. Անշուշտ:

Սոկրատես. Իսկ երբ մենք տեսնում ենք, որ տառապանքը կամ որևէ հաճույք մոլորության մեջ են իրենց առարկայի առնչությամբ, կկոչե՞նք արդյոք դրանք ճիշտ, օգտակար կամ կրնորոշե՞նք մեկ ուրիշ դրական անվամբ:

Պրոտարքոս. Դա անհնար է, եթե հաճույքը մոլորության մեջ է:

Սոկրատես. Բայց, թվում է, հաճույքը հաճախ հանդես է գալիս ոչ թե ճիշտ, այլ կեղծ կարծիքի հետ:

38 **Պրոտարքոս.** Իհարկե: Սակայն կարծիքը, Սոկրատես, մենք այդժամ կոչում ենք կեղծ, իսկ հաճույքը ոչ ոք երբևէ չի կոչի կեղծ:

Սոկրատես. Դու հիմա շատ եռանդուն պաշտպանում ես հաճույքը, Պրոտարքոս:

Պրոտարքոս. Բնավ, ես ասում եմ այն, ինչ լսել եմ:

Սոկրատես. Ուրեմն, բարեկամս, տարբերություն չկա՞, թե ինչպես է մեզնից յուրաքանչյուրի մոտ գոյանում հաճույքը՝ ճիշտ կարծիքի և իմացության՞ հետ, թե՞ կեղծիքի և չիմացության:

b **Պրոտարքոս.** Այստեղ տարբերությունը փոքր չէ:

Սոկրատես. Ուրեմն դիտարկենք այդ երկուսի միջև եղած տարբերությունը:

Պրոտարքոս. Խոսիր, ինչպես որ հարմար ես գտնում:

Սոկրատես. Կասեմ հետևյալը:

Պրոտարքոս. Ի՞նչ:

Սուկրատես. Մենք ասացինք, որ կարծիքը լինում է ինչպես կեղծ, այնպես էլ ճշմարիտ:

Պրոտարքոս. Այդպես է:

Սուկրատես. Իսկ դրանց՝ ճշմարիտ և կեղծ կարծիքներին, ինչպես հիմա ասացինք, հաճախ հետևում են հաճույքն ու տառապանքը:

Պրոտարքոս. Իհարկե:

Սուկրատես. Բայց մի՞թե հիշողությունից ու զգայությունից չէ ամեն անգամ գոյանում մեր կարծիքը և կարծիք կազմելու ունակությունը:

Պրոտարքոս. Այն էլ ինչպես:

Սուկրատես. Պետք չէ՞ ուրեմն համարել, որ մենք դրա մասին ունենք հետևյալ պատկերացումը...

Պրոտարքոս. Ի՞նչ պատկերացում:

Սուկրատես. Հաճախ նա, ով տեսնում է հեռվից և աղոտ, ցանկանում է դատողություն անել տեսածի մասին:

Պրոտարքոս. Այդպես է:

Սուկրատես. Իսկ չի՞ տա արդյոք նա ինքն իրեն հետևյալ հարցը:

Պրոտարքոս. Ի՞նչ հարց:

Սուկրատես. «Այդ ի՞նչ եմ տեսնում ժայռի մոտ, ծառի տակ»: Չե՞ս կարծում, որ այդպես կասեր նա ինքն իրեն, եթե նրան ինչ-որ բան երևար:

Պրոտարքոս. Իհարկե:

Սուկրատես. Իսկ երբ դրանից հետո նա ասեր ինքն իրեն, թե դա մարդ է, չէ՞ր լինի դա արդյոք պատահական պատասխան:

Պրոտարքոս. Անշուշտ:

Սուկրատես. Իսկ ավելի մոտ գալով նա գուցե ասեր, թե իր տեսածը ինչ-որ հովիվների սարքած արծան է³²:

Պրոտարքոս. Այո:

Սուկրատես. Իսկ եթե որևէ մեկը գտնվեր նրա կողքին և

վերջինս բարձրաձայներ ինքն իրեն ասածն ուղղելով կողքինին, ապա այդ դեպքում այն, ինչը մենք կարծիք կոչեցինք, մի՞թե չէր դառնա խոսք:

Պրոտարքոս. Ինչպե՞ս չէ:

Սոկրատես. Բայց երբ նա միայնակ մտածում է այդ մասին, ապա երբեմն դա բավական ժամանակ է պահանջում:

Պրոտարքոս. Անշուշտ:

Սոկրատես. Եվ ի՞նչ, ուրեմն այս առնչությամբ դու նույնն ես մտածում, ինչ ե՞ս:

Պրոտարքոս. Բայց ի՞նչ:

Սոկրատես. Ինձ թվում է, թե այդ դեպքում մեր հոգին նման է գրքի³³:

Պրոտարքոս. Ինչպե՞ս:

- 39** **Սոկրատես.** Ըստ իս՝ հիշողությունը, որ միտված է նրան, ինչին միտված են զգայությունները և դրանց հետ կապված տպավորությունները, ասես գրանցում է մեր հոգում համապատասխան խոսքերը: Եվ երբ այդ տպավորությունները ճիշտ են գրանցված, մեր մեջ առաջ է գալիս ճշմարիտ կարծիք և խոսք: Իսկ երբ մեր այդ գրանցողը կատարում է կեղծ գրանցում, առաջ է գալիս ճշմարտության հակադիրը:

- b** **Պրոտարքոս.** Ես էլ այդպես եմ կարծում և լիովին ընդունում եմ ասվածը:

Սոկրատես. Ընդունիր նաև, որ մեր հոգիներում միաժամանակ բնակվում է նաև մեկ ուրիշ վարպետ:

Պրոտարքոս. Ի՞նչ վարպետ:

Սոկրատես. Գեղանկարիչ³⁴, որը գրչի հետևից մեր հոգում պատկերներ է գծում:

Պրոտարքոս. Իսկ ինչպե՞ս և ե՞րբ է անում դա:

Սոկրատես. Երբ ոմն, վերացարկելով տեսողությունից կամ մեկ ուրիշ զգայությունից այն, ինչի մասին կարծիք է կազմվում կամ խոսվում, ինքն իր մեջ է հայում այդ կարծիք-

- c** ներն ու խոսքը: Թե՞ մեզ մոտ այդպես չի լինում:

Պրոտարքոս. Լինում է:

Սուկրատես. Եվ ուրեմն ճշմարիտ կարծիքների և խոսքերի պատկերները ճշմարիտ են, իսկ կեղծ կարծիքների և խոսքերի պատկերները՝ կե՞ղծ:

Պրոտարքոս. Լիովին:

Սուկրատես. Եթե մեր պնդումները ճիշտ են, դիտարկենք նաև հետևյալը:

Պրոտարքոս. Ի՞նչը:

Սուկրատես. Այդպես վերապրելով ներկան և անցյալը՝ ապագան մենք այդպես չե՞նք զգում:

Պրոտարքոս. Բոլոր ժամանակների վերաբերյալ մենք պիտի որ զգանք նույնը:

Սուկրատես. Բայց մի՞թե մենք չասացինք, որ հոգու հաճույքներն ու տառապանքները տեղի են ունենում նախքան մարմնական հաճույքների և տառապանքների գոյանալը, ուստի մենք նախապես ուրախանում ու տառապում ենք ապագայում տեղի ունեցողի առնչությամբ:

Պրոտարքոս. Շատ ճշմարիտ է:

Սուկրատես. Ուրեմն համաձայն արդեն ասվածի՝ մեր մեջ առաջ եկող գրոթյուններն ու պատկերները անցյալին և ներկային վերաբերում են, իսկ ապագային՝ ո՞չ:

Պրոտարքոս. Այն էլ ինչպես են վերաբերում:

Սուկրատես. Դու այդպես ես ասում, որովհետև այդ ամենը հույսեր են, որոնք վերաբերում են հաջորդող ժամանակին, իսկ մենք ողջ կյանքի ընթացքում հույսե՞ր ենք փայփայում:

Պրոտարքոս. Իհարկե:

Սուկրատես. Այդ դեպքում պատասխանիր հետևյալ հարցիս:

Պրոտարքոս. Ո՞ր:

Սուկրատես. Արդար, բարեպաշտ և բարի մարդը մի՞թե բոլոր իմաստներով աստվածահաճո է:

Պրոտարքոս. Ինչպե՞ս չէ:

Սուկրատես. Ուրեմն ի՞նչ, անարդար և առհասարակ հոռի մարդը չի՞ լինի դրա հակառակը:

Պատահանք

Պրոտարքոս. Անշուշտ կլինի:

Սոկրատես. Բայց մենք հենց նոր ասացինք, որ ամեն մարդ լի է հույսերով:

Պրոտարքոս. Այդպես է:

Սոկրատես. Ուրեմն մեզնից յուրաքանչյուրի մեջ կան խոսքեր, որոնք մենք հույսե՞ր ենք կոչում:

Պրոտարքոս. Այո:

Սոկրատես. Նմանապես նաև գեղանկարչի պատկերած նկարներ: Հաճախ մարդ տեսնում է իր ունեցած ոսկու առատությունը և մեծ հաճույք է զգում: Նա շատ է ուրախանում դիտելով այդ պատկերները:

Պրոտարքոս. Ինչպե՞ս է:

- b** **Սոկրատես.** Ասե՞նք ուրեմն, որ լավ մարդկանց մոտ հիմնականում գրանցվում են ճշմարիտ գրությունները, քանի որ լավ մարդիկ աստվածահաճո են, իսկ հոռիների դեպքում լիովին հակառակն է: Ասե՞նք:

Պրոտարքոս. Իհարկե ասենք:

Սոկրատես. Ուրեմն հոռիների մեջ նկարված են նաև հաճույքների պատկերներ, սակայն դրանք կեղծ են:

Պրոտարքոս. Ինչպե՞ս է:

- c** **Սոկրատես.** Ուրեմն շատ հոռիներ ուրախանում են կեղծ հաճույքներից, իսկ առաքինիները՝ ճշմարիտ հաճույքներից:

Պրոտարքոս. Անհրաժեշտաբար այդպես է:

Սոկրատես. Հետևաբար, համաձայն մեր քննության, մարդկանց հոգիներում կան կեղծ հաճույքներ, որոնք ճշմարիտների զավեշտալի նմանակներն են: Նույնը նաև տառապանքների պարագայում:

Պրոտարքոս. Այդպես է:

Սոկրատես. Կարծիք ունեցողը միշտ էլ իսկապես կարծիք ունի, երբեմն էլ այն մասին, ինչ չկա, չի եղել և չի լինի:

Պրոտարքոս. Միանգամայն:

- d** **Սոկրատես.** Ըստ իս՝ հենց սա է առաջ բերում կեղծ կարծիքներ և ստիպում կեղծ կարծիք կազմել: Այդպես չէ՞:

Պրոտարքոս. Այո:

Սոկրատես. Ուրեմն ինչ, չվերագրե՞նք տառապանքին և հաճույքին այն նույն հատկությունը, որ հատուկ է կարծիքների:

Պրոտարքոս. Ինչպե՞ս:

Սոկրատես. Իրականում միշտ ուրախանում է նույնիսկ նա, ով ուրախանում է անտեղի, հաճախ առանց որևէ առնչության գոյություն ունեցողի կամ անցյալում տեղի ունեցածի հետ, և ով հաճախ, զուցե ամենից հաճախ, ուրախանում է մի բանի վրա, որ երբեք տեղի չի ունենա:

Պրոտարքոս. Դա էլ անհրաժեշտաբար այդպես է, Սոկրատես:

Սոկրատես. Չի՞ կարելի արդյոք նույնը ասել նաև վախերի, ցասումների և նման ուրիշ բաների մասին, այսինքն՝ որ դրանք բոլորն էլ երբեմն կեղծ են:

Պրոտարքոս. Իհարկե:

Սոկրատես. Եվ ինչ, կարո՞ղ ենք ասել, որ վնասակար և օգտակար կարծիքները ծագում են կեղծ կարծիքներից տարբեր կերպ:

Պրոտարքոս. Ոչ:

Սոկրատես. Ինձ թվում է, հաճույքները մենք նույնպես հասկանում ենք որպես վնասակար, որովհետև դրանք կեղծ են:

Պրոտարքոս. Միանգամայն հակառակը, Սոկրատես: Քանզի տառապանքներն ու հաճույքները վնասակար են ոչ թե իրենց կեղծության պատճառով, այլ որովհետև դրանք ուղեկցվում են մեկ ուրիշ՝ մեծ և բազմաբնույթ վնասակարությամբ:

Սոկրատես. Վնասակար հաճույքների և վնասակարության պատճառով վատը դարձած հաճույքների մասին մենք կխոսենք մի փոքր ուշ, եթե անհրաժեշտ համարենք: Իսկ հիմա խոսենք կեղծ հաճույքների մասին, որոնք այլ եղանակով և հաճախ գոյանում են մեր մեջ առատորեն: Գուցե դա օգտակար լինի մեր հետագա որոշումների համար:

Պրոտարքոս. Իհարկե, եթե դրանք գոյություն ունեն:

Սուկրատես. Սակայն, ո՛վ Պրոտարքոս, ինձ թվում է, որ դրանք գոյություն ունեն: Քանի դեռ մենք հակված ենք պնդելու այդ դրույթը, չի կարելի թողնել այն առանց մեկնաբանության:

Պրոտարքոս. Հրաշալի է:

Սուկրատես. Ուրեմն շարվենք այդ դրույթի շուրջ, ինչպես ըմբիշները:

Պրոտարքոս. Շարվենք:

- c Սուկրատես. Բայց, եթե հիշում ես, մենք արդեն ասացինք, որ տենչանքներ ունենալիս մեր մարմինը զգացումներով համակված է հոգուց առանձին:

Պրոտարքոս. Հիշում եմ, այդպես ենք ասել:

Սուկրատես. Մարմնի զգացումներին հակառակ զգացումներ տենչացողը հոգին է, իսկ տառապանքի միջոցով տառապանք կամ հաճույք պատճառողը մարմինն է, չէ՞:

Պրոտարքոս. Այո:

Սուկրատես. Եզրակացրու, ինչ է բխում այս ամենից:

Պրոտարքոս. Դու՛ ասա:

- d Սուկրատես. Եթե այդպես է, ապա տառապանքն ու հաճույքը առաջ են գալիս միաժամանակ և, ինչպես այժմ պարզեցինք, միաժամանակ են առաջ գալիս նաև այդ հակադիր վիճակների զգացողությունները:

Պրոտարքոս. Ակնհայտ է:

Սուկրատես. Իսկ չասացի՞նք և չհամաձայնեցի՞նք արդյոք նախապես հետևյալի շուրջ:

Պրոտարքոս. Ինչի՞:

Սուկրատես. Որ տառապանքն ու հաճույքը ընդունում են առավելն ու պակասը և վերաբերում են անսահմանին:

Պրոտարքոս. Ասացինք: Եվ ի՞նչ:

Սուկրատես. Իսկ գոյություն ունի՞ արդյոք այդ ամենի մասին ճիշտ դատելու միջոց:

Պրոտարքոս. Ի՞նչ միջոց, ինչպե՞ս:

- e Սուկրատես. Երբ ցանկանում ենք դատել դրանց մասին

և իմանալ, թե դրանցից որն է մեծ մյուսից, որն է փոքր, ավելի շատ ու ավելի ուժեղ և որն է պակաս ու թույլ՝ տառապանքը հաճույքից, տառապանքը տառապանքից և հաճույքը հաճույքից:

Պրոտարքոս. Այո, այդպես է, և մենք ցանկանում ենք հենց այդպես դատել:

Սոկրատես. Եվ ի՞նչ, տեսողության դեպքում հեռու և մոտ գտնվող մեծությունների հայեցումը թաքցնում է ճշմարտությունը և կեղծ դարձնում կարծիքները: Մի՞թե նույնը տեղի չունի նաև տառապանքների և հաճույքների դեպքում: 42

Պրոտարքոս. Դեռ ավելի շատ, Սոկրատես:

Սոկրատես. Բայց չէ՞ որ քիչ առաջ մենք ունեինք հենց հիմա ասվածի հակառակը:

Պրոտարքոս. Ի՞նչ նկատի ունես:

Սոկրատես. Այնժամ կեղծ և ճշմարիտ կարծիքները, առաջ գալով, տառապանքներին և հաճույքներին հաղորդում էին իրենց վիճակները: b

Պրոտարքոս. Շատ ճիշտ է:

Սոկրատես. Իսկ հիմա դրանք փոխվում են՝ կախված նրանից, թե ամեն անգամ որտեղից են դիտվում՝ հեռվի՞ց, թե՞ մոտիկից³⁵, և ինչպես են համեմատվում: Հաճույքները ավելի մեծ և ավելի ուժեղ են տառապանքներից, իսկ տառապանքները հակառակ իմաստով՝ հաճույքներից:

Պրոտարքոս. Ասվածի համաձայն անհրաժեշտաբար այդպես է:

Սոկրատես. Ուրեմն դու կկտրես այն չափը, որով մեկը մյուսից փոքր կամ մեծ է թվում, բայց իրականում այդպիսին չէ, և չես ասի, որ այն, ինչ թվում է, ճիշտ է, և երբեք չես համարձակվի ասել, թե դրա բաժին հաճույքն ու տառապանքը ճիշտ են և ճշմարիտ: c

Պրոտարքոս. Իհարկե ոչ:

Սոկրատես. Այնուհետև մենք կտեսնենք, չե՞նք հանդիպի արդյոք կենդանի էակների մեջ երևացող և իսկապես

առկա հաճույքներ ու տառապանքներ, որոնք է՛լ ավելի կեղծ կլինեն:

Պրոտարքոս. Ի՞նչ հաճույքների և տառապանքների մասին ես խոսում:

Սոկրատես. Հաճախ է ասվել, որ երբ որևէ բնություն կործանվում է, տարրալուծվելով կամ համադրվելով, լցվելով կամ պարպվելով, ավելանալով կամ պակասելով, առաջ են գալիս տառապանքներ, ցավեր ու տանջանքներ և բոլոր այն բաները, որ կոչում ենք այդ անուններով:

Պրոտարքոս. Այո, դա հաճախ է ասվել:

Սոկրատես. Եվ երբ բնությունը վերականգնվում է, այդ վերականգնումը մենք ընդունում ենք հաճույքով:

Պրոտարքոս. Ճիշտ է:

Սոկրատես. Իսկ երբ մեր մարմինը այդ վիճակներից և ոչ մեկը չի՞ կրում:

Պրոտարքոս. Ե՞րբ է այդպես լինում, Սոկրատես:

Սոկրատես. Հարցը, որ տվեցիր, Պրոտարքոս, չի վերաբերում մեր հետազոտությանը:

Պրոտարքոս. Ինչու՞:

Սոկրատես. Որովհետև այդ հարցը չի խանգարում ինձ կրկնելու իմ հարցը:

Պրոտարքոս. Ի՞նչ հարց:

Սոկրատես. Եթե այդպես չլիներ, Պրոտարքոս, ասե՞մ, թե ինչ կբխեր այստեղից մեզ համար:

Պրոտարքոս. Դու նկատի ունես, երբ մարմինը որևէ ուղղությամբ չի՞ շարժվում:

Սոկրատես. Այո:

Պրոտարքոս. Պարզ է, Սոկրատես, որ այդ դեպքում երբեք չէր գոյանա ո՛չ հաճույք, ո՛չ էլ տառապանք:

Սոկրատես. Հրաշալի ասացիր: Բայց ես կարծում եմ, դու նկատի ունես, որ մեր մեջ միշտ էլ առկա է այդ վիճակներից որևէ մեկը, ինչպես ասում են իմաստունները³⁶: Ամեն բան միշտ հոսում է վեր և վար:

Պրոտարքոս. Ասում են, և ինձ թվում է՝ վատ չեն ասում:

Սուկրատես. Իհարկե, չէ՞ որ իրենք էլ վատը չեն: Բայց ես կցանկանայի խուսափել բերված փաստարկից: Ստադիր եմ փախչել, իսկ դու հետևիր ինձ:

Պրոտարքոս. Ասա, ու՞ր:

Սուկրատես. Թող ձեր ասածով լինի, կասենք իմաստուններիմ: Իսկ դու պատասխանիր՝ մի՞շտ է արդյոք շնչավոր էակը զգում այն ամենը, ինչ կրում է, և մեզմից չի՞ թաքնվում այն, որ մենք աճում ենք և որ ուրիշ այդպիսի բաներ ենք կրում: Թե՞ տեղի է ունենում հակառակը:

Պրոտարքոս. Իհարկե հակառակը: Գրեթե բոլոր այդ վիճակները թաքնվում են մեզմից:

Սուկրատես. Ուրեմն մենք ճիշտ չասացինք, որ այս կամ այն կողմ տանող փոփոխությունները առաջ են բերում տառապանք և հաճույք:

Պրոտարքոս. Ինչպե՞ս չէ:

Սուկրատես. Ավելի ճիշտ և անհերքելի կլինի հետևյալ պնդումը:

Պրոտարքոս. Ո՞րը:

Սուկրատես. Մեծ փոփոխությունները մեր մեջ առաջ են բերում տառապանքներ և հաճույքներ, իսկ չափավորներն ու փոքրերը ո՛չ տառապանք են պատճառում, ո՛չ էլ հաճույք:

Պրոտարքոս. Սա նախորդ պնդումից ավելի ճիշտ է, Սուկրատես:

Սուկրատես. Արդ, եթե այդպես է, դարձյալ առաջ է գալիս արդեն մեր նշած կյանքը:

Պրոտարքոս. Ի՞նչ կյանք:

Սուկրատես. Այն կյանքը, որը, ինչպես ասացինք, զուրկ է տառապանքներից և ուրախություններից:

Պրոտարքոս. Ծիշտ են ասում:

Սուկրատես. Ըստ այդմ հաստատենք կյանքի երեք տեսակները՝ հաճելի կյանք, տառապալից կյանք և կյանք, որը ո՛չ հաճելի է, ո՛չ էլ տառապալից: Ի՞նչ կասես սրա մասին:

Պրոտարքոս. Նույնը, ինչ դու. կա երեք կյանք:

Սոկրատես. Իսկ չի՞ կարող արդյոք տառապանքի բացակայությունը նույնական լինել ուրախությանը:

Պրոտարքոս. Ինչպե՞ս:

Սոկրատես. Եթե դու լսեիր, որ ամենից հաճելին տառապանքից ազատ կյանքն է, ինչպե՞ս կհասկանայիր դա:

Պրոտարքոս. Այդպես ասողը նկատի ունի, որ հաճույքը տառապանքի բացակայությունն է:

e **Սոկրատես.** Դիցուք, մենք ունենք երեք իր,— թո՛ղ լինենք ուզած իրերը,— և կոչում ենք դրանք հետևյալ գեղեցիկ անուններով. մեկը՝ ոսկի, մյուսը՝ արծաթ, իսկ երրորդը՝ ո՛չ ոսկի, ո՛չ էլ արծաթ:

Պրոտարքոս. Թո՛ղ այդպես լինի:

Սոկրատես. Կարո՞ղ է այս վերջինը դառնալ ոսկի կամ արծաթ:

Պրոտարքոս. Ո՛չ մի դեպքում:

Սոկրատես. Բանականությամբ առաջնորդվողը չի կարող միջին կյանքը, որի մասին խոսում ենք, ո՛չ համարել և ո՛չ էլ կոչել հաճելի կամ տառապալից:

Պրոտարքոս. Իհարկե:

44 **Սոկրատես.** Սակայն, բարեկամս, մենք գիտենք, որ այդպես են համարում և այդպես են կոչում:

Պրոտարքոս. Լիովին:

Սոկրատես. Եվ ի՞նչ, նրանք կարծում են, որ երբ չեն տառապում, ուրախանու՞մ են:

Պրոտարքոս. Այդպես են ասում:

Սոկրատես. Ուրեմն կարծում են, թե ուրախանում են: Չէ՞ որ այլապես չէին ասի:

Պրոտարքոս. Թերևս:

Սոկրատես. Ուրախության մասին նրանք ունեն կեղծ կարծիք, եթե, իհարկե, տարբերություն կա տառապելու և ուրախանալու միջև:

Պրոտարքոս. Տարբերություն, իհարկե, կա:

Սուկրատես. Ուրեմն ի՞նչ, կընդունե՞նք, ինչպես քիչ **b**
առաջ, որ կյանքը երեք տեսակի է, թե՞ կասենք, որ գոյություն
ունի կյանքի միայն երկու տեսակ՝ տառապանքը որպես մարդ-
կանց չարիք, իսկ տառապանքից ազատվելը, որ ինքնին բա-
րիք է, ուրախություն:

Պրոտարքոս. Ինչպե՞ս եղավ, ո՛վ Սուկրատես, որ մենք
հիմա ինքներս մեզ տալիս ենք այդ հարցը, չեմ հասկանում:

Սուկրատես. Ուրեմն իսկպպես չես հասկանում Ֆիլեբոսի
հառակորդներին³⁷, Պրոտարքոս:

Պրոտարքոս. Ի՞նչ հակառակորդների նկատի ունես:

Սուկրատես. Նրանց, ովքեր, ինչպես ասում են, բավա-
կանին գիտակ են բնության հարցերում և որոնք ասում են, թե
հաճույքներ առհասարակ գոյություն չունեն:

Պրոտարքոս. Ինչպե՞ս թե:

Սուկրատես. Նրանք փախչում են այն ամենից, ինչ Ֆի- **c**
լեբոսը կոչում է հաճույք:

Պրոտարքոս. Եվ ինչ, դու խորհուրդ ես տալիս մեզ հա-
վատա՞լ դրան, Սուկրատես:

Սուկրատես. Ոչ, նրանց պետք է օգտագործել որպես
գուշակների, որոնք գուշակում են ոչ թե արվեստի շնորհիվ,
այլ ազնիվ բնություն ունեցող ծանր տրամադրության, որը հա-
տուկ է հաճույքն ստողներին և հաճույքի մեջ առողջ ոչինչ
չտեսնողներին, հետևաբար նրանց, ովքեր հաճույքի հմայքը
համարում են կախարդանք, բայց ոչ հաճույք: Օգտագործենք **d**
նրանց, նկատի առնելով նաև նրանց մյուս տարօրինակու-
թյունները: Բացի այդ, իմացի՛ր, որ իմ կարծիքով գոյություն
ունեն ճշմարիտ հաճույքներ: Քննելով երկու փաստարկների
ուժը՝ մենք կկարողանանք օգտագործել դրանք ճիշտ վճիռներ
կայացնելու համար:

Պրոտարքոս. Ճիշտ ես ասում:

Սուկրատես. Որպես դաշնակիցների հետևենք Ֆիլեբոսի
հակառակորդներին իրենց տարօրինակությունների հետքերով:
Ինձ թվում է, նրանք սկսելով հեռվից, այսպիսի մի բան են

ասում. «Եթե մենք ցանկանալինք ճանաչել ինչ-որ տեսակի բնությունը, օրինակ՝ կարծրության, կանեինք դա դիտարկելով առավել՝ կարծր մարմինները, թե՞ պակաս կարծրները»: Չէ՞ որ դու, Պրոտարքոս, պիտի պատասխանես և՛ ինձ, և՛ այս փնթփնթաններին:

Պրոտարքոս. Իհարկե, և ես ասում եմ, որ պետք է առաջնորդվել առավելագույնով:

Սոկրատես. Ուրեմն, ցանկանալով տեսնել, թե ինչ բնություն ունի հաճույքի սեռը՝ մենք պիտի դիտենք ոչ թե փոքր հաճույքները, այլ նրանք, որոնք համարվում են ամենաբարձրներն ու ամենաուժեղները:

45 **Պրոտարքոս.** Ամեն ոք կհամաձայնի ասածիդ:

Սոկրատես. Իսկ մի՞թե ամենահասանելի և ամենամեծ հաճույքները, ինչպես հաճախ ասում ենք, կապված չեն մարմնի հետ:

Պրոտարքոս. Անտարակույս:

Սոկրատես. Իսկ ու՞մ դեպքում են դրանք առավել մեծ՝ հիվանդություններով տառապողների՞, թե՞ առողջների: Խուսափենք հապճեպ պատասխանից, որպեսզի չսխալվենք: Թերևս կասեինք, որ առողջների:

b **Պրոտարքոս.** Թերևս:

Սոկրատես. Արդյո՞ք ամենամեծ հաճույքները նրանք չեն, որոնց նախորդում են ամենամեծ տենչանքները:

Պրոտարքոս. Ծիշտ է:

Սոկրատես. Իսկ տենդով և նման ուրիշ հիվանդություններով տառապող մարդկանց ծարավը, դողը և մնացած բաները, որ սովորաբար զգում են մարմնով, ավելի ուժեղ չեն՞: Մի՞թե նրանց կարիքը ավելի մեծ չէ, և բավարարելով այն՝ մի՞թե նրանք ավելի մեծ հաճույք չեն զգում: Չե՞նք ասի, որ սա ճշմարիտ է:

c **Պրոտարքոս.** Թվում է, միանգամայն ճշմարիտ ես ասում:

Սոկրատես. Ուրեմն ի՞նչ: Ծի՞շտ կլինի նաև, եթե մենք

ասենք, որ նա, ով ուզում է տեսնել ամենամեծ հաճույքները, պիտի ոչ թե առողջ, այլ հիվանդ լինի: Մի՛ կարծիր, թե հարցնում են՝ պարզելու համար, որ հիվանդները ավելի մեծ հաճույք են ստանում, քան առողջները: Ես փնտրում եմ հաճույքի մեծությունը և թե երբ է այն ուժեղ: Քանզի մենք ասում ենք, որ պիտի մտածենք, որպեսզի հասկանանք հաճույքի բնությունը և ինչպիսին են համարում այդ բնությունը նրանք, ովքեր պնդում են, թե այն առհասարակ գոյություն չունի:

Պրոտարքոս. Ես կարծես կարողանում եմ հետևել քեզ:

Սոկրատես. Գուցե, Պրոտարքոս, ինքդ ինձնից ոչ պակաս կարողանայիր ցույց տալ դա: Բայց պատասխանիր՝ որտե՞ղ ես ավելի շատ հաճույք տեսնում,– ավելի շատ ոչ թե քանակությամբ, այլ ուժգնությամբ,– սանձարձակությամբ մեջ, թե՞ խոհեմ կյանքի: Պատասխանելիս ուշադի՛ր եղիր:

Պրոտարքոս. Ես հասկացա, ինչ նկատի ունես, և տեսնում եմ մեծ տարբերություն: Չէ՞ որ խոհեմների համար միշտ տեղին է «Չափից ավելի՝ ոչինչ» ասացվածքը³⁸, որի հրահանգին նրանք ենթարկվում են: Իսկ անխոհեմներին և մոլեգնության հասնող սանձարձակներին ուժեղ հաճույքը հասցնում է խենթության:

Սոկրատես. Հրաշալի է: Բայց եթե դա այդպես է, ակնհայտ է, որ մեծագույն հաճույքներն ու տառապանքները հոգու և մարմնի արատավորության, և ոչ թե առաքինության մեջ են:

Պրոտարքոս. Անշուշտ:

Սոկրատես. Մենք պիտի ընտրենք դրանցից մի քանիսը և տեսնենք, թե ինչու ենք կոչում դրանք ամենամեծ:

Պրոտարքոս. Անհրաժեշտաբար:

Սոկրատես. Տե՛ս, թե ինչպիսին են հետևյալ հիվանդություններին բնորոշ հաճույքները:

Պրոտարքոս. Ի՞նչ հիվանդություններ:

Սոկրատես. Նողկալի, նրանք, որ ամենից շատ են ատելի մեր փնթփնթաններին:

Պրոտարքոս. Այդ ի՞նչ հաճույքներ են:

Սուրատես. Օրինակ, քոսի դեպքում մերսումը, և այդպես բոլոր մյուս հիվանդությունների համար, որ չեն պահանջում դեղ: Հանուն աստվածների, ինչպե՞ս կոչենք այս վիճակը՝ հաճու՞յք, թե՞ տառապանք:

Պրոտարքոս. Դա հավանաբար չարիքի ինչ-որ խառնուրդ է, Սուրատես:

Սուրատես. Այս օրինակը հասցեագրված չէ Ֆիլեբոսին:
b Բայց առանց այս օրինակների, Պրոտարքոս, չքննելով այս հաճույքներն ու սրանց հաջորդողները, հազիվ թե կարողանալինք գտնել մեր փնտրածը:

Պրոտարքոս. Ուրեմն պետք է դիմել սրանց ազգակից հաճույքներին:

Սուրատես. Նկատի ունես խառնուրդի մեջ մաս կազմողները:

Պրոտարքոս. Իհարկե:

Սուրատես. Լինում են մարմնավոր խառնուրդներ, դրանք
c մարմիններում են, և լինում են հոգեղեն խառնուրդներ, որ հոգու մեջ են: Հոգու և մարմնի տառապանքները մենք նույնպես կգտնենք հաճույքների հետ միախառնված, և այդ կապը կոչվում է մե՛րթ հաճույք, մե՛րթ տառապանք:

Պրոտարքոս. Ինչպե՞ս:

Սուրատես. Երբ ապաքինվելիս կամ հիվանդանալիս որևէ մեկը միաժամանակ կրում է նաև հակադիր վիճակը, ասենք՝ դողալիս միաժամանակ ջերմում է կամ ջերմելիս՝ նաև մրսում, ձգտելով մի վիճակը ձեռք բերել, իսկ մյուսից՝ ազատվել, քաղցրի և դառնի այդ խառնուրդը նախ անհանգստացնում է, իսկ հետո առաջ է բերում հույժ գրգռվածություն:
d

Պրոտարքոս. Շատ ճիշտ ես ասում:

Սուրատես. Արդյո՞ք որոշ այդ խառնուրդների մեջ տառապանքն ու ցավը հավասար չեն և մյուս խառնուրդների մեջ մի տարրը շատ չէ մյուսից:

Պրոտարքոս. Ինչպե՞ս չէ:

Սուրատես. Նկատի ունեմ, երբ տառապանքն ավելի

շատ է, քան հաճույքը, ինչպես արդեն հիշատակված քոսի և քորի դեպքում: Երբ մենք քոր և այրոցք ենք զգում և տրորելն ու քորելը չի օգնում, այլ միայն գրգռում է մաշկը, մենք կրակին կամ սառը ինչ-որ բանի մոտեցնելով մարմնի այդ մասերը և փոխելով դրանց վիճակը՝ երբեմն աննկարագրելի հաճույք ենք պատճառում ներքին մասերին, իսկ երբեմն էլ արտաքին մասերի զգացածին հակադիր զգացումներ՝ տառապանքի և հաճույքի խառնուրդ, անկախ այն բանից, թե որ կողմում է առավելությունը, և բռնի տարանջատում ենք միախառնվածը և խառնում տարանջատվածը:

Պրոտարքոս. Միանգամայն ճշմարիտ է:

Սոկրատես. Երբ այդ խառնուրդի մեջ հաճույքն ավելի շատ է, տառապանքի հավելումը գրգռում և առաջ է բերում թույլ քոր, իսկ էպես ավելի մեծ հաճույքը երբեմն ստիպում է թռչկոտել, պատճառ է դառնում մաշկի այլևայլ գունավորումների, մարմնի ամենատարբեր դիրքերի, շնչառության զանազան փոփոխությունների և մարդուն զգում է ծայրահեղ մոլեգնության մեջ:

Պրոտարքոս. Այդպես է:

Սոկրատես. Եվ նա, բարեկամս, ինքն իր մասին ասում է, և ուրիշներն են իր մասին ասում, որ վայելելով այդ հաճույքները՝ նա ասես մեռնում է: Հենց այդ հաճույքներին է նա ամեն կերպ ձգտում, և որքան ավելի սանձարձակ և խենթ է՝ այնքան ավելի ու ավելի: Դրանք նա կոչում է ամենանշանակալի բանը, իսկ նրանց, ովքեր գլխավորապես ապրում են այդ հաճույքների մեջ, համարում է ամենաերջանիկը:

Պրոտարքոս. Դու, Սոկրատես, նկարագրեցիր մարդկանց մեծամասնության կարծիքը:

Սոկրատես. Այո, ինչ վերաբերում է հաճույքներին, Պրոտարքոս, որոնք մարմնի արտաքին և ներքին վիճակների խառնուրդ են: Իսկ այն հաճույքների վերաբերյալ, որ առաջանում են, երբ հոգին մարմնին հաղորդում է հակառակ վիճակ, այսինքն՝ տառապանք հաճույքի և հաճույք տառապանքի փոխա-

րեն, մենք արդեն պարզեցինք, որ կենդանի էակը պարավելով տենչում է լցվել և հուսալով լցվել՝ ուրախանում է, իսկ լինելով դատարկ՝ տառապում է: Մենք չհաստատեցինք դա, բայց ասում

d ենք, որ հոգու և մարմնի տարբեր վիճակների բազմաթիվ դեպքերում առաջանում է տառապանքի և հաճույքի մեկ խառնուրդ:

Պրոտարքոս. Թերևս շատ ճիշտ ես ասում:

Սոկրատես. Սակայն դեռ մնացել է տառապանքի և հաճույքի մի խառնուրդ:

Պրոտարքոս. Ի՞նչ խառնուրդ նկատի ունես:

Սոկրատես. Այն, որը հոգին, մեր պնդմամբ, հաճախ իր մեջ է առնում:

Պրոտարքոս. Եվ ինչպե՞ս են կոչում այն:

Սոկրատես. Ցասում, երկյուղ, թախծ, վիշտ, սեր, խանդ,

e նախանձ և ուրիշ այդպիսի բաներ, — մի՞թե սրանք չես համարում հոգու տառապանքներ:

Պրոտարքոս. Համարում եմ:

Սոկրատես. Իսկ չե՞նք գտնում, որ այդ տառապանքները լի են ամենազարմանալի հաճույքներով: Պե՞տք է հիշեցնել զայրուքի մասին,

որից նույնիսկ մոլեգնում է իմաստունը,

որը քաղցր է շատ ավելի, քան մեղրն անուշ ու ծորացող³⁹,

և վշտի ու թախծի հաճույքների մասին, որ միախառնված են տառապանքներին:

48 **Պրոտարքոս.** Ոչ, պետք չէ, հենց այդպես էլ կա:

Սոկրատես. Հիշիր ուրեմն, մի՞թե հենց դա չէ, որ տեղի է ունենում ողբերգության ներկայացումների ժամանակ, երբ [հանդիսականները] միաժամանակ և՛ ուրախանում են, և՛ լաց լինում:

Պրոտարքոս. Դա է:

Սոկրատես. Իսկ դու չգիտե՞ս, որ կատակերգություններում մեր հոգու տրամադրությունը հենց տառապանքի և հաճույքի խառնուրդ է⁴⁰:

Պրոտարքոս. Լավ չեմ հասկանում:

Սոկրատես. Որովհետև ամենևին էլ հեշտ չէ, ո՛վ Պրո- **b**
տարքոս, ամեն անգամ հասկանալ այդ վիճակը:

Պրոտարքոս. Ինձ էլ է այդպես թվում:

Սոկրատես. Որքան մութ է այդ վիճակը, այնքան ավելի
ուշադիր քննենք այն, որպեսզի ավելի հեշտ տարբերենք տա-
ռապանքի և հաճույքի խառնուրդը այլ դեպքերում:

Պրոտարքոս. Շարունակի՛ր:

Սոկրատես. Կկոչե՞ս արդյոք հենց նոր հիշատակված
նախանձը հոգու տառապանք: Թե՞ ոչ:

Պրոտարքոս. Կկոչեմ:

Սոկրատես. Բայց չէ՞ որ նախանձողին ուրախացնում են
մերձավորներին պատահած չարիքները:

Պրոտարքոս. Այն էլ ինչպես:

Սոկրատես. Բայց չարիք է չիմացությունը, և մենք այն **c**
կոչում ենք հիմարության վիճակ:

Պրոտարքոս. Իհարկե:

Սոկրատես. Հիմա տե՛ս, թե ինչ բնություն ունի զավեշ-
տականը:

Պրոտարքոս. Բացատրի՛ր:

Սոկրատես. Այդ արատը ստանում է իր անունը գլխա-
վորապես ինչ-որ վիճակից: Իսկ բոլոր արատներին հատուկ է
վիճակը, որը հակադիր է այն մեկին, որի մասին խոսում է
Դելփիքի գրությունը:

Պրոտարքոս. Նկատի ունես «ճանաչի՛ր ինքդ քեզ»⁴¹ **d**
գրությու՞նը, Սոկրատես:

Սոկրատես. Այո: Պարզ է, որ «Մի՛ ճանաչիր քեզ» գրու-
թյունը կլիներ դրա հակառակը:

Պրոտարքոս. Իհարկե:

Սոկրատես. Պրոտարքոս, փորձի՛ր այստեղ եռակի բա-
ժանում կատարել:

Պրոտարքոս. Այդ ի՞նչ ես ասում, ես չեմ կարող:

Սոկրատես. Կարժում ես, ես ի՞նքս պիտի անեմ դա:

Պրոտարքոս. Այո, խնդրում եմ:

Սոկրատես. Մի՞թե իրենք իրենց չճանաչողները անհրաժեշտաբար չպիտի կրեն այդ վիճակը եռակի կերպով:

Պրոտարքոս. Ինչպե՞ս:

Սոկրատես. Նախ ունեցվածքի առումով, քանի որ նրանք ավելի հարուստ կկարծեն իրենց, քան կան իրականում:

e **Պրոտարքոս.** Շատերն են գտնվում այդ վիճակում:

Սոկրատես. Իսկ ավելի շատ նրանք, ովքեր իրենց բարձրահասակ, գեղեցիկ և առհասարակ մարմնով շատ տարբեր են կարծում նրանից, ինչ ե՛ն իրականում:

Պրոտարքոս. Իհարկե:

Սոկրատես. Իսկ ամենից շատ, կարծում եմ, դա վերաբերում է երրորդ տեսակին, նրանց, ովքեր սխալվում են հոգով՝ իրենց կարծելով ավելի լավը, քան կան:

49 **Պրոտարքոս.** Այդպես է:

Սոկրատես. Իսկ առաքինություններից մի՞թե իմաստության համար չի մրցում բազմությունը, որը միշտ վիճում է և լի է կեղծ իմաստությամբ:

Պրոտարքոս. Այո:

Սոկրատես. Ուրեմն որևէ մեկը, կոչելով սա չարիք, արդարացի՞ կվարվի:

Պրոտարքոս. Անկասկած:

Սոկրատես. Սակայն, Պրոտարքոս, հարկ է մի բան էլ բաժանել երկուսի, եթե ցանկանում ենք մանկական նախանձի մեջ տեսնել հաճույքի և տառապանքի տարօրինակ խառնուրդ: Բայց ինչպե՞ս բաժանենք երկուսի, հարցնում ես դու: Նրանք, ովքեր անխոհեմորեն այդպիսի կեղծ կարծիք են կազմել, անհրաժեշտաբար պիտի հետևեն՝ ո՞՞մանք ամրությանն ու ուժին, ո՞՞մանք էլ, կարծում եմ, հակառակին:

b

Պրոտարքոս. Անհրաժեշտաբար:

Սոկրատես. Ուրեմն հետևի՛ր այդ սկզբունքին: Դու իրավամբ կարող ես զավեշտական կոչել նրանց, ովքեր լինելով թույլ ու տկար՝ անկարող են պաշտպանել իրենց, երբ նրանց

վրա ծիծաղում են: Իսկ նրանց, ովքեր կարող են պաշտպան-
վել, կոչիր ուժեղ, սարսափելի և ատելի. դա կլինի ամենաճիշտ c
սահմանումը: Քանզի ուժեղների չիմացությունը վտանգավոր է
ու զազրելի և վնասակար է մերձավորների համար, իսկ
թույլերի չիմացությունը մենք դատում ենք ի բնե ծիծաղելիների
շարքը:

Պրոտարքոս. Շատ ճիշտ ես ասում: Սակայն հաճույք-
ների և տառապանքների խառնուրդը ինձ դեռ հասկանալի չէ:

Սուկրատես. Նախ վերցնենք մախանձի ուժը:

Պրոտարքոս. Շարունակի՛ր:

Սուկրատես. Լինու՞մ են անարդար տառապանքներ և d
հաճույքներ:

Պրոտարքոս. Իհարկե:

Սուկրատես. Իսկ երբ տեսնելով բարեկամներին պատա-
հած չարիքը չեն տխրում, այլ ուրախանում են, մի՞թե դա ան-
արդար չէ⁴²:

Պրոտարքոս. Ինչպե՞ս չէ:

Սուկրատես. Իսկ չասացի՞նք, որ չիմացությունը բոլորի
համար էլ չարիք է:

Պրոտարքոս. Ճիշտ է:

Սուկրատես. Խոսելով թվացյալ իմացության և թվացյալ
զեղեցիկի բարեկամների մասին, ինչպես և այն ամենի, որ այժմ e
քննեցինք, ասացինք, որ նրանք լինում են երեք տեսակի և որ
ամեն թույլը զավեշտական է, իսկ ուժեղը՝ ատելի: Արդ,
կասե՞նք, որ այդպիսի հատկությունը, երբ այն անվնաս է և
պատկանում է մեր բարեկամներից մեկին, ծիծաղելի է:

Պրոտարքոս. Իհարկե:

Սուկրատես. Եվ եթե դա չիմացություն է, չե՞նք համա-
ծայնի, որ դա չարիք է:

Պրոտարքոս. Անշուշտ: b

Սուկրատես. Իսկ ուրախանու՞մ ենք մենք, երբ ծիծաղում
ենք դրա վրա, թե՞ վշտանում:

Պրոտարքոս. Պարզ է, որ ուրախանում ենք:

50 Սոկրատես. Չե՞նք ասի, որ բարեկամներին պատահած չարիքի վրա ուրախանալը նախանձ է:

Պրոտարքոս. Անհրաժեշտաբար:

Սոկրատես. Ուրեմն մենք նկատի ունենք, որ ծիծաղելով բարեկամների զավեշտական գործերի վրա, միացնում ենք հաճույքը նախանձին և հաճույքը խառնում ենք տառապանքին: Չէ՞ որ մենք արդեն համաձայնեցինք, որ նախանձը հոգու տառապանք է, իսկ ծիծաղը՝ հաճույք, իսկ նման դեպքերում դրանք գոյանում են միաժամանակ:

Պրոտարքոս. ճիշտ է:

b Սոկրատես. Արդ, մեր քննությունը ցույց է տալիս, որ ոչ միայն բեմի վրա՝ ողբերում, ողբերգություններում և կատակերգություններում, այլև կյանքի ողջ ողբերգության ու կատակերգության մեջ և հազարավոր ուրիշ դեպքերում տառապանքն ու հաճույքը միախառնված են:

Պրոտարքոս. Անհնար է չհամաձայնել, Սոկրատես, անգամ եթե որևէ մեկը ցանկանար պաշտպանել հակառակը:

Սոկրատես. Ցասումը, թախիծը, վիշտը, երկյուղը, սերը, խանդը, նախանձը և բոլոր նման բաները մենք բազմիցս նշեցինք այն վիճակների թվում, որոնց մեջ կարելի է գտնել մեր փնտրած խառնուրդը: Այդպես չէ՞:

Պրոտարքոս. Այո:

Սոկրատես. Եվ մենք հասկանում ենք, որ ասվածը միայն վշտին, նախանձին և ցասմանն էր վերաբերում:

Պրոտարքոս. Իհարկե հասկանում ենք:

Սոկրատես. Ուրեմն դեռ շա՞տ բան է մնում:

Պրոտարքոս. Անշուշտ:

d Սոկրատես. Ինչու՞ հատկապես կատակերգության օրինակի վրա ցույց տվեցի քեզ այդ խառնուրդը: Մի՞թե ոչ համոզվելու համար, որ երկյուղի, սիրո և մյուս բաներում խառնուրդը դյուրին է ցույց տալ: Ըմբռնելով սա՞ դու թույլ չես տա այլևս երկարացնել քննությունը ուրիշ օրինակներով, այլ իսկույն կընդունես, որ մարմինն ու հոգին, ինչպես առանձին-

առանձին, առանց մարմնի, այնպես էլ միասին վերցրած, լեցուն են հաճույքի և տառապանքի խառնուրդներով: Իսկ հիմա ասա՝ թողնու՞մ ես ինձ, թե՞ կպահես մինչև ուշ գիշեր: Կարծում եմ, դու ինձ բաց կթողնես, եթե ասեմ հետևյալը: Այս ամենը քեզ մտադիր եմ հաղորդել վաղը, իսկ այժմ ուզում եմ անցնել մնացյալին՝ այն վճռին, որը պահանջում է Ֆիլեբոսը:

Պրոտարքոս. Լավ ես ասում, Սոկրատես: Քննիր մնացյալը, ինչպես ինքդ ես ցանկանում:

Սոկրատես. Խառը հաճույքներից հետո մենք բնականաբար, ինչպես և հարկ է, կանցնենք անխառն հաճույքներին:

Պրոտարքոս. Հրաշալի է:

Սոկրատես. Կփորձեմ ցույց տալ դրանց հակառակ կողմը: Ես չեմ հավատում նրանց, ովքեր պնդում են, թե բոլոր հաճույքները կապված են տառապանքի դադարման հետ, բայց, ինչպես արդեն ասել եմ, կօգտագործեմ նրանց որպես այն բանի վկաների, որ որոշ հաճույքներ այդպիսին են թվում, սակայն բնավ այդպիսին չեն, իսկ մյուսները, որ թվում են մեծ և բազում, միախառնված են մարմնի և հոգու ծանր տառապանքների և ուժեղ ցավերի դադարման հետ:

Պրոտարքոս. Բայց ո՞ր հաճույքները կարող են իրավացիորեն ճշմարիտ համարվել:

Սոկրատես. Նրանք, որոնք ծագում են գեղեցիկ կոչվող գույներից, ձևերից, բազմաթիվ բույրերից, հնչյուններից⁴³ և բոլոր այն բաներից, որոնց պակասը աննկատ և անցավ է, իսկ վայելումը՝ զգալի է, հաճելի և խառնված չէ տառապանքին:

Պրոտարքոս. Այդ ինչպե՞ս, Սոկրատես: Այդ ասելով, ի՞նչ նկատի ունենք:

Սոկրատես. Իհարկե, իսկույն պարզ չէ, թե ինչ եմ ասում: Փորձեմ պարզաբանել: Ձերի գեղեցկություն ասելով նկատի չունեմ այն, ինչ հասկանում է բազմությունը, այսինքն կենդանի էակների կամ պատկերների գեղեցկությունը, այլ՝ ուղիղ գիծը, կորը, նաև հարթությունը, խառատի հատիչի, քանոնի և անկյունաչափի օգնությամբ ստացվող մարմիններն

ու ֆիզուրները, եթե հասկանում ես ինձ: Այս ամենը ես գեղեցիկ եմ կոչում ոչ թե ինչ-որ բանի հարաբերությամբ, ինչպես մյուս իրերի դեպքում, այլ հավետ ինքն ըստ ինքյան և ի

- d բնե գեղեցիկի հարաբերությամբ, որը շոյանքից միանգամայն տարբեր հաճույք է պատճառում: Կան նաև գույներ, որ ունեն այդ տիպի գեղեցկություն և հաճույքներ: Հիմա հասկանալի՞ է:

Պրոտարքոս. Փորձում եմ հասկանալ, Սոկրատես: Բայց դու էլ փորձիր ավելի պարզ խոսել:

Սոկրատես. Ես խոսում եմ քնքուշ և հստակ ծայների մասին, որոնք երգում են որևէ պարզ և մաքուր մեղեդի. սրանք գեղեցիկ են ոչ թե ուրիշ ինչ-որ բանի հարաբերությամբ, այլ ինքն ըստ ինքյան և ուղեկցվում են իրենց հատուկ հաճույքով:

Պրոտարքոս. Այդպես է:

- e **Սոկրատես.** Բույրերի պատճառած հաճույքի սեռը սրանից պակաս աստվածային է: Իսկ որ դրանց չեն խառնվում անխուսափելի տառապանքներ, անկախ նրանից, թե ում և ինչպես բաժին կընկնեն, ես համարում եմ արդեն նշված հաճույքներին միանգամայն հատուկ բան: Արդ, եթե հասկանում ես, այն, ինչ մենք կոչում ենք հաճույք, երկու տեսակի է:

Պրոտարքոս. Հասկանում եմ:

- 52 **Սոկրատես.** Գունարենք դրանց նաև հաճույքները, որոնք ստանում ենք գիտություններից, քանի որ դրանք չեն դիտվում իբրև գիտելիքի ծարավ և քանի որ ի սկզբանե այդ ծարավը կապված չէ տառապանքի հետ:

Պրոտարքոս. Համամիտ եմ:

Սոկրատես. Իսկ երբ գիտելիքով լեցունները հետագայում մոռացության պատճառով կորցնում են դրանք, տեսնու՞մ ես արդյոք այստեղ որևէ ցավ:

- b **Պրոտարքոս.** Այդ ցավը բնական չէ, այլ առաջ է գալիս մտորումների մեջ այն վիճակների մասին, երբ որևէ մեկը, զրկվելով իմաստությունից, տառապում է դրա կարիքից:

Սոկրատես. Իսկ հիմա, երանելիս, գործ ունենք միայն բնական վիճակների հետ՝ առանց դրանց մասին մտորման:

Պրոտարքոս. Ճշմարիտ ես ասում, որ գիտելիքի մոռացությունը մեզ մոտ երբեք տառապանք չի ծնում:

Սոկրատես. Ուրեմն հարկ է ասել, որ գիտելիքի պատճառած հաճույքը միախառնված չէ տառապանքին և դա հատուկ է մարդկանցից ոչ թե շատերին, այլ քչերին:

Պրոտարքոս. Իհարկե պետք է այդպես ասել:

Սոկրատես. Ուրեմն բավարար չափով տարբերակելով մաքուր հաճույքները և նրանք, որոնք ճիշտ կլինեն կոչել ոչ մաքուր, մեր հետագա քննության մեջ հավելենք նաև այն, որ ուժեղ հաճույքները զուրկ են չափից, իսկ թույլերը՝ չափավոր: Հաստատենք, որ հաճախ մեծ և ուժեղ հաճույքները անսահմանի սեռից են, որն ավել կամ պակաս չափով թափանցում է մարմին և հոգի, իսկ մյուս հաճույքները համարենք չափավոր: c

Պրոտարքոս. Շատ ճիշտ ես ասում, Սոկրատես:

Սոկրատես. Սակայն դեռ պետք է քննել նաև հաճույքների հարցը:

Պրոտարքոս. Ի՞նչ հարց:

Սոկրատես. Ի՞նչն է հարկավոր նշել որպես ճշմարտությանը վերաբերող՝ մաքուրն ու անխա՞ռնը, թե՞ ուժեղը, բազումը, մեծը և ինքնաբավը:

Պրոտարքոս. Ի՞նչ ես ուզում պարզել քո այդ հարցով, Սոկրատես:

Սոկրատես. Մաքուր և ոչ մաքուր ոչինչ չափտի բաց թողնվի հաճույքի և իմացության մեջ դրանց հետազոտության ընթացքում, որպեսզի իմ, քո և բոլորի դատին հանձնված մաքուրը թույլ տա մեզ հեշտությամբ վճիռ կայացնել: e

Պրոտարքոս. Ճիշտ է:

Սոկրատես. Ուստի, այն ամենին, ինչը կոչեցինք մաքուր սեռեր, մոտենանք այսպես. նախ որոշենք, թե որ մեկն ենք դիտարկելու:

Պրոտարքոս. Եվ ո՞րը կընտրենք:

53

Սոկրատես. Նախ, եթե ցանկանում ես, սպիտակի սեռը:

Պրոտարքոս. Շատ լավ:

Սոկրատես. Ինչպե՞ս է սպիտակը սպիտակ և ի՞նչ է մեզ համար սպիտակը: Արդյո՞ք սա ամենամեծ, ամենահարուստ և ամենաամխառն սեռն է, որի մեջ ոչ մի ուրիշ գույնի մաս անգամ չկա:

b **Պրոտարքոս.** Պարզ է, որ սա ամենաամխառն գույնն է:

Սոկրատես. Ճիշտ է: Իսկ չե՞նք համարի այն ամենաճշմարիտ և միաժամանակ ամենագեղեցիկ սպիտակը, ո՛վ Պրոտարքոս, և ոչ ամենից լեցունը կամ մեծը:

Պրոտարքոս. Շատ ճիշտ է:

Սոկրատես. Ուրեմն, ասելով, որ փոքր մաքուր սպիտակ իրը ավելի սպիտակ, ավելի գեղեցիկ և ավելի ճշմարիտ է մեծ խառը սպիտակ իրից, միանգամայն իրավացի կլինենք:

Պրոտարքոս. Միանգամայն:

Սոկրատես. Արդ, հաճույքի մասին դատելու համար մենք բազում օրինակների կարիք չունենք, և հասկանալու համար, որ նույնիսկ ամեն մի փոքր և հազվադեպ հաճույք, եթե այն զուրկ է տառապանքից, ավելի հաճելի, ավելի ճշմարիտ է ուժեղ և հաճախակի հաճույքից, բավական է և այսբանը:

c **Պրոտարքոս.** Այո, այս օրինակը բավական է:

Սոկրատես. Իսկ սա՞: Մի՞թե չենք լսել հաճույքի մասին, որ այն միշտ կայանում է և որ ոչ մի հաճույք էլ չունի գոյություն: Որոշ ուսյալներ⁴⁴ փորձում են մեզ համոզել դրանում, և մենք պիտի շնորհակալ լինենք նրանց:

Պրոտարքոս. Ինչպե՞ս թե:

d **Սոկրատես.** Ես կդիտարկեմ սա, քեզ հարցեր ուղղելով, սիրելի՛ Պրոտարքոս:

Պրոտարքոս. Դե, խոսի՛ր և հարցրու՛:

Սոկրատես. Դիցուք, գոյություն ունի երկու սկզբունք՝ մեկը ինքն ըստ ինքյան, իսկ մյուսը՝ միտված ուրիշին:

Պրոտարքոս. Ի՞նչ սկզբունքներ են, ի՞նչ նկատի ունես:

Սոկրատես. Մեկն ի բնե նշանակալի է, մյուսը՝ ոչ:

Պրոտարքոս. Ավելի պարզ խոսիր:

Սոկրատես. Գեղեցիկ և առաքինի պատանիներին մենք տեսնում ենք արի սիրահարների հետ:

Պրոտարքոս. Այդպես է:

Սոկրատես. Այս երկուսի համար գտիր իրենց նման **e**
գույզը այն ամենի մեջ, ինչը մեր ասելով գոյություն ունի:

Պրոտարքոս. Երրորդ անգամ եմ ասում. ավելի պարզ խոսիր, ո՛վ Սոկրատես, ի՞նչ նկատի ունես:

Սոկրատես. Ոչ մի բարդ բան, Պրոտարքոս: Ես սոսկ հեզնում եմ մեզ, ասելով, որ մեկը գոյություն ունի ուրիշ գոյողի համար, իսկ ուրիշն այն է, ինչի համար միշտ գոյանում է ինչ-որ բանի համար գոյացողը:

Պրոտարքոս. Հազիվ հասկացա այսքան բացատրություններից հետո:

Սոկրատես. Գուցե, զավակս, ավելին հասկանաս, եթե **54**
շարունակենք քննությունը:

Պրոտարքոս. Ինչու՞ ոչ:

Սոկրատես. Վերցնենք ուրիշ գույզ:

Պրոտարքոս. Ի՞նչ գույզ:

Սոկրատես. Մեկը ամեն ինչի կայացումն է, իսկ մյուսը՝
գոյությունը:

Պրոտարքոս. Ընդունում եմ դրանք՝ գոյությունը և կայացումը:

Սոկրատես. Շատ լավ: Իսկ դրանցից ո՞րն է մյուսի համար. կայացու՞մը գոյության համար, թե՞ գոյությունը՝ կայացման:

Պրոտարքոս. Դու հիմա հարցնում ես, թե արդյոք կայացման համար է գոյությունը այն, ինչ է՛:

Սոկրատես. Ինչպես երևում է, այո:

Պրոտարքոս. Հանուն աստվածների, մի՞թե հարցնում **b**
ես հետևյալը. «Ասա ինձ, Պրոտարքոս, ավելի շուտ նավաշինություն՞նն է գոյանում նավերի համար, թե՞ նավերը՝ նավաշինության», և ուրիշ նման բաներ:

Սոկրատես. Հենց դա նկատի ունեմ, Պրոտարքոս:

Պրոտարքոս. Իսկ ինչու՞ ինքդ քեզ չես պատասխանում, Սոկրատես:

Սոկրատես. Ինչու՞ չէ, կպատասխանեմ, բայց դու հետևիր դատողությանը:

Պրոտարքոս. Իհարկե:

Սոկրատես. Ես ասում եմ, որ դեղերը և բոլոր տեսակի
c գործիքներն ու նյութերը կիրառվում են ամեն բանի նկատմամբ հանուն ինչ-որ կայացման, իսկ յուրաքանչյուր կայացում, կայանալով այս կամ այն գոյության համար, ըստ էության կայանում է ողջ գոյության համար:

Պրոտարքոս. Միանգամայն պարզ է:

Սոկրատես. Արդ, եթե հաճույքը կայացում է, պիտի անհրաժեշտաբար կայանա ինչ-որ գոյության համար:

Պրոտարքոս. Ինչպե՞ս չէ:

Սոկրատես. Այն, հանուն ինչի միշտ կայանում է ինչ-որ
d բանի համար կայացողը, բարիքի մաս է կազմում, իսկ ինչ-որ բանի համար կայացողը, բարեկամս, պետք է դասել ուրիշ ոլորտի:

Պրոտարքոս. Անհրաժեշտաբար:

Սոկրատես. Ուրեմն, եթե հաճույքը կայացում է, մենք ճիշտ կվարվենք դասելով այն ուրիշ ոլորտի, և ոչ բարիքի ոլորտին, այդպես չէ՞:

Պրոտարքոս. Շատ ճիշտ է:

Սոկրատես. Հետևաբար, ինչպես ասացի սկզբում, մենք պիտի շնորհակալ լինենք նրան, ով ասում է, թե հաճույքը կայացում է և զուրկ է ամեն գոյությունից: Պարզ է, որ նա կծիծաղի նրանց վրա, ովքեր ասում են, թե հաճույքը բարիք է:

Պրոտարքոս. Իհարկե:

Սոկրատես. Եվ նա ամեն անգամ կծիծաղի նաև նրանց
e վրա, ովքեր գոհանում են կայացմամբ:

Պրոտարքոս. Ինչպե՞ս: Ու՞մ մասին ես խոսում:

Սոկրատես. Նրանց, ովքեր հագեցնելով քաղցը, ծարա-

վը և այն ամենը, որ կարելի է հագեցնել կայացմամբ, ուրախանում են կայացումով, քանզի սա հաճույք է, և ասում են, որ չեն ընդունում կյանքն առանց ծարավի, քաղցի և այլ բաների և առանց զգալու դրանց հաջորդող վիճակները:

Պրոտարքոս. Թերևս:

Սոկրատես. Սակայն կայացման հակադրությունը մենք բոլորս կկոչեինք կործանում: 55

Պրոտարքոս. Անհրաժեշտաբար:

Սոկրատես. Ուրեմն կործանում և կայացում է ընտրում նա, ով ընտրում է հաճույք, և ոչ ինչ-որ երրորդ կյանք, որի մեջ չկա ո՛չ ուրախություն, ո՛չ տառապանք, այլ կա միայն խոհեմություն՝ հնարավորինս մաքուր:

Պրոտարքոս. Ինչպես երևում է, Սոկրատես, մեծ անհեթեթություն է ստացվում, եթե որևէ մեկը բարիք է համարում հաճույքը:

Սոկրատես. Այո, շատ մեծ, եթե ավելացնենք նաև հետևյալը:

Պրոտարքոս. Ի՞նչը:

Սոկրատես. Մի՞թե անհեթեթ չէ կարծելը, թե բարիք ու գեղեցկություն չկա ո՛չ մարմնի մեջ, ո՛չ էլ այլուր, այլ՝ միայն հոգու մեջ: Այստեղ էլ հաճույքը միայն մեկն է, իսկ արիությունը, խոհեմությունը, խելքը և մյուս նման բարիքներն այդպիսին չեն: Բացի այդ, դրանցով չուրախացողը, տառապողը ստիպված կլինեք ասել, թե տառապելիս ինքը հոռի է, անգամ լինելով բոլորից ամենաառաքինին, իսկ հաճույք վայելողը ստիպված կլինեք ասել, թե որքան ավելի է հաճույք վայելում, այնքան ավելի է աչքի ընկնում առաքինությամբ: b c

Պրոտարքոս. Այդ ամենը, Սոկրատես, միանգամայն անհեթեթ է:

Սոկրատես. Չփորձենք հաճույքին սպառիչ գնահատական տալ՝ լիովին շրջանցելով խելքն ու իմացությունը: Ավելի լավ «ծեծենք» սա բոլոր կողմերից⁴⁵ և տեսնենք՝ չկա՞ արդյոք այստեղ որևէ թերություն, մինչև որ գտնենք բնությամբ մաքրա-

գույնը և ընդհանուր որոշման համար օգտվենք խելքի, իմաստության և հաճույքի ամենաճշմարիտ մասերից:

Պրոտարքոս. Ճիշտ է:

- d **Սոկրատես.** Ուրեմն մեր իմացության մի մասը, որն առնչվում է գիտություններին, ստեղծագործ է, իսկ մյուս մասն առնչվում է դաստիարակությանն ու կրթությանը: Այդպես չէ՞:

Պրոտարքոս. Այդպես է:

Սոկրատես. Ձեռագործ արվեստների դեպքում նախ պարզենք՝ չունե՞ն արդյոք դրանցից ոմանք ավելի շատ իմացություն, իսկ մյուս մասը՝ պակաս, և պե՞տք է մի մասը համարել մաքրագույն, իսկ մյուսը՝ պակաս մաքուր:

Պրոտարքոս. Իհարկե, պարզենք:

Սոկրատես. Ուրեմն հարկ է յուրաքանչյուրի մեջ առանձնացնել ղեկավար տարրերը:

Պրոտարքոս. Որո՞նք և ինչպե՞ս:

- e **Սոկրատես.** Դիցուք, ինչ-որ մեկը բոլոր արվեստներից առանձնացնում է թվաբանությունը, չափագիտությունը և կշռաբանությունը. այդ դեպքում մնացյալն ըստ էության կլինի աննշան:

Պրոտարքոս. Իհարկե, աննշան:

- 56 **Սոկրատես.** Դրանից հետո կմնար զբաղվել արտապատկերմամբ և կատարելագործել մեր զգայությունները փորձով ու վարժանքով՝ դիմելով գուշակության կարողություններին, որոնք շատերը կոչում են արվեստ և որոնք վարժանքի ու աշխատանքի շնորհիվ տալիս են իրենց արդյունքը:

Պրոտարքոս. Ասածդ միանգամայն անհրաժեշտ է:

Սոկրատես. Սրանով լեցուն է նախ և առաջ երաժշտությունը, որի համահնչության հիմքում ոչ թե չափն է, այլ դյուրազգացության վարժանքը: Այդպիսին է նաև ֆլեյտահարու-

- d **թյունը**, քանի որ այն կռահմամբ հոգ է տանում յուրաքանչյուր հնչյունի չափի մասին, հետևաբար անպարզ և խառնված շատ բան ունի, իսկ հաստատուն՝ քիչ:

Պրոտարքոս. Շատ ճիշտ է:

Սուկրատես. Նման բաներ կգտնենք նաև բժշկության, երկրագործության, նավավարության և զորավարության մեջ: **b**

Պրոտարքոս. Անշուշտ:

Սուկրատես. Շինարարությունը, կարծում եմ, օգտագործում է բազում չափեր և գործիքներ, որոնք մեծ ճշգրտություն են հաղորդում իրեն և շատ գիտություններից ավելի խորաթափանց դարձնում:

Պրոտարքոս. Ո՞ր դեպքում:

Սուկրատես. Նավաշինության, տնաշինության և փայտագործության բազմաթիվ ուրիշ տեսակներում: Քանզի սրանք, իմ կարծիքով, օգտագործում են քանոն, խառատի հատիչ, կարկին, տրամալար և հնարամտորեն պատրաստված մամլակ: **c**

Պրոտարքոս. Շատ ճիշտ ես ասում, Սուկրատես:

Սուկրատես. Երկու մասի բաժանենք նշված արվեստները. մի մասը հետևում է երաժշտությանը և պակաս ճշգրիտ է, մյուս մասը վերաբերում է շինարարությանը և առավել ճշգրիտ է:

Պրոտարքոս. Թող այդպես լինի:

Սուկրատես. Դրանցից ամենաճշգրիտները կլինեն նրանք, որ նշեցիք սկզբում:

Պրոտարքոս. Նկատի ունես թվաբանությունը և այն արվեստները, որ նշեցիր դրա հետ միասի՞ն:

Սուկրատես. Այո: Սակայն, Պրոտարքոս, պետք չէ՞ արդյոք սրանք էլ բաժանել երկուսի: Ի՞նչ կասես: **d**

Պրոտարքոս. Ի՞նչ բաժանման մասին ես խոսում:

Սուկրատես. Նախ՝ թվաբանության մասին պետք է ասել, որ դրա մի մասը շատերի արվեստն է, իսկ ինչ վերաբերում է մյուս մասին, ապա նրա հետ գործ ունեն փիլիսոփաները:

Պրոտարքոս. Ինչպե՞ս կարելի է սահմանազատել թվաբանության այս երկու մասերը:

Սուկրատես. Տարբերությունը սրանց միջև փոքր չէ, Պրոտարքոս: Ոմանք հաշվում են ոչ հավասար միավորները, օրինակ՝ երկու բանակ, երկու ցուլ, երկու ամենամեծ կամ ամենափոքր իրերը: Մյուսները երբեք չեն հետևի նրանց, ովքեր չեն **e**

ընդունում, որ բազում միավորների միջև որևէ տարբերություն չկա:

Պրոտարքոս. Դու շատ լավ ես ներկայացնում թվաբանությամբ զբաղվողների միջև եղած ոչ աննշան տարբերությունը, ուստի մենք ունենք երկու թվաբանություն:

Սոկրատես. Իսկ ի՞նչ կասես շինարարության և առևտրի մեջ կիրառվող հաշվարկի և չափման մասին, որոնք տարբերվում են փիլիսոփայության մեջ կիրառվող երկրաչափությունից և հաշվարկից. համարենք դրանք մե՞կ արվեստ, թե՞ երկու:

Պրոտարքոս. Նախևհինում ասվածին հետևելով՝ ես ծայնս կտայի երկրորդ տարբերակին:

Սոկրատես. Դա ճիշտ է: Բայց դու հասկանու՞մ ես, թե ինչի համար ենք մեջտեղ հանել այս ամենը:

Պրոտարքոս. Թերևս: Սակայն ես կուզեի, որ դու ինքդ պատասխանես այդ հարցին:

Սոկրատես. Ես կարծում եմ, մեր քննությունը հիմա ոչ պակաս, քան սկզբում, հետամուտ է նրան, ինչը վերաբերում է հաճույքներին, և փորձում է պարզել՝ լինու՞մ է արդյոք մի իմացությունը մյուսից մաքուր⁴⁶, ինչպես որ մի հաճույքն է մաքուր մյուսից:

Պրոտարքոս. Միանգամայն պարզ է, որ քննությունը մենք նախածեռնեցինք հանուն դրա:

Սոկրատես. Եվ ինչ, չե՞նք գտել արդեն, որ մի արվեստը մերթ ավելի պարզ է մյուսից, մերթ՝ ավելի անպարզ:

Պրոտարքոս. Անշուշտ, գտել ենք:

Սոկրատես. Իսկ այն բանից հետո, երբ մենք որևէ արվեստ կոչեցինք մի անունով և կարծիք արտահայտեցինք, թե այն մեկն է, հարց է ծագում՝ արդյո՞ք դա երկու արվեստ չէ և ո՞ր արվեստն է, որ ունի ավելի մեծ ճշգրտություն ու մաքրություն՝ փիլիսոփաների⁴⁷, թե՞ ոչ փիլիսոփաների:

Պրոտարքոս. Ես էլ եմ կարծում, որ մենք պիտի տանք այդ հարցը:

Սոկրատես. Ուրեմն ինչ, Պրոտարքոս, ինչպե՞ս կպատասխանենք:

Պրոտարքոս. Մենք, Սոկրատես, զարմանալի տարբերություն գտանք իմացությունների հստակության մեջ:

Սոկրատես. Ուրեմն հե՞շտ կլինի պատասխանել:

Պրոտարքոս. Իհարկե: Ասենք, որ այդ արվեստները շատ են տարբերվում մյուսներից, իսկ իսկական փիլիսոփաների նախասիրած արվեստները աչքի են ընկնում անսովոր ճշգրտությամբ և չափի ու թվի ճշմարտացիությամբ:

Սոկրատես. Թող լինի, ինչպես դու ես ասում, և հավատալով քեզ՝ մենք խիզախորեն արժանի պատասխան կտանք ճարտարախոսներին:

Պրոտարքոս. Ի՞նչ պատասխան:

Սոկրատես. Որ գոյություն ունի երկու թվաբանություն և չափման երկու արվեստ, որ այդպիսին են նաև մյուս հարակից արվեստները և որ դրանց մեջ էլ գոյություն ունի երկվություն, թեպետ դրանք կրում են մեկ անուն:

Պրոտարքոս. Բարին ընդ մեզ, Սոկրատես, պատասխանենք ճարտարախոսներին, ինչպես ասում ես:

Սոկրատես. Ուրեմն մենք պնդում ենք, որ նշված իմացությունները ամենից ճշգրիտն են:

Պրոտարքոս. Իհարկե:

Սոկրատես. Սակայն դիալեկտիկայի մեր ունակությունը կնախատեր մեզ, եթե մենք նրա փոխարեն ընտրեինք որևէ ուրիշը:

Պրոտարքոս. Ինչպե՞ս բնութագրենք այդ ունակությունը: 58

Սոկրատես. Պարզ է, իբրև այնպիսի ունակություն, որ գիտի բոլոր արդեն նշված արվեստները: Քանզի ինձ թվում է, բոլոր նրանք, ովքեր իսկապես քիչ թե շատ խելք ունեն, գոյության, իսկականի և ի բնե միշտ նույնականի ճանաչողությունը համարում են ավելի ճշմարիտ: Իսկ դու՞: Ինչպե՞ս կդատես սրա մասին, Պրոտարքոս:

Պրոտարքոս. Ես, Սոկրատես, հաճախ լսել եմ Գորգիա-

սից⁴⁷, որ համոզելու արվեստը շատ է տարբերվում բոլոր արվեստներից, քանի որ բոլորին ստիպում է կամովին ստրկանալ իրեն, այլ ոչ բռնի, և հետևաբար բոլոր արվեստների մեջ ազնվագույնն է: Չէի կամենա հակառակվել ո՛չ քեզ, ո՛չ էլ նրան:

Սոկրատես. Ինձ թվում է, դու ուզում էիր ասել՝ «ի զե՛ն», սակայն անաչեցիր և ընկրկեցիր:

Պրոտարքոս. Թող լինի այնպես, ինչպես քեզ է թվում:

Սոկրատես. Բայց մի՞թե ես մեղավոր եմ, որ դու լավ չես հասկացել:

Պրոտարքոս. Ի՞նչը:

- Սոկրատես.** Սիրելի՛ Պրոտարքոս, իմ խնդիրը ինչ-որ արվեստ կամ իմացություն չէր, որը մյուս բոլորից կտարբերվեր մեզ բերած օգուտի մեծությամբ, ազնվությամբ ու քանակով. ոչ, ես փնտրում եմ պարզը, ճշգրիտը և ամենաճշմարիտը դիտարկող արվեստ, անգամ եթե այն լինի փոքր և քիչ օգուտ բերի: Տե՛ս, դու բոլորովին էլ չես բարկացնի Գորգիասին, ընդունելով, թե նրա արվեստը օգուտ է բերում մարդկանց: Իսկ ես խոսում էի հենց նոր նշածս զբաղմունքի մասին, երբ պնդում էի սպիտակի առիթով, որ անգամ եթե սպիտակ իրը փոքր է, նրա սպիտակությունը, լինելով մաքուր, գերազանցում է մեծ ու ոչ մաքուր իրի սպիտակությանը: Խորհելով սրա մասին և բավականաչափ քննության ենթարկելով՝ մենք այժմ նայում ենք ոչ թե իմացությունների օգուտին ու փառքին, այլ նրան, թե ունակ է արդյոք մեր հոգին սիրել ճշմարտությունը և ամեն ինչ անել հանուն նրա: Այս ունակության մասին մենք, հետազոտելով խելքի և խոհեմության մաքրությունը, պիտի ասենք. արդյո՞ք պետք է ձեռք բերենք այն, թե՞ պիտի փնտրենք ուրիշը, ավելի ուժեղը:

Պրոտարքոս. Ես հետևում եմ քեզ և կարծում եմ՝ դժվար է համաձայնել, թե կարող է լինել ուրիշ ինչ-որ իմացություն կամ արվեստ, որ ավելի կապված լինի ճշմարտությանը:

Սոկրատես. Մի՞թե պետք չէ հասկանալ սա այնպես, որ բազում արվեստներ և բոլոր մարդիկ, որոնք գործ ունեն դրանց

հետ, նախ և առաջ օգտվում են կարծիքներից և ուսումնասիրում են կարծիքների հետ կապված ամեն բան: Եթե որևէ մեկին թվում է, թե ուսումնասիրում է բնությունը, իմացիր, որ նա ողջ կյանքի ընթացքում ուսումնասիրում է այս տիեզերքը՝ թե ինչպես է այն առաջացել, ինչ է կրում և ինչպես է ստեղծում: Կասե՞նք այդպես, թե՞ ոչ:

Պրոտարքոս. Կասենք:

Սուկրատես. Ուրեմն այդ մարդը գործ ունի ոչ թե հավետ գոյություն ունեցողի, այլ գոյացողի, գոյանալիքի և գոյացածի հետ⁴⁸:

Պրոտարքոս. Շատ ճիշտ է:

Սուկրատես. Կարո՞ղ ենք արդյոք ասել, որ դրանցից որևէ մեկը իսկապես ճշգրիտ է, եթե այստեղ նույնական ոչինչ երբևէ չի եղել, չի լինի և չկա:

b

Պրոտարքոս. Բայց ինչպե՞ս:

Սուկրատես. Իսկ կարո՞ղ ենք ընդհանրապես հաստատուն ինչ-որ բան ձեռք բերել ոչ հաստատունի առնչությամբ:

Պրոտարքոս. Կարծում եմ՝ ոչ մի դեպքում:

Սուկրատես. Ուրեմն չկա ո՛չ խելք, ո՛չ էլ իմացություն, որոնք կունենան դրա բարձրագույն ճշմարտությունը:

Պրոտարքոս. Կարծես թե՛ ոչ:

Սուկրատես. Այդ դեպքում հարկ է թողնել քեզ, ինձ, Գորգիասին և Ֆիլեբոսին և մեր քննությամբ վկայել հետևյալը:

c

Պրոտարքոս. Ի՞նչը:

Սուկրատես. Որ հաստատունը, մաքուրը, ճշմարիտը և այն, ինչը մենք անխառն ենք կոչում, կարող է գործ ունենալ մշտապես նույնականի և անխառնի կամ էլ իրեն առավել ազգակցի հետ: Մնացյալը պետք է կոչել երկրորդական և անկարևոր:

Պրոտարքոս. Շատ ճիշտ ես ասում:

Սուկրատես. Չի՞ լինի արդյոք ամենից արդարացի այս գեղեցիկ իրերը կոչել գեղեցիկ անուններով:

Պրոտարքոս. Իհարկե:

d

Սուկրատես. Իսկ ամենապատվավոր անունները մի՞թե «խելքը» և «խոհեմությունը» չեն:

Պրոտարքոս. Այո:

Սուկրատես. Ուրեմն անունները ճիշտ կիրառվելով իսկական գոյության ըմբռնումների նկատմամբ, կարող են համարվել տեղին կիրառված:

Պրոտարքոս. Անշուշտ:

Սուկրատես. Բայց անունները, որ ներկայացրի սկզբում ձեր դատին, հենց սրանք էին:

Պրոտարքոս. Այո, Սուկրատես:

- e Սուկրատես. Լավ: Եթե որևէ մեկը մեզ, որպես վարպետների, ասեր խոհեմության և հաճույքի խառնուրդի մասին, որ դրանք գտնվում են մեր առջև որպես այն, ինչից և ինչի մեջ պետք է ինչ-որ բան ստեղծել, հրաշալի ասած կլիներ:

Պրոտարքոս. Իրոք հրաշալի:

Սուկրատես. Իսկ չփորձե՞նք իրագործել այդ խառնուրդը:

Պրոտարքոս. Ինչու՞ չէ:

Սուկրատես. Բայց ավելի ճիշտ չէ՞ր լինի նախ ասել և վերհիշել հետևյալը:

Պրոտարքոս. Ի՞նչը:

- 60 Սուկրատես. Այն, ինչը վերհիշեցինք քիչ առաջ: Ասացվածք կա. «Հարկավոր է երկու և երեք անգամ կրկնել գեղեցիկը»⁴⁹:

Պրոտարքոս. Այո:

Սուկրատես. Դե, աստված օգնական: Որքան հիշում եմ, խոսեցինք այսպես...

Պրոտարքոս. Ինչպե՞ս:

- Սուկրատես. Ֆիլեբոսն ասում էր, թե հաճույքը ճիշտ նպատակ է բոլոր կենդանի էակների համար և նրանք բոլորը պետք է ձգտեն դրան, որ այն բարիք է բոլորի համար, և այդ երկու անունները՝ «բարի» և «հաճելի», իրենց բնությամբ իրավացիորեն համարվում են մեկ: Իսկ Սուկրատեսն ասում էր, թե դա մեկ բան չէ, այլ, ինչպես և երկու անունները, դրանք
- b

երկուսն են և որ բարին ու հաճելին ունեն տարբեր բնություն և բարիքը ավելի շատ է հաղորդակից խոհեմությանը, քան հաճույքը: Այդպես չասացի՞նք սկզբում, Պրոտարքոս:

Պրոտարքոս. Այո, իհարկե:

Սուկրատես. Բայց մի՞թե այդ հարցում մենք չեկանք համաձայնության՝ ինչպես այն ժամանակ, այնպես էլ հիմա:

Պրոտարքոս. Ո՞ր հարցում: c

Սուկրատես. Որ բարիքի բնությունը տարբեր է մնացյալ ամեն ինչից:

Պրոտարքոս. Ինչո՞վ:

Սուկրատես. Նրանով, որ կենդանի էակը, ում միշտ և բոլոր առումներով հատուկ է բարիքը, ուրիշ ոչնչի կարիք չունի, այլ կատարելապես ինքնաբավ է: Այդպես չէ՞:

Պրոտարքոս. Այդպես է:

Սուկրատես. Մենք փորձեցինք մեր քննության մեջ առանձին-առանձին ներկայացնել յուրաքանչյուրի կյանքի հաճույքը առանց խոհեմության, խոհեմությունը՝ առանց հաճույքի աննշան խառնուրդի:

Պրոտարքոս. Փորձեցինք: d

Սուկրատես. Բայց մեզ թվաց, որ դա նրանցից յուրաքանչյուրի համար բավական չէ:

Պրոտարքոս. Իհարկե:

Սուկրատես. Եթե մենք այն ժամանակ ինչ-որ բան զանց առանք, թող որևէ մեկը, վերադառնալով նույն հարցին, ավելի ճիշտ լուծի այն, վերագրելով հիշողությունը, իմացությունը և ճշմարտությունը միևնույն գաղափարին և դիտարկելով՝ պատրաստ է արդյոք որևէ մեկը առանց դրանց լինել կամ դառնալ ինչ-որ բան, էլ չասած հաճույքի մասին՝ որքան էլ մեծ և ուժեղ լինի այն: Պատրաստ է արդյոք անել դա, եթե չի կարող ճշմարիտ կարծիք կազմել այն մասին, որ ուրախ է, եթե ընդհանրապես չգիտի, թե ինչ է կրում, և եթե չի կարողանում հիշել կրածը նույնիսկ ամենակարճ ժամանակի ընթացքում: Նույնը պետք է ասել նաև խոհեմության մասին. կնախընտրի՞ արդյոք e

որևէ մեկը խոհեմությունն առանց ամենակարճատև հաճույքի խոհեմությունից, որը կուղեկցվի հաճույքով, թե՞ կնախընտրի խոհեմությունից զուրկ ամեն հաճույք խոհեմությամբ ուղեկցվող հաճույքից:

61 **Պրոտարքոս.** Դա անհնար է, Սոկրատես, և պետք չէ այդքան հաճախ տալ նույն հարցը:

Սոկրատես. Ուրեմն ամենակատարյալը, բոլորի համար նախընտրելին և բարին չի՞ կարող լինել ո՛չ խոհեմություն, ո՛չ էլ հաճույք:

Պրոտարքոս. Իհարկե չի կարող:

Սոկրատես. Պարզաբանենք բարիքը կամ առնվազն դրանմուշը, որպեսզի, ինչպես ասացիմք, իմանանք, թե ում շնորհենք երկրորդ մրցանակը:

Պրոտարքոս. Ծիշտ ես ասում:

Սոկրատես. Չե՞նք գտել արդյոք դեպի բարիք տանող ճանապարհը:

Պրոտարքոս. Ի՞նչ ճանապարհ:

b **Սոկրատես.** Եթե փնտրում ենք որևէ մարդու, ապա ճշգրտորեն տեղեկանում ենք նրա տան տեղի մասին, և դա շատ է օգնում որոնումներին:

Պրոտարքոս. Իհարկե:

Սոկրատես. Արդ, քննությունը ցույց է տալիս մեզ, ինչպես սկզբում, որ բարիքը հարկ է փնտրել ոչ թե անխառն, այլ միայն խառը կյանքի մեջ:

Պրոտարքոս. Այդպես է:

Սոկրատես. Արդյո՞ք ավելի մեծ է հույսը, որ փնտրվածն առավել պարզ կերևա լավ միախառնվածի մեջ, քան վատ խառնվածի:

Պրոտարքոս. Շատ ավելի մեծ:

c **Սոկրատես.** Այդ դեպքում, Պրոտարքոս, սկսենք միախառնել, աղոթելով աստվածներին, լինի Դիոնիսոսը, Յեփեստոսը⁵⁰ կամ մեկ ուրիշը, ով ստացել է այդ խառնուրդն իրագործելու պատիվը:

Պրոտարքոս. Լավ:

Սուկրատես. Մեր առջև, ասես մատռվակների, երկու աղբյուր կա. մեկը՝ հաճույքի աղբյուրը, կարելի է նմանեցնել մեղրի, մյուսը՝ խոհեմության աղբյուրը, որ սթափեցնող է և առանց գինու, նման է մաքուր և առողջարար ջրի: Այդ երկու աղբյուրները պետք է մի լավ խառնել:

Պրոտարքոս. Ինչու՞ չէ:

Սուկրատես. Նախ՝ ավելի ճիշտ վարված կլինեինք, եթե ամեն հաճույք խառնեինք ամեն խոհեմության հետ: d

Պրոտարքոս. Գուցե:

Սուկրատես. Բայց դա վտանգավոր է: Իսկ ինչպե՞ս խառնենք, որ առավել անվտանգ լինի: Այդ մասին ես որոշակի կարծիք ունեմ:

Պրոտարքոս. Ասա՛, ի՞նչ կարծիք է:

Սուկրատես. Ինձ թվում է, մենք գտանք, որ մի հաճույքը ավելի ճշմարիտ է մյուսից և մի արվեստը ավելի ճշգրիտ է մյուսից:

Պրոտարքոս. Իհարկե գտանք:

Սուկրատես. Եվ մի իմացությունը տարբեր է մյուս իմացությունից, քանի որ մեկը վերաբերում է գոյացողին և կործանվողին, իսկ մյուսը՝ չգոյացողին և չկործանվողին, այլ հավերժ գոյողին: Նկատի ունենալով ճշմարտությունը՝ այս երկրորդ իմացությունը մենք համարեցինք առավել ճշմարիտ: e

Պրոտարքոս. Եվ շատ ճիշտ համարեցինք:

Սուկրատես. Ուրեմն, իրար խառնելով նախ ամենաճշմարիտ մասերը, կտեսնե՞նք արդյոք, որ այդ խառնուրդը բավական է մեզ ամենացանկալի կյանք պարգևելու համար, թե՞ մենք նաև ուրիշ ինչ-որ բանի պահանջ կունենանք:

Պրոտարքոս. Ըստ իս՝ պետք է այդպես վարվել: 62

Սուկրատես. Ընդունենք՝ որևէ մարդ հասկանում է, թե ինչ է արդարությունն ինքնին և կարող է արտափայտել մտքինը. նմանապես հասկանում է բոլոր գոյող բաները:

Պրոտարքոս. Ընդունենք:

Սուկրատես. Արդյո՞ք նա ձեռք կբերի բավարար իմացություն՝ ունենալով հասկացություն շրջանի և հենց աստվածային ուլորտի մասին, բայց չիմանալով մարդկային ուլորտն ու շրջանը, նույնիսկ եթե տնաշինության մեջ օգտագործում է քանոն և կարկին:

Պրոտարքոս. Ջավեշտական դրության մեջ կհայտնվենք, Սուկրատես, եթե խոսենք միայն աստվածային իմացության մասին:

Սուկրատես. Ի՞նչ նկատի ունես: Մի՞թե այստեղ անհրաժեշտ է միախառնել և ներմուծել կեղծ քանոնի ու կեղծ շրջանի խախուտ ու անմաքուր արվեստը:

Պրոտարքոս. Անհրաժեշտ է, եթե մեզնից որևէ մեկը ցանկանում է գտնել սեփական տան ճամփան:

Սուկրատես. Իսկ երաժշտությունը, որի մասին քիչ առաջ ասացիք, որ լի է կռահմամբ և նմանակմամբ, մի՞թե նույնպես չունի մաքրության կարիք:

Պրոտարքոս. Ինձ թվում է՝ անհրաժեշտաբար ունի, եթե մեր կյանքը առհասարակ պիտի կյանք լինի:

Սուկրատես. Դու, երևում է, ուզում ես, որ ես ամբոխի կողմից ճնշման և հարձակումների ենթարկվող դմապանի պես տեղի տամ և բացելով դռները թողնեմ, որ բոլոր իմացությունները լցվեն և մաքուրը միախառնվի մաքրության կարիք ունեցողի հետ:

Պրոտարքոս. Չեմ հասկանում, Սուկրատես, ի՞նչ վնաս կլինի, եթե ստանալով առաջին իմացությունները, ունենանք նաև մյուսները:

Սուկրատես. Ուրեմն թույլ տամ, որ դրանք միախառնվելով հոսեն Զոմերոսի բանաստեղծական հովի՞տը⁵¹:

Պրոտարքոս. Իհարկե:

Սուկրատես. Թո՛ղ հոսեն: Բայց հիմա վերստին դառնանք հաճույքների աղբյուրին: Նախ՝ մեզ չհաջողվեց միախառնել ճշմարիտ իմացությունների մասերը այնպես, ինչպես մտադիր էինք, այսինքն՝ խառնելով նախ բացառապես ճշմարիտ իմա-

ցությունների մասերը, որովհետև սիրելով բոլոր իմացությունները՝ մենք մի տեղ հավաքեցինք դրանք դեռ նախքան հաճույքներին հասնելը:

Պրոտարքոս. Շատ ճիշտ ես ասում:

Սուկրատես. Հիմա ժամանակն է անդրադառնալ հաճույքներին: Հարկավոր է ի մի բերել դրանք, թե՞ թողնենք միայն այն հաճույքները, որոնք ճշմարիտ են:

Պրոտարքոս. Հանուն անվտանգության նախ պետք է վերցնել ճշմարիտները:

Սուկրատես. Ուրեմն վերցնենք դրանք: Իսկ հետո՞: Չմիախառնե՞նք նաև որոշ անհրաժեշտ հաճույքներ, ինչպես իմացությունների դեպքում:

Պրոտարքոս. Ինչու՞ չէ: Իհարկե, նաև անհրաժեշտները:

Սուկրատես. Եթե բոլոր արվեստների իմացությունները անվտանգ և օգտակար են կյանքում և մենք հիմա նույնն ենք ասում հաճույքների մասին, եթե մեզ օգտակար և անվտանգ է վայելել դրանք կյանքում, ապա դրանք բոլորը պիտի միախառնվեն:

63

Պրոտարքոս. Բայց ի՞նչ կասենք դրանց մասին և ինչպե՞ս կվարվենք դրանց հետ:

Սուկրատես. Այդ մասին, Պրոտարքոս, պետք է հարցնել ոչ թե մեզ, այլ հենց հաճույքներին, և իմացությունները պետք է տեղեկություն տան միմյանց մասին:

b

Պրոտարքոս. Ի՞նչ հարցնել:

Սուկրատես. «Սիրելիներ՛ր, որ հաճույքներ եք կոչվում կամ կրում եք ուրիշ անուն, նախընտրում եք ապրել ամեն խոհեմության հե՞տ, թե՞ առանց խոհեմության»: Կարծում եմ, սրան հաճույքները անհրաժեշտաբար կպատասխանեն այսպես:

Պրոտարքոս. Ինչպե՞ս:

Սուկրատես. Այնպես, ինչպես արտահայտվեցինք քիչ առաջ. «Առանձին և միանյակ սեռը ո՛չ հնարավոր է, ո՛չ էլ օգտակար: Մենք համարում ենք, որ բոլոր սեռերից լավագույնը մեզ համար, եթե համեմատենք դրանք, բոլոր իրերի և մեր

c

ուճակություններից յուրաքանչյուրի կատարյալ ճանաչողությունն է»:

Պրոտարքոս. «Շատ լավ պատասխանեցիք»,– կասենք նրանց:

Սոկրատես. Ճիշտ է: Այնուհետև մենք պիտի հարցն ուղղենք խոհեմությանն ու խելքին⁶². «Կարիք ունե՞ք արդյոք միախառնվելու հաճույքների հետ»: Խելքն ու խոհեմությունը գուցե այսպես պատասխանեն. «Ի՞նչ հաճույքների»:

Պրոտարքոս. Գուցե:

- d **Սոկրատես.** Մենք դրանից հետո կասենք հետևյալը. «Իսկ ճշմարիտ հաճույքներից բացի ուրիշ բանի կարիք չե՞ք ունենա, թե՞ ձեզ անհրաժեշտ են նաև ամենամեծ և ուժեղ հաճույքները»: «Ինչպես թե, Սոկրատես,– գուցե ասեն նրանք,– այդ հաճույքների հետ մենք բյուրավոր դժվարություններ ունենք, քանի որ դրանք մոլեգնությամբ վրդովում են մեր հոգին, որի մեջ բնակվում ենք: Դրանք ի սկզբանե թույլ են տալիս մեզ
- e գոյանալ, իսկ մեր ծնած գավակներից շատերին, մեր մեջ անհոգություն առաջ բերելով, լիովին կործանում են: Հաճույքները, որոնք դու ճշմարիտ և մաքուր ես կոչում, գրեթե մեզ ազգակից համարիր, նմանապես ավելացրու նաև նրանք, որոնք կապված են առողջությանը, խոհեմությանը, ամեն տեսակ առաքինությանը և հետևում են վերջինիս, ինչպես դիցուհու: Իսկ հաճույքները, որոնք մշտապես հաջորդում են անխոհեմությանը, ուրիշ չարիքներին, միանգամայն անհեթեթ կլինեն
- 64 միախառնել խելքին, եթե մենք ցանկանում ենք տեսնել ամենագեղեցիկ և կայուն խառնուրդն ու բաղադրությունը և փորձում ենք հասկանալ, թե ինչն է բնական բարիք մարդու և Համայնի մեջ և ինչ գաղափար պետք է կռահել այդ խառնուրդի մեջ»: Մի՞թե խոհեմաբար և ինքնուրույնաբար չէ խելքը պատասխանում իր, հիշողության և ճիշտ կարծիքի անունից:

Պրոտարքոս. Միանգամայն:

- Սոկրատես.** Բայց դեռ անհրաժեշտ է նաև հետևյալը,
- b առանց որի ուրիշ ոչինչ չէր գոյանա:

Ֆիլեբոս

Պրոտարքոս. Ի՞նչը:

Սոկրատես. Այն, ինչին մենք չենք միախառնում ճշմարտության, իրականում չի կարող ո՛չ գոյանալ, ո՛չ էլ գոյանալով՝ լինել:

Պրոտարքոս. Բայց ինչպե՞ս պիտի կարողանար:

Սոկրատես. Ոչ մի կերպ: Բայց եթե այդ խառնուրդին դեռ ինչ-որ բան պակասում է, դու և Ֆիլեբոսն ասե՛ք: Իսկ ինձ այս փաստարկը թվում է ավարտուն, ասես անմարմին տիեզերքը, որն իշխում է հոգևոր մարմնին:

Պրոտարքոս. Ինձ էլ, Սոկրատես, այդպես է թվում:

Սոկրատես. Եվ եթե մենք հիմա ասեինք, որ կանգնած ենք բարիքի կացարանի շենին, ապա այդ խոսքը գուցե ինչ-որ կերպ ճիշտ լիներ:

Պրոտարքոս. Ինձ այդպես է թվում:

Սոկրատես. Իսկ ի՞նչն է, որ ամենից արժեքավոր կթվա այդ խառնուրդի մեջ ու նաև ամենամեծ պատճառն այն բանի, որ նման վիճակը սիրված է բոլորիս կողմից: Տեսնելով դա, մենք կդիտարկենք, թե ինչին է այդ պատճառն ավելի ազգակից և բնորոշ՝ հաճույքի՞ն, թե՞ խելքին:

Պրոտարքոս. Ճիշտ է: Դա շատ կնպաստի մեր վճռին: d

Սոկրատես. Բայց չէ՞ որ դժվար չէ տեսնել ամեն խառնուրդի պատճառը, որի շնորհիվ այդ խառնուրդը կա՛ն արժեքավոր է, կա՛ն էլ բոլորովին անարժեք:

Պրոտարքոս. Ի՞նչ նկատի ունես:

Սոկրատես. Բոլոր մարդիկ գիտեն դա:

Պրոտարքոս. Ի՞նչը:

Սոկրատես. Որ ամեն խառնուրդ, եթե կապված չէ ո՛չ չափի, ո՛չ էլ համաչափության հետ, անհրաժեշտաբար կործանում է թե՛ իր բաղադրիչները, թե՛ նախ և առաջ ինքն իրեն: e
Քանզի խառնուրդ չէ, այլ իրականում մի անկարգ կույտ, որը միշտ դժբախտություն է բերում իրեն տիրողներին:

Պրոտարքոս. Շատ ճիշտ է:

Սոկրատես. Այժմ բարիքի ուժը մեզ մոտ անցավ գեղե-

ցիկի բնության մեջ: Չէ՞ որ չափավորությունն ու համաչափությունը ամենուր դառնում է գեղեցիկ և առաքինի:

Պրոտարքոս. Իհարկե:

Սուկրատես. Բայց մենք ասացինք, որ ճշմարտությունը միախառնված է դրանց:

Պրոտարքոս. Այո:

Սուկրատես. Ուրեմն, եթե մենք չենք կարողանում որսալ բարիքը մեկ գաղափարով, որսանք երեքով՝ գեղեցիկով, համաչափությամբ և ճշմարտությամբ: Ասենք, որ դրանք, վերցված որպես մեկը, խառնուրդի մեջ եղածի իսկական պատճառն են, և շնորհիվ այն բանի, որ այդ մեկը բարիք է, խառնուրդը նույնպես դառնում է բարիք:

Պրոտարքոս. Շատ ճիշտ է:

Սուկրատես. Արդ, Պրոտարքոս, մենք կարող ենք բավարար դատողություն անել հաճույքի և խոհեմության մասին՝ նշելով, թե որն է դրանցից բարձրագույն բարիքին առավել ազգակից և ինչն է ամենից արժեքավորը մարդկանց և աստվածների մոտ:

Պրոտարքոս. Պարզ է, թեպետ ավելի լավ կլիներ ցույց տալ դա քննության միջոցով:

Սուկրատես. Դատենք երեքից յուրաքանչյուրի մասին հաճույքի և խելքի հետ իր հարաբերության մեջ: Քանզի հարկ է տեսնել, թե դրանցից որն է ավելի ազգակից հաճույքին և խելքին:

Պրոտարքոս. Դու նկատի ունես գեղեցիկը, ճշմարտությունը և չափը:

Սուկրատես. Այո: Նախ վերցնենք ճշմարտությունը, Պրոտարքոս: Վերցնելով և դիտելով այդ երեք սկզբունքները՝ խելքը, ճշմարտությունը և հաճույքը, սպասիր երկար ժամանակ և պատասխանիր ինքդ քեզ, թե ինչն է ավելի ազգակից ճշմարտությանը՝ հաճույքը, թե՞ խելքը:

Պրոտարքոս. Ինչու՞ երկար ժամանակ: Կարծում եմ, տարբերությունը մեծ է: Ինչպես ասում են, հաճույքն ամենից

պարծենկոտն է, իսկ սիրային հաճույքների ժամանակ, որոնք համարվում են ամենաուժեղը, աստվածները ներում են անգամ երդմնազանցությունը, որովհետև հաճույքները, մանուկների պես, բոլորովին զուրկ են խելքից: Իսկ խելքը կա՛մ նույնական է ճշմարտությանը, կա՛մ էլ ամենից շատ է մոտ դրան և ամենաճշմարիտն է:

d

Սուկրատես. Սրանից հետո նույն եղանակով դիտարկենք նաև չափավորությունը. հաճու՞յքն է, որ ամենից շատ է օժտված չափավորությամբ, թե՞ խոհեմությունը:

Պրոտարքոս. Սա նույնպես կարելի է հեշտությամբ քննել: Կարծում եմ, ոչ մի տեղ հնարավոր չէ գտնել բնությամբ ավելի չափազուրկ բան, քան հաճույքն ու ցնծությունը, և ոչինչ ավելի չափավոր, քան խելքն ու իմացությունը:

Սուկրատես. Լավ ես ասում: Խոսիր նաև երրորդի մասին: Մեր խե՞լքն է ավելի շատ հաղորդակից գեղեցիկին, թե՞ հաճույքի սեռը, և արդյո՞ք այն ավելի գեղեցիկ է հաճույքից, թե՞ հակառակը:

e

Պրոտարքոս. Սուկրատես, ոչ ոք երբեք ո՛չ հարթմնի, ո՛չ էլ երազում չի տեսել, որ խոհեմությունն ու խելքը լինեն կամ եղել են այլանդակ:

Սուկրատես. Ճիշտ է:

Պրոտարքոս. Ինչ վերաբերում է հաճույքներին, և գուցե ամենամեծերին, ապա, երբ տեսնում ենք որևէ մեկին, որ վայելում է դրանք, և դրանք մեզ թվում են զավեշտական կամ անոթալի, մենք ամաչում ենք ու երես թեքում՝ թողնելով այդ ամենը գիշերվան, ասես լույսը չափտի տեսնի դա:

66

Սուկրատես. Դու, Պրոտարքոս, բանբերներ ուղարկելով և հայտարարելով անծամբ, կասես ամենուր, որ հաճույքը ո՛չ առաջինն է, ո՛չ էլ վերջինը, այլ առաջին տեղում այն է, ինչ ունի չափ, չափավորություն և պիտանիություն, և ամեն բան, որ նման է համարվում սրան, ունի հավիտենական բնություն:

Պրոտարքոս. Ասվածից այդպես է թվում:

Սուկրատես. Երկրորդ մրցանակը ստանում են համաչա-

b

փութունը, գեղեցկությունը, կատարելությունը, ինքնաբավությունը և այս սեռին պատկանող մնացյալ ամեն բան:

Պրոտարքոս. Թերևս:

Սոկրատես. Իսկ երրորդ մրցանակը դու, ինչպես կռահում եմ, շնորհելով խելքին և խոհեմությանը, շատ չես հեռանա ճշմարտությունից:

Պրոտարքոս. Գուցե:

Սոկրատես. Դու չես սխալվի նաև, բացի նշված երեքից չորրորդ մրցանակը շնորհելով նրան, ինչը մենք համարեցինք հենց հոգու հատկություններ, այն է՝ իմացություններին, արվեստներին և այսպես կոչված ճիշտ կարծիքներին, եթե այս ամենը ավելի ազգակից է բարիքին, քան հաճույքին: Այդպես չէ՞:

Պրոտարքոս. Հավանաբար:

Սոկրատես. Իսկ շնորհե՞նք հինգերորդ մրցանակը այն հաճույքներին, որոնք մենք սահմանեցինք որպես տառապանքից զուրկ և կոչեցինք հենց հոգու մաքուր հաճույքներ, որոնք ուղեկցում են, մի կողմից, իմացություններին, իսկ մյուս կողմից՝ զգայություններին:

Պրոտարքոս. Թերևս:

Սոկրատես. «Հասնելով վեցերորդ ծնկին⁵³,— ինչպես ասում է Օրփեոսը,— ընդհատենք երգի կարգը»: Երևում է, մեր քննությունը նույնպես դադարում է վեցերորդ դատողության վրա: Մեզ ոչինչ չի մնում, քան ի մի բերել ասվածը:

Պրոտարքոս. Այո, պետք է ի մի բերել:

Սոկրատես. Այդ դեպքում երրորդ անգամ վկայելով մեր փաստարկը փրկչի առաջ՝ շարունակենք⁵⁴:

Պրոտարքոս. Ի՞նչ փաստարկ:

Սոկրատես. Ֆիլեբոսը համարում է հաճույքը ամենաբարձր և ամենակատարյալ բարիքը:

Պրոտարքոս. Սոկրատես՛ս, դու հենց նոր ասացիր «երրորդ անգամ», հավանաբար նկատի ունենալով, որ հարկ է սկզբից վերանայել մեր քննությունը:

Սոկրատես. Այո, լսենք հետևյալը: Ես, տեսնելով մեր

անցած ճանապարհը և անակնկալի գալով ոչ միայն Ֆիլերոսի, այլև ուրիշների հաճախ բերած փաստարկից, ասացի, որ խելքը մարդու կյանքում հաճույքից շատ ավելի լավ է և կատարյալ:

Պրոտարքոս. Այդպես էր:

Սուկրատես. Կասկածելով, որ մեզնի շատ ուրիշ բաներ գոյություն ունեն, ես ասացի, որ եթե լինի նշված երկուսից ավելի լավ ինչ-որ բան, այսինքն խելքից ու հաճույքից ավելի լավ, կպայքարեմ, որ խելքը ստանա երկրորդ մրցանակը, իսկ հաճույքը զրկվի նույնիսկ երկրորդից:

Պրոտարքոս. Այո, ասացիր:

67

Սուկրատես. Եվ դրանից հետո ամենից բավարար թվաց այն, որ այդ երկուսից և ոչ մեկը բավարար չէ:

Պրոտարքոս. Միանգամայն ճիշտ է:

Սուկրատես. Հիշյալ փաստարկի մեջ մի՞թե մի կողմ չդրվեցին ինչպես խելքը, այնպես էլ հաճույքը որպես ոչ բարիքներ, քանի որ զուրկ են ինքնատիրապետումից, ինքնաբավությունից և կատարելությունից:

Պրոտարքոս. Շատ ճիշտ է:

Սուկրատես. Իսկ երբ հայտնվեց ուրիշը՝ երրորդը, որն ավելի լավն է նշված երկուսից, խելքն իր բնությամբ բազում առումներով ավելի մոտ և ազգակից գտնվեց իրեն հաղթած գաղափարին, քան հաճույքը:

Պրոտարքոս. Ինչպե՞ս չէ:

Սուկրատես. Ուրեմն՝ համաձայն ներկայիս խոսքից բխող դատողության՝ հաճույքի ուժը կլինի հինգերորդը:

Պրոտարքոս. Թերևս:

Սուկրատես. Բայց ոչ առաջինը, անգամ եթե բոլոր ցլերը, ձիերը և մնացյալ կենդանիները ասեին, թե դրան են հետամուտ: Հավատալով նրանց, ինչպես գուշակները թռչուններին, շատերը հաճույքը համարում են կյանքում լավագույնը և վկայում, որ կենդանական տենչանքներն ավելի լավն են, քան փիլիսոփայական մուսայի ներշնչած խոսքը:

b

ՊԼատոն

Պրոտարքոս. Մենք բոլորս, Սոկրատես, կհամաձայնենք, որ ճշմարտությունն ես ասում:

Սոկրատես. Ուրեմն բաց կթողնե՞ք ինձ:

Պրոտարքոս. Մնացել է մի փոքր բան, Սոկրատես: Եվ դու մեզնից շուտ չես հեռանա: Ես կհիշեցնեմ քեզ, թե ինչ է **c** մնացել⁵⁵:



ՏԻՄԵՈՍ

ՍՈԿՐԱՏԵՍ, ԿՐԻՏԻԱՍ, ՏԻՄԵՈՍ, ՅԵՐՄՈՎՐԱՏԵՍ¹

Սոկրատես. Մեկ, երկու, երեք,— բայց ու՞ր է չորրորդը², 17
բարեկամ՝ Տիմեոս, մեկը նրանցից, որ երեկ հյուր էիմ, իսկ
այսօր պետք է հյուրընկալեմ մեզ:

Տիմեոս. Նրան ինչ-որ տկարություն է համակել, ո՛վ Սոկրատես. իր կամքով նա չէր հրաժարվի այս հավաքույթից:

Սոկրատես. Այդ դեպքում բացակայի տեղը լրացնելու գործը ձերն է:

Տիմեոս. Իհարկե, և մենք կաշխատենք հնարավորինս b
ոչինչ աչքաթող չանել: Արդար չի լինի, եթե քո պատվավոր
հյուրընկալությունը վայելելուց հետո մենք՝ ներկաներս, արժանիորեն չհատուցենք քեզ:

Սոկրատես. Իսկ հիշու՞մ եք, թե որքան և ինչ հարցեր
անաջարկեցի քննարկել:

Տիմեոս. Մի մասը հիշում ենք, մի մասը՝ ոչ: Բայց դու
այստեղ ես և կհիշեցնես: Կամ, ավելի շուտ, եթե քեզ դժվար
չէ, մեկ անգամ էլ հակիրճ ներկայացրու հարցերդ, որպեսզի
դրանք ավելի ամուր տպավորվեն մեր մեջ:

Սոկրատես. Թող այդպես լինի: Երեկվա իմ խոսքում c
զլխավորը վերաբերում էր պետական կառույցին՝ թե լավագույնը
լինելու համար ինչպիսի այրերից պիտի կազմված լինի
այն:

Տիմեոս. Եվ քո ասածը բոլորիս սրտով էր, ո՛վ Սոկրատես:

Սոկրատես. Եվ այսպես, նախ մենք առանձնացրինք

հողագործների դասը, ինչպես նաև մյուս արհեստները, հայրենիքի պաշտպանների դասից³:

Տիմոն. Այո:

Սոկրատես. Եվ նշեցինք, որ յուրաքանչյուրն ըստ իր բնության կուներնա մեկ հարմար ու յուրահատուկ զբաղմունք:

- d** Մենք ասացինք, որ նրանք, ովքեր պարտավոր են պատերազմել հանուն բոլորի, պետք է բացառապես լինեն քաղաքի պահապաններ, եթե որևէ մեկը դրսից կամ ներսից հանդգնի չարիք գործել. նրանք պիտի հեզորեն արդարություն պահպանեն ենթակաների՝ իրենց բնական բարեկամների նկատմամբ, սակայն դաժան լինեն մարտում թշնամիների հանդեպ:

Տիմոն. Միանգամայն ճիշտ է:

Սոկրատես. Այնուհետև մենք, կարծեմ, ասացինք, որ այդ պահապանների հոգին ի բնե պետք է լինի միաժամանակ ն՛ խիզախ, ն՛ հատկապես փիլիսոփայական, որպեսզի յուրախնների հանդեպ լինի հեզ, իսկ թշնամիների հանդեպ՝ դաժան⁴:

Տիմոն. Այո:

Սոկրատես. Իսկ դաստիարակությունը: Մի՞թե մարմնամարզությունը և մուսաների արվեստները չեն բոլոր այն գիտությունները, որոնք հատուկ են նրանց և որոնցով նրանք պետք է դաստիարակվեն⁵:

Տիմոն. Իհարկե:

- b** **Սոկրատես.** Եվ այդպես, դաստիարակություն ստացածների մասին ասված է, որ նրանք չպետք է իրենց սեփականությունը համարեն ո՛չ ոսկին, ո՛չ արծաթը, ո՛չ էլ որևէ ուրիշ բարիք, այլ որպես պաշտպաններ՝ իրենց ծառայության դիմաց խոհեմներին բավականացնող վարձատրություն ստանան նրանցից, ում պաշտպանում են, ծախսեն որպես ընդհանուր և ապրեն համատեղ, անվերջ հոգ տանելով առաքինության մասին: Ուրիշ գործերով նրանք չպետք է զբաղվեն⁶:

Տիմոն. Հենց այդպես էլ ասվեց:

- c** **Սոկրատես.** Մենք հիշատակեցինք նաև կանանց, որ նրանց բնությունը հարկ է զարգացնել, ինչպես տղամարդկանց

բնությունը, և որ թե՛ պատերազմում, թե՛ կյանքի այլ դեպքերում նրանք պետք է կիսեն տղամարդկանց հետ բոլոր գործերը⁷:

Տիմոս. Դա էլ ասվեց:

Սուկրատես. Իսկ զավակածնություն⁸ը: Թերևս մեր ասածների մեջ սա առանձնապես լավ հիշվեց իր արտասովորության պատճառով: Չէ՞ որ մենք ընդհանուր համարեցինք այն ամենը, ինչ առնչվում է ամուսնությանն ու զավակներին, և այնպես կարգավորեցինք, որ ոչ ոք երբևէ չիմանա, թե ծնվածը հենց իրենից է, այլ բոլորը բոլորին իրենց հարազատ համարեն. եղբայրներ և քույրեր համարեն նրանց, ովքեր տարիքով մոտ են իրենց, ծնողներ և ծնողների ծնողներ՝ իրենցից ավելի վաղ ծնվածներին, իսկ իրենցից ուշ ծնվածներին՝ զավակներ և թոռներ⁹:

d

Տիմոս. Այո, դա նույնպես դյուրին է հիշել, ինչպես որ ասում ես:

Սուկրատես. Եվ որպեսզի կարճ ժամանակում սկսեն ծնվել բնությամբ լավագույնները, մենք, եթե չես մոռացել, ասացինք, որ իշխանավորներն ու նրանց կանայք ամուսնական կապի մեջ մտնելով՝ պիտի գաղտնի հնարներ բանեցնեն քվեների օգնությամբ, այնպես որ հոռիներն ու ազնիվները միանան յուրաքանչյուրն իր նմանի հետ, և ոչ մի թշնամանք չառաջանա, այլ նրանք որոշեն, թե այդ ամենի պատճառը ճակատագիրն է⁹:

e

Տիմոս. Հիշում եմ:

Սուկրատես. Մենք ասացինք, որ ազնիվների զավակները պետք է դաստիարակվեն, իսկ հոռիների զավակները՝ գաղտնի կերպով ուղարկվեն քաղաքի մյուս մասը: Իսկ երբ հասակ առնեն, տիրակալները պետք է միշտ հետևեն նրանց, որպեսզի լավագույններին վերադարձնեն, իսկ ամառժաններից ուղարկեն վերադարձածների տեղը¹⁰:

19

Տիմոս. Այդպես է:

Սուկրատես. Ուրեմն կարողացա՞նք հիմնական գծերով

ներկայացնել երեկվա մեր զրույցը: Թե՞ կա մի բան, որ բաց թողեցիք: Ի՞նչ կասես, բարեկա՛մ Տիմոն:

- b** **Տիմոն.** Ոչ, Սոկրատես, հենց դրա մասին ենք զրուցել:
Սոկրատես. Լսե՛ք ուրեմն, թե ինչպիսի տպավորություն են ստացել պետական կառույցի մեր քննությունից: Այն նման է տպավորությանը, որ ստանում ենք գեղեցիկ կենդանիներ տեսնելիս, ասենք՝ պատկերված կամ առերևույթ, երբ նրանք անշարժ են. ցանկություն է առաջանում տեսնել նրանց շարժ-
- c** ման մեջ և թե ինչպես են նրանք պայքարի մեջ դրսևորում այն հատկությունները, որոնց մասին կարծիք ենք կազմում ըստ նրանց մարմինների: Նույն տպավորությունը ինձ վրա թողնում է նաև այն պետությունը, որի մասին խոսեցիք: Սիրով կլսեի նրան, ով խոսքով կներկայացնի, թե ինչպես է մեր պետությունը մրցում այլ պետությունների հետ, ինչպես է արժանի կերպով պատերազմ մղում և ինչպես է յուրաքանչյուր ոք, լինի դա ռազմի դաշտում սխրանք գործելիս, թե որևէ պետության հետ բանակցություններ վարելիս, դրսևորում դաստիարակվածություն և կրթվածություն: Արդ, Կրիտիաս և Չերմոկրատես, ես գիտակցում եմ, որ անգոր են պատշաճ կերպով փառաբանելու
- d** հիշյալ այրերին և պետությունը: Եվ դա բնավ զարմանալի չէ, քանի որ, ըստ իս, նման անզորությամբ տառապում են ինչպես հին, այնպես էլ նոր բանաստեղծները: Ես չեմ վատաբանում բանաստեղծների ցեղը. բոլորին էլ պարզ է, որ նմանակողների դասը ամենից դյուրին և կատարյալ նմանակում է այն, ինչի մեջ որ դաստիարակվել է, իսկ ինչից զերծ է մնացել, ավելի դժվար վերարտադրում է խոսքով, քան գործով: Ինչ վերաբերում է սոփեստներին¹¹, ապա ես համարում եմ նրանց բավականաչափ հմուտ ամենատարբեր ճառերում և ուրիշ գեղեցիկ բաներում, սակայն, վախենամ, քաղաքից քաղաք շրջելով և ոչ մի տեղ չունենալով սեփական տուն՝ նրանք անկարող են գործել և ասել բաներ, որոնք գործում և ասում են փիլիսոփաներն ու քաղաքական այրերը պատերազմի, բանակցության կամ ճակատամարտի պայմաններում: Մնում է միայն ձեր

դասը, որը թե՛ բնությամբ, թե՛ դաստիարակությամբ հաղորդակից է երկու զբաղմունքներին: Ահա այս Տիմոնը, լինելով լավագույն օրենքներն ունեցող իտալական Լոկրիս¹² քաղաքից, իր ունեցվածքով ու ծագումով այնտեղի բնակիչներից ոչ ոքի չի զիջում, իր քաղաքում արժանացել է մեծ իշխանության և պատվի, իսկ փիլիսոփայության մեջ, ըստ իս, հասել է կատարյալ բարձունքի: Կրիտիասի մասին բոլորիս էլ հայտնի է, որ նա մեր քննած հարցերից և ոչ մեկում անգետ չէ: Իսկ Յերմոկրատեսը, եթե հավատանք բազում վկայություններին, նույնպես տեղյակ է այդ ամենին՝ ինչպես ի բնե, այնպես էլ կրթությամբ: Ահա ինչու երեկ որոշ մտորումներից հետո սիրով տեղի տվեցի պետական կառույցը ներկայացնելու ձեր խնդրանքներին, քանզի գիտեի, որ հաջորդ քննությունը ձեզնից լավ ոչ ոք չի կարողանա ներկայացնել: Չէ՞ որ այժմ ապրողներից միայն դուք ցույց կտաք, թե ինչպես է իրեն արժանի պատերազմի մեջ ներքաշված պետությունը դրսևորում իր որակները: Պահանջվածն ասելուց հետո ես դիմեցի ձեզ խնդրանքով, որի մասին հիմա խոսում եմ: Միմյանց հետ խորհրդակցելով, դուք համաձայնեցիք ի պատասխան հյուրասիրել ինձ ձեր քննությամբ, և ես ահա պատրաստված եկել եմ և անչափ ուզում եմ լսել այն:

Յերմոկրատես. Եվ իրոք, Սոկրատես, ինչպես ասաց այս Տիմոնը, մենք չենք ունենա ո՛չ ջանասիրության պակաս և ո՛չ էլ դա չանելու արդարացում: Ուստի նաև երեկ, երբ հյուր եկանք Կրիտիասին, ուր հիմա էլ գտնվում ենք, և անգամ այստեղ ուղևորվելու ճանապարհին մենք հենց դա էինք քննարկում: Կրիտիասը հաղորդեց մեզ հնում լսած մի պատմություն: Պատմի՛ր հիմա էլ Սոկրատեսին, Կրիտիաս, որպեսզի նա մեզ հետ պարզի՝ համապատասխանու՞մ է այն արդյոք մեր խնդրին, թե՞ ոչ:

Կրիտիաս. Այո, պետք է այդպես անել, եթե համաձայն է նաև մեր երրորդ զրուցակիցը՝ Տիմոնը:

Տիմոն. Համաձայն եմ:

Կրիտիաս. Այդ դեպքում, Սոկրատես, լսիր մի բավական

e տարօրինակ, սակայն ճշմարիտ պատմություն, որը մի ժամանակ պատմել է Սոլոնը՝ յոթ իմաստուններից ամենախմաստունը¹³: Նա մեր նախապապ Դրոպիդեսի ազգականն ու մեծ բարեկամն էր, և այդ մասին հենց ինքն է վկայում իր պոեզիայում¹⁴: Նա ասում էր մեր պապ Կրիտիասին,– իսկ ծերուկը կրկին ու կրկին հիշեցնում էր մեզ,– որ հնում մեծ և զարմանալի են եղել մեր քաղաքի գործերը: Սակայն հետագայում դրանք մոռացվել են ինչպես ժամանակի, այնպես էլ մարդկանց կործանման պատճառով: Մեծագույնը դրանց մեջ այն մեկն էր, որը մեզ էլ հիմա տեղին կլինի հիշել, որպեսզի շնորհակալություն հայտնենք քեզ և միաժամանակ փառաբանման արդար ու ճշմարիտ խոսքեր ձոնենք դիցուհուն աստվածահաճ իր տոնի առթիվ¹⁵:

Սոկրատես. Ծիշտ ես ասում: Բայց այդ ի՞նչ գործ է, որի մասին Կրիտիասը, լսած լինելով Սոլոնից, պատմում էր որպես լռության մատնված, բայց իրականում այս քաղաքի կողմից հնում կատարված մի բան:

Կրիտիաս. Ես կպատմեմ: Դա հին պատմություն է, որը լսել եմ բնավ ոչ երիտասարդ մարդուց: Կրիտիասն, իր ասելով, այդ ժամանակ մոտ իննսուն տարեկան էր, իսկ ես՝ ամենաշատը տասը տարեկան: Մեզ մոտ այդ օրերին Ապատուրիայի Կուրետոսիս տոնն էր¹⁶: Տոնակատարության կարգը, որը միշտ պահպանվում էր, գործեց նաև այս անգամ, և մեզ՝ տղաներիս, մեր հայրերը մրցանակ սահմանեցին հազներգության համար: Ընթերցվում էին տարբեր բանաստեղծների ստեղծագործություններ, և տղաներից շատերը արտասանում էին Սոլոնի գրվածքներից, որոնք այդ ժամանակ դեռ նորույթ էին: Եվ ահա ֆրատերներից¹⁷ մեկը կա՛մ ելնելով համոզմունքից, կա՛մ էլ Կրիտիասին հաճույք պատճառելու համար ասաց, որ ոչ միայն ուրիշ հարցերում է Սոլոնն ամենախմաստունը, այլև իր երկերում ամենավսեմն է բանաստեղծներից: Իսկ ծերունին,– լավ եմ հիշում,– շատ ուրախացավ և ժպտալով ասաց. «Եթե, ո՛վ Ամինանդր, նա զբաղվեր պոեզիայով ոչ հարևանցի, այլ

լրջորեն, ինչպես ուրիշները, եթե ավարտին հասցնեն պատումը, որ այստեղ բերել է եգիպտոսից, և ստիպված չլինեն թողնել խառնակությունների և ուրիշ չարիքների պատճառով, որոնց բախվեց գալով այստեղ¹⁸, կարծում եմ, ո՛չ Յեսիողոսը, ո՛չ Յոմերոսը և ո՛չ էլ ուրիշ որևէ բանաստեղծ իրենց փառքով չէին գերազանցի նրան»: «Իսկ այդ ի՞նչ պատում է, Կրիտիաս», – հարցրեց նա: «Պատումը սխրանքի մասին է, որն արժանի էր երբևէ մեր քաղաքի արած մեծագործությունների մեջ առավելագույնն ու փառավորագույնը համարվելու, եթե չմոռացվեր ժամանակի և այն գործած մարդկանց կործանման պատճառով»: «Պատմի՛ր սկզբից, – ասաց Ամինանդրը, – ի՞նչ և ինչպե՞ս լսեց Սոլոնը և ովքե՞ր էին նրանք, որ գիտեին ճշմարտությունը»:

«Եգիպտոսի Դելտայում, – ասաց Կրիտիասը, – դրա գագաթի մոտ, որտեղ ճյուղավորվում է Նեղոսի հոսանքը, գտնվում է Սախյան կոչվող մարզը: Ամենամեծ քաղաքն այստեղ Սախն է՝ Ամասիս թագավորի քաղաքը¹⁹: Դրա հիմնադիրն է դիցուհին, որի անունը եգիպտերեն Նեիթ է, իսկ հունարեն, ինչպես ասում են տեղացիները, Աթենա: Նրանք բարյացակամ են աթենացիների նկատմամբ և պնդում են, թե ինչ-որ ձևով ազգակից են վերջիններիս²⁰: Սոլոնի ասելով՝ երբ նա ժամանեց նրանց մոտ, մեծ պատիվների արժանացավ, իսկ երբ սկսեց հարցուփորձ անել քրմերից ամենատեղյակներին հին ժամանակների մասին, պարզվեց, որ ո՛չ ինքը, ո՛չ էլ հույներից որևէ մեկը այդ ամենից ըստ էության ոչինչ չգիտեն: Երբ մի անգամ նա ցանկացավ խոսք բացել հին գործերի մասին և փորձեց զրուցել վաղնջագույն ավանդությունների շուրջ՝ Փորոնեսի, որը համարվում էր առաջին մարդը, Նիոբեի և թե ինչպես Դևկալիոնն ու Պիրրան փրկվեցին ջրիեղեղից, և տալ նրանց սերունդների տոհմաբանությունը և ըստ այդմ փորձել հաշվել, թե քանի տարի է անցել այդ ժամանակներից²¹, քրմերից մեկը՝ բավականին տարեց մի մարդ²², ասաց. «Ո՛վ Սոլոն, Սոլոն, դուք՝ հույներդ, հավետ մանուկներ եք, չկա ծեր հույն»: Լսելով դա՝ Սոլոնը հարցրեց. «Ինչու՞ ես այդպես ասում»: «Դուք երիտասարդ եք

d

e

22

b

հոգով,– պատասխանեց քուրմը,– որովհետև ո՛չ հնուն լսված ինչ-որ պատում եք պահում ձեր մեջ, ո՛չ էլ ժամանակի ընթացքում ճերմակ մազեր առած որևէ ուսմունք: Իսկ դրա պատճառը հետևյալն է: Մարդկությանը պատուհասել են և դեռ կպատուհասեն բազում արհավիրքներ՝ մեծագույն, որ կուղեկցվեն հրով ու ջրով, բայց նաև բյուրավոր պակաս նշանակալի աղետներ²³: Չէ՞ որ դուք էլ ունեք պատմություն Ֆաեթոնի՝ Յելիոսի որդու մասին, որը լծելով հոր կառքը և չկարողանալով այն վարել հոր ճանապարհով, այրեց Երկրիս վրա եղածը և ինքն էլ կործանվեց շանթահար²⁴:

- d Այս պատումն ունի առասպելի ձև. իրականում երկնքով Երկրի շուրջ պտտվող մարմինները երկար ժամանակաշրջանների ընթացքում մշտապես շեղվում են իրենց ուղեծրից, և Երկրի վրա եղածը ոչնչանում է ուժեղ հրդեհներից: Այդժամ նրանք, ովքեր բնակվում են լեռներում, բարձունքներում և չոր վայրերում, ավելի մեծ վնասներ են կրում, քան նրանք, որոնք բնակվում են գետերի և ծովի մոտ: Նման դեպքերում Նեղոսը՝ մեր փրկիչը, վարարելով փրկում է մեզ այդ աղետից: Իսկ երբ աստվածները, մաքրելով Երկիրը, այն հեղեղում են ջրով, փրկվում են եզնարածներն ու հովիվները, որոնք գտնվում են լեռներում, իսկ նրանք, ովքեր բնակվում են ձեր քաղաքներում, գետերով քշվում են ծով: Բայց այս երկրում ջուրը երբեք չի թափվում դաշտերի վրա վերևից, ընդհակառակը՝ բնականորեն բարձրանում է ներքևից: Սա է պատճառը, որ այստեղ պահպանված պատումները հնագույնն են, թեպետ ճշմարիտ է նաև, որ բոլոր այն վայրերում, որտեղ տևական ցուրտը կամ տապը արգելք չեն, մարդկային ցեղը մշտապես կա՛մ մեծաթիվ է, կա՛մ փոքրաթիվ: Եվ եթե մենք լսում ենք, որ մեր կամ ձեր կողմերում, կամ մեկ ուրիշ տեղ կատարվել է մեծ ու փառավոր մի գործ կամ պատահել է որևէ երևելի դեպք, դա հնուց անտի անբողջությամբ գրի է առնվում ու պահվում տաճարներում: Իսկ ձեզ մոտ և ուրիշ տեղերում ամեն անգամ, երբ մշակվում են գրերն ու քաղաքին անհրաժեշտ մյուս բաները, գալիս է

23

օրը, համաճարակի պես երկնքից թափվում է հեղեղը և [կենդանի] թողնում ձեզնից միայն անգրագետներին և անկիրթներին: Ուստի դուք ամեն ինչ սկսում եք նորից, ասես կրկին դառնալով երիտասարդ և անտեղյակ այն ամենից, ինչ հնում եղել է այստեղ կամ ձեր կողմերում: Տոհմաբանությունը, ո՛վ Սոլոն, որի մասին քիչ առաջ պատմեցիր մեզ, գրեթե չի տարբերվում մանկական հեքիաթներից: Այդպես, դուք հիշում եք նախկինում եղած բազում հեղեղներից միայն մեկը. բացի այդ, դուք չգիտեք, որ ձեր երկրում է ապրել մարդկանց մեջ ամենահրաշալի և ազնվագույն տոհմը, որ դու և ողջ ձեր քաղաքը սերում եք այդ տոհմի երբեմնի թողած փոքր սերմից, սակայն ոչինչ չգիտեք դրա մասին, որովհետև բազմաթիվ սերունդներ ձեզնից առաջ մահացել են անխոս՝ չթողնելով գրավոր վկայություններ: Քանզի նախքան մեծ ու ավերիչ ջրհեղեղը, ո՛վ Սոլոն, այժմ Աթենք կոչվող քաղաքն առաջիններից էր թե՛ ռազմական առաքինություններով, թե՛ օրենքների կատարելությամբ: Պատմում են, որ քաղաքն իր գործերով և հաստատություններով եղել է ամենագեղեցիկն ու կատարյալը այն ամենից, որ երբևէ գոյություն է ունեցել երկնքի տակ և հայտնի է մեզ:

Լսելով դա՛ Սոլոնն, իր ասելով, խիստ զարմացավ և շատ խնդրեց քրմերին մանրամասնորեն պատմել այդ հնագույն քաղաքացիների մասին: Եվ քուրմը պատասխանեց նրան. «Թո՛ղ այդպես լինի, Սոլոն: Կպատմեն հանուն քեզ, ձեր քաղաքի և հատկապես հանուն դիցուհու²⁵, որին բաժին են ընկել ձեր և մեր քաղաքները և որը սնել ու դաստիարակել է դրանք: Նախ, հազար տարի առաջ նա հիմնադրել է ձեր քաղաքը՝ վերցնելով ձեր սերմը Գեայից և Յեփեստոսից²⁶, և հետո միայն մեր քաղաքը: Սակայն մեր պետական կարգը, համաձայն տաճարներում եղած արձանագրությունների, հաշվում է ութ հազար տարի: Այսպես ուրեմն, ես հակիրճ կխոսեմ ինը հազար տարի առաջ քո քաղաքում բնակվողների օրենքների և մեծագույն գործերի մասին: Իսկ մեկ ուրիշ անգամ, պատեհ առիթի դեպքում, ավելի մանրամասն կանդրադառնանք դրան՝ մեր

- ծեռքի տակ ունենալով այդ գրությունները: Ձեր հին օրենքները քննելու համար քննիր մեր օրենքները: Դու կգտնես այստեղ բազում հաստատությունների օրինակներ, որ ունեցել էք այն ժամանակ. նախ՝ քրմերի դասը, որն առանձնանում է մյուսներից, այնուհետև արհեստավորների դասը, որում յուրաքանչյուրն աշխատում է առանց միջամտելու մյուսի արհեստին, և հովիվների, որսորդների ու հողագործների դասը: Կա նաև զինվորականության դասը, որն, ինչպես նկատեցիր, առանձնացված է բոլոր մյուս դասերից և պիտի հոգ տանի բացառապես պատերազմի մասին, ինչպես որ պատվիրում է օրենքը: Ձինվորները պետք է զինված լինեն վահաններով ու նիզակներով. մենք առաջինն էինք, որ անսալով դիցուհուհու²⁷՝ այդպեղ պիսկիցնք Ասիայում, ինչպես որ դուք առաջինն էիք ձեր կողմերում: Ինչ վերաբերում է իմաստությանը, ինքդ ես տեսնում, թե որքան է ի սկզբանե հոգացել այդ մասին մեր օրենքը՝ ողջ տիեզերքը և բոլոր մարդկային արվեստները, ներառյալ գուշակությունը և առողջությունը փայփայող բժշկությունը դուրս բերելով աստվածային արվեստներից. նշված արվեստներին են պատկանում նաև բոլոր մյուս իմացությունները: Բայց ողջ այդ կարգն ու կանոնը դիցուհին նախապես հաստատել է ձեզ մոտ՝ ընտրելով այն վայրը, որտեղ դուք բարենպաստ եղանակի պայմաններում կդառնայիք ամենախմաստուն մարդիկ: Լինելով ռազմաշունչ և իմաստասեր՝ դիցուհին ընտրեց և առաջինը բնակեցրեց այնպիսի վայր, որն իրեն նման այրեր կծներ: Եվ այդպես, դուք բնակվեցիք այդտեղ՝ ունենալով օրենքներ, որոնք այդ ժամանակ դեռևս բարեկարգ էին. դուք գերազանցում էիք մնացյալ մարդկանց ամեն տեսակ առաքինություններում, ինչպես դա վայել է աստվածների զարմին ու սանին: Բազմաթիվ են ձեր քաղաքի մեծ գործերը, որոնք, գրի առնված, զարմացնում են մեզ, սակայն կա մեկը, որն իր մեծությամբ և առաքինությամբ գերազանցում է բոլորը: Գրություններն ասում են, որ ձեր քաղաքը կասեցրեց հանդուգն այն ուժը, որը շարժվում էր դեպի ողջ Եվրոպան ու Ասիան և որը

ելնում էր Ատլանտյան ծովի կողմերից: Այն ժամանակներում ծովը դեռևս անցանելի էր, քանզի դեռ գոյություն ուներ կղզին այն նեղուցի դիմաց, որը դուք ձեր լեզվով կոչում եք Յերակլյան սյուներ²⁸: Այդ կղզին ավելի մեծ էր, քան Լիբիան և Ասիան միասին վերցրած, և այդտեղից ճանապարհորդներին հեշտ էր հասնել ուրիշ կղզիներ, իսկ կղզիներից՝ մայրցամաք, որն ընդգրկում էր այդ ծովը: Չէ՞ որ նեղուց ասելով՝ նկատի ունենք ծովախորշ, որն ունի նեղ մուտք, իսկ ծովը, որ շրջապատում է նեղուցը, իսկապես ծով է, և երկիրը, որ իրոք շրջապատում է այն, իրոք կարող է ցամաք կոչվել: Ատլանտիս²⁹ կոչվող այդ կղզում գոյություն է ունեցել թագավորների մեծ և զարմանալի դաշնություն, որն իշխել է ողջ կղզուն, շատ ուրիշ կղզիների և ցամաքի մի մասին: Բացի այդ, նրանք իշխում էին Լիբիայից մինչև Եգիպտոս, Եվրոպայից մինչև Տիրենիա³⁰: Եվ ամբողջ այդ միասնական ուժը փորձեց մեկ հարվածով ստրկացնել ինչպես մեր և ձեր, այնպես էլ ծովախորշից այն կողմ գտնվող երկրները: Այդժամ ձեր քաղաքը, Սոլոն, գործի դրեց իր բոլոր մարդկանց ուժերն ու առաքինությունը: Իրոք, ձեր քաղաքը, գերազանցելով բոլոր մյուսներին վեհանձնությամբ և հմտություններով, որոնք անհրաժեշտ են պատերազմում, նախ զլխավորեց հելեններին, իսկ այնուհետև, երբ մյուսները դասավորության դիմեցին, մնաց միայնակ և ենթարկվեց ծայրահեղ վտանգների, սակայն հաղթեց թշնամուն և հաղթանշաններ հաստատեց: Նրանց, ովքեր դեռ չէին ստրկացվել, փրկեց ստրկության վտանգից, իսկ բոլոր նրանց, ովքեր բնակվում էին Յերակլյան սյուններից այն կողմ, մեծահոգաբար ազատեց: Սակայն ավելի ուշ, երբ եկավ չտեսնված երկրաշարժերի և ջրհեղեղների ժամանակը, մեկ զարհուրելի ցերեկվա և գիշերվա ընթացքում ձեր ողջ բանակը կուլ գնաց հողին, իսկ Ատլանտիս կղզին նույն ձևով սուզվեց ծովն ու անհետացավ: Այդ պատճառով է, որ հիմա էլ ծովն այդ կողմերում դժվարանցանելի է և ոչ նավարկելի տիղմի հսկայական զանգվածների հետևանքով, որոնք առաջացան կղզու խորտակումից³¹»:

25

b

c

d

Ահա ծեր Կրիտիասի պատմությունը, Սոկրատես, որը նա լսել է Սոլոնից: Երբ դու երեկ խոսում էիր պետական կառույցի և [պետական] այրերի մասին, ես, հիշելով այս պատմությունը, զարմացա, որովհետև նկատեցի, որ տարօրինակ պատահականությամբ քո խոսքերը համընկնում են Սոլոնի բազում խոսքերին: Եվ ցանկացա անմիջապես ասել այդ մասին: Անցել էր երկար ժամանակ, և ես բավականաչափ լավ չէի հիշում պատմությունը: Մտածեցի, որ չպիտի խոսեմ, քանի դեռ բավարար չափով չեմ վերհիշել: Ահա ինչու երեկ իսկույն համաձայնեցի քո առաջարկին՝ կարծելով, որ այդպիսի ճառերում կարևորագույնը հիմքում որևէ պատշաճ փաստարկ դնելն է ու դրանով բավարարվելը: Արդ, ինչպես ասաց Յերմոկրատեսը, երեկ այստեղից հեռանալով՝ ես անմիջապես հիշեցի այդ պատմությունը, իսկ գիշերը տնտղելով հիշողությունս՝ գրեթե ամեն բան մտաբերեցի: Ճիշտ է ասույթը, թե մանուկ հասակում սովորածը հրաշալի է հիշվում: Քանզի ես չեմ կարծում, թե ամբողջությամբ կհիշեի երեկվա լսածս: Սակայն եթե ինչ-որ բան չկարողանայի հիշել վաղուց ի վեր լսած որևէ պատմությունից, դա ինձ շատ կզարմացներ: Չէ՞ որ այն ժամանակ ես լսել եմ դա մեծ հաճույքով ու սիրով, իսկ ծերունին սիրով ուսուցանում էր ինձ և պատասխանում բոլոր հարցերիս, այնպես որ դա դրոշմվեց իմ մեջ, ինչպես մոմի վրա խարակված պատկերը: Եվ ես անմիջապես ամեն ինչ պատմեցի մեր այս բարեկամներին, որպեսզի նրանք էլ խոսելու բան ունենան:

Արդ, Սոկրատես, իմ ողջ ասածի նպատակն էր հայտնել, որ պատրաստ եմ ներկայացնել պատմությունը, ընդ որում ոչ թե գլխավոր միտքը միայն, այլ ամենայն մանրամասնությամբ: Քաղաքացիներին և պետությունը, որոնք դու երեկ ներկայացրիր առասպելի մեջ³², մենք կտեղափոխենք այստեղ, ասես դրանք մեզ հետ են, և կընդունենք, որ այդ պետությունը մեր պետությունն է, իսկ քաղաքացիները, որոնց մասին խոսում ենք, իսկապես մեր նախնիներն են, ինչպես քրմերն են ասել: Ամեն ինչ իր տեղը կընկնի, և սուտ ասած չենք լինի, եթե պնդենք,

որ նրանք այն ժամանակ գոյություն են ունեցել: Հիմա, բաժանելով պարտականությունները, փորձենք պատշաճ կերպով կատարել քո առաջադրանքը: Սակայն պետք է պարզել՝ արդյո՞ք այդ պատմությունը մեր սրտով է, ո՛վ Սուկրատես, թե պիտի փնտրենք մեկ ուրիշը:

Սուկրատես. Ուրիշ ի՞նչ պատմություն կա, Կրիտիաս, որին կարող ենք նախապատվություն տալ այս մեկի համդեպ: Չէ՞ որ սա ամենից շատ է վայել մեր դիցուհու սրբազան արարողություններին, քանզի ազգակից է հենց դիցուհուն: Եվ ամենակարևորն այն է, որ սա ոչ թե հորինված առասպել է, այլ ճշմարիտ պատմություն: Ինչպե՞ս և որտեղի՞ց կգտնենք ուրիշը, եթե մերժենք այս մեկը: Ո՛չ, դա լինելու բան չէ, դուք պիտի օգտագործեք պատեհ առիթը և խոսեք, իսկ ես, ի հատուցումն 27 երեկվա խոսքիս, այսօր կլռեմ և կլսեմ ձեզ:

Կրիտիաս. Այդ դեպքում, Սուկրատես, տե՛ս, թե ինչ հերթականությամբ են քեզ պատվելու երեկվա հյուրերդ: Մենք որոշեցինք, որ Տիմոնը մեր միջի լավագույն աստղագետն է և իր կարևորագույն գործն է դարձրել ամենայն ինչի ճանաչողությունը: Նա կխոսի առաջինը, սկսելով տիեզերքի ծագումից և վերջացնելով մարդկանց բնությամբ: Նրանից հետո կխոսեն ես, ասես ընդունելով այդ մարդկանց, որ կնծվեն նրա խոսքում, իսկ քեզնից կընդունեն նրանց արդեն լավագույնս դաստիարակված: Այնուհետև, համաձայն Սոլոնի խոսքի և օրենքի, նրանց կհանձնեն ձեր դատին, որպեսզի դարձնեք այդ պետության քաղաքացիներ՝ ելնելով այն բանից, որ մի ժամանակ նրանք եղել են աթենացիներ, որոնց մասին երկար տարիների անհայտությունից հետո հաղորդեցին սրբազան գրությունները. հետագա խոսքում մենք նրանց կհիշենք արդեն որպես մեր համաքաղաքացիների և իսկական աթենացիների:

Սուկրատես. Երևում է, դուք մտադիր եք ինձ հատուցել կատարյալ և վեհաշուք ճառերով: Այսքանից հետո, Տիմոնս, քանի որ դու, համաձայն օրենքի, հիշատակեցիր աստվածներին, խոսելու հերթը քոնն է:

- c** **Տիմոն.** Բայց, ո՛վ Սոկրատես, բոլոր նրանք, ովքեր դույզն իսկ հաղորդակից են խոհեմությանը, թե՛ փոքր, թե՛ մեծ առիթներով միշտ պարտավոր են հիշատակել աստվածներին: Իսկ մենք, պատրաստվելով զրուցել տիեզերքի մասին և փորձելով պարզել՝ ինչպես է այն գոյացել կամ, գուցե, որ գոյացման արդյունք չէ, անհրաժեշտաբար ստիպված ենք,— եթե, իհարկե, չենք ցնորվել,— աղոթքով հիշել աստվածներին և դիցուհիներին, որպեսզի մեր խոսքը նախ լինի իրենց սրտով և ապա՝ նաև մեր: Թո՛ղ, ուրեմն, աստվածներին ուղղված մեր
- d** խոսքն այդպիսին լինի: Սակայն մենք պիտի կոչ ուղղենք նաև ինքներս մեզ, որպեսզի դուք ավելի դյուրին կերպով հասկանաք ինձ, իսկ ես ավելի լավ քննեմ առաջադրված խնդիրը:

- Ինձ թվում է՝ նախ պիտի կատարենք հետևյալ բաժանումը: Ի՞նչն է, որ գոյում է հավետ և չունի ծագում, և ի՞նչն է, որ
- 28** հավետ ծագում է, բայց երբևէ չի գոյում: Այն, ինչը ճանաչվում է մտքի, այսինքն բանականության ուժով, հավետ նույնական գոյն է, իսկ այն, ինչի մասին կարծիք է կազմում բանականությանից զուրկ զգայությունը, ծագում և ոչնչանում է՝ իրականում բնավ գոյություն չունենալով: Եվ դարձյալ, ամեն գոյացում ծագում է ինչ-որ անհրաժեշտ պատճառով, քանզի ծագումն առանց պատճառի բոլորովին անհնար է: Եթե դեմիուրգոսը միշտ դիտում է նույնը մնացող գոյը՝ որպես օրինակ օգտագործելով դրա գաղափարն ու ուժը, ապա այդ դեպքում ամեն ինչ անհրաժեշտաբար կլինի գեղեցիկ: Իսկ եթե դիտում է գոյացածը, օգտագործելով այն որպես օրինակ, ապա այդ
- b** դեպքում՝ ոչ գեղեցիկ: Արդ, ամբողջ երկնքի վերաբերյալ, անկախ այն բանից՝ կկոչենք տիեզերք, թե ուրիշ ինչ-որ բան, որ ավելի հարմար կլինի նրան, հարկ է դիտարկել նախ այն, ինչ սովորաբար դիտարկում են սկզբում. արդյո՞ք այն գոյություն է ունեցել միշտ և չի ունեցել գոյացման սկիզբ, թե՞ գոյացել է ինչ-որ սկզբից: Այն գոյացել է, քանի որ տեսանելի է և շոշափելի, ունի մարմին, իսկ բոլոր այդպիսի առարկաները զգայելի են, և զգայելի առարկաները, որոնք ընկալվում և կարծիք

են ծնում զգայության միջոցով, երևում է, գոյանում և ծնվում են: Իսկ գոյացողը, ինչպես ասացինք, անհրաժեշտաբար գոյանում է ինչ-որ պատճառից: Տիեզերքի արարչին և հորը³³ գտնելն անշուշտ խնդիր է, և եթե նա գտնվի, անկարելի է պատմել այդ մասին բոլորին: Եկեք մեկ անգամ էլ փորձենք պարզել, թե որ օրինակին է հետևել տիեզերք կառուցողը՝ նույնականին և անփոփոխի՞ն, թե՞ գոյացողին: Եթե տիեզերքը գեղեցիկ է, իսկ արարիչը՝ բարի, ակնհայտ է, որ նա դիտել է հավիտենականը: Բայց եթե տիեզերքն այնպիսին է, որ դրա մասին խոսել իսկ չի կարելի, ապա նա դիտել է գոյացածը: Ամենքին էլ պարզ է, որ նա դիտում է հավիտենականը, չէ՞ որ տիեզերքը ամենագեղեցիկն է գոյացածների, իսկ արարիչը լավագույնն է պատճառների մեջ: Այդպես գոյացած լինելով տիեզերքը ստեղծված է ըստ նույնականի, որը ճանաչվում է մտքով ու բանականությամբ:

29

Եթե դա այդպես է, ապա տիեզերքը ինչ-որ բանի պատկեր է: Ցանկացած իրի մասին խոսելիս կարևոր է սկսել դրա բնական սկզբունքից: Արդ, պատկերի և բնօրինակի համար հարկ է կատարել հետևյալ սահմանազատումը. խոսքը, որ պիտի բացատրի դրանք, ազգակից է իր առարկային: Հաստատուն, ամուր և մտածելի առարկային պիտի համապատասխանի հավաստի և անսասան խոսքը, որին հիշյալ որակներից և ոչ մեկը չպիտի պակասի: Իսկ ահա խոսքն այն մասին, ինչը պատկերվում է բնօրինակի նմանությամբ, նույնպես նմանություն է և պիտի հիշատակվի որպես նմանակում: Ինչպես որ գոյն է վերաբերում գոյացմանը, այնպես էլ ճշմարտությունը՝ հավատին³⁴: Այնպես որ, Սոկրատես, չգարմանաս, եթե բազում հարցերի առնչությամբ, որոնք վերաբերում են աստվածներին և տիեզերքի գոյացմանը, մենք չկարողանանք հասնել համաձայնության և հավաստության, այլ ուրախանանք, որ մեր խոսքը պակաս ճշմարտանման չէ, և հիշենք, որ ես խոսողն եմ, իսկ դուք՝ դատավորներ, որոնք ունեն մարդկային բնություն, այնպես որ կբավարարվենք ճշմարտանման խոսքերով և ուրիշ ոչինչ չենք փնտրի:

b

c

d

Սուկրատես. Հրաշալի՛ է, Տիմոս: Կվարվենք ճիշտ այնպես, ինչպես ասում ես: Մենք հմայված լսեցինք նախերգանքը, իսկ հիմա, խնդրում ենք, անցնես բուն նյութին:

- Տիմոս.** Այդ դեպքում նշենք պատճառը, թե ինչու գոյացումն ու տիեզերքը կառուցողը կառուցեց դրանք: Նա բարի էր, իսկ ով այդպիսին է, երբեք և ոչնչի նկատմամբ նախանձ չի ունենում: Նախանձից ազատ, նա ցանկացավ, որ ամեն բան առավելագույնս նման լինի իրեն: Իմաստուն այրերի հետևությամբ ամենից ճիշտ կլիներ հենց սա համարել գոյացման և տիեզերքի կարևորագույն սկզբունք: Ցանկանալով, որ ամեն բան լինի բարի և հնարավորինս չլինի հոռի՝ վերցրեց տեսանելի այն իրերը, որոնք չեն գտնվում դադարի մեջ, այլ շարժվում են, թեպետ անկանոն ու անկարգ ձևով, և դուրս բերելով անկարգությունից՝ կարգավորեց դրանք, համարելով, որ այդ վիճակը շատ ավելի լավ է նախորդից: Չէ՞ որ դա օրենք է.
- b** լավագույնը գեղեցիկից բացի ուրիշ ոչինչ չի կարող ստեղծել: Խորհելով՝ արարիչը գտավ, որ տեսանելի ոչ բանական իրերից ոչ մեկը իրականում չի կարող ավելի լավը լինել բանականներից, երբ դրանք դիտվում են որպես ամբողջություն, ընդ որում միտքը բացի հոգուց այլևս ոչ մի տեղ չի կարող գտնվել:

- Խորհելով այդպես՝ նա տեղադրեց միտքը հոգու, իսկ հոգին մարմնի մեջ, որպեսզի կերտի իր բնությամբ ամենագեղեցիկ ու ազնվագույն երկը՝ Համայնը: Արդ, համաձայն ճշմարտանման խորհրդածության, պետք է հաստատել, որ տիեզերքը հոգով ու մտքով օժտված կենդանի էություն է և իսկապես գոյացել է
- c** աստծո նախախնամությամբ: Եթե ընդունենք սա, պետք է հարցնենք նաև, թե կենդանի արարածներից ում նմանությամբ կառուցողը կառուցեց տիեզերքը: Մենք չպիտի քամահրենք և ոչ մեկն այն բաներից, որոնք իրենց բնությամբ պատկանում են որևէ մասնավոր տեսակի, քանզի անկատարին նմանվող ոչինչ չի կարող լինել գեղեցիկ: Սակայն մենք պիտի ընդունենք, որ ամենից շատ տիեզերքը նման է այն կենդանի արարածին, որի մասերն են այլ կենդանի արարածները՝ թե՛ առան-

ծին-առանձին, թե՛ որպես տեսակներ: Չէ՞ որ նա իր մեջ ներառում է բոլոր բանական արարածներին, և այդպես է տիեզերքը պահում մեզ և մնացյալ տեսանելի արարածներին: Այսպես, ցանկանալով նմանեցնել տիեզերքը մտահասու արարածներից ամենագեղեցիկին և ամենակատարյալին, աստված ստեղծեց այն որպես մեկ տեսանելի արարած, որն իր մեջ է առնում բնությամբ իրեն ազգակից բոլոր արարածներին: d
31

Իսկ ճի՞շտ ենք վարվում արդյոք խոսելով մեկ երկնքի մասին, թե՞ ավելի ճիշտ կլինի ասել, որ գոյություն են ունեցել բազում և անսահման քանակությամբ երկինքներ: Եթե այն արարված է ըստ օրինակի, ապա մեկն է: Չէ՞ որ եթե երկինքը ներառում է բոլոր մտահասու արարածներին, նրա կողքին ուրիշ որևէ մեկը չի լինի: Այլապես գոյություն կունենար ուրիշ կենդանի արարած, որի մասերը կլինեին այս երկուսը, և այդ դեպքում արդեն ավելի ճիշտ կլիներ ասել, որ օրինակ է հենց այս մեկը, և ոչ նախորդ երկուսը: Արդ, որպեսզի արարածը նման լինի կատարյալ արարածի միակությանը, արարիչը ստեղծեց ո՛չ երկու, ո՛չ էլ անթիվ տիեզերքներ. միայն այս մեկ միակերպ երկինքն է, որ գոյանալով՝ կա և կլինի³⁵: b

Չետևաբար գոյացածը պետք է լիներ մարմնավոր, տեսանելի և շոշափելի: Բայց չէ՞ որ առանց հրի ոչինչ չի կարող տեսանելի դառնալ, առանց կարծր ինչ-որ բանի չի կարող դառնալ շոշափելի, իսկ կարծր չի կարող դառնալ առանց հողի: Ահա ինչու սկսելով կազմավորել Չամայնի մարմինը՝ աստված ստեղծեց այն հրից և հողից: Սակայն միայն երկուսը չեն կարող լավ միավորվել առանց երրորդի, որովհետև այդ երկուսի միջև պիտի գոյանա դրանք միավորող կապը: Իսկ լավագույն կապն այն է, որն առավելագույնս ի մի է բերում ինքն իրեն և կապակցելին: Լավագույնս դա անում է բնական համաչափությունը, որովհետև երբ երեք թվերից, ինչպես քառակուսի, այնպես էլ խորանարդ, ցանկացած միջին թվի պարագայում առաջին թիվը հարաբերվում է միջինին այնպես, ինչպես միջինը վերջինին, և վերջինը դարձյալ հարաբերվում c
32

- է միջինին, ինչպես միջինը առաջինին, այդժամ միջին թվի առաջին և վերջին թվերի տեղում, իսկ առաջին և վերջին թվերի միջին թվի տեղում հայտնվելու դեպքում ստացվում է, որ դրանք անհրաժեշտաբար նույն հարաբերության մեջ են, և եթե այդպես է, ապա դրանք բոլորը կազմում են միասնություն: Արդ, եթե Համայնի մարմինը պիտի լիներ հարթություն, որը չունի խորություն, բավական կլիներ մեկ միջին անդամ, որը
- b** կմիավորեր ինքն իրեն և իր հարակից անդամները: Այն պիտի լիներ եռաչափ, իսկ եռաչափ իրերը երբեք չեն համաձայնեցվում մեկ, այլ մշտապես երկու միջին անդամների շնորհիվ: Այնպես որ հրի և հողի միջև աստված տեղադրեց ջուրը և հնարավորինս բանական լուծում հաղորդեց դրանց փոխհարաբերության հարցին, որպեսզի օդը հարաբերվի ջրին, ինչպես հուրը օդին, իսկ ջուրը հարաբերվի հողին, ինչպես օդը ջրին: Այդպես համադրեց դրանք և կառուցեց տեսանելի ու շոշափելի
- c** երկինքը: Ահա այդպես, նշված չորս տարրերից ծնվեց տիեզերքի մարմինը, որը ներդաշնակ էր իր համաչափության շնորհիվ և որի մեջ տիրում էր տարրերի բարեկամությունը³⁶, այնպես որ նրա նույնականությունը չի կարող քանդել ոչ ոք, բացի նրանից, ով կառուցել է տիեզերքը:

- Չորս տարրերից յուրաքանչյուրն ամբողջությամբ մտավ տիեզերքի կազմի մեջ: Կառուցողն այն ստեղծեց ողջ հրից, ջրից, օդից և հողից, չթողնելով դրսում դրանց ոչ մի մաս կամ
- d** զրոություն: Նա մտածում էր այսպես. նախ, որ տիեզերքը լինի ամբողջական և կատարելագույն կենդանի արարած՝ բաղկացած կատարելագույն մասերից, և այնուհետև, լինի միակը, և չմնա ոչինչ, որ կարողանար սկիզբ լինել ուրիշ նմանի գոյաց-
- 33** ման համար, լինի չծերացող ու անխոցելի: Նա մտածեց, որ եթե բաղադրյալ մարմնին դրսից մոտենան ջերմությունն ու սառնությունը և մյուս բոլոր հզոր ուժերը և անպատեհ մի պահի թափվեն նրա վրա ծերություն առաջ բերող ախտերի հետ միասին, դրանք կհանգեցնեն կործանման: Այդ պատճառով և առաջնորդվելով հիշյալ խորհրդածությամբ՝ նա կառուցեց

տիեզերքը որպես միակ ամբողջություն, որը բաղադրված լինելով ամբողջություններից՝ չծերացող է և անխոցելի: Եվ նա հաղորդեց տիեզերքին համապատասխան և պատշաճ տեսք: **b**

Կենդանի արարածին, որը պիտի ներառի բոլոր կենդանի արարածներին, պատշաճ են այնպիսի ձևեր, որոնք ներառում են բոլոր մյուսները, ահա ինչու նա պտտելով տիեզերքը՝ հաղորդեց նրան գնդի տեսք³⁷, որի [մակերեսի բոլոր կետերի] հեռավորությունը կենտրոնից նույնն է, այսինքն՝ արեց այնպես, որ Համայնը ունենա ամենակատարյալ և իրենք իրենց նման ձևերը՝ համարելով, որ նմանը բյուր անգամ ավելի գեղեցիկ է ոչ նմանից: Գնդի ողջ մակերեսը նա դարձրեց կատարելապես **c**

հարթ, և դրա համար նա ուներ բազում պատճառներ: Աջքերի կարիք բնավ չկար, քանզի դրսում տեսանելի ոչինչ չէր մնացել, չկար նաև լսողության կարիք, քանզի դրսում լսելի ոչինչ չկար: Չկար օդ, որը հարկ լիներ շնչել: Այդպես, նա չուներ ոչ մի գործարանի կարիք, որով սնունդ կընդուներ կամ կարտամղեր արդեն յուրացված սնունդը: Ոչինչ չէր մտնում նրա մեջ և դուրս չէր գալիս որևէ տեղից, քանի որ [նրանից դուրս] ոչինչ չկար: Տիեզերքն այնպիսին էր, որ սնվում էր սեփական կորուստներով՝ կրելով և կատարելով ամեն բան ինքն իր մեջ **d**

և ինքն իր միջոցով: Չէ՞ որ կառուցողը համարեց, որ ավելի լավ է, եթե տիեզերքը լինի ինքնաբավ³⁸, քան ուրիշ ինչ-որ բանի կարիք ունենա: Ինչ վերաբերում է ձեռքերին, ապա չկար ոչինչ, որ հնարավոր լիներ վերցնել, և չկար ոչ ոք, որից հարկ լիներ պաշտպանվել, այնպես որ ավելորդ համարեց կցել դրանք. նույնը որոշեց նաև ոտքերի և քայլելուն անհրաժեշտ այլ հարմարանքների համար: Եվ հաղորդեց նրան շարժման **34**

յոթ տեսակներից ամենից բանականն ու խոհեմը: Այնպես արեց, որ տիեզերքը միակերպ պտույտներ գործի նույն տեղում ինքն իր առանցքի շուրջը, իսկ շարժման մյուս վեց տեսակները նա վերացրեց, որպեսզի ազատի դրանց ազդեցությունից առաջինը: Եվ քանի որ պտտվելու համար ոտքերի կարիք չկար, նա ստեղծեց տիեզերքը անսրունք և անոտն:

Սա էր մշտագո աստօն ողջ մտորումը գոյանալիք աստօն մասին, երբ հարթ և բուր կողմերից հավասար, մեջտեղից

b բուր կողմերով նույն երկարությունն ունեցող, ամբողջական և կատարյալ մարմիններից կազմված ստեղծեց նրա մարմինը: Կենտրոնում տեղադրեց հոգին³⁹, ապա տարածեց ողջ մարմնով և ընդգրկեց դրանով մարմինը նաև դրսից. ստեղծեց շրջանաձև ու պտտվող մեկ և միակ երկինք, որն իր կատարելության շնորհիվ կարող էր հաղորդակցվել ինքն իր հետ, ոչ մի ուրիշ երկնքի կարիք չունենալ և բավարարվել ինքն իրենով ու իրեն ճանաչելով: Այդ ամենի շնորհիվ ստեղծեց նրան որպես երանելի աստօն:

Եթե այժմ մենք ավելի ուշ ենք անդրադառնում հոգուն, դա

c չի նշանակում, թե աստված էլ ավելի ուշ ստեղծեց այն: Չէ՞ որ համադրելով մարմինն ու հոգին՝ նա թույլ չտվեց, որ կրտսերն իշխի ավագին: Մենք ենք, որ ենթարկված լինելով պատահականությանն ու նմանությանը, այդպես ենք ասում: Իսկ աստված ստեղծել է հոգին մարմնից և՛ ավելի գերակա, և՛ ավելի ավագ, այսինքն որպես մարմնի տիրուհի և իշխանուհի՝ բաղադրելով այն հետևյալ մասերից և հետևյալ կերպ:

35 Էությունից, որն անբաժանելի է և միշտ նույնական, և նրանից, որը բաժանվում է մարմինների մեջ,– այդ երկուսի խառնուրդից նա ստեղծեց էության երրորդ՝ միջանկյալ տեսակը, որը բնությամբ պատկանում է ինչպես Նույնականին, այնպես էլ Ուրիշին, և նույն ձևով սա տեղադրեց անբաժանի և մարմինների մեջ բաժանելիի մեջտեղում: Եվ վերցնելով երեքն էլ՝

b միախառնեց մեկ գաղափարի մեջ, Ուրիշի չխառնվող բնությունը բռնի միացնելով Նույնականի բնությանը: Այնուհետև միախառնեց դրանք էության հետ և երեքից ստեղծելով մեկը՝ այդ ամբողջը բաժանեց համապատասխան մասերի, որոնցից յուրաքանչյուրը Նույնականի, Ուրիշի և էության խառնուրդ էր⁴⁰: Իսկ բաժանել սկսեց այսպես. նախ ամբողջից անջատեց մի մասը,

c այնուհետև առաջինի եռապատիկ մասը, ապա՝ երկրորդ մասի մեկ և կեսը, հետո՝ հինգերորդ մասը, որը երրորդի եռակին էր,

վեցերորդը, որը առաջինի ութակին էր, յոթերորդը, որը առաջինի քսանյոթնակին էր⁴¹: Դրանից հետո սկսեց լցնել կրկնակի և եռակի արանքները՝ կտրելով խառնուրդից նոր մասեր և տեղադրելով նախորդների միջև, որպեսզի յուրաքանչյուր արանք ունենա երկու միջանկյալ մաս, որոնցից մեկը կգերազանցեր ծայրի մասերից առավել փոքրին նույն չափով, որով դրան կգերազանցեր առավել մեծը, իսկ մյուսը կգերազանցեր ծայրի առավել փոքրին և կզիջեր առավել մեծին նույն թվով: Եվ երբ այդ լրացումներից նախորդ արանքների մեջ գոյացան նոր արանքներ՝ $\frac{3}{2}$, $\frac{4}{3}$ և $\frac{9}{8}$, նա լցրեց բոլոր $\frac{4}{3}$ արանքները $\frac{9}{8}$ արանքներով՝ յուրաքանչյուրից թողնելով այնպիսի երկարություն, որ այդ մնացած արանքներով բաժանված թվերը հարաբերվեն միմյանց ինչպես 256-ը 243-ին: Ընդսմին խառնուրդը, որից աստված կտրեց նշված մասերը, ամբողջովին սպառվեց⁴²:

Այնուհետև երկայնքով երկու մասի բաժանելով ամբողջ համադրությունը՝ նա իրար միացրեց դրանք այնպես, որ միացումը լինի դրանց մեջտեղում, X տառի պես, իսկ յուրաքանչյուր մասի ծայրերը միացրեց իրար, ինչից հետո երկու այդ հատվածները միացան իրենք իրենց և միմյանց այն կետում, որը հակադիր է իրենց հատման կետին⁴³: Այնուհետև նա թույլ տվեց, որ դրանք նույն տեղում շարժվեն շրջանաձև, ընդ որում շրջաններից մեկը արտաքին էր, իսկ մյուսը՝ ներքին: Արտաքին շարժումը նա կոչեց Նույնականի բնություն, իսկ ներքինը՝ Ուրիշի բնություն: Նույնականի շրջանը նա ստիպեց շարժվել կողմի երկայնքով ծախսից դեպի աջ, իսկ Ուրիշի բնությունը՝ անկյունագծով⁴⁴: Առավելությունը նա տվեց Նույնականի և Նմանի շարժմանը, քանզի թողեց այն մեկ և անբաժան, իսկ ներքին շարժումը վեց անգամ բաժանեց յոթ անհավասար շրջանների՝ թողնելով երկակի⁴⁵ և եռակի արանքներ, որոնք երեքն էին⁴⁶: Այդ շրջաններին նա ստիպեց պտտվել հակառակ ուղղություններով, որպեսզի երեք շրջանների արագությունը լինի նույնը, իսկ մյուս չորսինը⁴⁷ ոչ նույնական իրար և մյուս երեքի հետ, բայց բերված որոշակի համաչափությամբ:

- Երբ հոգու ողջ կառույցը պատրաստ էր ըստ կազմողի մտադրությամբ⁴⁸, նա կարգավորեց հոգու ներսում ողջ մարմնավորը
- e** և կենտրոնական մասերով միացրեց այդ երկու սկզբունքները: Եվ հոգին, ձգվելով կենտրոնից մինչև երկնքի բարձունքը և շրջանաձև ամփոփելով երկինքը դրսից, պտտվելով ինքն իր մեջ, առհավետ մուտք գործեց անանց և բանական կյանքի աստվածային սկզբունքի մեջ: Ընդ որում երկնքի մարմինը
- 37** ծնվեց տեսանելի, իսկ հոգին՝ անտեսանելի, և որպես դատողությանն ու ներդաշնակությանը հաղորդակից, մտածելիի և մշտագոյի մեջ ծնված լինելով իբրև ամենակատարյալ՝ այն ամենակատարյալ ծնունդն է բոլոր ծնունդների մեջ: Դա Նույնականի և Ուրիշի բնությունների և էության եռամաս խառնուրդ է, որը համաչափորեն բաժանված և համադրված է և պտտվում է ինքն իր շուրջ, և երբ դիպչում է որևէ բանի, որի էությունը բաժանված կամ անբաժան է, ամբողջությամբ շարժվում է և ասում, թե ինչի հետ է նույնական ու ինչից է տարբեր և առավելապես ինչ հարաբերությամբ, որտեղ, ինչպես և երբ է ամեն բան ծնվելով գոյում ամեն բանի հետ, կրում դրա
- b** հետ միասին և միշտ հարաբերվում Նույնականի հետ: Խոսքը, որը նույն կերպ ճշմարիտ է ինչպես Ուրիշի, այնպես էլ Նույնականի համար, գոյանում է ինքնաշարժ [տիեզերքի] մեջ անխոս ու անձայն, սակայն երբ ասվում է զգայականի մասին և արտաբերվում է ողջ տիեզերքի հոգով մեկ Ուրիշի շարժվող շրջանի կողմից, ծնվում են հաստատուն և ճշմարիտ կարծիքներ ու համոզմունքներ: Իսկ երբ այդ խոսքն ասվում է բանականի մասին և դրա մասին իր թեթև վազքի մեջ լուր է
- c** տալիս Նույնականի շրջանը, այդժամ անհրաժեշտաբար իրագործվում է խելքն ու իմացությունը⁴⁹: Իսկ եթե ինչ-որ մեկը այն հարցին, թե ինչի մեջ են գոյանում այդ երկու վիճակները, պատասխանի, որ դա հոգուց տարբեր ինչ-որ բան է, նրա ասածը կլինի ինչ ասես, բայց ոչ ճշմարտություն:

Եվ երբ Հայրը հասկացավ, որ իր ստեղծած հավիտենական աստվածների կերտվածքը շարժվում է և կենդանի է, ուրախա-

ցավ և գոհունակությամբ որոշեց ավելի նմանեցնել պատճենը բնօրինակին: Քանի որ բնօրինակը հավիտենական կենդանի է, նա փորձեց հնարավորինս այստեղ էլ նմանության հասնել: Սակայն այդ էակի բնությունը հավիտենական է, իսկ դա անհնար է ամբողջովին փոխանցել ծնված ինչ-որ բանի: Ուստի նա որոշեց ստեղծել հավիտենության շարժուն պատկեր և, կարգավորելով երկինքը, միաժամանակ մեկի մեջ պահպանվող հավերժության համար ստեղծեց պատկեր, որի շարժումը չափելի է թվով. մենք կոչեցինք այդ պատկերը ժամանակ⁵⁰: Չէ՞ որ օրեր, գիշերներ, ամիսներ կամ տարիներ նախքան երկնքի գոյանալը չկային, և նա հնարավոր դարձրեց դրանց ծնունդը միայն երկինքը կարգավորելուց հետո⁵¹: ժամանակի բոլոր այդ մասերը,– իսկ «եղել է»-ն և «կլինի»-ն գոյացած ժամանակի մասեր են,– փոխադրելով հավերժական էության վրա, մենք սխալ ենք գործում մեզ համար աննկատ: Չէ՞ որ մենք ասում ենք, որ այն եղել է, կա և կլինի, թեպետ ճշմարիտ խորհրդածությունը պետք է ընդունի, որ դրան հատուկ է միայն «կա»-ն, իսկ «եղել է»-ն և «կլինի»-ն համապատասխանում են ժամանակի մեջ կայացող գոյացմանը: Երկուսն էլ շարժումներ են, իսկ այն, ինչը մշտապես անշարժ ու նույնական է, չի կարող ավելի տարեց կամ ավելի երիտասարդ դառնալ ժամանակի մեջ՝ ո՛չ այժմ, ո՛չ ապագայում, ո՛չ էլ երբևէ, և առհասարակ չի կարող կրել որևէ մեկն այն վիճակներից, որոնք զգայելի իրերին հաղորդում է գոյացումը: Դրանք հավերժությունը նմանակող և թվին հետևելով պտտվող ժամանակի տեսակներ են: Բացի այդ, մենք նաև ասում ենք, որ գոյացածը գոյացած է, իսկ գոյացողը գոյացող է, և որ գոյանալիքը գոյանալիք է, իսկ չգոն չգո է: Բայց արտահայտվում ենք ոչ ճշգրիտ: Սակայն հիմա այդ ամենը պարզելու ժամանակը չէ:

Արդ, ժամանակը գոյացել է երկնքի հետ միասին, որպեսզի միաժամանակ ծնված լինելով՝ երկուսն էլ կործանվեն միաժամանակ, եթե այդ կործանումը երբևէ վրա հասնի, իսկ նախատիպը եղավ հավերժական բնությունը, որին ժամանակը պետք

- c է հնարավորինս նման լինել: Չէ՞ որ նախատիպն այն է, ինչը գոյություն ունի մի ամբողջ հավիտենություն, մինչդեռ [դրա պատկերը] գոյացել է, կա և կլինի բոլոր ժամանակներում: Ժամանակի գոյացման աստծո նախագիծն ու խորհուրդն այսպիսին էին, և որպեսզի ժամանակը գոյանա, ծնվեցին Արեգակը, Լուսինը և հինգ ուրիշ աստղեր, որոնք կոչվում են մոլորակներ. դա անհրաժեշտ էր, որպեսզի ժամանակը թվային որոշարկուն և կարգ ունենա: Ստեղծելով դրանցից յուրաքանչյուրի մարմինը՝ աստված տեղադրեց այդ յոթ մարմինները յոթ ուղեծրերի վրա, որոնք ապահովում էին Ուրիշի պտույտը: Լուսինը դրվեց Երկրին ամենամոտ ուղեծրի վրա, իսկ Լուսաստղը և այն մեկը, որ նվիրված է Յերմեսին ու կոչվում է նրա անունով, դրեց Արեգակի հետ հավասարաչափ, սակայն նրան հակառակ ուղղությամբ շարժվող ուղեծրի վրա: Ահա ինչու Արեգակը, Յերմեսի աստղը և Լուսաստղը հերթով հասնում են իրար⁵²: Ինչ վերաբերում է մյուս աստղերին, դրանց հաստատման տեղին և պատճառներին, այդ ամենին հետամուտ լինելու դեպքում մենք կընկնեինք երկրորդականի ետևից և ավելի մեծ ուշադրություն կհատկացնեինք դրան, քան պահանջում է մեծ խնդիրը: Գուցե հետագայում հարմար պահի մենք ինչպես հարկն է զբաղվենք նաև դրանով:

Արդ, այն բանից հետո, երբ բոլոր այդ [երկնային մարմինները] ստացան իրենց պատշաճող շարժումը, որն անհրաժեշտ էր ժամանակի կարգավորման համար, երբ կապված լինելով շնչավոր կապերով՝ դարձան կենդանի էակներ և հասկացան իրենց կոչումը, շարժվեցին Ուրիշի ուղեծրի երկայնքով, որը շեղակի հատում է Նույնականի շարժումը և ենթարկվում նրան⁵³: Դրանցից մի քանիսը գծեցին մեծ շրջան, իսկ մյուսները՝ ավելի փոքր, ընդ որում փոքր շրջաններով նրանք շարժվում էին արագ, իսկ մեծերով՝ ավելի դանդաղ: Նույնականի շարժումը տպավորություն է ստեղծում, թե առավել դանդաղ շարժվող մարմինները հասնում են ավելի արագ շարժվողներին, բայց քանի որ Նույնականի շարժումը, - հաշվի առնելով,

որ աստղերը միաժամանակ առաջ են գնում երկու հակադիր ուղղություններով, — աստղերի բոլոր շրջանները վերածում է պարույրների, ամենադանդաղ աստղը թվում է ամենից մոտ գտնվողը: Որպեսզի ութ շրջաններով շարժվող աստղերի դանդաղության և արագության մեջ լինի հարաբերակցության որոշակի չափ, աստված լույս վառեց Երկրից հեռավորությամբ երկրորդ շրջանի մեջ (այդ լույսը մենք հիմա կոչում ենք Արեգակ), որպեսզի այն լուսավորի երկնքի հնարավորինս մեծ տարածություն, իսկ կենդանի էակները, նրանք, որոնց դա հատուկ է, հաղորդակից լինեն թվին՝ սովորելով այն Նույնականի և Նմանի պտույտից: Այդպես և այդ պատճառներով գոյացան գիշերն ու ցերեկը՝ մեկի և ամենաբանական շրջապտույտի այդ հարափոփոխությունը⁵⁴: Ամիսը առաջ է գալիս, երբ Լուսինը, բոլորելով իր պտույտը, հասնում է Արեգակին, իսկ տարին՝ երբ Արեգակն է բոլորում իրենը: Մյուս մարմինների պտույտները մարդիկ, բացառությամբ շատ քչերի, չեն նկատում, չեն անվանում և չեն չափում դրանց թվային փոխհարաբերությունները, այնպես որ ըստ էության չեն հասկանում, որ այդ անհաշվելի, զարմանալիորեն բազմազան դեգերումները հենց ժամանակն են: Սակայն անհնար չէ հասկանալ, որ լիարժեք տարվա լիարժեք թիվը լրանում է այն ժամանակ, երբ ութ շրջաններն իրենց համապատասխան արագություններով միասին կհասնեն գագաթին՝ համաչափության մեջ մտնելով Նույնականի և Նմանի շրջանի շարժման հետ⁵⁵: Ահա ինչպես և ինչու են ծնվել աստղերը, որոնք շարժվում և վերադառնում են ի շրջանս յուր, որպեսզի տիեզերքը առավելագույնս նմանվի կատարյալ և մտահասու էակին՝ նմանակելով նրա հավերժական բնությունը:

Մյուս առումներով [տիեզերքը] դեռ նախքան ժամանակի գոյացումը մեծագույն նմանություն է ցուցաբերել իր արտապատկերածի հետ: Թերևս կար մեկ տարբերություն. նա զուրկ էր բոլոր այն կենդանիներից, որոնք դեռ պիտի ծնվեին նրա մեջ: Եվ այդ բացը աստված լրացրեց, դրոշմելով դրանք ըստ բնօրինակի բնության: Նա գտավ, որ պետք է գոյություն ունե-

- նա կենդանիների այնքան տեսակ, որքան որ միտքը նկատում
- 40 է կենդանի էակի մեջ: Դրանք չորսն են՝ մեկը աստվածների երկնային սեռն է⁵⁶, երկրորդը՝ փետրավորն ու օդում սավառնողը, երրորդը՝ ջրաբնակը, իսկ չորրորդը՝ հետիոտն և ցամաքային սեռը: Աստվածային սեռի գաղափարի հիմքում աստված դրեց հիմնականում հուրը⁵⁷, և որպեսզի այն լինի տեսողության համար ամենապայծառն ու գեղեցիկը, Համայնի նմանությամբ կլոր տեսք հաղորդեց դրան և տեղադրեց կատարելագույնի բանականության մեջ⁵⁸՝ անելով այնպես, որ սա հետևի այդ գաղափարին: Այդ սեռը նա բաշխեց երկնքի ողջ շրջանով մեկ և զարդարեց այնպես, որ այն ամբողջությամբ ճշմարիտ տիեզերք լինի: Յուրաքանչյուր [աստծո] նա շնորհեց երկու շարժում. նախ՝ նույնակերպ շարժում նույն տեղում, որպեսզի նույն բաների մասին մտածեն նույնակերպ, և ապա՝ առաջընթաց շարժում, որպեսզի նրանք ենթարկվեն Նույնականի և Նմանի շրջանաձև շարժմանը: Մյուս հինգ շարժումները չշնորհեց, թողնելով նրանց անշարժ և հաստատուն, որպեսզի աստվածներից յուրաքանչյուրը հնարավորինս կատարյալ լինի: Այդ պատճառով առաջ եկան բոլոր անշարժ աստղերը, որոնք հավերժ կենդանի աստվածային էակներ են և պտույտներ են գործում նույն տեղում: Իսկ շարժվողներն ու դեգերողները գոյացան քիչ առաջ նշված եղանակով:
- c Երկիրը՝ մեր ստնտուն, որ պտտվում է տիեզերքի միջով անցնող առանցքի շուրջ որպես երկնքում ծնված աստվածներից ամենաառաջինն ու ամենաավագը, նշանակվեց ցերեկվա և գիշերվա պահապան և կարգավորիչ: Ինչ վերաբերում է նրանց շուրջպարերին և փոխադարձ մերձեցումներին, հակադարձ պտույտներին, անցումներին և նրան, թե աստվածներից որոնք են միանում կամ հակադրվում իրար, կամ ինչպես է, որ նրանք մեզ երևում են միմյանց նկատմամբ այնպիսի հարաբերության մեջ, որ ինչ-որ ժամանակ հետո մերթ թաքնվում են,
- d մերթ նորից հայտնվում՝ վախեցնելով և գալիքի նշաններ ուղարկելով նրանց, ովքեր չգիտեն հաշվել, — այս ամենի մա-

սին առանց տեսողական փորձի խոսելը զուր աշխատանք կլիներ: Այսքանը բավական է, և տեսանելի ու ծնյալ աստվածների բնության մասին պատմությունը համարենք ավարտված:

Խոսել մյուս դեմոնների մասին և պարզել նրանց ծագումը վեր է մեր ուժերից: Մենք ստիպված ենք հավատալ նախկինում այդ մասին պատմողներին, և քանի որ իրենց ասելով նրանք հենց աստվածների սերունդներն են, պետք է հստակ ճանաչեն իրենց նախնիներին⁵⁹: Անհնար է չհավատալ աստվածների զավակներին, անգամ եթե նրանք խոսում են առանց
 e
 ճշմարտանման և համոզիչ ապացույցների, քանզի եթե պնդում են, թե պատմում են իրենց ընտանեկան ավանդությունը, հարկ է հավատալ և չխախտել օրենքը: Արդ, մենք կընդունենք և կպատմենք աստվածների ծագման նրանց պատմությունը: Գեան և Ուրանոսը ծնեցին Օվկիանոսին և Տեթիսին, իսկ սրանք՝ Փորկիսին, Կրոնոսին, Յետային և ողջ նրանց սերունդը: Կրոնոսից և Յետայից ծնվեցին Ջեսը, Յերան և բոլոր նրանք, ում ճանաչում ենք որպես նրանց եղբայրներ և քույրեր, իսկ սրան-
 41
 ցից էլ՝ մնացյալ սերունդը⁶⁰: Երբ բոլոր աստվածները,– և՛ նրանք, որոնց շարժումները տեսանելի են, և՛ նրանք, որոնք տեսանելի են դառնում, երբ ցանկանան,– ծնվեցին, Յամայնի արարիչն այսպես խոսեց. «Աստվածների աստվածներ, ես բոլոր այս գործերի դեմիուրգոսն եմ ու հայրը և [իմ կողմից արարվածը] իմ կամքի համաձայն անկործան է: Այն ամենը, ինչ բաղադրյալ է, ենթակա է կործանման, սակայն գեղեցիկ կեր-
 b
 պով ներդաշնակվածն ու կատարյալը կործանել ցանկանալը չարիք է: Ահա ինչու երբևէ ծնված լինելով՝ դուք ամբողջովին անմահ և անկործան չեք, և սակայն ո՛չ կկործանվեք, ո՛չ էլ կմահանաք, որովհետև իմ կամքն ավելի մեծ և ամուր շղթա է, քան այն մեկը, որով ծննդից ի վեր կապակցված է ձեր բաղադրությունը: Իսկ հիմա յուրացրեք այն, ինչ կասեմ: Դեռևս չծնված են մնում երեք մահկանացու սեռեր⁶¹: Եվ քանի դեռ
 c
 չեն ծնվել, երկինքն անկատար է, որովհետև չի բովանդակում կենդանի էակների բոլոր սեռերը, իսկ դա անհրաժեշտ է, եթե

ցանկանում է բավականաչափ կատարյալ լինել: Բայց գոյություն և կյանք ստանալով ինձնից՝ դրանք կհավասարվեն աստվածներին: Որպեսզի նրանք լինեն մահկանացու և տիեզերքը իսկապես ներառի ամեն բան, դուք ձեր բնության համաձայն դիմեք կենդանիների արարմանը և նմանակեք իմ կարողությունը, որի շնորհիվ հնարավոր եղավ ձեր ծնունդը: Եվ քանի որ նրանց հատուկ պիտի լինի անմահներին համանուն ինչ-որ բան, որն աստվածային է կոչվում և առաջնորդում է նրանց, ովքեր միշտ ցանկանում են հետևել արդարությանը և ձեզ, ես

d ձեզ կտամ արարման սերմերն ու սկզբունքները: Մնացածը դուք արեք. միացրեք անմահը մահկանացուին, ստեղծեք կենդանի էակներ, սնունդ տվեք նրանց և աճեցրեք, իսկ երբ մեռնեն, կրկին ընդունեք ձեզ մոտ»:

Այդպես ասելով՝ նորից լցրեց գավաթը, որի մեջ խառնել էր տիեզերական հոգու բաղադրությունը, նախորդ խառնուրդի մնացորդները և դարձյալ խառնեց դրանք մոտավորապես նույն կերպ, սակայն դրա մաքրությունն այլևս նույնը չէր, այլ երկրորդ և երրորդ կարգի էր: Այդ ամբողջ կազմից նա առանձնացրեց աստղերի քանակին հավասար թվով հոգիներ և յուրաքանչյուրը տեղադրեց մի որևէ աստղի կողքին: Այնուհետև

- e դնելով հոգիները աստղերի վրա ասես կառքի մեջ⁶² ցույց տվեց նրանց Համայնի բնությունը, հայտնեց ճակատագրի օրենքները, այսինքն՝ որ առաջին ծնունդը բոլոր հոգիների համար մեկ է, — որպեսզի ոչ մեկին չնվաստացնի իր ծնունդը, — և որ դրանք ցրվելով տեղափոխվում են ժամանակի՝ յուրաքանչյուրին հատուկ գործիքի վրա և դառնում բոլոր արարածների մեջ
- 42 ամենաբարեպաշտ կենդանի էակները: Իսկ քանի որ մարդու բնությունը երկակի է, լավագույնը կլինի այն սեռը, որը երբևէ այդ կկոչվի: Երբ հոգիները անհրաժեշտաբար կարմատավորվեն մարմիններում և մարմինները ինչ-որ բան կընդունեն, ինչ-որ բան էլ կարտամղեն, անհրաժեշտ է, որ, նախ, բոլոր հոգիներում առաջ գա ընդհանուր և ականա կրքերին համապատասխանող զգայություն և, այնուհետև, ծնվի վայելքին ու տառա-

պանքին միախառնված էրոսը, իսկ բացի դրանից՝ վախը, ցասունը և մյուս բոլոր զգացումները՝ ինչպես նշվածներին առնչվողները, այնպես էլ հակադիրները: Եթե հոգիները իշխեն այդ կրքերին, կապրեն արդար, իսկ իշխվելու դեպքում կապրեն անարդար: Իրենց հատկացված ժամանակը արժանիորեն ապրողները դարձյալ ուղևորվում են համանուն աստղի հայրենիքը և ապրում իրենց երջանիկ ու սովորական կյանքը: Իսկ նրանք, ովքեր դա չեն կարողանա անել, երկրորդ ծննդյան ժամանակ կփոխեն իրենց բնությունը իգականի⁶³: Եվ եթե այդ կերպարանքով էլ չդադարեն չարիք գործել, ստիպված կլինեն ամեն անգամ փոխակերպվել կենդանական այնպիսի բնության, որը նմանություն կունենա իրենց բնության հետ, և կազատվեն այդ տառապանքից միայն այն ժամանակ, երբ կհետևեն իրենց մեջ եղած Նույնականի և Նմանի շրջապտույտին և բանականությանը կհաղթեն հրի, քրի, օդի և հողի խայտաբղետ խառնուրդը, որը ձգտում է միանալ նրանց, և, ճնշելով ոչ բանական մոլեգնությունը, կհանգեն նախկին և ազնվագույն վիճակի գաղափարին:

Կարգադրելով նրանց այս ամենը, որպեսզի հետագայում չդառնա նրանցից որևէ մեկի արատավորության պատճառ, նա սփռեց հոգիների մի մասը Երկրի⁶⁴, մի մասը Լուսնի, իսկ մնացյալը ժամանակի մյուս գործիքների վրա: Սփռելուց հետո նա նոր աստվածներին փոխանցեց մահկանացու մարմիններ կերտելու և մարդկային հոգիներին պակասողն ավելացնելու գործը, պատրաստելու դրա համար անհրաժեշտը և հնարավորինս լավ և կատարյալ առաջնորդություն ապահովելու մահկանացու էակի համար, որպեսզի վերջինս ինքն իր համար չարիքների պատճառ չդառնա:

Կարգավորելով այդ ամենը՝ նա մնաց իր սովորական վիճակի մեջ: Իսկ նրա զավակները, անսալով հոր հրամանին, սկսեցին կատարել այն: Նրանք վերցրեցին մահկանացու էակի անմահ սկիզբը և, նմանակելով իրենց արարչին, փոխառեցին տիեզերքից հրի, հողի, քրի և օդի մասերը, հետագայում վե-

- 43 րադարձնելու պայմանով: Այդ մասերը նրանք միացրին, բայց ոչ այն անքակտելի շղթաներով, որոնցով իրենք էին կապակցված, այլ փոքր չափերի պատճառով՝ անտեսանելի շղթաներով, որոնք բաղկացած են բազում օղակներից, այնպես որ յուրաքանչյուր մարմին բոլոր չորս տարրերի միասնություն է, իսկ անմահ հոգու շրջապտույտները նրանք կապեցին մարմնի մեջ մակընթացության և տեղատվության հետ: Եվ այդ շրջապտույտները, կազմելով մեծ հոսանք, ո՛չ ենթարկվում էին դրան, ո՛չ էլ իրենց էին ենթարկում, այլ բռնի տանում էին դա,
- b կամ էլ տարվում էին իրենք: Ահա ինչու ամբողջ այդ էակը շարժվում էր, սակայն շարժվում էր ուր պատահի՝ անկանոն ու անմիտ կերպով⁶⁵: Այն օժտված էր բոլոր վեց շարժումներով՝ առաջ, հետ, աջ, ձախ, վերև և ներքև, և այդպես դեգերում էր բոլոր վեց ուղղություններով: Հոսանքը, որը մուտք էր գործում մարմին և դուրս էր թափվում նրա միջից, իր հետ սնունդ բերելով, մեծ էր, սակայն ավելի մեծ խառնաշփոթ էր առաջացնում յուրաքանչյուր էակի արտաքին բախումը, երբ որևէ մարմին դեմ էր առնում հրի կամ հողի կարծրությանը կամ ջրի ծփանքին, կամ էլ հայտնվում էր օդային մրրիկների մեջ: Բոլոր այդ շարժումները, անցնելով մարմնի միջով, հասնում էին հոգուն և բախվում նրան: Այդ իսկ պատճառով դրանք բոլորը կոչվեցին և այսօր էլ կոչվում են զգայություններ⁶⁶: Այդժամ առաջ բերելով ամենաբուռն և ամենաուժեղ շարժումը և միանալով մշտապես հոսող գետի հետ՝ սկսեցին ուժեղ շարժել և ցնցել հոգու շրջապտույտները: Նրանք լիովին արգելակեցին
- d Նույնականի շարժումը, հոսելով նրա դեմ և խանգարելով նրա ընթացքն ու հոսքը, իսկ Ուրիշին այնպես ցնցեցին, որ երկակի երեք և եռակի երեք միջանկյալ տարածությունները և կապակցող անդամները,– երեք երկուերորդ, չորս երեքերորդ և ինը ութերորդ,– որոնք ոչ ոք, բացի հենց արարչից, չի կարող կործանել, շեղվեցին՝ ամբողջովին կոտրելով և խախտելով շրջանածն շարժումը: Ու թեպետ դրանք հնարավորինս փորձում էին դեռ միասին շարժվել, դա անկանոն շարժում էր, քանի որ
- e

մերթ բախվում էին, մերթ շեղվում, մերթ շուռ գալիս: Դիցուք, մեկը գլխով շրջվել է դեպի ներքև, իսկ ոտքերը բարձրացրել է վեր և հենել ինչ-որ բանի. այդժամ այդ դիրքում նրան և իրեն տեսնողներին ամեն բան կթվա շրջված ձախից աջ և աջից ձախ: Այդպիսի և նման վիճակներին շատ ուժեղ ենթարկված են հոգու շրջապտույտները: Իսկ երբ դրսից նրանք հանդիպում են Նույնականի և Ուրիշի սեռին, Նույնականի կամ Ուրիշի մասին արտահայտում են ճշմարտությանը հակառակ կեղծիքներ և անհեթեթություններ, և ոչ մի շրջապտույտ չի կարող իշխել և ղեկավարել: Եթե դրսից եկող որոշ զգայություններ միանում են շրջապտույտներին և ներգրավում հոգու ողջ անոթը, շրջապտույտները միայն թվում է, թե իշխում են: Եվ բոլոր այս վիճակների պատճառով հոգին հիմա էլ, երբ մուտք է գործում մահկանացու մարմնի մեջ, նախ դառնում է անմիտ, իսկ երբ
b
աճի և սննդի հոսքը նվազում է և շրջապտույտները խաղաղվելով վերադառնում են ի շրջանս յուր և ժամանակի հետ ավելի ու ավելի են մոտենում նախկին վիճակին, այդժամ շրջաններից յուրաքանչյուրը ուղղում է իր շարժումը համաձայն իր բնական ձևի, այնպես որ ճիշտ են դատում Ուրիշի և Նույնականի մասին, և նա, ով տիրում է դրանց վերջնականապես, դառնում է բանական: Եթե դրան ավելանա ճիշտ սնունդը և դաստիարակությունը, նա կլինի անվնաս ու լիովին առողջ և կխուսափի ամենաժանր հիվանդությունից: Իսկ եթե անփույթ
c
լինի, կաղ կմնա ողջ կյանքում և Հաղես⁶⁷ կվերադառնա անկատար ու անբանական: Սրա մասին կխոսենք ավելի ուշ, իսկ հիմա մենք պետք է ավելի ուշադիր քննենք մոտական: Դա վերաբերում է մարմնի և իր մասերի ծագմանը, այնուհետև հոգու ծագմանը՝ թե ինչ պատճառներով և աստվածների ինչ նախախնամությամբ հնարավոր դարձավ, և մենք պիտի շարժվենք այնպես, որ հասնենք հավանականության ամենաբարձր
d
աստիճանին:

Աստվածային շրջապտույտները, որոնք երկուսն են, աստվածները, նմանակելով Համայնի ձևը, միացրին գնդաձև մարմ-

- նին, որը մենք հիմա կոչում ենք գլուխ և որը մեր ամենա-
 աստվածային մասն է ու մյուս մասերի տիրակալը: Աստված-
 ները նրան ի սպաս դրեցին իրենց իսկ կառուցած ամբողջ
 մարմինը՝ հասկանալով, որ գլուխը հաղորդակից է եղած բոլոր
 շարժումներին: Որպեսզի սա չգլորվի գետնով մեկ, դժվարա-
 նալով բարձրանալ բլուրները և դուրս գալ փոսերից, տվեցին
- e նրան դյուրանցանելի մի կառք: Դրա պատճառով նրա մարմինը
 երկարություն ստացավ, և ըստ աստծո հնարքի՝ մարմնին չորս
 վերջույթ աճեց, որոնք շարժվելու ընթացքում նա կարող էր
 ձգել ու ծալել, ինչպես նաև կառչելով դրանցով և հենվելով
 դրանց վրա կարող էր տեղափոխվել ամենուր՝ բարձր պահելով
 մեր մեջ եղած ամենաաստվածայինի բնակատեղին: Այդպես
 բոլորը ստացան ոտքեր և ձեռքեր: Համարելով, որ դիմային
- 45 մասը ետևի մասից ավելի կարևոր և առաջնային է, աստված-
 ները ավելի մեծ շարժունություն հաղորդեցին դրան: Հարկ էր,
 որ մարդու դիմային մասը տարբերվի և նման չլինի մարմնի
 մյուս մասերին: Ահա ինչու աստվածները տեղադրեցին դեմքը
 գլխագնդի հենց այդ մասում՝ դրան միացնելով հոգու մտածո-
 ղության բոլոր գործարանները, և այնպես արեցին, որ հենց
- b դեմքն ըստ իր բնության հաղորդակից լինի առաջնորդությանը:
 Գործարաններից նախ ստեղծեցին լուսակիր աչքերը և տեղա-
 դրեցին դեմքի վրա. դրա պատճառը հետևյալն է: Նրանք հորի-
 նեցին մարմին, որի բերած հուրը չէր այրում, այլ արծակում
 էր ցերեկայինի նման մեղմ լույս: Չէ՞ որ մեր ներսում ապրում
 է այդ լույսին եղբայրակից մի հուր, և նրանք այնպես արեցին,
 որ հենց այդ հուրը հարթ ու խիտ հոսանքով անցնի աչքերի
 միջով: Ամենից խիտ նրանք ստեղծեցին աչքերի հյուսվածքի
- c կենտրոնը, որպեսզի դրա միջոցով ավելի կոպիտ ոչինչ չանց-
 նի, այլ՝ միայն մաքուր հուրը: Եվ երբ կեսօրվա լույսը պարու-
 րում է տեսողության արծակած հոսանքը, նմանը միտվում է
 նմանին և միաձուլվում նրա հետ՝ կազմելով մեկ մարմին աչքե-
 րի տեսողության ուղղությամբ, այն տեղում, ուր ներսից հոր-
 դող հուրը բախվում է դրսից եկողի հետ⁶⁸: Եվ ամբողջապես

համասեռ լինելով՝ այդ մարմինը ամեն ինչ կրում է համասեռ կերպով, այնպես որ երբ դիպչում է մի բանի կամ երբ նրան ուրիշ ինչ-որ բան է դիպչում և այդ շարժումները փոխանցվում են ամբողջ մարմնին, հասնելով հոգուն, գոյանուն է զգայութուն, որը մենք կոչում ենք տեսողություն: Իսկ երբ արտաքին հուրը թաքնվում է գիշերվա մեջ, ներքին հուրը հատվում է: **d**

Հանդիպելով իրեն ոչ նմանին, այն փոխվում և մարում է, երբեք չխառնվելով մոտակա օդին, որը զուրկ է հրից: Տեսողությունը այդպերպ դադարում է գործել և առաջ է բերում քուն: Քանի որ մենք աստվածների ստեղծած բնական պահպանիչների, այն է՝ կոպերի միջոցով փակում ենք ներսում հրի ուժը, **e**

այն ցրում և հավասարակշռում է ներքին շարժումները՝ առաջ բերելով հանգիստ: Եթե սա հիմնավոր է, ապա քունը խորն է ու աներազ, բայց եթե որոշ ուժեղ շարժումներ դեռ պահպանվում են, կախված իրենց որպիսությունից և տեղից՝ առաջ են գալիս այդպիսի և նույնքան պատկերներ, որոնք պատճենվում են ներսում և արթնանալուն պես վերհիշվում, ինչպես եթե **46**

պատճենված լինեին արտաքին պատկերներից:

Այժմ դժվար չէ հասկանալ հայելիների և ուրիշ փայլող ու հարթ առարկաների արտապատկերման սկզբունքը: Չէ՞ որ եթե ներքին հուրն ու արտաքին հուրը հաղորդակցվում են և միանում հարթ մակերեսի վրա՝ դասավորվելով ամենատարբեր ձևերով, այդ ամենն անհրաժեշտաբար երևում է, երբ դեմքից արծակվող տեսողության հուրը միաձուլվում է արտացոլված **b**

դեմքի հրի հետ հարթ և փայլող մակերեսի վրա: Այդժամ ձախը թվում է աջ, քանի որ տեսողական հոսանքի յուրաքանչյուր մաս դիպչում է ոչ թե սովորաբար հանդիպող, այլ հակադիր մասին: Սակայն եթե լույսը շրջվի իրեն հանդիպող լույսի հակառակ ուղղությամբ, աջը կրկին կթվա աջ, իսկ ձախը՝ ձախ: Այդպես է, երբ հայելու հարթ մակերեսը, որը ունի կորություն, **c**

աջից շարժվող տեսողական ճառագայթը ուղղորդում է ձախ, իսկ ձախը՝ աջ: Բայց եթե հայելին շրջենք դեմքի երկայնքով, ողջ դեմքը կերևա գլխիվայր շրջված, որովհետև լույսը դարձ-

յալ ներքևից ուղղված կլինի տեսողական ճառագայթի վերևի մասին, իսկ վերևից՝ դեպի ներքևի մասը:

- Արանք բոլորը կողմնակի պատճառներ են, որոնք աստված օգտագործում է որպես միջոցներ բարիքի գաղափարը հնարավորինս կատարյալ իրագործելու համար: Սակայն շատերին
- d** թվում է⁶⁹, թե դրանք ոչ թե կողմնակի, այլ ամեն ինչի բուն պատճառներն են, քանի որ դրանք սառեցնում և տաքացնում են, խտացնում և ընդլայնում են, և այլն: Սակայն դրանք անկարող են ունենալ ո՛չ բանականություն, ո՛չ էլ խելք: Գոյողներից միայն հոգին կարող է խելք ունենալ, իսկ սա անտեսանելի է, մինչդեռ հուրը, ջուրը, հողը և օդը՝ բոլորն էլ տեսանելի մարմիններ են: Խելքի և իմացության սիրահարը պիտի
- e** նախ հետամուտ լինի բանական բնության պատճառների, իսկ այնուհետև ուրիշ պատճառների կողմից շարժման մեջ դրվողներին և, իրենց հերթին, ուրիշների շարժման պատճառ հանդիսացողներին: Մենք պետք է անենք նույնը, պիտի մշենք պատճառների երկու տեսակները. նրանք, որոնք լինելով խելքով օժտված՝ գեղեցիկի և բարու հեղինակներն են, և նրանք, որ լինելով բանականությունից զուրկ, մշտապես առաջ են բերում պատահականն ու անկարգը: Կողմնակի պատճառները, որոնց միջոցով աչքերը ձեռք են բերում այն կարողությունը, որ ունեն այժմ, այսքանով համարենք բացատրված: Հիմա հարկ է ասել, թե որն է աչքերի ամենամեծ օգուտը, այն, որի համար աստված դրանք շնորհել է մեզ: Ես պնդում եմ, որ տեսողությունը մեզ մեծագույն օգուտ է բերում, քանզի մեր այժմյան քննության մեջ մենք ոչինչ չէինք կարողանա ասել ո՛չ աստղերի, ո՛չ արեգակի, ո՛չ էլ երկնքի մասին առանց տեսնելու դրանք: Արդ,
- 47** ցերեկն ու գիշերը, ամիսների և տարիների շրջապտույտները առաջ բերեցին մեզ համար թիվը, պատկերացում տվեցին ժամանակի մասին և մղեցին հետազոտելու ողջ Համայնի բնությունը: Այստեղից ծագեց փիլիսոփայությունը, որից առավել մեծ բարիք աստվածները մարդկային ցեղին ո՛չ երբևէ տվել են,
- b** ո՛չ էլ երբևէ կտան⁷⁰: Ես պնդում եմ, որ աչքերը մեծագույն բա-

րիքն են: Արժե՞ արդյոք փառաբանել մյուս, նվազ նշանակալի բարիքները: Դրանց համար անգամ ոչ փիլիսոփա մեկը կուրանալով կարող է լալ ու արցունք թափել⁷¹: Սակայն մենք պետք է հաստատենք, որ պատճառը, թե ինչու աստվածները մեզ տեսողություն չնորհեցին, հենց սա է՝ տեսնել երկնքում խելքի շրջապտույտները և խորհել դրանց մասին, քանզի դրանք ազգակից են մեր մտքի շրջապտույտներին, թեպետ առաջինների անխռովության փոխարեն մեր շրջապտույտները խռովահույզ են: Ահա ինչու հասկանալով մեծ մտքի բնական ճշտությունը և հաղորդակից լինելով դրան՝ մենք պիտի նմանակենք աստծուն և կարգավորենք մեր միջի անկանոն շրջապտույտները:

Նույնը պետք է ասել նաև ծայնի և լսողության մասին. աստվածները դրանք չնորհել են նույն բաների համար և նույն պատճառներով: Խոսքը ստեղծված է նույն նպատակով և ծառայում է դրա իրագործմանը: Նմանապես երաժշտությունը, քանի որ օգտվում է ծայնից և դիմում է լսողությանը, տրված է հանուն ներդաշնակության: Իսկ ներդաշնակությունը, որ ազգակից է մեր ներսում հոգու շրջապտույտների շարժմանը, Մուսաները չնորհել են բանական էակին ոչ անիմաստ հաճույքի համար, — չնայած որ այժմ կարծում են, թե սրանում որոշակի օգուտ կա, — այլ որպես միջոց մեր հոգում աններդաշնակ շրջապտույտները կարգի և համահնչության բերելու համար⁷²: Եվ ռիթմը նույն նպատակով և նույն Մուսաների կողմից չնորհվել է, որպեսզի հաղթահարվի մեզնից շատերի մեջ առկա անչափավորությունն ու վայելչության պակասը:

Մինչ այժմ ասվածը, աննշան բացառություններով, ցույց տվեց, թե ինչպես է խելքը կարգավորել ամենայն ինչ: Սակայն հարկավոր է դիտարկել նաև այն, ինչը գոյացել է անհրաժեշտությունից, քանի որ տիեզերքի համախառն ծնունդը անհրաժեշտության և խելքի համադրությունից է: Խելքը իշխում է անհրաժեշտությանը, քանի որ համոզել է նրան գոյացողի մեծ մասը մղել դեպի բարիքը: Եվ այդպես անհրաժեշտության նկատմամբ բանական համոզման տարած հաղթանակը ի

c

d

e

48

- սկզբանե կազմավորեց Համայնը: Եվ եթե որևէ մեկը ասում է, թե ինչպես է իրականում գոյացել Համայնը, նա պիտի խոսի նաև Համայնին ի բնե հատուկ խառը պատճառի տեսակի և
- b** դրա գործելակերպի մասին: Ահա ինչու մենք պիտի հետ վերադառնանք և միևնույն բաների համար մեկ անգամ էլ վերցնենք նրանց համապատասխանող ուրիշ պատճառ և, ինչպես արդեն արել ենք, մեկ անգամ ևս սկսենք սկզբից: Մենք պիտի դիտարկենք, թե ինչպիսին էր հրի, ջրի, օդի և հողի բնությունը նախքան երկնքի գոյանալը, ինչպիսին էր դրանց վիճակը: Չէ՞ որ մինչ այժմ ոչ ոք չի բացատրել դրանց ծնունդը, իսկ մենք
- c** դրանք անվանում ենք սկզբունքներ և համարում Համայնի տարրեր, կարծելով, թե գիտենք, ինչ է հուրը, ջուրը, օդը և հողը, թեև նույնիսկ ամենաթեթևամիտ մարդուն հայտնի է, որ դրանք համեմատելի չեն վանկի հետ⁷³: Ահա թե ինչ կասենք. չենք խոսի ո՛չ ամենայն ինչի պատճառի, ո՛չ էլ պատճառների մասին (կամ ուրիշ ինչ են դրանք համարվում), որովհետև հետազոտության այժմյան եղանակով դժվար կլիներ պարզաբանել մեր նկատառումները: Հետևաբար ո՛չ դուք պիտի մտածեք, թե ես կբացատրեմ դրանք, ո՛չ էլ ես կարող եմ համոզել ինքս ինձ, թե ճիշտ կվարվեմ, եթե ստանձնեմ այդ գործը: Ես
- d** հավատարիմ կմնամ սկզբում խոստացածին, խոսելով այն մասին, ինչի մասին հնարավոր է խոսել, և սկսելով սկզբից՝ ինչպես ամեն առանձին իրի, այնպես էլ բոլոր իրերի մասին ասել խոսք, որը կլինի ոչ թե պակաս, այլ առավել ճշմարտաման ցանկացած ուրիշ խոսքից: Եվ այսպես, նախ խնդրենք փրկիչ աստծուն, որ տարօրինակ ու անսովոր պատմությունից մեզ ուղղորդի դեպի ճշմարտացի ուսմունքը, իսկ այնուհետև սկսենք նորից:
- e** Համայնի մասին մեր նոր խորհրդածությունը կդիմի առավել նշանակալի տարբերակումների: Նախկինում մենք առանձնացրինք երկու տեսակ, իսկ հիմա կառանձնացնենք նաև երրորդը: Առաջ բավական էր խոսել երկու բաների մասին. մեկը ենթադրվում էր որպես ձևի նախատիպ, որը մտահասու է և

մշտապես նույնական գոյություն է, իսկ մյուսը այդ նախատի-
պի նմանակումն է, որն ունի ծնունդ և տեսանելի է: Երրորդը
մենք այդժամ չառանձնացրինք՝ մտածելով, որ երկուսը բա- 49
վական կլինեն: Սակայն հիմա ինձ թվում է, որ մեր խորհրդա-
ծությունը ստիպում է մեզ փորձել լուսաբանել այդ խրթին և
մութ ձևը: Ի՞նչ ունակություն վերագրենք դրա բնությանը: Նախ
նշենք, որ դա ամեն ծննդի օրրանն է, այսպես ասած ստնտուն:
Ասվածը ճշմարիտ է, սակայն հարկ է ավելի որոշակիացնել
այն: Իսկ դա դժվար է, և հատկապես այն պատճառով, որ
նախ հարկավոր է քննել հրի և դրա հետ անհրաժեշտաբար
կապված մյուս բաների հարցը: Դրանցից յուրաքանչյուրի մա-
սին դժվար է ասել, թե ինչն է, որ հարկավոր է կոչել ավելի b
շուտ ջուր, քան հուր, և ինչ-որ մեկն անվանել ավելի շուտ
հենց այդպես և մի կողմ թողնել բոլոր մյուս անվանումները,
քանի որ խոսքը պետք է լինի հավաստի և հուսալի: Ի՞նչ ենք
ցանկանում ասել և որտեղի՞ց են ծագում մեր դժվարություն-
ները: Նախ վերցնենք այն, ինչն այժմ ջուր ենք անվանում: Երբ c
այն խտանում է, մենք կարծում ենք, թե տեսնում ենք քարերի
և հողի գոյացումը, երբ հոսում և սփռվում է, մեզ թվում է, թե
քամի և օդ է գոյանում, իսկ օդը բռնկվելով վերածվում է հրի:
Այնուհետև տեղի է ունենում հակառակը. հուրը հանգչելով և
խտանալով ընդունում է օդի ձև, իսկ օդն իր հերթին հավաք-
վելով ու խտանալով վերածվում է ամպերի և մշուշի, որոնք
խտանալով սկսում են հոսել որպես ջուր: Ջուրը կրկին վերած-
վում է հողի և քարերի: Այսպես, դրանք փոխանցում են միմ- d
յանց գոյացման շրջաբերական գավաթը⁷⁴: Եթե ոչ մի գոյ ամեն
անգամ չի ներկայանում որպես նույնական, կարո՞ղ ենք արդ-
յոք առանց ամաչելու խիզախորեն հաստատել, որ այդ գոյը
հենց այն է, ինչ կա, և ոչ ուրիշ ինչ-որ բան: Դա անհնարին
կլիներ, հետևաբար շատ ավելի հուսալի է հետևյալ պնդումը.
տեսնելով, որ առարկան, ասենք՝ հուրը, ամեն անգամ դառնում
է ուրիշ, մենք պիտի խոսենք ոչ թե «այդ», այլ «այդպիսի» հրի
մասին, ոչ թե «այդ», այլ «այդպիսի» ջրի մասին, և չվերա- e

գրենք նման բաներին ոչ մի հաստատունություն, որն արտահայտվում է «այս» և «այն» բառերով, որոնցից օգտվում ենք հստակ ինչ-որ բան նշելու համար: Քանզի դրանք փախչում են և չեն ենթարկվում «այս», «այն» և բոլոր մյուս նման անվանումներին որպես նույնականություն ցույց տվող արտահայտությունների: Ուրեմն մենք պետք է հրաժարվենք այդ անվանումներից, և ամեն անգամ յուրաքանչյուր առանձին իր և դրանք բոլորը միասին նկարագրենք որպես մշտապես պտտվող: Հուրը մենք պիտի կոչենք մշտապես «այսպիսին» և նմանապես նաև մյուս բաները, որ ունեն գոյացում: Բայց այն, ինչի մեջ դրանք գոյանում են և որի մեջ կործանվելով վերադառնում, մենք կանվանենք «այս» և «այն» բառերով: Սակայն այնպիսի հատկություններ, ինչպիսիք են ջերմությունը, սպիտակը, դրանց հակադիրները կամ դրանցից գոյացողները, այդպես կոչվել չեն կարող:

50

Բայց այս մասին մենք կխոսենք մեկ անգամ ևս և ավելի հստակ: Դիցուք, ինչ-որ մեկը ոսկուց ծուլելով ամենատարբեր

b ֆիզուրներ՝ յուրաքանչյուրից սկսում է վերածուլել բոլոր մյուսները: Եթե մատնանշենք դրանցից որևէ մեկը և հարցնենք, թե դա ինչ է, ապա ճշմարտության դեմ չմեղանչելու համար ավելի հուսալի կլինեն պատասխանել, որ ոսկի է, և երբեք չխոսել եռանկյունու⁷⁵ և առաջացող մյուս ֆիզուրների՝ որպես գոյություն ունեցողների մասին, քանզի հենց այն պահին⁷⁶, երբ նկատի են առնվում, դրանք արդեն փոխվում են, և մեծ հաջողություն է արդեն այն, որ որոշ վստահությամբ կիրառվի «այդպիսի» բառը: Նույնը պետք է ասել նաև բնության մասին,

c որն ընդունում է բոլոր մարմինները: Այն միշտ պետք է կոչել նույնական, քանի որ երբեք դուրս չի գալիս իր կարողության սահմաններից: Մշտապես ընդունելով ամեն բան, երբեք և ոչ մի կերպ չի ընդունում որևէ ձև, որը նման կլիներ իր մեջ մտնող իրերի ձևերին: Այդ բնության վրա ամեն ինչ կարող է թողնել իր տպավածքը, անգամ երբ նա շարժվում է և իր մեջ մտնողի ազդեցությամբ փոխում իր ձևը: Ահա ինչու թվում է,

թե տարբեր ժամանակ նա տարբեր է: Իսկ նրա մեջ մտնող և նրանից դուրս եկող իրերը հավերժական գոյի նմանակներն են, դրա տպվածքները, որ արված են անբացատրելի և զարմանալի եղանակով, որին մենք դեռ կանդրադառնանք:

Իսկ հիմա հարկ է մտովի առանձնացնել երեք սեռերը. այն, ինչը գոյանում է, այն, ինչի մեջ գոյանում է, և այն, ինչի նմանությամբ աճում է գոյացածը: Ընդունող կողմը հարմար է նմանեցնել մորը, սկզբնաղբյուրը՝ հորը, իսկ նրանց միջև գտնվող բնությունը՝ երեխային: Հարկ է նաև մտածել, որ եթե տպվածքը պիտի տեսնել տա խայտաբղետ բազմազանություն, ապա այն, ինչի վրա տպվում է, ամենից լավ պատրաստ կլինի ընդունելու այդ տպվածքը, եթե զուրկ լինի բոլոր այն ձևերից, որոնք պիտի ընդունի: Քանզի եթե նման լիներ ներմուծվող ձևերից որևէ մեկին՝ ընդունելով հակադիր կամ բոլորովին ուրիշ բնություն ունեցող ձևեր, տպվածքը նման չէր լինի նրանց և ցույց կտար իր սեփական տեսքը: Այն, ինչը պիտի իր մեջ ներառեր բոլոր ձևերի սեռերը, ինքը պիտի զուրկ լիներ ձևերից, ինչպես անուշաբույր քսուքների դեպքում, երբ աշխատում են այնպես անել, որ գերակշռող հեղուկն ինքը բույր չունենա: Այդպես նաև նրանք, ովքեր փորձում են գծել պատկերներ փափուկ մակերեսի վրա, թույլ չեն տալիս, որ պահպանվեն նախապես եղածները, այլ հնարավորինս հարթեցնում են այն: Նմանապես այն, ինչը պետք է լավ ընդունի բոլոր հավերժական գոյերի տպվածքները, պիտի ի բնե զուրկ լինի բոլոր ձևերից: Ահա ինչու մենք չենք ասի, թե տեսողականից կամ ընդհանրապես զգայականից գոյացածի մայրը կամ ստնտուն հողն է, օդը, հուրը, ջուրը, դրանցից գոյացած մեկ ուրիշ բան կամ այն, ինչից գոյանում են իրենք: Մենք չենք սխալվի, եթե այն կոչենք ամտեսանելի, անձև, ամեն ինչ ընդունող տեսակ, որը ամենատարօրինակ ձևով հաղորդակից է մտահասունի և ամենաանորսալին է:

Եթե մեր նախորդ քննարկումը հնարավորություն է տալիս բացահայտելու դրա բնությունը, ապա առավել ստույգ ձևով

- դա կարելի է հաստատել հետևյալ կերպ. հուր է ամեն անգամ այդ բնության բռնկվող մասը, ջուր է դրա հեղուկ մասը, իսկ հող և օդ են այդ տարերքներին մմանակող մասերը: Սակայն
- c մենք պետք է ավելի ստույգ սահմանենք այդ բնությունը և տեսնենք՝ գոյություն ունի՞ արդյոք ինքն ըստ ինքյան հուր և արդյո՞ք իրերի դեպքում, որոնցից յուրաքանչյուրի մասին մենք ասում ենք, թե դա գոյում է ինքն ըստ ինքյան, բանը հենց այսպես է: Թե՞ միայն տեսանելի և մարմնապես զգայելի առարկաներն են, որ օժտված են այդպիսի ճշմարտությամբ, իսկ դրանցից բացի ընդհանրապես ոչինչ և ոչ մի տեղ գոյություն չունի: Գուցե մենք զուր ենք խոսում յուրաքանչյուր իրի մտահասու գաղափարի մասին, և այդ գաղափարը ոչ այլ ինչ է, եթե ոչ ընդամենը բառ: Չարժե այս պահին չքննված և անորոշ թողնել հարցը, սահմանափակվելով հայտարարությամբ, թե բանն այսպես է, չարժե նաև ասել հակառակը՝ ընդարձակ
- d քննությանը գումարելով ընդարձակ հավելում: Ահա ինչու լավագույնը կլիներ ընդարձակին տալ հակիրճ բնորոշում:
- Իմ վճիռն այսպիսին է: Եթե խելքը և ճշմարիտ կարծիքը երկու սեռեր են, ոչ զգայելի և սոսկ մտահասու գաղափարները գոյություն ունեն ինքն ըստ ինքյան: Իսկ եթե ճշմարիտ կարծիքը, ինչպես ոմանց է թվում, խելքից ոչնչով չի տարբերվում, պետք է ամենամեծ ստուգությունը վերագրել նրան, ինչը զգայելի է մարմնապես: Հարկ է նշել, որ այդ երկու սեռերը գոյացել են միմյանցից առանձին և մման չեն իրար:
- e Խելքը գոյանում է խրատներից, իսկ ճշմարիտ կարծիքը՝ համոզումից: Առաջինը միշտ ճշմարիտ խորհրդածության հիման վրա է, երկրորդը՝ ոչ, առաջինը անհնար է սասանել համոզումով, երկրորդը տարհանոզելի է, և հարկ է նշել, որ ճշմարիտ կարծիքը հասանելի է բոլոր մարդկանց, մինչդեռ խելքը՝ աստվածներին, իսկ մարդկանցից՝ միայն քչերին⁷⁷: Եթե դա այդպես է, հարկ է համաձայնել, որ գոյություն ունի մեկ նույնական գաղափար՝ անսկիզբ և անկործան, որն իր մեջ ոչ մի տեղից ոչինչ չի ընդունում և ինքը ոչնչի մեջ չի մտնում, անտեսանելի
- 52

է, առհասարակ ոչ մի եղանակով զգայելի չէ և հանձնված է մտքի հոգածությանը: Բայց կա նաև այդ գաղափարի համանուն նմանակը, որը զգայելի է, մշտապես շարժման մեջ է, գոյանում է ինչ-որ տեղում և դարձյալ անհետանում է այնտեղից. սա ընկալվում է զգայությանը միացած կարծիքի միջոցով: Այնուհետև, գոյություն ունի ևս մեկ սեռ, այն է՝ հավերժական տարածությունը, որը չի ճանաչում կործանում և տեղ է հատկացնում ամեն գոյացողին, իսկ ինքը ընկալվում է զգայությունից զուրկ ինչ-որ ապօրինի խորհրդածությամբ, որին գրեթե անհնար է հավատալ: Մենք այն տեսնում ենք երազում և ասում ենք, որ գոյությունը անհրաժեշտաբար պիտի գտնվի ինչ-որ տեղ, ինչ-որ վայրում և պիտի զբաղեցնի ինչ-որ տարածություն, իսկ այն, ինչը ո՛չ երկրի վրա է, ո՛չ երկնքում, գոյություն չունի: Այս բոլոր և սրանց ազգակից պատկերացումները մենք երազում տարածում ենք նաև ճշմարիտ բնության վրա, իսկ զարթնելով չենք կարողանում տարանջատել մեկը մյուսից և ասել ճշմարտությունը՝ որ պատկերը չի կրում իր մեջ այն, ինչի համար գոյացել է, այլ մշտապես բերում է միայն իրենից տարբեր ինչ-որ բանի պատրանքը, հետևաբար նրան հարիր է գոյանալ ուրիշ ինչ-որ բանի մեջ, ամուր կպչելով էությանը, կամ էլ ընդհանրապես լինել ոչինչ: Մինչդեռ իսկական գոյության օգտին է խոսում այն անթերի ճշմարիտ փաստարկը, թե քանի դեռ երկու իրերը տարբեր են միմյանցից, դրանցից ոչ մեկը չի կարող գոյանալ մյուսի մեջ որպես մեկ նույնական իր և միաժամանակ որպես երկու:

Այսպես, համաձայն իմ վճռի՝ գլխավորը մեր խորհրդածության մեջ հետևյալն է. կա գոյություն, կա տարածություն և կա գոյացում, իսկ երեք սեռերը գոյացել են առանձին-առանձին դեռ նախքան երկնքի առաջացումը: Իսկ Ստոնտուն, քանի որ և՛ հեղուկ է, և՛ հրածին և, բացի այդ, ընդունում է հողի և օդի ձևերը, կրում է դրանց հատուկ բոլոր վիճակները, ի հայտ բերելով իր բազմազան տեսքը, և քանի որ իր ուժերը ո՛չ համանման են, ո՛չ էլ հավասարակշիռ և ինքն էլ իր ոչ մի մասում

- հավասարակշռված չէ, ամբողջությամբ անհավասարաչափ կերպով ցնցվում է այդ ուժերից և ինքը նույնպես ցնցում է դրանք: Շարժման մեջ տրվածը անվերջ մանրանում է և սլանում տարբեր ուղղություններով, ինչպես լինում է ցորենը քամհարելիս և մաղելիս. ամուր և ծանր հատիկները ընկնում են մի տեղ, իսկ փափուկ ու թեթև հատիկները՝ մեկ ուրիշ տեղ: Այդպես էլ չորս սեռերը ժամանակին ցնցվել են Ընդունողի կողմից, որը շարժվելով ինչպես մաղը՝ միմյանց բոլորովին ոչ նման բաները ցրել է իրարից մեծ հեռավորության վրա, իսկ ամենից շատ նմանություն ունեցողները՝ հավաքել իրար մոտ. ահա ինչու չորս սեռերը տարբեր տարածություններ գրավեցին նախքան կգոյանար դրանցից կազմվող Յամայնը: Մինչ այդ դրանք
- b** զուրկ էին ինչպես բանականությունից, այնպես էլ չափից: Սակայն, երբ առաջ եկավ ամեն ինչ կարգավորելու նախածեռնությունը, հուրը և ջուրը, հողը և օդը, ունենալով իրենց հատուկ բնության հատկանիշները, մնում էին ասես առանց աստծո, իսկ քանի դեռ այդ վիճակը նրանց համար բնական էր, աստված ստեղծեց դրանք ձևերի և թվերի միջոցով: Այն, որ աստված կարգավորեց դրանք հնարավորինս գեղեցիկ և բարի ձևով մեկ ուրիշ վիճակից, մեզ համար թող մնա առաջնային: Այժմ ես պիտի փորձեմ ոչ սովորական պատմությամբ պարզաբանել դրանցից յուրաքանչյուրի կազմությունն ու ծագումը: Բայց քանի որ իմ փաստարկների համար անհրաժեշտ ուսուցման
- c** եղանակները ձեզ արդեն ծանոթ են, դուք կկարողանաք հետևել ինձ:

Նախ, բոլորին էլ պարզ է, որ հուրը և հողը, ջուրը և օդը մարմիններ են, իսկ մարմնի ամեն մի ձև ունի խորություն: Մինչդեռ ցանկացած խորություն պիտի սահմանագծվի մակերեսի բնությամբ: Ամեն հարթ մակերես կազմված է եռանկյունիներից, իսկ բոլոր եռանկյունիները ծագում են երկուսից, որոնցից յուրաքանչյուրն ունի մեկ ուղիղ և երկու սուր անկյուն⁷⁸: Մեկի դեպքում ուղիղ անկյան երկու կողմերում հավասար անկյուններ են, որոնք ունեն ուղիղ անկյան միևնույն մասի

մեծությունը և սահմանափակված են հավասար կողմերով, իսկ մյուսի դեպքում անկյունները հավասար չեն և սահմանափակված են անհավասար կողմերով: Այստեղ էլ մենք դնում ենք հրի և մյուս մարմինների սկզբունքը՝ առաջնորդվելով անհրաժեշտությանը միացված հավանականությամբ: Իսկ սրանցից վեր գտնվող սկզբունքները հայտնի են միայն աստծուն և այն մարդկանց, որոնք բարեկամ են նրան: Այժմ հարկ է ասել, թե ինչպիսին են այդ չորս ամենագեղեցիկ մարմինները, որոնք e նման չեն միմյանց, սակայն կործանվելով կարող են վերածվել մեկը մյուսին: Եթե մեր բախտը ժպտա, մենք կիմանանք հողի և հրի, ինչպես նաև համանման սկզբունքների մասին, որ տեղ են զբաղեցնում դրանց միջև որպես միջանկյալ անդամներ: Այդժամ մենք ոչ ոքի հետ չէինք համաձայնի, թե չկան սրանցից ավելի գեղեցիկ տեսանելի մարմիններ, ընդ որում սրանցից յուրաքանչյուրը գեղեցիկ է իր տեսակի մեջ: Ահա ինչու պետք է ձգտել դասակարգել գեղեցկությամբ տարբերվող մարմինների չորս սեռերը և ցույց տալ, որ մենք բավականաչափ ըմբռնել ենք դրանց բնությունը: Արդ, երկու եռանկյունիներից հավասարասրունը ստացավ մեկ բնություն, 54 իսկ ոչ հավասարասրունը՝ անթիվ բնություններ: Այդ անթիվ բազմությունից մենք պիտի ընտրենք ամենակատարյալը, եթե ցանկանում ենք գործի անցնել պատշաճ ձևով: Եվ եթե որևէ մեկը գտնի և նշի ավելի կատարյալը, որն ընկած է մյուսների կազմության հիմքում, ապա նա հաղթանակ կտանի ոչ իբրև թշնամի, այլ որպես բարեկամ: Իսկ մենք ընդունում ենք, որ բազում եռանկյունիների մեջ կա ամենագեղեցիկը, այն, որից, երբ սա միանում է իր նմանի հետ, զոյանում է երրորդ՝ հավասարակողմ եռանկյունին⁷⁹: Սա շատ երկար պատմություն է, b բայց եթե որևէ մեկը ուզում է բացահայտել մեր սխալը և ցույց տալ հակառակը, մենք սիրով հաղթող կճանաչեինք նրան: Մենք նախընտրում ենք երկու եռանկյունիները, որոնցից կազմվում են հրի և մյուս սկզբունքների մարմինները: Դրանցից մեկը հավասարասրուն է, իսկ մյուսի դեպքում մեծ կողմի

քառակուսին երեք անգամ գերազանցում է փոքր կողմի քառակուսուն⁸⁰:

- Սակայն մենք պիտի ավելի հստակ սահմանենք այն, ինչը նախկինում ձևակերպեցինք միայն աղոտ կերպով: Մեզ թվում էր, թե բոլոր չորս սեռերը գոյանում են մեկը մյուսից, բայց դա
- c ճիշտ պատկերացում չէ: Չէ՞ որ այդ չորս սեռերը գոյանում են մեր ընտրած եռանկյունիներից. երեքը ոչ հավասարասրուն եռանկյունուց, իսկ չորրորդը հավասարասրուն եռանկյունուց: Չետևաբար ոչ բոլոր սեռերը կարող են լուծվել միմյանց մեջ և գոյանալ մեկը մյուսից՝ բազում փոքր մարմիններից կազմելով մի քանի մեծերը և հակառակը: Դա վերաբերում է առաջին երեք սեռերին: Դրանք ծագել են մեկ եռանկյունուց, այնպես որ երբ ավելի մեծերը լուծվում են, բազում փոքր մարմիններ
- d կազմվում են այդ նույն մարմիններից, ստանալով իրենց հատուկ տեսքը, և երբ բազում փոքր մարմիններ տարրալուծվում են եռանկյունիների, նրանք կազմում են ուրիշ տեսակի միասնական զանգված ունեցող մարմին: Այսքանը չորս սեռերի միմյանցից գոյանալու մասին:

- Չաջորդ բացատրությունը կվերաբերի նրան, թե ինչ տեսք ունի յուրաքանչյուր մարմին և ինչ թվերի համադրությունից է գոյանում: Սկսենք առաջին տեսակից, որը կազմված է նվազագույն մասերից: Սրա նախատարրը եռանկյունին է, որի ներքնաձիգը երկու անգամ ավելի երկար է ամենափոքր կողմից: Այդպիսի եռանկյունիները ներքնաձիգների գծով միացնելու և երեք անգամ դա կրկնելու դեպքում, ընդ որում այնպես, որ կարճ կողմերն ու ներքնաձիգները հանդիպեն մի կետում որպես իրենց կենտրոնում, թվով վեց եռանկյունիներից կգոյանա մեկ հավասարակողմ եռանկյունի⁸¹: Իսկ երբ չորս հավասարակողմ եռանկյունիները միանում են այնպես, որ երեք
- 55 հարթ անկյունները հանդիպում են մեկ կետում, այդ դեպքում կազմում են մեկ ծավալային անկյուն, որը տեղ է զբաղեցնում հարթ անկյուններից ամենաբութ անկյան կողքին: Կառուցելով այդ հարթ անկյունները, մենք կազմում ենք առաջին ծավալա-

յին պատկերը⁸², որը հավասար և նման մասերի է բաժանում իր շրջագիծը: Երկրորդ պատկերը⁸³ կառուցվում է նման եռանկյունիներից, որոնք, թվով ութ, կազմում են մեկ հավասարակողմ եռանկյունի և չորս հարթ անկյուններից՝ մեկ ծավալային: Երբ ծավալային անկյունները վեցն են, երկրորդ մարմինը դառնում է ավարտուն: Երրորդ պատկերը⁸⁴ կառուցվում է հարյուր քսան սկզբնական եռանկյունիներից և տասներկու ծավալային անկյուններից, որոնցից յուրաքանչյուրը ամփոփվում է հինգ հավասարակողմ եռանկյուն հարթություններով, այնպես որ մարմինն ունի քսան նիստ, յուրաքանչյուրը՝ հավասարակողմ եռանկյունի:

b

Նախատարրերից առաջինը այս ամենի գոյացումից հետո դադարում է գործել: Սակայն հավասարասրուն եռանկյունին առաջ բերեց չորրորդ պատկերի⁸⁵ բնությունը, ընդ որում այնպես, որ չորս եռանկյունիները, որոնց անկյունները միանում էին մեկ կետորոնում, կազմում էին հավասարակողմ քառանկյուն: Վեց քառակուսիներից գոյանում էին ութ ծավալային անկյուններ, որոնցից յուրաքանչյուրը ամփոփվում է երեք հարթ ուղիղ անկյուններով: Կազմված մարմինն ուներ խորանարդի ձև՝ վեց հարթ քառանկյուն նիստերով: Եվ քանի որ մնում էր հինգերորդ կառույցը⁸⁶ աստված օգտագործեց այն Համայնը զարդարելու ժամանակ:

c

Իսկ եթե հիմա որևէ մեկը ուշադիր խորհելով այս ամենի մասին հարցներ՝ պետք է ընդունել անթի՞վ տիեզերքների գոյությունը, թե՞ դրանց սահմանափակ քանակությունը, կեզրակացներ, որ անթիվ տիեզերքների սահմանափակության մասին իրականում կարող է կարծիք հայտնել նա, ով ինքն է սահմանափակ այնպիսի հարցերում⁸⁷, որոնք հարկ է գիտենալ: Ինչ վերաբերում է նրան, թե քանիսն են տիեզերքները՝ մեկը, թե հինգը, ապա այդ հարցը շատ ավելի մեծ դժվարություններ է հարուցում: Իսկ մենք ընդունում ենք, որ տիեզերքը, համաձայն ճշմարիտ սահմանման, մեկն է, թեպետ իհարկե մեկ ուրիշը նկատի առնելով այլ հանգամանքներ, կարող է հանգել այլ

d

- կարծիքի: Թողնենք դա և բաժանենք մեր խոսքում հենց նոր ծնված սեռերը հրի, հողի, ջրի և օդի: Հողին մենք կվերագրենք խորանարդի տեսք, քանի որ չորս սեռերից հողը ամենաանշարժն է և մարմինների մեջ ամենաառածոականը, ահա ինչու պիտի ունենա ամենահաստատուն հիմքերը: Մեր նշած առաջին եռանկյունիներից հավասարակողմը, եթե այն դրված է հիմքում, ի բնե ավելի ամուր է, քան ոչ հավասարակողմը, սակայն երկու հավասարակողմ եռանկյունիներից կազմվող քառակուսին անհրաժեշտաբար ավելի հաստատուն է հավասարակողմ եռանկյունուց՝ ինչպես իր մասերով, այնպես էլ ամբողջությամբ: Մենք ճիշտ կվարվենք, եթե այս ամենը վերագրենք հողին, մյուս տեսակներից ամենադժվարաշարժը՝ ջրին, ամենադյուրաշարժը՝ հրին, իսկ միջին տեսակը՝ օդին: Այնուհետև ամենափոքր մարմինը կվերագրվի հրին, ամենամեծը՝ ջրին, իսկ միջինը՝ օդին. ամենասուր մարմինը՝ հրին, սրությամբ երկրորդը՝ օդին, իսկ երրորդը՝ ջրին: Սակայն բոլոր մարմիններից իր բնությամբ ամենադյուրաշարժը անհրաժեշտաբար բոլորից քիչ հիմքեր ունեցողն է, քանի որ ամենահատուն ու ամենասուրն է և, բացի այդ, կազմված լինելով նվազագույն թվով մասերից, բոլորից թեթևն է: Նրան հաջորդում է այդպիսի որակներով օժտվածությամբ երկրորդ մարմինը, իսկ այնուհետև՝ երրորդը:
- Թո՛ղ ուրեմն, համաձայն ճշմարիտ խորհրդածության, բուրգի ծավալային ձևը լինի հրի սկզբունքը և սերմը: Ծնունդով երկրորդը մենք կկոչենք օդ, իսկ երրորդը՝ ջուր: Մենք պետք է պատկերացնենք, որ բոլոր այդ մարմիններն այնքան փոքր են, որ առանձին դրանցից յուրաքանչյուրը իր աննշանության պատճառով մեզ համար անտեսանելի է, իսկ տեսանելի են միայն դրանց բազմաթիվ միացությունների կույտերը: Ինչ վերաբերում է դրանց բազմությանը, շարժումներին և մյուս կարողություններին, մենք պիտի հասկանանք, որ աստված է ճշգրտորեն և համաչափորեն կազմավորել այդ ամենը, որքանով դա թույլ տվեց անհրաժեշտության տարհամոզված բնությունը:

Այս տեսակների մասին վերն ասվածից ամենաճշմարտա-
 նման հետևությունը սա է: Հողը, հանդիպելով հրին, բաժան- **d**
 բաժան է արվում նրա սուր լեզուներով և ցրվում կա՛մ հենց
 հրի, կա՛մ էլ օդի ու ջրի զանգվածի մեջ, մինչև որ նրա մա-
 սերը, դարձյալ հանդիպելով, միանում և հող են կազմում: Չէ՞
 որ հողը չի կարող ընդունել ուրիշ ծն: Ջուրը մասնատվելով
 հրի և օդի կողմից, թույլ է տալիս, որ կազմվեն հրի մեկ և
 օդի երկու մարմիններ: Իսկ օդի հատված մեկ մասի բեկորները
 կարող են առաջ բերել հրի երկու մարմին: Եվ դարձյալ, երբ
 հրի փոքր բաժինը, հայտնվելով օդի, ջրի կամ հողի մեծ ծա- **e**
 վալներում, առնվում է նրանց շարժման մեջ և այդ պայքարում
 պարտվելով մասնատվում, հրի երկու մարմինները միավորվում
 են օդի մեկ տեսակի մեջ, իսկ երբ օդն է հաղթվում և մաս-
 նատվում, նրա երկու մարմիններից գոյանում է ջրի մեկ
 ամբողջական տեսակ:

Բայց պետք է նկատի առնենք նաև հետևյալը. երբ հրով
 բռնված մեկ ուրիշ սեռ հատվում է նրա սուր անկյուններով, **57**
 այդ սեռի հատումը, ընդունելով հրի բնությունը, դադարում է,
 քանի որ ոչ մի նման և ինքն իր հետ նույնական սեռ չի կարող
 ո՛չ փոփոխության ենթարկել որևէ [համանման] սեռ, ո՛չ էլ դրա
 ներգործությամբ փոփոխության ենթարկվել: Բայց քանի դեռ
 ինչ-որ բան լինելով ուրիշից աննշան՝ պայքարում է իրենից
 հզորի դեմ, այն չի դադարում տարրալուծվել: Ահա ինչու, երբ
 սակավաթիվ ավելի փոքր մարմիններ, որ շրջապատված են **b**
 առավել մեծերով, տրոհվում և մարվում են դրանց կողմից,
 բայց նաև միտված են համադրվելու հաղթած մարմնի տեսակի
 մեջ, նրանց մարումը դադարում է, որպեսզի կա՛մ հրից գոյանա
 օդ, կա՛մ էլ օդից՝ ջուր: Բայց եթե նրանց միանա կամ նրանց
 դեմ պայքար ծավալի մյուս սեռերից մեկը, դրանք չեն դադարի
 տարրալուծվելուց, քանի դեռ ճնշվելով և տարրալուծվելով չեն
 փախչել դեպի իրենց ազգակիցը կամ էլ պարտվելով չեն միա-
 վորվել, նմանվելով հաղթող սեռին, և մնացել նրա հետ: Կրելով
 այդ փոփոխությունները՝ բոլոր սեռերը փոխվում են տեղերով, **c**

որովհետև յուրաքանչյուրի բազմությունը ընդունողի շարժման պատճառով ստանում է իր առանձին տեղը, և այդժամ այն, ինչը գրկվել է ինքն իր հետ ունեցած նմանությունից և նման է դարձել ուրիշ բաների, ցնցման արդյունքում տեղափոխվում է այնտեղ, ուր գտնվում են սեռերը, որոնց ինքը նմանվել է: Անխառն և նախնական մարմինների գոյացման պատճառները սրանք են: Բայց եթե այս տեսակների մեջ առաջ են գալիս սեռային ուրիշ հատկություններ, դրա պատճառը նախնական երկու եռանկյունիների կառուցվածքն է, քանի որ դրանք ի սկզբանե ընդունում էին ոչ թե յուրաքանչյուր սեռին հատուկ չափը, այլ՝ մերթ ավելի փոքր, մերթ ավելի մեծ, և այդպիսի եռանկյունիները այնքան էին, որքան տեսակների մեջ եղած սեռերը: Դրանց համադրությունները միմյանց կամ ուրիշ եռանկյունիների հետ առաջ է բերում անսահման բազմազանություն, որը պիտի հայեն բոլոր նրանք, ովքեր ցանկանում են ճշմարտանման խոսք ասել բնության մասին:

Ինչ վերաբերում է շարժմանն ու դադարին, դրանց ծագման եղանակին և պայմաններին, ապա այժմ համաձայնության

e չհանգելու դեպքում մենք հետագա խորհրդածության ընթացքում կհանդիպենք բազում դժվարությունների: Դրանցից մի քանիսն արդեն նշել ենք, իսկ մնացյալի մասին կասենք այսպես. միակերպի մեջ շարժում լինել չի կարող: Չէ՞ որ դժվար է կամ, ավելի շուտ, անհնար է, որ գոյություն ունենա շարժվողն առանց շարժողի, շարժողն առանց շարժվողի կամ շարժումն առանց այդ երկուսի, մանավանդ որ սրանք երբեք չեն կարող լինել համասեռ: Ուրեմն հարկ է դադարը առհավետ դասել համասեռին, իսկ շարժումը՝ ոչ համասեռին: Ոչ համասեռ բնության պատճառը անհավասարությունն է, իսկ անհավասարության ծագման մասին մենք արդեն խոսել ենք⁸⁸: Սակայն մենք չասացինք, թե ինչու ըստ սեռերի բաժանված մարմինները չէին դադարում շարժվել և խաչվել միմյանց հետ: Արդ, խոսենք նաև դրա մասին: Համայնի շրջապտույտը, որն իր մեջ է առնում այդ սեռերը, քանի որ շրջանաձև է և ձգտում է

ամփոփվել ինքն իր մեջ, սեղմում է ամեն բան և չի թողնում ոչ մի դատարկ տեղ: Հուրը ամենից լավ է ներթափանցում բոլոր իրերի մեջ, երկրորդը օդն է, քանզի նրբությամբ երկրորդն է, և այդպես շարունակ: Այն, ինչը գոյանում է ամենամեծ մասերից, իր մեջ ունի առավելագույն դատարկությունը, իսկ նվազագույն մասերից կազմվածը՝ փոքրագույն դատարկությունը: Հետևաբար, երբ մասերը սեղմվում են, առավել փոքր մարմինները տեղավորվում են առավել մեծերի արանքում: Եվ այդժամ առավել փոքրերը ձգտում են բաժանել միմյանցից առավել մեծերը, իսկ մեծերը իրար են սեղմում փոքրերին, և բոլորը տեղաշարժվում են կա՛մ վերև, կա՛մ ներքև՝ զբաղեցնելով իրենց տեղերը. չէ՞ որ փոխելով իր մեծությունը՝ յուրաքանչյուր մարմին փոխում է նաև իր տեղը: Այդկերպ և այդպիսի պատճառներով մշտապես առաջ է գալիս անհամասեռությունը, որը մարմիններին միշտ պարզևում է և միշտ կպարզևի շարժում:

Այնուհետև հարկ է նկատի առնել, որ գոյություն ունեն հրի բազում սեռեր, օրինակ՝ բոցը, բոցի չքացումը, երբ այն այլևս չի այրում, սակայն աչքերին լույս է պարզևում, նաև այն, ինչը բոցի հանգչելուց⁸⁹ հետո մնում է ածուխի մեջ: Նույնը վերաբերում է նաև օդին, որի ամենաթափանցիկ տեսակը մենք կոչում ենք եթեր, իսկ ամենաաղոտը՝ մառախուղ և մեգ: Օդն ունի նաև անանուն տեսակներ, որոնք գոյացել են եռանկյունիների անհավասարությունից: Ջուրն ունի երկու նախնական տեսակ՝ հեղուկ և հալչող: Առաջինը հեղուկ է շնորհիվ այն բանի, որ հաղորդակից է ջրի սեռերին, որոնք փոքր և անհավասար են և շարժվում են ինչպես ինքնաբերաբար, այնպես էլ ուրիշ բաների ազդեցությամբ, քանի որ անհամասեռ են և ունեն այդպիսի տեսք: Երկրորդ տեսակը մեծ և համասեռ մարմիններից է. այն ավելի հաստատուն է առաջինից և ավելի ծանր է, որովհետև իր համասեռության հետևանքով ավելի սեղմված է: Սակայն հրի ներգործությունն ու կործանիչ ներխուժումը վերացնում է նրա համասեռությունը և առավել

b

c

d

e

59 հաղորդակից է դարձնում շարժմանը, իսկ դառնալով դյուրաշարժ՝ ջուրը հարակից օդի ճնշման տակ սփռվում է երկրով մեկ: Այս վիճակներից յուրաքանչյուրը ստացել է իր անունը: Երբ զանգվածը տարրալուծվում է, մենք այն կոչում ենք հալչող, իսկ երբ տարածվում է երկրով մեկ՝ հոսող: Սակայն, երբ հուրը վերստին դուրս է ժայթքում, այն չի խուժում դատարկություն, ահա ինչու հարակից օդը սեղմվում է և ճնշում հալչող ու դյուրաշարժ զանգվածը, այնպես որ սա ստիպված է լցնել հրի ճեղքերը և միախառնվել հրի հետ: Այդպես սեղմված՝ զանգվածը նորից դառնում է համասեռ, որովհետև հուրը՝ անհամասեռության հեղինակը, հեռացել է և վերադառնում է իր նույնական վիճակին: Հրի հեռանալը մենք կոչում ենք սառեցում, իսկ հեռանալուն հաջորդող երևույթը՝ կարծրացում:

Այն ամենի մեջ, ինչը մենք հեղուկ կոչեցինք, գոյություն ունի նաև ամենանուրբ և համասեռ մասերից կազմված ամենամաճուր եզակի սեռը, որը հաղորդակից է փայլին ու դեղին գույնին, և ամենից շատ գնահատվող հարստությունն է՝ ոսկին, որը հոսել է և կարծրացել քարի մեջ: Ոսկու ածանցյալը, որն իր խտության պատճառով շատ ամուր է և սև, կոչում են ադամաս⁹⁰: Իր մասերի [կազմությամբ] ոսկուն շատ մոտ է այն սեռը, որն ունի բազում տեսակներ, ընդ որում ոսկուց ավելի խիտ ու ամուր է, քանզի նրա մեջ կա նուրբ հողի աննշան զանգված: Եվ սակայն ավելի թեթև է, որովհետև ներսում ունի մեծ արանքներ, որոնք լցված են փայլուն և ամուր հեղուկ սեռերից մեկով՝ պղնձով: Երբ պղնձին միախառնված հողը ծերանալով նորից անջատվում է նրանից և լույս աշխարհ ելնում, մենք այն կոչում ենք ժանգ:

Այուս բոլոր դեպքերը այնքան էլ դժվար չէ քննել՝ հետևելով ճշմարտամման խոսքի գաղափարին: Իսկ նա, ով հանում դադարի կիստաձգի մշտնջենական գոյի մասին խորհրդածությունը, որպեսզի անմեղ հաճույքին հագուրդ տալով ըստ d ճշմարտամմանության քննի իրերի ծագումը, կյանքում կունենա մի զբաղմունք, որը կլինի և՛ զվարճալի, և՛ իմաստալից: Քանի

որ հիմա մենք տրվում ենք զվարճանքին, քննենք նաև հետևյալ հավանական դեպքերը:

Հրին խառնված ջուրը բարակ ու հոսուն է, քանի որ շարժվում և հոսում է հողի վրայով, ընդ որում փափուկ է, որովհետև իր նիստերը պակաս կայուն են հողի նիստերից և հեշտությամբ տեղի են տալիս: Բայց երբ հուրը օդի հետ միասին անջատվում են ջրից, սա իրենից դուրս եկող մարմինների ճնշման տակ դառնում է առավել համասեռ: Եթե շատ է սեղմվում հողից վեր, վերածվում է կարկուտի, իսկ եթե սեղմվում է հողի տակ՝ սառույցի: Եթե ճնշումն ավելի թույլ է և ջուրը սեղմվում է միայն կիսով չափ, հողից վեր այն վերածվում է ձյան, իսկ ցողը դառնում է այն, ինչը մենք կոչում ենք եղյամ:

Սակայն ջրի տեսակների մեծ մասը միախառնվելով հոսում է հողին աճող բույսերի միջով. դրանք կոչվում են հյութեր: Այդ խառնուրդներից գոյանում է մեծ բազմազանություն, և շատ տեսակներ մնում են անանուն: Սակայն չորսը, որ իրենց մեջ հուր ունեն, լինելով առանձնահատուկ՝ ստացել են իրենց անունները: Դրանցից առաջինը ջերմացնում է հողին և մարմինը. սա կոչվում է գինի: Երկրորդը հարթ է և ընդլայնում է տեսողությունը, ահա ինչու թվում է պայծառ, փայլուն, թափանցիկ և ունի ձիթայուղի տեսք. սրան են դասվում խեժը, գերչակի յուղը և հենց ձիթայուղը: Երրորդ տեսակն ընդլայնում է բերանի սեղմված խռոչները իրենց բնական չափերի և առաջ է բերում քաղցրի զգացում. այս տեսակը ստացել է մեղր ընդհանուր անվանումը: Չորրորդ տեսակը քայքայում է մարմինն այրոցքով և ունի փրփուրի տեսք. բոլոր հյութերի մեջ հենց սա կոչվեց ալկալի:

Հողի տեսակներից այն մեկը, որը ողողված է ջրով, վերածվում է քարե մարմնի հետևյալ եղանակով: Միախառնվող ջուրը միախառնման ժամանակ վար է իջնում և ստանում է օդի տեսք, իսկ վերածվելով օդի՝ քաշվում է իր տեղը: Սակայն նրա շուրջը չկա դատարկություն, և վերստին գոյացող օդը ճնշում է գործադրում շրջակա օդի վրա: Սա իր ծանրությամբ

սեղմուն և ուժեղ ճնշում է հողի նիստերը և մղում է դեպի այն տարածությունները, որոնցից դուրս էր եկել նոր օղը: Սեղմվելով օդի կողմից և դառնալով ջրակայուն՝ հողը վերածվում է քարի, որի առավել գեղեցիկ տեսակն ունի հավասար և համասեռ թափանցիկ մասեր, իսկ պակաս գեղեցիկ տեսակն

d օժտված է հակադիր հատկանիշներով:

Յողի այն տեսակը, որը հրի շնորհիվ արագորեն ազատվել է խոնավությունից և առավել չոր է նախորդից, կոչվում է կավ: Սակայն երբեմն խոնավությունը որոշ չափով պահպանվում է, և այդժամ գոյանում է հրով հալեցված հող, որը սառչելով վերածվում է սև քարի⁹¹: Կա ևս երկու տեսակ, որոնցից հեռացված է միախառնված ջրի մեծ մասը, սակայն հողի մասերը դրանց մեջ առավել բարակ են, աղի են, կիսով չափ քարացած և կարող են կործանվել ջրից: Առաջին տեսակը մաքրում է յուղի և հողի հետքերը. դա ալկալին է: Մյուս տեսակը աղն է, որը շատ լավ է ներդաշնակվում բերանի զգայությունների հետ

e և համարվում է աստվածահաճո մարմին⁹²:

Այդ երկու մարմինների համակցությունը, որ կործանվում է հրից, բայց ոչ ջրից, գոյանում է հետևյալ կերպ. հողի նիստերը չեն հալչում ո՛չ հրից, ո՛չ էլ ջրից, որովհետև սրանց մասերն ավելի փոքր են այդ նիստերում եղած դատարկ խորշերից և կարող են անցնել երկրի միջով առանց որևէ դժվարության և բռնության, այնպես որ չեն կործանում և հալեցնում հողը: Վերջինս, եթե սեղմված չէ բռնի, կարող է կործանվել միայն

61 ջրից, իսկ եթե սեղմված է, ապա միայն հրից: Ջուրը, եթե այն ուժով սեղմված է, կարող է կործանվել միայն հրից, իսկ եթե ավելի թույլ է սեղմված, երկու սեռերից՝ հրից և օդից: Օղը մուտք է գործում դատարկ տարածություններ, իսկ հուրը մաս եռանկյունիների մեջ: Բռնի սեղմված օղը ոչնչից չի կործանվում, այլ բաժանվում է տարրերի, իսկ եթե սեղմված չէ, կործանվում է միայն հրից:

b Յողից և ջրից բաղադրված մարմինները, քանի դեռ ջուրը լցնում է բռնի սեղմված հողի դատարկ խռռչները, ջրի մաս-

նիկները, որոնք գալիս են դոսից, չեն գտնում մուտքը, շրջապատում են հողը և չեն կարողանում տարրալուծել այն, իսկ հրի մասնիկները, տեղավորվելով ջրի մասնիկների արանքում, ներգործում են ջրի վրա, ինչպես հուրը՝ հողի. սրանք են բաղադրյալ մարմինների կործանման և հոսքի պատճառները: Այդ մարմինների մի մասը պակաս չափով է ջուր պարունակում, քան հողը. դա վերաբերում է ապակուն ազգակից բոլոր տեսակներին և այսպես կոչված հալչող քարերին: Մյուս մասը, որ ավելի շատ է ջուր պարունակում, վերաբերում է մոմերին և ծխացող անուշահոտություններին պատկանող բոլոր մարմիններին:

c

Մենք թերևս բավականաչափ ցույց տվեցինք այն տեսակները, որ առաջ են գալիս ֆիզուրների համադրություններից և փոխադարձ փոխակերպություններից, և այժմ հարկ է պարզել, թե որոնք են պատճառներն այն ներգործությունների, որ դրանք թողնում են մեզ վրա: Նախ՝ իրողություններին, որոնց մասին խոսում ենք, պետք է վերագրել այն, որ դրանք զգայելի են: Սակայն մենք դեռ չենք խոսել մսի և նրա տեսակին պատկանող մյուս բաների, ինչպես նաև հոգու մահկանացու հատվածի ծագման մասին: Ընդ որում դրանց շուրջ անկարելի է հիմնավորապես խորհրդածել առանց նկատի առնելու զգայական տպավորությունները և խոսել զգայությունների մասին զանց առնելով մարմինը և հոգու մահկանացու հատվածը: Չարկավոր է դրանցից մեկն ընդունել որպես հիմք, իսկ ավելի ուշ նորից վերադառնալ դրան: Որպեսզի դրանց ծագումից անցնենք այդ ծագումն առաջ բերող ներգործություններին, թո՛ղ մեզ համար հիմք լինի այն, ինչը վերաբերում է մարմնին և հոգուն:

d

Նախ քննենք, թե ինչու են հրի մասին ասում, որ այն տաք է: Քննության մեջ նկատի առնենք, որ հուրը սովորաբար կտրատում և քայքայում է մեր մարմինը: Որ հրի ազդեցությունը կտրատող է, կհամաձայնեն բոլորը: Մենք պետք է հիշենք դրա հատու նիստերի և սուր անկյունների, մասերի փոքրու-

e

62 թյան և շարժման արագության մասին, որոնց շնորհիվ հուրը ուժեղ, հատող և ամենաթափանց է, նաև նրա ձևերի ծագման մասին, որպեսզի հասկանանք, որ այդ բնությունը, ինչպես ոչ մի ուրիշ բնություն, կարող է թափանցել մեր մարմինների մեջ, կտրատել դրանք ամենափոքր մասերի՝ առաջ բերելով այն, ինչը մենք այժմ կոչում ենք «ջերմություն» և «հուր»:

Հակառակ [ներգործությունն] ակնհայտ է, սակայն իր հերթին սա չպիտի մնա առանց բացատրության: Երբ մարմինը շրջապատող հեղուկները, որ բաղկացած են ավելի մեծ մասերից, ներս են հոսում, ավելի փոքր մասերը դուրս են մղվում: Այդուհանդերձ նշված հեղուկները չեն բռնում դուրս մղված մասերի տեղը և սեղմում են մեր մեջ եղած հեղուկը, այնպես որ սա անհամասեռից և դյուրաշարժից վերածվում է համասեռի և անշարժի: Քանի որ դա տեղի է ունենում հակառակ իր բնու-

b թյան, իր բնությանը հավատարիմ՝ այդ հեղուկը պայքարի է բռնվում ընդդեմ հակադիրի: Այդ պայքարն ու ցնցումը մենք կոչում ենք «դող» և «սարսուռ», իսկ ամբողջ վիճակը, ինչպես նաև դրա պատճառը՝ «ցուրտ»:

Ամուր է կոչվում այն, ինչին ենթարկվում և տեղի է տալիս մեր մարմինը, իսկ փափուկ՝ այն, ինչը ենթարկվում է մեր մարմնին. այս երկու անվանումները որոշվում են փոխադարձ հարաբերակցությամբ: Ենթարկվող է այն, ինչը հիմնվում է փոքրի վրա, իսկ շատ ամուրը քառակուսի հիմքերի վրա հիմնված ամենաանասասան տեսակն է. նմանապես ամենաանասանն է նաև այն ամենը, որ հաղորդակից է մեծ ամրությանը:

c Ծանրի և թեթևի բնությունը լավագույնս կարելի է բացահայտել, եթե քննենք «վերև» և «ներքև» կոչվածը: Որ ի բնե գոյություն ունեն հակառակ դիրքեր, որոնք երկու մասի են կիսում Համայնը, այսինքն՝ «ներքևի», որ ձգում է մարմնավոր զանգված ունեցող ամեն բան, և «վերևի», ուր ամեն ինչ կարող է հասնել միայն հարկադրաբար, ճշմարիտ կարծիք չէ⁹³: Երկինքն ամբողջությամբ ունի գնդի տեսք, քանի որ դրա բո-

d լոր ծայրերը կենտրոնից հավասար հեռավորության վրա են և

ի բնե հավասարապես ծայրագույն են, միմչդեռ կենտրոնի առնչությամբ, որը յուրաքանչյուրի նկատմամբ նույն հեռավորության վրա է, պետք է մտածել, որ այն գտնվում է դրանց բոլորի դիմաց: Բայց եթե տիեզերքի բնությունն այդպիսին է, նշված կետերից ո՞ր մեկը կարելի է կոչել վերև և ներքև և չմեղադրվել բառերի անհարկի գործածության մեջ: Չէ՞ որ կենտրոնն իրականում ո՛չ ներքևում է, ո՛չ էլ վերևում, այլ՝ հենց մեջտեղում, իսկ գնդի մակերևույթը չի կարող կենտրոն լինել և չունի մաս, որը տարբեր է մյուսներից և ավելի մոտ է կենտրոնին, քան դրան հանդիպակաց մասերը: Եվ եթե իր բնությամբ տիեզերքն ամբողջովին միանման է, ի՞նչ հակադիր անուններ կարող ենք գտնել նրա համար, ընդ որում այնպիսի, որ մեր քննությունը շարունակի ներդաշնակ լինել: Եթե Համայնի կենտրոնում գտնվեր ամուր հավասարակշռված մարմին, այն չէր կարողանա շարժվել դեպի ծայրում եղած կետերից որևէ մեկը, որովհետև դրանց բոլորի նկատմամբ համանման հարաբերության մեջ է: Իսկ եթե որևէ մեկը շարժվեր դրա շուրջը, ամեն անգամ դառնալով ինքն իր հակոտնյան, նույն ճանապարհը կկոչվեր ինչպես «ներքև», այնպես էլ «վերև»⁹⁴: Քանի որ ամբողջը, համաձայն քիչ առաջ ասվածի, գնդաձև է, անխոհեմ կլիներ մի տեղը կոչել ներքև, իսկ մյուսը՝ վերև:

e

63

Որտեղի՞ց են այդ դեպքում հիշյալ անունները և ինչպե՞ս են դրանք այնքան սովորական դարձել մեզ համար, որ մենք, ելնելով նրանցից, երկու մասի բաժանեցինք ամբողջ երկինքը: Այդ հարցի շուրջ համաձայնության կգանք, եթե ընդունենք հետևյալ ենթադրությունը: Դիցուք, որևէ մեկը գտնվում է Համայնի այն մասում, ուր գերազանցապես շարունակ հավաքվող ու ավելացող հրի բնությունն է, և կարող է կանգնել այդտեղ, բաժանել հրի մասերը և դնել դրանք կշեռքի վրա, այնուհետև բարձրացնել կշեռքը և ուժով ներս մղել հուրը ոչ համասեռ օդի մեջ. ակնհայտ է, որ ավելի փոքր մասերը առավել հեշտ տեղի կտան, քան մեծերը: Երբ մի ուժը վեր է բարձրացնում երկու իր, փոքր իրը ավելի շատ է ենթարկվում հարկադրան-

b

c

- քին, իսկ մեծը՝ ավելի քիչ, այնպես որ մեծը կոչվում է ծանր և շարժվող դեպի վար, իսկ փոքրը՝ թեթև և շարժվող դեպի վեր: Նույնը տեղի ունի նաև մեր պարագայում, երբ գտնվում ենք Համայնի նշված տեղում: Եթե կանգնած ենք հողին և առանձնացնում ենք հողանման մասնիկները, իսկ երբեմն նաև հենց
- d հողը, որպեսզի իրենց բնությանը հակառակ բռնի մղենք դրանք ոչ համասեռ օդի մեջ, երկու տեսակներն էլ կծգտեն դեպի ազգակիցը: Եվ այդուհանդերձ, առավել փոքր մասերը, որ ավելի թեթև են մեծերից, կենթարկվեն հարկադրանքին և առաջինը մուտք կգործեն ոչ համասեռի մեջ: Հենց այդ պատճառով մենք կոչում ենք դրանք թեթև, և տեղը, ուր ստիպում ենք բարձրանալ՝ վերև, իսկ դրանց հակադիրը կոչում ենք ծանր ու ներքև: Այստեղ բազմազանություն կա, քանի որ տարբեր տեսակների կուտակումները զբաղեցնում են մեկը մյուսին հակադիր տեղեր: Քանզի այն, ինչը թեթև կամ ծանր, բարձր կամ ցածր է մի տեղում, համեմատվում է նրա հետ, ինչը թեթև և ծանր, բարձր և ցածր է մեկ ուրիշ, առաջինին հակադիր տեղում, այնպես որ դրանք կարող են հարաբերվել անուղղակիորեն և բոլորովին տարբեր լինել միմյանցից թե՛ ծագումով, թե՛ գոյությամբ: Սակայն մեկ բան հարկավոր է նկատի առնել դրանց բոլորի առնչությամբ. ծանրությունն է, որ ստիպում է յուրաքանչյուր իրի շարժվել դեպի ազգակից տեսակը, իսկ տեղը, որին ձգտում է մոտենալ սովյալ իրը, ներքևն է: Սրանց հակադիրը կրում է հակադիր անուններ: Այդպիսին են նշված վիճակների պատճառները:

Ինչ վերաբերում է հարթության և անհարթության որակներին, ամեն ոք կարող է տեսնել դրանք և բացատրել ուրիշին: Ամրությունը՝ միացած անհամասեռության հետ, տալիս է անհարթություն, իսկ համասեռությունը՝ միացած ամրության հետ, տալիս է հարթություն:

64 Ամբողջ մարմնի համար ընդհանուր ներգործություններից մեզ մնաց քննել ամենակարևորը՝ հաճույքի և ցավի պատճառը և այն, ինչը մարմնի մասերի միջոցով գրգռում է զգայություն-

ները՝ առաջ բերելով ցավ կամ հաճույք: Իսկ ամեն տեսակ ներգործությունների զգայելի և ոչ զգայելի պատճառները մենք կըմբռնենք, եթե վերհիշենք տարբերակումը, որը նախկինում կատարել ենք բնությանը դուրաշարժի և դանդաղաշարժի միջև: Ցանկալին գտնելու համար մենք պիտի առաջ շարժվենք **b** հենց այս ճանապարհով: Ի բնե դուրաշարժը տպավորվում է անգամ թույլ ներգործության շնորհիվ, քանի որ շրջանաձև տարածվում է՝ որոշ մասերից անցնելով մյուսներին, մինչև որ հասնելով բանական սկզբին՝ չի հաղորդում ներգործող իրի որակի մասին: Իսկ դժվարաշարժն, ընդհակառակը, լինելով հաստատուն, չի տարածվում շրջանաձև, այլ միայն կրում է ներգործությունը և չի շարժում իրեն մոտ գտնվողը: Ուստի, եթե առաջին ներգործությունը որոշ մասերից չի փոխանցվում մյուսներին, այն մնում է անշարժ, և կենդանի էակը ընդհանուր առմամբ մնում է առանց զգայության: Նույնը վերաբերում է նաև ոսկորներին, մազերին և մեր մարմնի հողեղեն մյուս **c** մասերին, մինչդեռ առաջին դեպքը վերաբերում էր տեսողությանն ու լսողությանը, քանզի դրանց մեջ առկա է հրի և օդի մեծ ուժ:

Հաճույքին և ցավին վերաբերողը հարկ է մտածել այսպես: Բնությանը հակառակ և բռնի սաստիկ ներգործությունը մեզ համար ցավազին է, իսկ վերադարձը բնական վիճակին՝ շատ հաճելի⁹⁵: Հանդարտ և քիչ-քիչ ներգործողը զգայելի չէ, այլա- **d** պես՝ հակառակն է: Հեշտորեն կատարվողը շատ զգայելի է, սակայն հաղորդակից չէ ո՛չ ցավին և ո՛չ էլ հաճույքին, ինչպես, օրինակ, տեսողական տպավորությունը, որը, ինչպես արդեն նշվեց, ցերեկով մեր մարմնի հետ սերտաճած տեսողական ճառագայթն է: Ո՛չ կտրվածքները, ո՛չ այրոցները, ո՛չ էլ մյուս ներգործությունները չեն առաջացնում ցավ, իսկ վերադարձը **e** նույն վիճակին՝ հաճույք, սակայն տեսողական տպավորությունը զուգորդվում է ամենից բովանդակալից և հստակ զգայություններով, անկախ այն բանից՝ ինքն է կրում ինչ-որ բանի ներգործությունը, թե հավելով ներգործում է: Չէ՞ որ նրա մասնատում-

ներն ու միավորումները բոլորովին էլ չեն ուղեկցվում հարկադրանքով: Ավելի մեծ մասերից կազմված մարմինները հազիվ են շարժվում, սակայն փոխանցում են շարժումը ողջ մարմնին՝ կրելով հաճույք և ցավ. ցավը՝ փոփոխության, իսկ հաճույքը՝ նախորդ վիճակին վերադառնալու դեպքում: Սակայն փոքր մասերը հեռանալով և պարպվելով, ինչը տեղի ունի աստիճանաբար, և լցվելով ուժգին և միանգամից՝ չեն զգում պարպումը, բայց զգում են լրումը և ցավ չեն պատճառում հոգու մահկանացու մասին, սակայն պատճառում են մեծ հաճույք, ինչի օրինակ են անուշահոտությունները: Երբ փոխակերպությունը սրընթաց է, իսկ վերադարձը նույն վիճակին՝ դանդաղ և աստիճանական, մենք գործ ունենք միանգամայն հակառակ վիճակների հետ: Դրա օրինակ կարող են ծառայել այրոցքներն ու մարմնական կտրվածքները:

Մարմնի վրա ընդհանուր ներգործությունների և դրանց առաջ բերած վիճակների անվանումների մասին գրեթե ամեն ինչ ասացինք: Այժմ փորձենք ըստ կարելիվույն ինչ-որ բան ասել վիճակների և դրանք հարուցած պատճառների վերաբերյալ մարմնի առանձին մասերի հարաբերությամբ:

Նախ մենք պետք է հնարավորինս պարզաբանենք այն, ինչը բաց թողեցինք հյութերի մասին մեր խոսքում, այն է՝ դրանց ներգործությունը լեզվի վրա: Ինչպես երևում է, այդ ներգործությունները, ինչպես և շատ ուրիշները, առաջ են գալիս որոշ կծկումների և ընդարձակումների արդյունքում, մինչդեռ մյուսները ավելի շատ կախված են անհարթությունից և հարթությունից: Դրոյի մասերը մուտք են գործում երակների մեջ, որոնք ասես լեզվի շոշափուկներն են և ձգվում են մինչև սիրտ, հպվում են խոնավ մարմնին և հեղվում նրա վրա, այնպես որ երակները սեղմվում և չորանում են⁹⁶: Եթե այդ մասերն անհարթ են, դրանց համը դառն է, իսկ եթե պակաս անհարթ են, տոխպ են: Երակները մաքրող նյութերը, որոնք ողողում են ամբողջ լեզուն, գործելով չափից ավելի ուժգին և վնասելով լեզվի բնությունը, օրինակ՝ հիմքերը, կոչվում են դառը:

Հիմքերից ավելի թույլ նյութերը, որոնք չափավոր են մաքրում e
լեզուն, աղի են, զուրկ են դառնության անհարթությունից և
թվում են ավելի հաճելի: Իսկ բերանի ջերմությանը հաղոր-
դակիցները և դրանից ջրիկացածները, որոնք տարածվում են
բերանի ողջ հարթությամբ, բռնկվելով այրում են այն, ինչից
ջերմացել են, և իրենց թեթևության շնորհիվ վեր են բարձրա-
նում դեպի գլխի զգայարանները և կտրում են իրենց հանդի-
պող ամեն բան: Ահա այս հատկությունների պատճառով
դրանք կոչվում են կծու: Իսկ երբ նույն այդ նյութերը քայքայ- 66
վում են փտումից և մուտք են գործում բարակ երակների մեջ,
այնտեղ գտնում են հողեղեն և օղեղեն մասերի համաչափու-
թյուն, այնպես որ շարժման մեջ են դնում դրանք և ստիպում
են միախառնվել ու փրփրել, և փրփրելով՝ ներխուժած մասերի
շուրջ կազմում են խոռոչներ: Իսկ խոնավությունը, որը մերթ
հողակերպ է, մերթ մաքուր, ամփոփում է օդը՝ կազմելով ջրա-
յին գնդեր, որոնց ներսում օդ է: Սրանց մի մասը, որ կազմված b
է մաքուր հեղուկից, թափանցիկ է. դրանք կոչվում են
պղպջակներ: Մյուս մասը հողակերպ է, ինչի արդյունքում դյու-
րաշարժ է և բարձրանում է վեր. սա մենք կոչում ենք եռք և
մաճառացում, իսկ այդ վիճակների պատճառը թթուն է:

Սակայն ներգործությունը, որ հակադիր է նշվածներին, ունի
մաս հակադիր ծագում: Երբ մուտք գործող հեղուկի կազմու- c
թյունը ազգակից է լեզվի բնությանը, այն ծածկում և հարթեց-
նում է խորդուբորդությունները և հավաքում կամ արծակում է
ամբնականորեն կուտակվածը՝ հնարավորինս կարգավորելով
այն համաձայն իր բնության: Եվ բռնի ներգործությունների դեմ
գործող այդ հակամիջոցը բոլորին էլ հաճելի և ցանկալի է,
ուստի կոչվում է քաղցր:

Սրա մասին այսքանը: Ինչ վերաբերում է ռունգերի հետ
կապված ներգործություններին, այստեղ չկան առանձին տե- d
սակներ: Բոլոր բույրերը իրենց տեսակով կիսատ են, որովհետև
նրանց հատուկ չէ այնպիսի ձև, որը համաչափորեն կապված
լիներ որևէ բույրի հետ: Համապատասխան երակները չափա-

զանց նեղ են հողի և ջրի [մասնիկների] համար, բայց չափազանց լայն են հրի և օդի համար, ահա ինչու ոչ ոք երբևէ չի զգացել դրանցից որևէ մեկի հոտը, այլ՝ միայն դրանց խոնավացման, փտման, հալոցքի կամ գոլորշիացման հոտերը:

e Սրանք գոյանում են միջանկյալ վիճակներում, երբ ջուրը փոխվում է օդի, կամ օդը՝ ջրի: Բոլոր բույրերը կա՛մ գոլորշիներ են, կա՛մ էլ մառախուղ, որովհետև մառախուղը կեսճանապարհին է օդից դեպի ջուրը, իսկ գոլորշին՝ կեսճանապարհին ջրից դեպի օդը: Ահա ինչու դրանք ավելի նուրբ են ջրից, բայց ավելի կոպիտ են օդից: Սա երևում է, երբ ուժով ներշունչ են կատարում որևէ արգելքի միջով: Այդժամ ոչ մի ուղեկցող բույր չի անցնում ներս, և օդը մուտք է գործում առանց որևէ հոտի:

67 Բույրերի բազմազանությունը մնում է անանուն, քանի որ այն պարզ ձևերի մեծ բազմություն չէ, այլ միայն երկու տեսակ՝ հաճելի և տհաճ: Վերջինը կոպիտ և բռնի է ներգործում ողջ խոռոչի վրա, որը ծոծրակից ձգվում է մինչև պորտը, իսկ առաջինը փափկացնում է խոռոչը և կրկին հաճելիորեն վերադարձնում բնական վիճակին:

Սեր զգայության երրորդ տեսակը լսողությունն է, և մենք պիտի խոսենք նաև դրա ստացած ներգործությունների պատճառների մասին: Ընդհանուր առմամբ հնչյունը օդի հարվածն է, որը ականջների միջով ուղղվում է ուղեղին ու արյանը և հասնում հոգուն, իսկ դրա շարժումը, որ սկիզբ է առնում գլխից և ավարտվում է լյարդի մոտ, լսողությունն է: Եթե այն արագ է, ծայնը սուր է, եթե ավելի դանդաղ է, ծայնը ցածր է:

b Ընդհանուր առմամբ հնչյունը օդի հարվածն է, որը ականջների միջով ուղղվում է ուղեղին ու արյանը և հասնում հոգուն, իսկ դրա շարժումը, որ սկիզբ է առնում գլխից և ավարտվում է լյարդի մոտ, լսողությունն է: Եթե այն արագ է, ծայնը սուր է, եթե ավելի դանդաղ է, ծայնը ցածր է:

c Հավասարաչափ շարժման դեպքում ծայնը միահունչ է և հաճելի, իսկ ոչ հավասարաչափ շարժման դեպքում՝ ցածր: Ինչ վերաբերում է ծայնակցումներին, ապա մենք ստիպված ենք խոսել դրանց մասին ավելի ուշ:

Սեզ մնացել է զգայարանների չորրորդ տեսակը, որը մենք պիտի հետևողականորեն վերլուծենք՝ տեսնելու համար դրա ներքին բազմազանությունը: Այդ բազմազանությունը մենք կոչում ենք գույն: Դա բոցն է, որ արծակում է ամեն մարմին և

որը կազմված է տեսողության մեր զգայությանը համաչափ մասնիկներից: Տեսողության պատճառների մասին մենք արդեն խոսել ենք, այնպես որ հիմա ավելի շատ տեղին կլինի էական ինչ-որ բան ասել նաև գույների վերաբերյալ: Մասնիկները, որոնք արձակվում են ուրիշ մարմիններից, բախվում են տեսողական ճառագայթին և կա՛ն փոքր են ճառագայթի մասնիկներից, կա՛ն մեծ, կա՛ն էլ հավասար են դրանց: Տեսողական ճառագայթի մասնիկներին հավասարները զգայելի չեն, և մենք կոչում ենք դրանք թափանցիկ: Իսկ մեծերը և փոքրերը ընդլայնում և նեղացնում են տեսողական ճառագայթը, և դրանց ներգործությունը համանման է մեր մարմնի վրա տաք և սառը մասնիկների ունեցած ազդեցությանը, ինչպես նաև մեր լեզվի վրա տտիպի և այրողի (մենք ասում ենք՝ կծվի) ներգործությանը: Դրանք են սպիտակը և սևը, որոնք առաջ են գալիս նախորդ տպավորություններից տարբեր տեղում և թվում են դրանցից տարբեր, թեպետ առաջացման պատճառները նույնն են: Մենք այդպես էլ կանվանենք դրանք. սպիտակն այն է, ինչն ընդլայնում է տեսողական ճառագայթը, իսկ դրա հակադիրը սևն է: Երբ հուրն ավելի ուժեղ է և այլ կարգի, հարվածում է տեսողական ճառագայթին և թափանցում դրա միջով մինչև աչքերը, ուժով բացում և փափկացնում է աչքերի անցումները, դուրս հոսեցնելով այնտեղ հավաքված հուրն ու ջուրը, որը մենք կոչում ենք արտասուք: Ընդառաջ շարժվող հրե մարմինները բախվում են միմյանց. առաջին հուրը դուրս է հորդում աչքից, իսկ մյուսը մուտք է գործում աչք և հանգչում այնտեղ խոնավության մեջ: Նրանց բախումից առաջ են գալիս գույներ, որոնք մենք կոչում ենք գունախաղ, իսկ դրա հիմքում ընկած վիճակը՝ պայծառություն և փայլ:

Կա նաև հրի տեսակ, որը նախորդ երկուսի միջանկյալ տարբերակն է. այն հասնում է աչքերի մեջ եղած հեղուկին և միախառնվում նրա հետ: Չի փայլում, սակայն իրեն միախառնված հեղուկի միջով երևում է որպես արնագույն, որը մենք կոչում ենք կարմիր: Միախառնվելով սպիտակի և կարմիրի

հետ՝ փայլը ծնուն է դեղին գույն: Սակայն նշված խառնուրդների համաչափությունները իմաստ չունի բացատրել անգամ այն դեպքում, երբ դա որևէ մեկին հայտնի է, որովհետև այստեղ անհնար է տալ անհրաժեշտ, ճշմարտանման կամ հավանական փաստարկներ: Կարմիրը, խառնվելով սևի և սպիտակի հետ, դառնում է ծիրանի, կամ էլ մանուշակագույն, եթե խառնված մասերն այրված են, իսկ սևը խառնուրդի մեջ շատ է: Դեղինը, խառնվելով մոխրագույնի հետ, տալիս է շագանակագույն, իսկ մոխրագույնը սպիտակի և սևի խառնուրդն է: Դեղինը, խառնվելով սպիտակի հետ, վերածվում է օքրայի: Իսկ երբ սպիտակը միանում է փայլի հետ և պառկում մուգ սև հարթության վրա, առաջ է բերում կապույտը: Կապույտի և սպիտակի խառնուրդից ծնվում է երկնագույնը, իսկ շագանակագույնի և սևի խառնուրդից՝ կանաչը: Ասվածից պարզ է դառնում, թե ինչ խառնուրդների կարող ենք հանգեցնել մյուս գույները՝ պահպանելով քննության ճշմարտանմանությունը: Բայց եթե որևէ մեկը փորձեր գործնականում հետազոտել դա, կապացուցեր մարդկային և աստվածային բնությունների տարբերության իր չիմացությունը, քանզի աստված ունի բազումը միավորելու և դարձյալ մեկը բազումի տարրալուծելու իմացություն և ուժ, սակայն չկա մարդ, որն ի վիճակի լինի դա անել:

- Բոլոր այս երևույթները, որ այն ժամանակ ծագել են անհրաժեշտությունից, իր ձեռքն առավ գոյացությունների մեջ ամենագեղեցիկի և ամենահրաշալիի արարիչը՝ ստեղծելու համար ինքնաբավ և կատարելագույն աստծուն, օգտագործելով այդ երևույթներին հատուկ պատճառները, սակայն ինքը ուղղորդելով բոլոր գոյացությունները: Հետևաբար հարկ է տարբերել պատճառների երկու տեսակ՝ անհրաժեշտ և աստվածային, և մեր բնության կարողությունների չափով ամենուր փնտրել աստվածայինները հանուն երանելի կյանքի, իսկ անհրաժեշտ պատճառներով պիտի զբաղվենք հանուն երկրորդ 69 պատճառների՝ հասկանալով, որ առանց դրանց մենք չենք

կարող ո՛չ հասկանալ, ո՛չ էլ ինչ-որ կերպ հաղորդակից դառնալ այն հարցերին, որոնցով զբաղվում ենք:

Այժմ, երբ պատճառները դրված են մեր առջև ըստ տեսակների, այնպես, ինչպես ատաղձագործի առջև ըստ տեսակների դրված է փայտանյութը, մենք պիտի կառուցենք հետագա խորհրդածությունը: Բայց նախ հակիրճ կերպով անդրադառնանք խորհրդածության սկզբին և արագորեն կրկնենք մինչ այժմ անցած ճանապարհը և վերջում փորձենք պատշաճ ամփոփում տալ մեր խոսքին:

Ինչպես ասացինք սկզբում, բոլոր իրերը անկարգ վիճակում էին, և միայն աստված ներդաշնակեցրեց դրանցից յուրաքանչյուրը ինքն իր և մյուսների հետ այն չափով, որ չափով դրանք կարող էին ներդաշնակ և համաչափ լինել: Չէ՞ որ մինչ այդ նրանք հաղորդակից չէին նման բաներին, և եթե անգամ հաղորդակից էին, ապա պատահական կերպով, այնպես որ անհնար էր կոչել դրանք անուններով, որոնցով հիմա կոչում ենք **c** հուրը, ջուրը և մնացյալ բաները: Աստված առաջին անգամ կարգավորեց այդ ամենը, իսկ այնուհետև դրանից կառուցեց Չամայնը, որը կենդանի էակ է և իր մեջ բովանդակում է բոլոր կենդանի էակներին՝ մահկանացու և անմահ: Աստվածային էակներին ծնեց ինքը արարիչը, իսկ մահկանացուների ծնունդը թողեց նրանց, ում ինքն էր սերել: Եվ նրանք, նմանակելով արարչին, վերցրին հոգու անմահ սկզբունքը և զետեղեցին մահկանացու մարմնի մեջ՝ ամբողջ մարմինը դարձնելով հոգու **d** կառք և բնակեցնելով մարմնի մեջ հոգու մեկ ուրիշ մահկանացու տեսակ, որն ունի վտանգավոր և անհրաժեշտ վիճակներ. նախ հաճույքը՝ չարիքի այդ մեծ խայծը, այնուհետև ցավը, որ ստիպում է մեզ փախչել բարիքից, — երկու անխոհեմ խորհրդականների, որոնք են հանդգնությունը և վախը, և վերջապես՝ անզիջում ցասումը և դյուրահավատ հույսը: Այդ ամենը միախառնելով բանականությունից զուրկ զգայությանը և ամեն ինչի պատրաստ սիրուն՝ նրանք, հետևելով անհրաժեշտությանը, կազմեցին հոգու մահկանացու տեսակը: Նրանք վախենում

- էին պղծել աստվածային բնությունը, ինչի անհրաժեշտությունը ամեննհին չկար, և այդ պատճառով մահկանացու հոգին բնակեցրին մարմնի ուրիշ մասում: Իսկ գլխի և կրծքի միջև սահ-
- e** ման և կապ ստեղծելու համար այդ մասում տեղադրեցին վիզը, որպեսզի դրանք առանձին լինեն: Կրծքի և այսպես կոչված իրանի մեջ զետեղեցին հոգու մահկանացու տեսակը: Եվ որովհետև հոգու մի տեսակը բնությամբ ավելի լավն էր, իսկ մյուսը՝ ավելի վատը, նրանք կիսեցին իրանի խոռոչը՝ ասես բաժանելով տունը կանանց և տղամարդկանց հատվածների և մեջտեղում որպես պաշտպանական միջոց տեղադրելով ստո-
- 70** ծանին: Հոգու այն մասը, որ հաղորդակից է արիությանը, ոգուն և սիրում է հաղթանակը, նրանք մոտեցրին գլխին և տեղադրեցին ստոծանու և պարանոցի մեջտեղում, որպեսզի վերջինս ականջալուր լինի բանականությանը և ուժով իրեն ենթարկի տենչանքների սեռը, հենց որ սրանք հրաժարվեն կամավոր լսել ակրոպոլիսի բարձունքից եկող հրամանն ու խոսքը: Իսկ
- b** սրտին՝ երակների և բուրբ անդամներով ուժգին հոսող արյան այդ աղբյուրին, նրանք հատկացրին պահապանի տեղը. ամեն անգամ, երբ ցասումը գլուխ բարձրացնի, բանականությունից լուր առնելով ինչ-որ անարդարության մասին, որ գալիս է դրսից կամ ներքին տենչանքներից, արագորեն բուրբ նեղ անցուղիներով զգայարաններին կհասնեն հրահանգներ և սպառնալիքներ, որպեսզի դրանք դառնան հնազանդ և ենթարկվեն
- c** լավագույն սկզբունքի իշխանությանը: Սակայն աստվածները նախապես գիտեին, որ սիրտը վտանգի սպասման և կրքերի շիկացման պահին ուժեղ բաբախելու է և որ դրա հիմքում հուրն է. սրտին օգնելու համար նրանք աճեցրին թոքերի մի տեսակ, որը նախ փափուկ և անարյուն է և, բացի այդ, սպունգի պես խոռոչներ ունի և ընդունելով օդն ու հեղուկը՝ հանգիստ և զովություն է բերում թե՛ պահին: Այդ նպատակով նրանք շնչուղիներ բացեցին թոքերի համար և ասես բարձերով շրջապատեցին սիրտը, որպեսզի ամեն անգամ, երբ կրքերը շիկանան, նա խլացնի հարվածները և զովանա, տառա-

պանքը պակասի, իսկ ցասունը սանձող բանականությանը նրա ցուցաբերած օգնությունն աճի:

Հոգու այն մասը, որը հակում ունի ուտելիքի, խմիչքի և այն ամենի հանդեպ, ինչի կարիքը ի բնե զգում է մարմինը, նրանք տեղադրեցին ստոծանու և պորտի միջև՝ դարձնելով ամբողջ այդ հատվածը մարմնի սնուցման տեղ: Հոգու այդ մասը նրանք շղթայեցին, ասես վայրի գազանի, որին ստիպված են պահպանել և սնել, քանի որ պիտի առաջ գար մահկանացու սեռը: Նրանք բնակեցրին այդ գազանին⁹⁷ սնուցման տեղի մոտակայքում, բանական մասից հեռու, որպեսզի գազանը նվազագույն անհանգստացնի նրան իր աղմուկով ու ոռնոցով և որպեսզի այդ մասը կարողանա լռության մեջ վճիռներ կայացնել ինչպես մարմնի բոլոր մասերի համար միասին վերցրած, այնպես էլ դրանցից յուրաքանչյուրի համար. ահա թե ինչու այդպես կարգաբերեցին մարմինը: Նրանք գիտեին, որ գազանը չի հասկանա բանականությանը, և եթե անգամ ինչոր բան հասնի նրան զգայության միջոցով, նրան հատուկ չէ այդ մասին հոգ տանելու ունակությունը: Նա գիշեր-ցերեկ տարված է պատրանքներով և տեսիլներով: Եվ աստված նրա դեմն առնելու համար ստեղծեց լյարդի տեսակը և տեղադրեց գազանի բնակարանում՝ անելով այնպես, որ լյարդը լինի խիտ, ողորկ, փայլուն, քաղցր և միաժամանակ դառը, որպեսզի խելքից եկող մտավոր գործունեությունը արտացոլվի լյարդի վրա և սա, ինչպես հայելին, տեսիլներ ստեղծի և վախեցնի գազանին, իսկ երբ մտքերը հասնեն լյարդի դառը մասին և մոտենան դաժան սպառնալիքներով, տարածեն դրանք լյարդով մեկ՝ առաջ բերելով լեղիի գույնը և դարձնելով լյարդը կոշտ և կնճռոտ: Մտքերի այդ գործունեությունը նաև դուրս է բերում լյարդը ճիշտ վիճակից և ծռմռում, սեղմում է և փակում՝ առաջ բերելով ցավ ու սրտխառնոց: Իսկ երբ մտածողությունից փչում է հնազանդության շունչը, լյարդի վրա գոյանում են միանգամայն հակառակ տեսիլներ, և այդ շունչը ո՛չ անհանգստացնում է լյարդի դառը մասին, ո՛չ էլ դիպչում է իրեն հակադիր այդ

բնությանը, այլ մոտենում է լարդին բնորոշ քաղցրությանը, որպեսզի ուղղի, հարթեցնի և ազատի դրա բոլոր մասերը: Այդ-
d կերպ լարդի շուրջ տեղակայված հոգու մասը կլինի լուսավորված և զվարթ, իսկ գիշերը՝ հանգիստ, մարգարեանալով երագում, քանզի այդժամ հաղորդակից չէ բանականությանը և մտածողությանը:

Քանզի մեզ կերտած աստվածները հիշում էին իրենց հոր պատվիրանը, որով մահկանացուների ցեղը պիտի ստեղծվեր հնարավորինս կատարյալ, և դա իրագործելու համար նրանք մեր միջի վատագույնը, որպեսզի սա նույնպես առնչվի ճշմարտությանը, օժտեցին գուշակության գործարանով⁹⁸: Որ աստված գուշակությամբ է օժտել մարդկային խելացնորությունը, բավարար չափով ապացուցվում է հետևյալ կերպ. բանական սթափ վիճակում ոչ ոք հաղորդակից չէ ոգեշունչ և ճշմարիտ գուշակությանը, այլ՝ միայն երբ բանականությունը կապված է քնի, հիվանդության կամ որևէ ներշնչանքի հետ⁹⁹: Իսկ սթափ բանականությամբ մարդը պետք է վերհիշի և վերականգնի երագում կամ արթուն ժամանակ գուշակող և ներշնչվող այդ բնության ասածը, վերլուծի բոլոր այդ տեսիլները բանականությամբ և տեսնի՝ ինչ են դրանք նշանակում, լավն են արդյոք գուշակում, թե վատթարը, վերաբերում են գալիքին, անցյալին, 72 թե ներկային: Սեփական տեսիլների և խոսքերի մասին դատելը ցնորվածի և ցնորքի մեջ գտնվողի գործը չէ, և ճշմարիտ է հին ասույթը, թե միայն խոհենը կարող է հասկանալ իր արածը և ինքն իրեն¹⁰⁰: Այստեղից էլ օրենքը, համաձայն որի ոգեշունչ գուշակությունների մասին դատում է մարգարեների դասը: Ոմանք նրանց էլ են կոչում գուշակներ, սակայն չիմացությունից, քանի որ սրանք միայն մեկնում են այդ առեղծվածները, ասույթներն ու նշանները և պիտի արդարև կոչվեն ոչ թե մարգարեներ, այլ գուշակների մեկնիչներ:

Լյարդի բնությունն ու դիրքը այդպիսին է նշված պատճառներով. դա այդպես է հանուն գուշակության: Քանի դեռ մարդն ապրում է, լարդը տալիս է հստակ նշաններ, իսկ երբ կյանքը

հեռանում է, լյարդը դառնում է կույր, նրա գուշակությունները՝
չափազանց աղոտ ինչ-որ բան հստակորեն նշելու համար:

Լյարդի հարևանությամբ, նրանից ձախ գտնվող անդամը **c**
դրված է այդտեղ հանուն լյարդի, որպեսզի փայլ և մաքրու-
թյուն հաղորդի նրան, ինչպես սպունգը, որը միշտ պատրաստ
դրված է հայելու մոտ: Եթե մարմնի հիվանդության հետևան-
քով առաջացած ինչ-ինչ անմաքրություններ հավաքվում են
լյարդի շուրջը, դրանք հեռացնում է փայծաղը՝ առնելով դրանք
իր դատարկ և արնագուրկ խոռոչների մեջ: Լցվելով այդ ան-
մաքուր նյութերով՝ վերջինս մեծանում և ուռչում է, իսկ երբ **d**
մարմինը դարձյալ մաքրվում է, վերադառնում է նախկին չա-
փերին:

Ինչ վերաբերում է հոգուն, նրա մահկանացու և աստվա-
ծային մասերին և այն բանին, թե որտեղ և ինչու է դրված
դրանցից յուրաքանչյուրը, հաստատել, որ մեր ասածը ճշմար-
տություն է, մենք կարող ենք միայն աստծո թույլտվությամբ:
Մինչդեռ մեր ասածի ճշմարտամամությունը հիմա էլ կարող
ենք հաստատել, մանավանդ հաշվի առնելով այն, ինչը դեռ
պիտի ասենք: Ասենք ուրեմն:

Հաջորդ հարցը կքննենք նույն եղանակով: Իսկ հարցը հե-
տևյալն է. ինչպե՞ս են գոյացել մարմնի մյուս մասերը: Դրանց
կառուցվածքը լավագույնս կարելի է բացատրել մտածելով
այսպես: Մեր սեռը ստեղծողները գիտեին, թե որքան անզուսպ
ենք լինելու խմիչքի և ուտելիքի նկատմամբ և որ մենք չափից **e**
և անհրաժեշտությունից ավելի կօգտագործենք դրանք: Որպես-
զի հիվանդությունները չկործանեն մեր սեռը և տակավին
անկատար մահկանացուները չկորչեն, կերակուրի և խմիչքի
ավելցուկի տեղավորման համար նրանք շրջահայաց կերպով
ստեղծեցին այն, ինչը հիմա մենք կոչում ենք որովայն, իսկ
դրա ներսում դրեցին պարուրածն աղիքները, որպեսզի սնունդը
արագորեն չլքի մարմինը, ստիպելով նրան նորից սնունդ **73**
պահանջել ու լինել անհագուրդ, և որկրամոլությունը ողջ
մարդկային ցեղը չթողնի առանց փիլիսոփայության ու Մուսա-

ների և չխանգարի մեզ անսալ մեր մեջ եղած ամենաաստվածայինին:

- Իսկ ոսկորների, մկանների և նման բնություն ունեցող մյուս բաների մասին պետք է ասել հետևյալը. այդ ամենի սկիզբը ուղեղի ծնունդն է: Հենց ուղեղի մեջ են հոգին մարմնին կապող կյանքի շղթաները, այստեղ են մահկանացու ցեղի արմատները: Սակայն ինքը ուղեղը գոյացել է մեկ ուրիշ բանից: Նախասկզբնական բոլոր եռանկյունիներից աստված ընտրեց ամենից ուղիղներն ու հավասարները, որոնք կարող էին ամենից մաքուր ձևով ներկայացնել հուրը և ջուրը, օդը և հողը: Այնուհետև առանձնացնելով յուրաքանչյուրն իր սեռից՝ խառնեց դրանք, պատրաստելով ընդհանուր սերմ բոլոր մահկանացու սեռերի համար, և ստեղծեց դրանից ուղեղը, ապա նրա մեջ տնկելով հոգիների բոլոր սեռերը՝ ի սկզբանե բաժանեց ուղեղը այնքան ձևերի, որ դրանք իրենց քանակով և բնությամբ համապատասխանեն նշված սեռերին: Եվ ուղեղի այն մասը, որը ասես արտ, պիտի ընդուներ աստվածայինի սերմը, նա բոլոր կողմերից կոր դարձրեց և կոչեց գլխուղեղ՝ նախատեսելով, որ յուրաքանչյուր կենդանի էակի արարման վերջում գլխուղեղը ամփոփող անոթը պիտի դառնա նրա գլուխը: Իսկ մյուս մասը, որ պիտի ստանար հոգու մնացյալ մահկանացու մասը, նա բաժանեց կլորավուն և միաժամանակ երկարավուն մարմինների՝ այդ ամբողջը կոչելով ընդհանրապես ուղեղ: Այդ մարմիններից, օգտագործելով դրանք որպես խարիսխներ, նա շղթաներ ձգեց և ամրացրեց ամբողջ հոգին, իսկ դրա շուրջն արդեն կարգավորեց մեր մարմինը, նախ ամուր ոսկրապատելով ամբողջ ուղեղը:

- Իսկ ոսկորը նա ստեղծեց այսպես. մաղված մաքուր և հարթ հողը նա խառնեց և խոնավացրեց ուղեղով, դրեց այն հրի մեջ, թաթախեց ջրում, նորից դրեց հրի և նորից թաթախեց ջրի մեջ: Այնուհետև մի քանի անգամ կրկնելով գործողությունը՝ երկուսի նկատմամբ էլ անխոցելի դարձրեց այն: Նա օգտագործեց հողը, որպեսզի ոսկրե գունդ ստեղծի գլխուղեղի համար՝ թող-

մեկով այդ գնդի մեջ մեկ մուտք: Ծոծրակի և ողնուղեղի համար նա միևնույն խառնուրդից ստեղծեց ողներ, ամրացրեց դրանք իրար, ինչպես դռան հանգույցները, և տեղադրեց ողջ իրանի երկայնքով՝ սկսելով գլխից: Այդպես ողջ սերմը նա փակեց քարանձան պատվարով, որի ներսում տեղադրեց հողերը և օգտագործեց Ուրիշի միջնորդավորող ուժը, որպեսզի կարողանա ապահովել դրանց շարժունությունն ու ճկունությունը: Այնուհետև, տեսնելով, որ ոսկորի բնությունը չափից ավելի ամուր և անճկելի է, իսկ ուժեղ տաքացման և սառեցման դեպքում չի խուսափի փտումից և իր ներսում եղած սերմի քայքայումից, ստեղծեց ջլերի և մսի տեսակը, որպեսզի ջլերը, միմյանց կապելով բոլոր անդամները, իրենց կծկումներով և ձգումներով ստիպեն մարմնին ծավել և բացվել: Միսը կոչված էր պաշտպանելու տաքությունից, ցրտից և հարվածներից, ինչպես թաղիքե բարձր, որն իր փափկությամբ և առածակամությամբ չեզոքացնում է մարմինների ճնշումը: Իր ներսում այն ունի տաք խոնավություն, որն ամռանը դուրս է գալիս քրտինքի ձևով և գոլորշիանում է, հաճելիորեն հովացնելով ամբողջ մարմինը, իսկ ձմռանը իր ներսի հրով համաչափորեն հեռացնում է դրսից եկող և մարմնով մեկ տարածվող ցուրտը: Սա էր կերտողի մտահոգացումը: Նա համաչափորեն միախառնեց ջուրը, հուրը, հողը, իսկ այնուհետև հունցեց դրանք կծու և աղի մերանով՝ ստեղծելով փափուկ և հյութեղ միսը: Իսկ ջլերի բնությունը նա ստացավ միացնելով իրար ոսկորը և դեռ չմերված միսը և այդ միջանկյալ խառնուրդին հաղորդեց դեղին գույն: Ահա ինչու ջլերը դարձան ավելի կոպիտ և ավելի ամուր, քան միսը, սակայն ավելի փափուկ ու խոնավ, քան ոսկորը: Ջլերով աստված պատեց ոսկորներն ու ուղեղը՝ կապակցելով դրանք ջլերով, իսկ վրայից ծածկելով այդ ամենը մսով:

Ամենից հոգեղեն ոսկորները¹⁰¹ նա ծածկեց համեմատաբար քիչ մսով, իսկ նվազ հոգեղեն ոսկորները պատեց մսի հաստ և ամուր շերտով: Ոսկորների միացումների շուրջ, երբ բանա-

- կանությունը ուրիշ որևէ բան չէր պահանջում, նա աճեցնում էր մսի բարակ շերտ, որպեսզի այն չդժվարացնի հողերի ծալվելը, առաջ չբերի անշարժություն և որպեսզի մկանների բազմությունն ու խտությունը, երբ դրանք միահյուսվում և կոպտանում են, չբթացնեն զգայությունը և հետևաբար չառաջացնեն մոռացկոտություն և տկարամտություն: Ահա ինչու ազդրերի, սրունքների, կոնքերի, ուսերի, արմունկների և մյուս բոլոր ոսկորները, որոնք զուրկ են հողավորումներից, իրենց մեջ քիչ հոգի ունեն և զուրկ են բանականությունից, ամբողջությամբ պատված են մսով, իսկ բանականությամբ օժտվածը պատված է մսով պակաս չափով, եթե հենց այդ միսը զգայությունների կրող չէ. այդպիսին է, օրինակ լեզուն: Սակայն մեծ մասամբ ամեն ինչ ստեղծված է վերը նկարագրված ձևով, քանի որ անհրաժեշտությամբ առաջ եկած և զարգացած բնության մեջ ամուր ոսկորը և առատ միսը չեն կարող գոյակցել սուր զգայության հետ: Եթե գոյակցեին, գլխի կազմվածքը առավելագույնս օժտված կլիներ այդ ամենով, և մարդկային ցեղը, ունենալով այդքան մտտ, ջլոտ և ամուր գլուխ, կստանար երկու, նույնիսկ մի քանի անգամ ավելի երկար, առողջ և տառապանքներից զերծ կյանք, քան այն, որ սահմանված է նրան այժմ: Երբ մեր ծննդյան հեղինակները մտորում էին՝ տալ մեր ցեղին առավել երկարակեցություն, բայց պակաս կատարելություն, թե՞ հակառակը՝ մեզ դարձնել պակաս երկարակյաց, սակայն առավել կատարյալ, միաձայն որոշեցին, որ ամեն ոք առավել կարճ, սակայն լիառատ կյանքը կնախընտրի առավել երկար, բայց վատթար կյանքից: Գլուխը նրանք ծածկեցին փխրուն ոսկորով, իսկ միս և ջլեր, քանի որ այստեղ չկան հողեր, չավելացրին: Ահա ինչու գլուխը յուրաքանչյուր տղամարդու ամենազգայուն, ամենաբանական, բայց նաև ամենաթույլ մասն է:

Նույն պատճառով աստված ամրացրեց ջլերը գլխի ստորին մասին՝ միակերպ պարուրելով դրանցով պարանոցը և միացնելով ծնոտների ծայրերին դեմքի ներքևում: Մնացած ջլերը նա

բաշխեց մյուս բոլոր անդամների միջև՝ մի հողը միացնելով մյուսին:

Իսկ բերանը օժտեց ատամներով, լեզվով և շրթունքներով՝ այդ ամենը անելով հանուն անհրաժեշտի և լավագույնի. մուտքը ստեղծեց հանուն անհրաժեշտի, իսկ ելքը՝ լավագույնի: Չէ՞ որ այն ամենը, որ դրսից մտնելով սնում է մարմինը, անհրաժեշտ է, իսկ դուրս եկող խոսքը, որ ծառայում է բանականությանը, բոլոր հոսքերից ամենագեղեցիկն է և լավագույնը:

Սակայն գլուխը անհնար էր թողնել միայն ոսկրե պատյանի մեջ տարվա փոփոխություններին դեմառդեմ, ինչպես որ անհնար էր թույլ տալ, որ բթամիտ և անզգա դառնա մսի մեծ զանգվածի պատճառով: Մսային բնության մի մեծ շերտ, որը դեռ չէր չորացել, առանձնացվեց. այժմ մենք դա կաշի ենք կոչում: Շնորհիվ գլխուղեղում եղած խոնավության՝ այդ կաշին շարունակում էր աճել և շրջապատում էր ամբողջ գլուխը, իսկ խոնավությունը, վեր բարձրանալով կարերի միջով, ոռոգում էր այն և ձգում դեպի ծոծրակը՝ հավաքելով ու հանգույց կապելով այնտեղ: Ինչ վերաբերում է կարերին, դրանց տեսակների բազմազանությունը պայմանավորված է հոգու շրջապատությունների ուժով և սննդով: Եթե այս երկուսի պայքարը բուռն է, կարերի քանակն ավելի մեծ է, իսկ եթե թույլ է, կարերի քանակը փոքր է: Ամբողջ կաշին աստվածությունը շուրջբոլոր ծակծկեց հրով, և երբ առաջացած անցքերից դուրս էր գալիս հեղուկը, անխառն և տաք մասը գոլորշիանում էր, իսկ խառնուրդը, որ բաղկացած էր նույն նյութերից, ինչ կաշին, թեպետ բարձրանում էր դեպի վեր, ձգվում էր երկարությամբ՝ բարակելով գոյացած անցքի աստիճան, սակայն դանդաղկոտության պատճառով դրսի օդի ճնշման տակ ետ էր մղվում և արմատ էր գցում կաշվի մեջ: Ահա այսպես կաշվի մեջ գոյացավ մազերի սեռը, որն իր գոտիակերպ բնությամբ ազգակից է կաշվին, սակայն ավելի կոպիտ ու ամուր է, և ցրտի ճնշման տակ կաշվից առանձնացած յուրաքանչյուր մազ իր հերթին սեղմվում է:

e

76

b

c

Արարիչը, այդքան բրդոտ ստեղծելով մեր գլուխը, առաջնորդվել է նշված պատճառներով և միտք է ունեցել, որ այդ ծածկույթը մսի փոխարեն ապահովություն տա ուղեղին, ստվերում պահելով ամռանը և պաշտպանելով ծմռանը՝ առանց խոչընդոտելու ուղեղի զգայունությանը:

d

Ինչ վերաբերում է մատների ջլերի, կաշվի և ոսկորի միախուսումներին, ապա այդ երեքի խառնուրդից, երբ սա չորացավ, գոյացավ կոպիտ կաշին: Սրանք էին կաշվի ստեղծման հարակից պատճառները, իսկ բուն պատճառը միտքն էր ապագայում ստեղծվելիք էակների մասին: Քանի որ մեզ ստեղծողները, իմանալով, որ մի ժամանակ այրերից կծնվեն կանայք, ինչպես նաև գազաններ, և շատերը կզգան եղունգների կարիք,

e

մարդկանց ստեղծելիս նախատեսեցին նաև եղունգներ: Ահա այդ մտքերով ու նկատառումներով առաջնորդվեցին աստվածները, երբ վերջույթների վրա ստեղծում էին մաշկը, մազերը և եղունգները:

77

Այսպես, մահկանացու էակի մասերն ու անդամները սերտաճեցին, սակայն նա ստիպված էր ապրել հրի և օդի մեջ և այդ պատճառով տարրալուծվելով պարպվել ընդհուպ մինչև վերջնական կործանում: Սակայն աստվածները օգնեցին նրան. սերեցին մարդկայինին ազգակից բնություն, որն ուներ ուրիշ տեսակներ ու զգայություններ և այդ պատճառով պատկանում էր բոլորովին այլ կենդանի էակների: Դրանք էին ծառերը, խոտը և բույր այն բույսերը, որոնք այժմ մշակում են հողագործները և որոնք ծառայում են մեր օգտին, իսկ նախկինում սոսկ վայրի տեսակ էին և ավելի հին էին, քան մեր մշակածները: Այն ամենը, որ հաղորդակից է կյանքին, արդարացի և ճիշտ կերպով կոչվում է կենդանի էակ: Իսկ այն, ինչի մասին հիմա խոսում ենք, հաղորդակից է հոգու երրորդ տեսակին և, ինչպես արդեն ասացինք, գտնվում է ստոծանու ու պորտի միջև և անմասն է ինչպես կարծիքից, այնպես էլ խորհրդածությունից ու խելքից, և ունի միայն հաճույքի ու ցավի զգայություններ ու տենչանքներ: Նրա ողջ կյանքը կրավորական է,

b

շարժվում է միայն ինքն իր մեջ և իր հարաբերությամբ և անհաղորդ է արտաքին շարժմանը՝ օգտվելով միայն սեփական շարժումից, այնպես որ չի տեսնում ինքն իրեն, բնությունը և չգիտի իր ծագումը: Ահա ինչու նա ապրում է և ոչ այլ ինչ է, եթե ոչ կենդանի էակ, որը մնում է իր տեղում և արմատավորված է այդտեղ ինքն իրենից դուրս շարժվելու անկարողության պատճառով:

Բոլոր այս սեռերը աճեցրել են հզորները մեզ՝ տկարներիս համար որպես սնունդ և մեր մարմնում, ինչպես այգիներում, բացել են ջրանցքներ, որպեսզի այն ոռոգվի հոսող ջրով: Նախ նրանք բացեցին երկու աներևույթ ջրանցքներ մաշկի և նրան սերտաճած մսի միջև՝ երկու ջլեր մեջքի վրա, որոնք համապատասխանում են մարմնի աջ և ձախ մասերին: Այդ ջլերը նրանք իջեցրին ողնաշարի երկայնքով՝ տեղադրելով դրանց արանքում ծնարար ուղեղն այնպես, որ սա հնարավորինս փթթի և հեղուկը, իջնելով այդտեղից, հավասարաչափ բաշխվի մյուս մասերի միջև: Դրանից հետո նրանք բաժանեցին ջլերը գլխի մասում և միահյուսեցին հակառակ եղանակով, այսինքն այնպես, որ մարմնի աջ կողմից եկողները ձգվեն դեպի ձախ, իսկ ձախից եկողները՝ դեպի աջ, որպեսզի գլուխը, բացի մաշկից, նաև ուրիշ կապ ունենա մարմնի հետ, — չէ՞ որ այն գուրկ էր մինչև ծոծրակը շրջան կազմող ջլերից, — և որպեսզի երկու մասերից եկող զգայությունները հստակ հասնեն ամբողջ մարմնին:

Այստեղ արդեն նրանք ստեղծեցին ջրասնուցման եղանակը, որն ավելի դյուրըմբռնելի կդառնա մեզ համար, եթե նախապես համաձայնենք, որ առավել փոքր մասերից կազմված բոլոր մարմինները թափանցելի են ավելի փոքր մասերի համար, իսկ ավելի մեծ մասերից կազմվածները թափանցելի չեն ավելի փոքրերի համար: Եվ քանի որ բոլոր սեռերից ամենափոքր մասեր ունեցողը հուրն է, այն թափանցում է ջրի, հողի, օդի և դրանցից կազմված ամեն ինչի միջով, և նրա համար չկա ոչինչ անթափանց: Եթե նույնը նկատի առնենք նաև մեր

- որովայնի հարաբերությամբ, կտեսնենք, որ երբ նրա մեջ մուտք են գործում սնունդը և խմիչքը, դրանք այդտեղ էլ մնում են, իսկ օդը և հուրը, քանի որ բաղկացած են ավելի փոքր մասերից, չեն կարող մնալ նրա մեջ: Այս տարրերից օգտվեց աստված, երբ կարգավորեց հեղուկի արտահոսքը որովայնից դեպի ջլերը: Օդից և հրից նա հյուսեց հատուկ հյուսվածք, որ մնան էր ձկնորսական թարփին և մուտքերի մոտ ուներ զույգ ձագարներ, որոնցից մեկը բաժանվում էր երկու թևի: Այդ ձագարներից նա շրջանաձև բոլոր ուղղություններով լարեր ձգեց դեպի հյուսվածքի ծայրերը: Թարփի երեսը նա ամբողջությամբ ստեղծեց հրից, իսկ ձագարներն ու թաղանթը՝ օդից:
- b** Վերցնելով դա՝ աստված պատեց դրանով իր կերտած էակին հետևյալ կերպ: Ձագարները նա ամրացրեց բերանի մեջ, և քանի որ դրանք երկուսն էին, մեկը շնչուղիներով անցկացրեց թոքերի, իսկ մյուսը՝ շնչուղիների կողքով որովայնի մեջ: Առաջինը նա հատեց երկու մասի և ընդհանուր մուտք ապահովեց քթանցքերի միջով, այնպես որ, եթե երկրորդը բերանի միջով չի գործում, առաջինը կարող է ապահովել օդի հոսքը: Թարփի ողջ թաղանթը նա ամրացրեց մարմնի դատարկ մասի շուրջ և արեց այնպես, որ այդ ամենը կամաց հոսի դեպի ձագարները, քանի որ սրանք օդից են, և ապա հետ դառնա ձագարներից, և հյուսվածքը սուզվի մարմնի խորքը, — չէ՞ որ մարմինը սնամեջ է, — և նորից դուրս գա, իսկ մարմնում առկա հրե ճառագայթները հետևեն օդի ամեն շարժմանը: Եվ այս ամենը չպիտի դադարի, քանի դեռ կենդանի էակը չի կազմալուծվել: Մենք կասենք, որ անուններ սահմանողը հենց սա կոչեց ներշունչ և արտաշունչ: Գործողությունների և արդյունքների այս ընթացքից մեր ոռոգվող ու սառեցվող մարմինը սնվում է և ապրում: Երբ շունչը շարժվում է ներս կամ դուրս, ներսում եղած հուրը հետևում է դրան, մշտապես անցնում որովայնի միջով, առնում այնտեղ գտնվող սնունդն ու խմիչքը, քայքայում դրանք, բաժանում փոքր մասերի և մղում ուղիներով, որոնցով այն անցնում է, ինչպես ակունքներից դեպի վտակները մղվող
- c**
- d**
- e**
- 79**

ջուրը, և այդպիսով առաջացնում է հոսք, որն անցնում է մարմնով ձգվող ջլերի միջով ասես ջրանցքներով:

Նորից դիտարկենք շնչառության ընթացքն ու պատճառները, որոնք առաջ բերեցին այն և որոնց շնորհիվ շնչառությունը այդպիսին է նաև այժմ: Բանն այսպես է: Քանի որ գոյություն **b** չունի դատարկություն, որի մեջ կարող էր շարժվող ինչ-որ բան մուտք գործել, պարզ է, որ շունչը մեր միջից շարժվում է ոչ թե դատարկության մեջ, այլ դուրս է մղում իր տեղից մոտակա օդը: Վերջինս դուրս է մղում մյուս մոտակա օդը և այդ կերպ անհրաժեշտաբար ամբողջ շրջակա օդը տեղաշարժվում է և դուրս մղվում իր տեղից՝ մուտք գործելով այնտեղ, որտեղից դուրս էր եկել շունչը: Այդ ամենը տեղի է ունենում **c** միաժամանակ, ինչպես անիվի պտույտը, քանզի դատարկություն գոյություն չունի: Կուրծքը և թոքերը, որոնցից դուրս է եկել շունչը, կրկին լցվում են մարմնի շուրջը եղած օդով, որը մուտք է գործում մսի մեջ եղած ծակոտիները և կատարում իր շրջանառությունը: Իսկ երբ օդի ընթացքը շրջվում է և այն դուրս է գալիս մարմնից, շնչի շարժումը դառնում է շրջաբերական և անցնում է բերանով ու քթանցքերով: Հարկ է ենթադրել, որ այս ամենը սկիզբ է առել հետևյալ պատճառներից: Յուրաքանչյուր էակ իր արյան և ջլերի մեջ ունի բարձր ջերմություն, որն ասես ներքին հրի աղբյուրը լինի: Հենց դա **d** էլ մենք նմանեցնում ենք թարփի հյուսվածքին՝ [ասելով], որ դրա կենտրոնը ամբողջությամբ հյուսված է հրից, իսկ մնացյալը, ինչպես, ասենք, դոսի մասերը՝ օդից: Մինչդեռ ջերմությունը, հարկ է համաձայնել, իր բնությամբ դուրս է մղվում իր տեղը, դեպի իրեն ազգակիցը: Գոյություն ունի երկու ելք՝ մեկը մարմնի միջով, մյուսը՝ բերանի և քթանցքերի, այնպես որ, երբ ջերմությունը շարժվում է մեկի ուղղությամբ, մարմինը շրջանաձև մղում է օդը դեպի մյուս ելքը: Ներս մղված օդն ընկնելով **e** հրի մեջ տաքանում է, իսկ ելնողը՝ սառչում: Երբ ջերմությունը փոխվում է և մյուս ելքի մոտ օդը դառնում է ավելի տաք, այն դարձյալ մղվում է այնտեղ, ուր տարվում է իր

բնությանը, իսկ շրջաբերական շարժումը մղում է այն հակառակ ուղղությամբ: Մշտական այս ազդեցությունները և հակազդեցությունները կազմում են շրջապտույտ, որը գործում է մերթ այս, մերթ այն ուղղությամբ և որը առաջ է բերել ներշունչն ու արտաշունչը:

- Հարկ է պարզել, թե ինչ է լինում, երբ բժշկական բաժակներ են դնում, ինչ-որ բան են խմում կամ էլ նետում, անկախ 80 նրանից՝ թռչող են դրանք, թե շարժվում են երկրի վրայով: Նաև հասկանալ այն պատճառները, որոնցով ձայները, կախված իրենց արագությունից կամ դանդաղությունից, ներկայանում են բարձր կամ ցածր, ընդ որում մերթ աններդաշնակ են, քանի որ մեր մեջ դրանց առաջ բերած շարժումը զուրկ է համասեռությունից, մերթ համահունչ՝ շնորհիվ շարժման համասեռության: Քանզի երբ դանդաղ ձայները հասնում են նախորդ, առավել արագ ձայների շարժմանը, երբ սրանք արդեն դադարում են շարժվել և նրանց նման սկսում են հապաղել, դանդաղները հասնելով նրանց՝ չեն դարձնում շարժումը անկարգ, b այլ դանդաղ շարժման սկիզբը և արագ շարժման վերջը նմանվում են, և ի հայտ է գալիս մի վիճակ, որի մեջ բարձրը և ցածրը միախառնված են¹⁰²: Այդժամ անխոհեմները հաճույք են ստանում, իսկ խոհեմները՝ հրճվում, որ նաև մահկանացու շարժումները նմանակում են աստվածային ներդաշնակությունը:

- Ինչ վերաբերում է բոլոր հոսող ջրերին, կայծակի հարվածներին, սաթի և հերակլյան քարերի¹⁰³ զարմանալի ձգողությանը, սրանցից և ոչ մեկը բնավ օժտված չէ ձգողությամբ, այլ դատարկության բացակայության պատճառով մարմինները շրջաբերական եղանակով հրում են միմյանց՝ մերթ հավաքվելով, մերթ փոխելով տեղերը, և այդ վիճակների խճողումները կբացահայտեն իրենց թաքնված հրաշալիքները նրան, ով կհետազոտի դրանք հավուր պատշաճի:

- Չէ՞ որ նաև շնչառությունը, որից սկսեցինք մեր քննությունը, d ինչպես արդեն ասվեց, տեղի ունի նշված պատճառներով: Հուրը քայքայում է սնունդը և, հետևելով շնչառությանը, մուտք

է գործում մարմնի մեջ, լցնում է ջլերը որովայնից վերցրած քայքայված մասնիկներով: Այդկերպ ամեն մի կենդանի էակի մարմնում տեղի ունի ոռոգում սննդարար հեղուկով: Քանի որ այդ մասնիկները հենց նոր են բաժանվել և ազգակից են մեզ, քանզի պտուղներից և կանաչից են, որոնք աստված աճեցրել է մեզ համար որպես սնունդ, դրանք միախառնվելով ստանում են ամենատարբեր գունավորումները: Գերակշռողը կարմիր գույնն է, որ գոյանում է հրի կտրատող գործողությունից և դրա դրոշմվածքից հեղուկի մեջ: Արդյունքում մարմնով մեկ հոսող հեղուկի գույնն այնպիսին է, ինչպիսին նկարագրեցինք: Մենք այն կոչում ենք արյուն, որը մսի և ամբողջ մարմնի սնունդն է և նրանով է յուրաքանչյուր պարաված մաս ոռոգվելով դարձյալ լցվում: Վերականգնման այդ եղանակը նման է Համայնի ընդհանուր շարժմանը, որի մեջ ամեն ինչ շարժվում է դեպի իրեն ազգակիցը: Մեր մարմնի շուրջ տեղի ունեցողը անվերջ քայքայում է այն և տեղաբաշխում այնպես, որ յուրաքանչյուր տեսակ հեռանում է իրեն ազգակից տեսակի մոտ, իսկ արյան մասնիկները, որոնք բաժան-բաժան են եղել մեր ներսում և ամփոփված են յուրաքանչյուր կենդանի էակի մեջ, ինչպես երկնքում, հարկադրված են նմանակել Համայնի շարժումը: Եվ մեր ներսում բաժանված ամեն մի մասնիկ շարժվում է դեպի իրեն ազգակիցը և դարձյալ լցնում դատարկությունը: Եթե մասնիկները ավելի շատ հեռանում են, քան լցնում, էակները կործանվում են, իսկ եթե տեղի ունի հակառակը՝ ծաղկում են: Երբ ամբողջ էակի կազմվածքը երիտասարդ է և եռանկյունիները, որոնցից սերում են նրա տարրերը, նոր են, ասես արիեստանոցից նոր դուրս եկած, նրանց համադրությունն ամուր է, մինչդեռ ինքը մարմինը նուրբ է, չէ՞ որ այն առաջացել է ուղեղից և սնվել է կաթով: Երբ մարմինն իր մեջ եռանկյունիներ է առնում, որոնցից կազմված են կերակուրն ու խմիչքը, իր սեփական եռանկյունիները, որ ավելի թարմ են մուտք գործողներից, հաղթելով կտրատում են դրանք ու կենդանի էակին դարձնում են մեծ՝ սնելով նրան իր նյութերին նման բազում նյութերով:

e

81

b

c

Բայց երբ եռանկյունիների արմատները երկար ժամանակ բազում թշնամիների դեմ բազում պայքարների արդյունքում թուլանում են, մարմինն այլևս չի կարողանում կտրատել սննդի եռանկյունիները՝ նման դարձնելով դրանք սեփական եռանկյունիներին, որոնք իրենք են կտրատվում ներս մտնողներով: Ամբողջ կենդանի էակը այդժամ պարտվում է, և նրա վիճակը կոչվում է ծերություն: Ի վերջո, երբ ուղեղի եռանկյունիները կապող շղթաները չեն կարողանում դիմակայել ճնշմանը, արձակվում են, արձակելով հոգու շղթաները, իսկ սա ազատվելով՝ իր բնությանը հավատարիմ սիրով հեռանում է: Չէ՞ որ բնությանը հակառակ ամեն բան տանջալի է, իսկ բնությանը համապատասխանողը՝ հաճելի: Մահն ըստ այդմ տանջալի և բռնի է, եթե վրա է հասնում հիվանդությունից կամ վերքերից, իսկ եթե գալիս է ծերության հետ միասին և բերում բնական վախճան, մահերի մեջ ամենաանցավն է և պարզևս է ավելի շուտ հաճույք, քան ցավ:

Իսկ թե ինչից են գոյանում հիվանդությունները, ամենքին 82 էլ պարզ է: Քանի որ մեր մարմինը բաղկացած է չորս սեռերից՝ հողից, հրից, ջրից և օդից, դրանցից մեկի գերազանցության, պակասի կամ իր բնական տեղի փոփոխության դեպքում,– հուրը և մյուս տարրերը ունեն մեկից ավելի տարատեսակներ,– կամ եթե որևէ մասնիկ վերցնում է իրեն ոչ հատուկ բան, առաջ են գալիս արատներ և հիվանդություններ: Բնությանը հակառակ այս ընթացքներից և տեղափոխություններից մարմնի մասերը, որոնք նախկինում սառն էին, տաքանում են, չորերը՝ խոնավանում, թեթևները՝ ծանրանում, և ամբողջ մարմինը փոփոխություններ է կրում: Մենք ասում ենք, որ մարմնի մասերը կարող են նույնություն պահպանել և ողջ ու անվնաս լինել, երբ նույնականը միանման և կանոնավոր կերպով մոտենում է նույնականին: Իսկ այն, ինչը իր ներհոսքով և արտահոսքով խանգարում է դրան, առաջ է բերում ամենատարբեր ու բազմաթիվ հիվանդություններ, արատներ և կործանում:

Բնության մյուս բաղադրությունները կապված են հիվանդությունների մեկ ուրիշ տեսակի հետ, որը պիտի քննի նա, ով ցանկանում է դրանք հասկանալ: Քանի որ ուղեղը, ոսկորները, միսը և ջլերը կազմված են հիշյալ տարրերից (նաև արյունը, թեպետ մեկ այլ եղանակով), հիվանդությունները ներազդում են հիմնականում վերը նշված կերպով, սակայն ամենաուժեղները շատ ծանր են դառնում հետևյալ պատճառով: Երբ այդ մասերի գոյացությունը շարժվում է իր գոյացման հակառակ ուղղությամբ, դրանք կործանվում են: Չէ՞ որ համաձայն բնության՝ միսն ու ջլերը առաջանում են արյունից, ջլերը առաջանում են իրենց ազգակից արյան մազանոթներից, իսկ միսը՝ արյան մակարդուկներից, որը չունի մազանոթներ: Ջլերից և մսից անջատվում է կպչուն և ճարպոտ նյութ, որն ամրացնում է միսը ոսկորներին և սնելով ուղեղը պատող ոսկորը՝ ապահովում է սրա աճը, իսկ այդ նյութի ամենամաքուր մասը, որ ամենահարթ և ճարպոտ եռանկյունիներից է, թափանցում է ոսկորի միջով և ոռոգում է ուղեղը: Եթե յուրաքանչյուր տարր գործում է այսպես, մարմինը առողջ է լինում, հակառակ դեպքում առաջ են գալիս հիվանդությունները: Երբ միսը հոսում և դարձյալ ջլերի մեջ է լցնում հեղանյութը, ներշնչից հետո ջլերը լցվում են արյան մեծ քանակով, որը բազմազան է ինչպես գույների, այնպես էլ դառնության, կծվության և աղիության առումով և իր հետ բերում է մաղձ, շիճուկ ու լեղի: Քանի որ դրանք գոյացել են հակառակ կարգով և կործանիչ են, նախ վնասում են հենց արյանը և ջլերի միջով ոչ մի սնունդ չեն հասցնում մարմնին ու չեն հետևում բնության շրջապտույտների կարգին: Միմյանց նկատմամբ թշնամական հարաբերության պատճառով դրանք ընդունակ չեն փոխօգնության, իսկ մարմնի մեջ հաստատուն և իր տեղը պահպանող ամեն բանի հակառակ են և կործանում ու վերացնում են այն: Քայքայված մսի այն հատվածը, որ ամենածերն է, դժվարությամբ է փափկում և երկարատև այրումից սևանում է, իսկ քանի որ քայքայված է, դառն է և մարմնի մոտ գտնվող ու դեռևս չվնասված բոլոր

մասերի համար վնասակար: Երբ դառնությունը պակասում է, սև գույնին ուղեկցում է կօու համը: Դառը նյութը, սուզվելով արյան մեջ, կարմրում է, իսկ սևի հետ խառնվելիս դառնում է լեղու գույն: Երբ երիտասարդ միսը քայքայվում է բորբոքիչ հրից, դառը նյութը խառնվում է դեղին գույնին:

Այդ ամենի ընդհանուր անունը՝ մաղծ, տվել են կա՛մ բժիշկները, կա՛մ մեկը, ով կարողացավ բազում տարբերությունների մեջ տեսնել սեռային միասնություն, որը պահանջում էր մեկ անուն: Իսկ մաղծի մյուս տեսակներից յուրաքանչյուրը ստացավ իր անունը ըստ իր գույնի: Շիճուկը երկու տեսակի է. մեկը արյան անվնաս շիճուկն է, իսկ մյուսը՝ սև և կօու մաղծի շիճուկը, որը վտանգավոր է, եթե ջերմության ազդեցությամբ դարձել է աղի: Այդժամ սա կոչվում է սուր լեղի: Մյուս տեսակը գոյանում է օդի ազդեցությամբ քայքայվող երիտասարդ և նուրբ մսից: Սա այնքան է ուռած օդից և այնքան է խոնավացած, որ առաջ է բերում պղպջակներ, որոնք առանձին-առանձին իրենց փոքր չափերի պատճառով անտեսանելի են, սակայն բոլորը միասին ներկայացնում են տեսանելի զանգված: Քանի որ դրանք գոյանում են փրփուրից, սպիտակ գույնի են: Օդով թափանցված նուրբ մսի այդ քայքայումը մենք կոչում ենք սպիտակ լեղի:

Նորակազմ լեղու ջրային տեսակը մենք կոչում ենք քրտինք, արցունք և այլ նյութեր, որոնք արտազատվում են մարմնից ամենօրյա մաքրման ժամանակ: Սրանք բոլորն էլ հիվանդությունների գործիքներ են, երբ արյունը բնականորեն չի լրացվում խմիչքից և սնունդից, այլ իր զանգվածը լրացնում է բնության օրենքներին հակառակ:

Երբ միսը քայքայվում է հիվանդություններից, բայց դրա հիմքերը մնում են ամուր, հիվանդության ուժը գործում է կիսով չափ, քանի որ քայքայվածը հեշտությամբ կարող է վերականգնվել: Սակայն հենց որ վարակվում է այն, ինչը միացնում է միսը ոսկորներին, և մսից ու ջլերից արտազատվող նյութերը այլևս չեն սնում ոսկորները և չեն կապում միսը ոսկորներին,

այլ սխալ կենսակերպի պատճառով փոխում են իրենց ճարպուտությունը, հարթությունն ու կաչունությունը կոպտության և աղիության, այդժամ ամբողջ զանգվածը, կրելով այդ փոփոխությունները, անջատվում է ոսկորներից, դարձյալ բաժանվում է մսի և ջլերի, մինչդեռ միսը, որ պոկվում է իր արմատներից, թողնում է մկանները մերկ և լցված աղի հեղուկով, իսկ ինքը կրկին առնվում է արյան հոսքի մեջ և ավելացնում է հիվանդությունները, որոնց մասին արդեն խոսեցինք: Բայց որքան էլ ծանր են մարմնի նման տառապանքները, առավել ծանր են նրանք, որոնք դրանցից ավելի խորն են և պայմանավորված են մկանների մեծ ամրությամբ, որը թույլ չի տալիս ոսկորներին շնչել և առաջ է բերում փտախտային տաքացում և ոսկրափուտ, երբ ոսկորը չի ստանում սնունդ և քայքայվում է հակառակ ուղղությամբ՝ վերածվելով հեղուկի, իսկ միսը թափվում է արյան մեջ և առաջ է բերում նշվածներից ավելի ծանր հիվանդություններ: Ծայրահեղ դեպքը, սակայն, ուղեղի բնության վարակումն է որևէ նյութի պակասի կամ ավելցուկի պատճառով: Այստեղից են առաջանում ծանրագույն հիվանդությունները, որոնք ամենից հաճախ և արագորեն հանգեցնում են մահվան, քանզի ամբողջ մարմինը ստիպված է վերափոխվել:

Հիվանդությունների երրորդ տեսակի պատճառները, պետք է մտածել, ունեն երեք տեսակի ծագում՝ կա՛ն շնչառությունից, կա՛ն լեղուց, կա՛ն մաղձից: Քանի որ թոքերը, որոնք մարմնի մեջ շնչառության տարածողներն են, խցանվում են արտազատվող խորխով և թույլ չեն տալիս, որ օդը դուրս գա, շնչառությունը որոշ ուղղություններով չի շարժվում, իսկ որոշ ուղղություններով շարժվում է մեծ քանակությամբ: Այսպես, եթե շնչառությունը չի հասնում մարմնի որոշ հատվածներին, դրանք չեն սառչում և սկսում են փտել, իսկ երբ օդը, չափից ավելի մեծ քանակությամբ բռնի անցնելով ջլերի միջով, ծռմռում է դրանք, քայքայում է մարմինը և լռվում է դրա մեջտեղում՝ կրծքավանդակի ստորին մասում, և արդյունքում առաջ են գալիս հազարավոր հիվանդություններ, որոնք ուղեկցվում են

b
c
d

- e առատ քրտնարտադրությամբ: Հաճախ շնչառությունը առաջ է գալիս մարմնի մեջ մսի քայքայումից և, չկարողանալով դուրս գալ, պատճառում է նույնքան ուժեղ ցավեր, որքան դրսից մուտք գործած օդը: Ցավերը շատ ուժեղ են, երբ օդը, հավաքվելով և ուռչելով ջլերի և նյարդերի մոտ, հակառակ ուղղությամբ է ծալվում հողերը և դրանց հարակից ջլերը: Այդպիսի ուժեղ լարվածությունն է, որ ստիպում է մեզ կոչել այդ հիվանդությունները տետանոս և օպիսթոտոնոս¹⁰⁴: Դրանց բուժումը 85 դժվարին գործ է, քանզի հաճախ դրանք ուղեկցվում են սաստիկ տենդով:

Ինչ վերաբերում է սպիտակ լեղիին, դրա պղպջակներում եղած օդը վտանգավոր է, երբ լեղին փակված է մարմնի մեջ: Շնչառության հետ միասին դուրս գալով մարմնից՝ այն դառնում է պակաս վնասակար, սակայն ծածկում է մարմինը սպիտակ որքինով և դրան ազգակից այլ ցաներով: Խառնվելով սև մաղձի հետ՝ անհանգստացնում է ամենաաստվածայինը, որ կամեր մեջ՝ մեր գլխում կատարվող շրջապտույտները: Եթե նույնպես տեղի է ունենում քնած ժամանակ, ապա դեռ թեթև է, իսկ եթե հարթմնի՝ այն շատ դժվար է հաղթահարել: Քանի որ այդ հիվանդությամբ վնասվող բնությունը սրբազան է, հիվանդությունը կոչվում է սրբազան¹⁰⁵: Սուր և աղի մաղձը աղբյուր է բազում հիվանդությունների, որոնք ունեն բորբոքային բնույթ: Իրենց ամենատարբեր անունները դրանք ստացել են ըստ այն տեղերի, որոնց մեջ թափվում է մաղձը:

- Մարմնի [տարբեր] բորբոքումները, որ ուղեկցվում են այրոցքով և ջերմությամբ, բոլորն էլ լեղիից են: Արտամղվելով մարմնից՝ լեղին եռալով առաջացնում է ամենատարբեր պալարներ, իսկ մնալով ներսում՝ բազում բորբոքային հիվանդություններ: Դրանցից ամենածանրն այն է, երբ լեղին, խառնվելով մաքուր արյանը, վնասում է մազաթելերի հյուսվածքը: Այդ մազաթելերը սփռված են արյան մեջ, որպեսզի սա չջրիկանա ջերմությունից և դուրս չհոսի մարմնի ծակոտիներից ու չթանձրանա անհրաժեշտ եղածից ավելի և դրանով չխախտի

իր շարժումը ջլերի միջով: Իրենց ծագմամբ մազաթելերը կոչված են պահպանել այդ չափը: Եթե դուրս բերենք դրանք բուրդը մահացածի սառած արյունից, մնացյալ արյունը կտարրալուծվի: Իսկ եթե դրանք մնում են մահացածի արյան մեջ, ապա շատ արագ մակարդվում են՝ միանալով իրենց շուրջ հավաքվող սառնությանը: Այդպիսին է մազաթելերի ներգործությունը լեղիի վրա, որը գոյանում է հին արյունից և դարձյալ վերածվում է արյան՝ բաղադրվելով մսից: Տաք և ջրիկ լեղին, նախ քիչ-քիչ հոսելով ջլերի մեջ, մազաթելերի ներգործությամբ մակարդվում է և բռնի սառեցվում՝ հարուցելով ցրտահարություն և դողերոցք: Առավել առատորեն ներհոսելիս քայքայում է մազաթելերն իր ջերմությամբ և անկարգություն է առաջ բերում, իսկ երբ դրա ուժերը բավարար են վերջնական հաղթանակի համար, հասնում է ուղեղին և այրում է այն, ասես նավերի կառանները, և արձակում հոգին: Սակայն երբ ավելի թույլ է լինում, իսկ մարմինն ընդդիմանում է քայքայմանը, ինքն է պարտվում և կա՛մ տարածվում է ամբողջ մարմնով, կա՛մ ջլերի միջով հեռացվում է որովայնի ստորին կամ վերին հատվածը ու դուրս նետվում մարմնից, ինչպես աքսորականը խռովյալ քաղաքից՝ առաջ բերելով աղիքային բորբոքումներ, լուծ և նման այլ հիվանդություններ:

Եթե մարմինը հիվանդանում է գլխավորապես հրի ավելցուկից, մշտապես տենդի մեջ է, եթե օդի ավելցուկից, տենդը կրկնվում է ամեն երկրորդ օրը, երկօրյա է, իսկ եթե ջրի ավելցուկից է, ամեն երրորդ օրը, քանի որ ջուրն ավելի խիտ է, քան օդն ու հուրը: Իսկ հողը, որ չորրորդն է նշվածներից և ամենախիտն է, մաքրվելու համար պահանջում է քառակի ավելի ժամանակ, ըստ այդմ էլ տենդը պահպանվում է չորս օր և ապաքինումը տեղի է ունենում դժվարությամբ: Այսպես են առաջանում մարմնական արատները, իսկ ահա հոգու արատները առաջանում են մարմնական արատներից հետևյալ կերպ: Համաձայնենք, որ անմտությունը հոգու արատ է, իսկ անմտության երկու տեսակներն են խելացնորությունը և տգի-

տությունը: Ամեն վիճակ, որ առնչվում է այս երկու տեսակներին, մենք կոչում ենք հիվանդություն: Հոգու մեծագույն հիվանդություններին պետք է դասենք նաև հաճույքի և ցավի չափազանցումները: Երբ մարդը շատ ուրախ է կամ հակառակը՝ տրտմում է, նա շտապում է հասնել դրանցից մեկին, խուսափել

- c մյուսից և չի կարող ո՛չ տեսնել, ո՛չ էլ լսել ճիշտը, քանի որ այդժամ խելացնոր վիճակում է և անկարող է օգտվել բանականությունից: Իսկ նա, ում սերմը, լինելով առատ, ասես պտղատու ծառի, որ չափից շատ պտուղներ է տալիս, և հորդուն, հասնում է ուղեղին, շատ տառապանքներ է կրում, ինչպես նաև շատ հաճույքներ է վայելում, մե՛րթ տենչալով, մե՛րթ բավարարելով իր տենչանքները և ամբողջ կյանքում համակվելով ուժեղ հաճույքներով և տառապանքներով, այնպես որ նրա հոգին հիվանդ և անմիտ է մարմնի պատճառով, սակայն
- d նրան համարում են ոչ թե հիվանդ, այլ կամովին արատավոր մարդ: Իսկ իրականում սեռական սանձարձակությունը մեծ մասամբ մեն մի նյութի արդյունք է, որը դուրս է հորդում ոսկորների ծակոտիներից և տարածվում ողջ մարմնով, և այս ամենի հետևանքը հոգու հիվանդությունն է: Երբ հաճույքների նկատմամբ անժուժկալությունը պարսավում են որպես կամավոր արատավորություն, միշտ չէ, որ արդարացի է: Քանզի կամովին ոչ ոք արատավոր չէ: Մարմնի արատավոր որակներն ու վատ դաստիարակությունն են արատավոր դարձնում մարդուն, և դա միշտ տեղի է ունենում ի վնաս նրան և իր կամքին հակառակ: Ինչ վերաբերում է տառապանքին, այստեղ նույնպես մարմինը հոգու արատավորության պատճառ է:

Երբ սուր ու աղի լեղին և դառը ու մաղձոտ հյութերը շրջելով մարմնով մեկ չեն կարողանում դուրս գալ, այլ հավաքվում են ներսում և իրենց գոլորշիների խառնուրդով գրգռում հոգին, վերջինիս պատճառում են ամենատարբեր հիվանդություններ՝ ուժեղ և թույլ, կարճ և երկար: Կարողանալով մուտք գործել հոգու երեք հատվածների մեջ՝ դրանք, ելնելով այն

87 տեղից, որի մեջ հայտնվում են, առաջ են բերում ճնշվածու-

թյան և վիատության, անպատկառության և վախկոտության, մոռացկոտության և բթամտության ամենատարբեր ձևերը: Եվ եթե սրան գումարվում են նաև պետության հոռի կարգերը, ինչպես նաև հոռի ճառերը, որ արտասանվում են մասնավոր ու հանրային կյանքում և պատանի տարիքից չեն ուսումնասիրվում դրա բժշկման եղանակները, բոլոր արատավորները այդ երկու ականա պատճառներով դառնում են արատավոր: Միշտ պետք է մեղադրել ավելի շուտ ծնողներին, քան ծնվողներին, դաստիարակներին, քան դաստիարակվողներին, և մենք պետք է ձգտենք, որ ամեն ոք կարեցածի չափով դաստիարակության, վարժանքների և ուսման միջոցով խուսափի արատավորությունից և ձեռք բերի դրա հակադիրը: Բայց սա արդեն ուրիշ խոսակցության նյութ է:

b

Իսկ այժմ տեղին է և հարկ է ասվածին հակադրել ուսմունքը մարմնավոր ու մտավոր առողջության և դա ապահովող միջոցների մասին. արդար կլինի, եթե առավել հիմնավոր անդրադառնանք բարիքին, քան չարիքին: Ամեն բարիք գեղեցիկ է, իսկ գեղեցիկը զուրկ չէ չափից: Եվ կենդանի էակը, լինելով գեղեցիկ, պիտի լինի համաչափ: Համաչափության դեպքում մենք նկատի ենք առնում մանրուքները, իսկ ավելի կարևորին ու էականին նշանակություն չենք տալիս: Երբ խոսքը առողջության և հիվանդության, առաքինության և արատավորության մասին է, չկա հոգու և մարմնի համաչափությունից ու անհամաչափությունից առավել կարևոր բան: Բայց մենք չենք նկատում դա և չենք հասկանում, որ երբ ուժեղ և բոլոր առումներով մեծ հոգին ունի շատ թույլ ու փոքր կառք, այնպես որ համաչափությունը խախտվում է, կենդանի էակը գեղեցիկ չէ, քանզի չկա համաչափության տեսակներից ամենակարևորը, իսկ երբ տեղի ունի հակառակը և համաչափությունը առկա է, ապա տեսնել կարողացողը հայում է ամենագեղեցիկը ու ամենաերանելին: Մարմինը, որի ոտքերի կամ այլ մասերի երկարությունն անհամաչափ է, ոչ միայն այլանդակ է. իր անդամների համատեղ գործողությունից հոգնում է, ջղաձգվում,

c

d

e

88 ճոճվում և ընկնում՝ ինքն իր համար դառնալով բյուրավոր չարիքների պատճառ: Նույնը պետք է մտածել նաև երկանդան բաղադրության մասին, որը մենք կոչում ենք կենդանի էակ: Երբ այս բաղադրության մեջ մտնող հոգին շատ ավելի ուժեղ է մարմնից և ցասումով լի է, այն ցնցում է մարմինը և լցնում հիվանդություններով, և երբ ոմանք ողջ եռանդով տրվում են ուսմանն ու հետազոտությանը, հյուծում է մարմինը, իսկ երբ մարմինը գրգռում են ուսուցմամբ կամ հանրային և մասնավոր բանավեճերով, այն տաքացնում է մարմինը, ցնցում և առաջ է բերում արտահոսք՝ մոլորության մեջ գցելով այսպես կոչված բժիշկների մեծամասնությանը և ստիպելով նրանց մեղադրել մարմինը:

Իսկ երբ մեծ մարմինը միանում է փոքր հոգու հետ, որի մտածողությունը թույլ է, ապա, քանի որ մարդկանց բնությունն օժտված է երկու տեսակի տենչանքով՝ սնվելու մարմնավոր տենչանքով և մեր մեջ եղած բանականության աստվածային տենչանքով, ավելի ուժեղի շարժումները հաղթում են և աճում, իսկ հոգին դարձնում են բութ, ոչ խորաթափանց և մոռացկուտ, առաջ բերելով ամենածանր հիվանդությունը՝ տգիտությունը:

Այդ երկուսից փրկությունը մեկն է՝ գործի չդնել ո՛չ հոգին առանց մարմնի, ո՛չ էլ մարմինն առանց հոգու, որպեսզի նրանք մրցելով միմյանց հետ լինեն հավասարակշռված և առողջ: Նա, ով զբաղվում է մաթեմատիկայով կամ մեկ ուրիշ մտավոր զբաղմունքով, պետք է աշխատեցնի նաև մարմինը՝ դիմելով մարմնամարզությանը, իսկ նա, ով հոգ է տանում մարմնի մասին, պիտի գործի դնի նաև հոգին՝ զբաղվելով մուսայական արվեստով և առհասարակ փիլիսոփայությամբ, եթե ցանկանում է իրավամբ կոչվել ոչ միայն գեղեցիկ, այլև բարի:

Ըստ այդմ նա պիտի հոգ տանի մասերի մասին՝ նմանա- կելով Համայնի ձևերին: Քանզի եթե մարմին մուտք գործողը տաքացնում է այն ներսից և սառեցնում, իսկ դրսից մոտեցողը չորացնում է ու խոնավացնում, և նա կրում է այդ երկու վիճակները, դադարի վիճակում մարմինը անձնատուր կլինի այդ

ազդեցություններին և, հաղթվելով դրանց կողմից, կկործանվի: Իսկ եթե որևէ մեկը նմանակի քիչ առաջ հիշատակված Համայնի ստնտուին և դաստիարակին, նա երբեք դադար չի տա մարմնին և մշտապես կպահի այն շարժման ու ցնցումների մեջ, բնականորեն կհավասարակշռի ներքին ու արտաքին շարժումները և համաչափ ցնցումների միջոցով մարմնով մեկ շրջող վիճակներն ու մասերը կդասավորի ըստ իրենց ազգակցության, այնպես, ինչպես ասացինք Համայնի առիթով: Այդ դեպքում թշնամականը չի դրվի թշնամականի կողքին, որպեսզի մարմնի մեջ չլինեն գժտություններ և հիվանդություններ, այլ բարեկամականը կդրվի բարեկամականի կողքին, որպեսզի նրա մեջ տիրի առողջությունը:

e

Իսկ շարժումներից լավագույնն այն մեկն է, որը կատարվում է մարմնի մեջ իր իսկ կողմից, քանի որ ազգակից է մտքի և Համայնի շարժմանը առավել չափով: Պակաս լավն է շարժումը, որ կատարում է Ուրիշը: Վատագույնն է շարժումը, երբ մարմինը դադարի մեջ է, իսկ մեկ ուրիշ մարմին շարժում է դրա մասերը: Ահա ինչու մարմնի մաքրագործումներից և կատարելագործումներից լավագույնը մարմնամարզությունն է, երկրորդը նավարկության կամ կառքով ճանապարհորդություններին ուղեկցող ճոճքն է, եթե այն չի հոգնեցնում: Երրորդ տեղում այն տեսակն է, որն օգտակար է ծայրահեղ անհրաժեշտության դեպքում, սակայն մնացյալ դեպքերում խոհեմ մարդու համար ընդունելի չէ. խոսքը դեղերով բժշկական մաքրագործման մասին է: Եթե հիվանդությունները շատ վտանգավոր չեն, հարկ չկա գրգռել դրանք դեղերով: Քանզի ամեն հիվանդության կազմն այնպիսին է, ինչպիսին որ կենդանի էակի բնությունն է: Վերջինս պիտի անցնի կյանքի որոշ փուլեր, ընդ որում թե՛ ամբողջ տեսակը, թե՛ յուրաքանչյուր առանձին էակ ունի իր նախասահմանված կյանքի տևողությունը՝ բացառությամբ առանձին անխուսափելի դիպվածների: Այդ էակը կազմող եռանկյունիները ի սկզբանե միավորված են այնպես, որ կարող են պահել իրենց համադրությունը միայն որոշ ժամա-

89

b

c

նակ և ի վիճակի չեն գերազանցել կյանքի տևողության սահմանը: Այդպիսին է նաև հիվանդությունների կազմը: Ահա ինչու նախասահմանված ժամանակը դեղերի միջոցով կարող է խախտել նա, ով ցանկանում է, որ թեթև հիվանդությունից գոյանան ծանրերը, իսկ քչերից՝ շատերը: Հետևաբար հարկ է վերահսկել մարմնի կենսակերպը, որքանով որ թույլ են տալիս հանգամանքները, և չզորոշել հիվանդությունը դեղերով՝ դարձնելով այն անբուժելի:

Այսքանը ընդհանուր առմամբ կենդանի էակի, նրա մարմնի մասերի, ինքնատիրապետման և ինքնահնազանդության մասին: Ինչ վերաբերում է տիրապետող մասին, այն պետք է օժտել ուժով, որպեսզի լավագույն և ազնվագույն ձևով կատարի վերահսկումը: Դրա մանրակրկիտ քննությունը ինքնին արդեն բավականաչափ մեծ ձեռնարկ է: Իսկ եթե խոսում ենք այդ մասին հընթացս, ապա նախորդ ասվածի առնչությամբ պիտի նշենք հետևյալը. մենք հաճախ ենք ասել, որ մեր մեջ բնակվում է հոգու երեք տեսակ, որոնցից յուրաքանչյուրն ունի իր սեփական շարժումը: Ըստ այդմ մենք հիմա պիտի պնդենք, որ ամենադանդաղը այն տեսակն է, որը դադարում է գործել՝ անխուսափելիորեն դառնալով տկար, իսկ այն մեկը, որը մարգվում է, դառնում է ուժեղագույնը: Ուստի պետք է հետևել, որ այդ շարժումները լինեն համաչափ: Իսկ մեր հոգու կարևորագույն տեսակը հարկ է մտածել որպես դեմոն, որ աստված հատկացրել է յուրաքանչյուրին, և սա, ինչպես ասացինք, բնակվում է մեր մարմնի գագաթին և մղում է մեզ երկրից դեպի հարազատ երկինքը, ինչպես եթե մենք լինեինք ոչ թե երկրային, այլ երկնային ծնունդ¹⁰⁶: Սա ասելով՝ մենք միանգամայն իրավացի էինք, քանի որ այնտեղ, ուր սկզբնապես գոյացավ հոգին, աստվածությունը տեղադրեց գլուխը՝ մեր արմատը, և այդպեպ ուղիղ կեցվածք հաղորդեց ողջ մարմնին:

Նա, ով տրվում է տենչանքներին ու փառասիրությանը և ծառայում է դրանց, ծնում է բացառապես մահկանացու մտքեր և առհասարակ հակված է դառնալ որքան հնարավոր է առա-

վել մահկանացու և թույլ չտալ, որ մահկանացու բնությունը պակասի, այլ անել այնպես, որ ավելանա: Սակայն եթե նա ուսումնատենչ է և նվիրված է իրապես բանականին, մարզում է գերազանցապես այդ ունակությունը, ապա հպվելով ճշմարտությանը՝ ունի անմահ և աստվածային մտքեր և, հետևաբար, հաղորդակից է անմահին այն չափով, որչափով դա կարող է ընդունել մարդկային բնությունը: Բայց քանի դեռ նա մշտապես հոգ է տանում իր մեջ եղած աստվածայինի մասին և առանձնահատուկ կերպով է վերաբերվում իր մեջ բնակվող դեմոնին՝ երջանիկ է: Յուրաքանչյուր էակի մասին հոգ տանելու եղանակը մեկն է. ապահովել նրան համապատասխան սննդով և շարժումներով: Իսկ մեր մեջ եղած շարժումները, որ ազգակից են աստվածայինին, Համայնի մտքերն ու շարժումներն են: Ամեն մարդ պետք է հետևի դրանց, որպեսզի սովորի ուղղել իր գլխում եղած շրջապտույտները, որոնք արդեն վնասվել են ծնվելու պահին, և որպեսզի ուսումնասիրողը, համաձայն իր նախնական բնության, նմանվի ուսումնասիրվողին և ձեռք բերի այն կատարյալ կյանքը, որն իբրև նպատակ սահմանվել է մարդկանց ինչպես ներկայում, այնպես էլ ապագայում:

Մենք կարծես ավարտեցինք նախապես ստանձնած պարտավորությունը և պատմեցինք Համայնի մասին՝ հասնելով ընդհուպ մինչև մարդու ծագումը: Իսկ թե ինչպես են ծագել մյուս կենդանի էակները, հարկ է նշել համառոտակի և խուսափել ավելորդ շատախոսությունից, որպեսզի մեր խոսքը չափավոր լինի: Կասենք հետևյալը:

Լույս աշխարհ եկած այրերի մեջ կային այնպիսիք, որոնք վեհերոտ էին և ապրեցին իրենց կյանքը անարդար. շատ հավանական է, որ հաջորդ ծննդյան ժամանակ նրանք կին դարձան: Ահա ինչու այդ ժամանակ աստվածները ստեղծեցին կենակցության էրոսին և զետեղելով մեր և կանանց մեջ մեկական կենդանի հոգեղեն էակ՝ յուրաքանչյուրին կազմավորեցին հետևյալ կերպ: Խնվածի անցուղու այն տեղում, որը ձգվում է

c

d

e

91

- թոքերի կողքով և երիկամներից ներքև մոտենում է միզապարկին՝ օդի ճնշման տակ դուրս մղելու համար ընդունածը, նրանք ելք բացեցին ողնուղեղի համար, որը գլխից պարանոցով անցնում է ողջ ողնաշարի երկայնքով և որը մենք նախկինում կոչել ենք սերմ: Սա, լինելով հոգեղեն և ստանալով
- b** ելք, դուրս հորդեց և այդ տեղում առաջ բերեց կենդանական տենչանք՝ այդպերպ սկիզբ դնելով ծննդարար էրոսին: Ահա ինչու տղամարդու ամոթույքն իր բնությամբ անսանձ է և ինքնակամ, ինչպես բանականությանն անհաղորդ գազան, և կատաղի մոլուցքի մեջ ընդունակ է ամեն բանի: Իսկ կանանց
- c** դեպքում այն, ինչը կոչվում է արգանդ կամ որովայն, նույն այդ ծննդարարության տենչանքով բռնված գազանն է նրանց ներսում, որը երկար ժամանակ քաղցած մնալու դեպքում դառնում է չափազանց գրգռված և թափառում է ողջ մարմնով, սեղմում է շնչուղիները և, չթողնելով շնչել, հասցնում է կնոջը ծայրահեղության և հանգեցնում նրան ամենատարբեր հիվանդությունների, մինչև որ երկուսը՝ կնոջ տենչանքն ու տղամարդու էրոսը,
- d** կմիանան և ասես կքաղեն ծառերից պտուղները՝ ցանելու համար արգանդի արտը աննշանության և ձևազրկության պատճառով տակավին անտեսանելի կենդանի էակներով, որոնք հետագայում ձևավորվում ու սնունդ են ստանում արգանդի ներսում, մեծանում և դուրս են գալիս լույս աշխարհի, ինչով էլ ավարտվում է կենդանի էակի ծնունդը:

Կանայք և ամենայն իզականը գոյացել են այստեղից:

- Իսկ թռչունների տեսակը, երբ մազերի փոխարեն փետուրներ են աճում, ծագեց անչար, սակայն թեթևամիտ այրերից, որոնք հակված լինելով մտածել երկնայինի մասին, միամտաբար կարծում էին, թե ամենահավաստի ապացույցները նման հարցերում կարող է տրամադրել տեսողությունը: Ցամաքային
- e** կենդանիների տեսակը առաջացավ փիլիսոփայությանն անհաղորդներից ու երկնայինի բնության մասին չմտածողներից և առհասարակ գլխում եղած շրջապտույտներից չօգտվողներից, որոնք հետևում էին միայն կրծքում բնակվող հոգու մասերին:

Ահա ինչու այդ կենդանիների առջևի վերջույթները և գլուխները ձգվեցին դեպի իրենց հարազատ հողը և հպվեցին նրան, իսկ գանգը երկարեց և ձևափոխվեց ըստ այն շեղումների, որոնց ենթարկվեցին անգործության մատնված շրջապտույտները: Այդ տեսակին պատկանող ամեն մի կենդանի ունի չորս ոտք և նույնիսկ ավելի: Պակաս բանական կենդանիներին աստված տվեց ավելի մեծ քանակությամբ ոտքեր, քանի որ այդ կենդանիները ավելի շատ են հակված հպվելու երկրին: Իսկ ամենից անբանականները, որոնք ամբողջ մարմնով պառկում էին գետնին, առհասարակ ոտքերի կարիք չունեին, և այդ պատճառով աստված նրանց ստեղծեց անոտն և սողացող: Չորրորդ տեսակը ջրային է և առաջացավ ամենաանմիտներից և անգետներից, քանի որ արարիչները նույնիսկ մաքուր օդը արժանի չհամարեցին նրանց համար. չէ՞ որ սրանք տարբեր մոլորությունների արդյունքում անմաքուր էին հոգով, և որպեսզի սրանք չշնչեն մաքուր օդ, ուղարկեցին շնչելու պղտոր և ընդերքային ջուրը: Այստեղից է ձկների, ոստրեների և բոլոր ջրաբնակների տեսակը, որոնց ծայրահեղ տգիտության համար պատժել են բնական ծայրահեղ վայրով: Ըստ այդմ բոլոր այս կենդանի էակները և՛ այն ժամանակ, և՛ այժմ փոխակերպվում են մեկը մյուսին, և այդ փոխակերպությունը կապված է խելքի կամ անխելքության նվազման կամ ավելացման հետ:

92

b

c

Եվ հիմա մենք կարող ենք ասել, որ Համայնի մեր քննությունը հասավ իր ավարտին: Քանզի իր մեջ առնելով մահկանացու և անմահ կենդանի էակներին և լցվելով նրանցով՝ տիեզերքը դարձավ տեսանելի կենդանի էակ, ամենայն տեսանելին ընդգրկող աստված՝ մտախառու աստծո զգայախառու պատկեր, մեծագույն և գեղեցկագույն, լավագույն և կատարելագույն համասեռ երկինք:



ԻՈՆ

ՍՈԿՐԱՏԵՍ, ԻՈՆ՝

Սոկրատես. Ի՞նչն ողջու՛յն: Որտեղի՞ց ես գալիս մեզ 530
մոտ՝ էփեսոսի՞ց², քո տանի՞ց:

Ի՞ՈՆ. Բոլորովին էլ ոչ, Սոկրատես, էպիդարոսից³, Ասկլե-
պիոսին նվիրված տոնախմբություններից:

Սոկրատես. Բայց մի՞թե էպիդարոսցիները նաև հագ-
ներգության մրցույթներ են կազմակերպում այդ աստծո պատ-
վին:

Ի՞ՈՆ. Իհարկե: Նմանապես մրցույթներ են կազմակերպվում
նաև այլ մուսայական արվեստներում:

Սոկրատես. Ուրեմն մեզնի՞ց էլ ո՞մանք մասնակցել են
մրցույթին: Եվ շահե՞լ ենք արդյոք:

Ի՞ՈՆ. Մենք շահել ենք առաջին մրցանակը, Սոկրատես:

Սոկրատես. Ի՞նչ լավ բան սասցիր: Տե՛ս, որ այսուհետ **b**
հաղթենք նաև Պանաթենական խաղերում⁴:

Ի՞ՈՆ. Աստծո կամոք դա էլ կլինի:

Սոկրատես. Ես միշտ նախանձել եմ հագներգուի ձեր
արվեստին, ո՛վ Ի՞ՈՆ, որովհետև այն ստիպում է ձեզ միշտ հե-
տևել հագ ու կապին, գեղեցիկ տեսք ունենալ և միաժամանակ
շփվել բազում հրաշալի պոետների, և հատկապես Յոմերոսի՝ **c**
նրանցից ազնվագույնի և ամենաաստվածայինի հետ, ընդ որում
հասկանալով նրա մտաիղացումը, և ոչ պարզապես անգիր
անելով: Չէ՞ որ անհնար է լավ հագներգու լինել՝ առանց հաս-
կանալու, թե ինչ է ասում պոետը: Լսողների համար հագներ-
գուն պիտի լինի պոետի մտաիղացման մեկնիչը: Իսկ դա

անհնար է անել լավ, առանց իմանալու, թե ինչ է ասում պոետը: Այնպես որ այդ ամենը արժանի է նախանձի:

- Իոն.** Շշմարիտ ես ասում, ո՛վ Սոկրատես: Դա իմ արվեստի ամենաաշխատատար կողմն է, և ինձ թվում է, ես բոլորից ավելի գեղեցիկ եմ խոսում Յոմերոսի մասին, այնպես որ ո՛չ
- d** լամպակոսցի Մետրոդորոսը, ո՛չ թասոսցի Ստեսիմբրոտոսը, ո՛չ Գլավկոնը⁵, ո՛չ էլ երբևէ ապրածներից որևէ մեկը չի ասել այդքան շատ գեղեցիկ մտքեր Յոմերոսի մասին, որքան ես:

Սոկրատես. Լավ ես ասում, ո՛վ Իոն: Եվ պարզ է, որ չես հրաժարվի ներկայացնել դրանք ինձ:

Իոն. Այո, Սոկրատես, արժե լսել, թե ինչ գեղեցիկ եմ զարդարում Յոմերոսին: Ուստի և կարծում եմ, որ արժանի եմ, որ հոմերիդները⁶ ոսկե պսակ դնեն իմ գլխին:

- 531 Սոկրատես.** Ես դեռ ազատ ժամանակ կգտնեմ քեզ լսելու, բայց հիմա ասա ինձ հետևյալը. դու ուժեղ ես միայն Յոմերոսի՞ հարցում, թե՞ նաև Յեսիոդոսի⁷ և Արքիլոքոսի⁸:

Իոն. Օ ոչ, միայն Յոմերոսի: Եվ ինձ թվում է, դա բավական է:

Սոկրատես. Իսկ կա՞ մի բան, որի մասին Յոմերոսն ու Յեսիոդոսը նույնն են ասում:

Իոն. Կարծում եմ, կա, և այն էլ շատ:

Սոկրատես. Իսկ նրանցից որի՞ ասածը ավելի գեղեցիկ կմեկնեիր՝ Յոմերոսի՞, թե՞ Յեսիոդոսի:

Իոն. Այն, ինչի մասին նրանք նույնն են ասում, ես կմեկնեի նույնկերպ, Սոկրատես:

- b** **Սոկրատես.** Իսկ այն, ինչի մասին նույնը չեն ասու՞մ: Օրինակ, գուշակության, որի մասին երկուսն էլ խոսում են:

Իոն. Իհարկե:

Սոկրատես. Եվ ի՞նչ, ո՞վ ավելի լավ կմեկնեիր այդ երկու պոետների ասածի մեջ եղած նմանությունն ու տարբերությունը՝ դու՞, թե՞ լավ գուշակներից որևէ մեկը:

Իոն. Գուշակներից որևէ մեկը:

Սոկրատես. Իսկ եթե գուշակ լինեիր, չէի՞ր կարողանա

արդյոք մեկնել տարբեր ձևով ասվածը, եթե նույն ձևով ասվածն ի վիճակի ես մեկնել:

Իոն. Պարզ է, որ կկարողանայի:

Սուկրատես. Իսկ ինչպե՞ս է, որ դու ուժեղ ես Հոմերոսի c
հարցում, իսկ Հեսիոդոսի և մյուս պոետների հարցում՝ ոչ:
Մի՞թե Հոմերոսը խոսում է ուրիշ բաների մասին, քան մյուս
պոետները: Մի՞թե նա ևս չի պատմում մեծ մասամբ պատե-
րազմի մասին, մարդկանց փոխհարաբերությունների՝ առաքինի-
ների և հռոհների, հասարակ մարդկանց և բազմահմուտների:
Մի՞թե չի պատմում աստվածների մասին, թե ինչպես են նրանք
հաղորդակցվում միմյանց և մարդկանց հետ, և այն մասին, թե
ինչ է կատարվում երկնքում և Հադեսում⁹, ինչպես նաև աստ- d
վածների ու հերոսների մասին: Մի՞թե այս ամենի մասին չի
երգում Հոմերոսն իր պոեմներում:

Իոն. Ճշմարիտ ես ասում, ո՛վ Սուկրատես:

Սուկրատես. Իսկ մյու՞ս պոետները: Մի՞թե նույնի մասին
չեն երգում:

Իոն. Այո, Սուկրատես, բայց նրանք երգում են Հոմերոսից
տարբեր ձևով:

Սուկրատես. Եվ ինչպե՞ս, արդյո՞ք ավելի վատ:

Իոն. Շատ ավելի վատ:

Սուկրատես. Իսկ Հոմերոսը երգել է ավելի լա՞վ:

Իոն. Ավելի լավ, Ձևսը վկա:

Սուկրատես. Արդ, սիրելի՛ Իոն, եթե թվի մասին խոսեն
չատերը, սակայն մեկը խոսի ավելի լավ, նրան կտարբերեն
մյուսներից, այդպես չէ՞:

Իոն. Այդպես է:

Սուկրատես. Եվ տարբերողը կլինի նա, ով կտարբերի e
նաև վա՞տ խոսողներին, թե՞ ուրիշ մեկը:

Իոն. Ոչ, դա կլինի նույն մարդը:

Սուկրատես. Արդյո՞ք նա, ով տիրապետում է թվաբանու-
թյան արվեստին:

Իոն. Այո:

532 Սոկրատես. Եվ ի՞նչ, եթե շատերը խոսեն այն մասին, թե որն է առողջ սնունդը, և մեկը լավ խոսի մյուսներից, նրան կտարբերի մի մարդ, իսկ վատ խոսողին մեկ ուրի՞շը, թե՞ երկուսին էլ նույն մարդը:

Իոն. Պարզ է, որ նույն մարդը:

Սոկրատես. Ո՞վ է նա: Ի՞նչ անունով կոչենք նրան:

Իոն. Դա բժիշկն է:

Սոկրատես. Ուրեմն մենք նկատի ունենք, որ բազում խոսողների մեջ միշտ նույն մարդն է տարբերում նրան, ով լավ է խոսում, և նրան, ով վատ է խոսում: Եվ եթե չտարբերի վատ խոսողին, պարզ է, որ չի տարբերի նաև լավ խոսողին, քանի որ նրանք խոսում են նույն բանի մասին:

Իոն. Այդպես է:

Սոկրատես. Հետևաբար նույն մարդը երկուսի հարցում էլ ուժե՞ղ է:

Իոն. Այո:

Սոկրատես. Քո ասելով, Հոմերոսը և մյուս պոետները, այդ թվում Հեսիոդոսն ու Արքիլոքոսը, խոսում են նույնի մասին, բայց տարբեր կերպ՝ առաջինը անում է դա լավ, իսկ մյուսները՝ վա՛տ:

Իոն. Եվ ճշմարիտ են ասում:

b Սոկրատես. Արդ, եթե դու տարբերում ես լավ խոսողին, կտարբերես նաև վատին, այսինքն այն, որ նա վատ է խոսում:

Իոն. Թերևս:

Սոկրատես. Այդ դեպքում, սիրելիս, սխալված չենք լինի, եթե ասենք, թե Իոնը ուժեղ է և՛ Հոմերոսի, և՛ մյուս պոետների մասին խոսելիս, քանի որ նա ինքը համաձայն է, որ նույն մարդը ի վիճակի է դատել նույն բանից խոսող բոլորի մասին: Չէ՞ որ գրեթե բոլոր պոետները նույնի մասին են երգում:

c Իոն. Բայց, Սոկրատես, ի՞նչն է այդ դեպքում պատճառը, որ ուրիշ որևէ պոետի մասին խոսող մեկին լսելիս ես չեմ կարողանում ուշադիր լինել և արժեքավոր որևէ բան ավելացնել, այլ պարզապես ննջում եմ, իսկ երբ ո՞նց հիշատակում է Հոմե-

րոսին, իսկույն արթնանում եմ և ուշադիր եմ դառնում և չեմ դժվարանում ինչ-որ բան ասել:

Սուկրատես. Դրա պատճառը դժվար չէ կռահել, բարեկամս: Ամենքին էլ պարզ է, որ արվեստի և իմացության շնորհիվ չէ, որ դու կարողանում ես խոսել Յոներոսի մասին: Քանզի եթե կարողանայիր անել դա արվեստի շնորհիվ, կկարողանայիր խոսել նաև բոլոր մյուս պոետների մասին: Չէ՞ որ բանաստեղծական արվեստը ամբողջական մի բան է¹⁰: Այդպես չէ՞:

Իոն. Այո:

Սուկրատես. Իսկ եթե վերցնենք ուրիշ որևէ արվեստ որպես ամբողջություն, մի՞թե դիտարկման նույն եղանակով չենք մոտենա դրանցից յուրաքանչյուրին: Կուզե՞ս լսել, թե ինչ կասեմ այդ մասին, Իոն:

Իոն. Իհարկե կուզեմ, Սուկրատես, Ձևսը վկա: Ես սիրում եմ լսել ձեզ՝ իմաստուններիդ:

Սուկրատես. Շատ կուզեի, որ ասածդ ծձմարտություն լիներ, ո՛վ Իոն: Բայց իմաստունները դուք եք՝ հազմերգուներդ, դերասաններդ¹¹ և նրանք, ում ստեղծագործությունները երգում եք, իսկ ես միայն ասում եմ ծձմարտությունը՝ սովորական մարդուն հասու մի բան: Մի տե՛ս, թե որքան հեշտ ու հասարակ բան է այն, ինչի մասին հենց նոր հարցրի քեզ. դրան կարող է պատասխանել յուրաքանչյուր ոք և դիտարկման եղանակն էլ նույնը կմնա, եթե նա վերցնի արվեստը որպես ամբողջություն: Ուրեմն սկսենք. գոյություն ունի՞ արդյոք նկարչական արվեստը որպես ամբողջություն:

Իոն. Այո:

Սուկրատես. Հետևաբար եղել են և կան շատ նկարիչներ՝ ինչպես լավ, այնպես էլ վա՞տ:

Իոն. Իհարկե:

Սուկրատես. Տեսե՞լ ես արդյոք որևէ մեկին, ով կարող է բացատրել, թե Ազլաոփոնի որդի Պոլիզոնտոսի¹² նկարածից ինչն է լավ և ինչն է վատ, իսկ մյուս նկարիչների դեպքում չի

533 կարող: Եվ երբ ոմն ցուցադրում է ուրիշ նկարիչների գործերը, նա մնջում է, չի հասկանում և ասելու ոչինչ չունի, իսկ երբ պետք է կարծիք հայտնել Պոլիգնոտոսի կամ մեկ ուրիշ նկարչի մասին, բայց միայն մեկի մասին, նա արթնանում է, դառնում է ուշադիր և հեշտությամբ սկսում է խոսել¹³:

Իոն. Ոչ, Ձևսը վկա, չեմ տեսել:

Սոկրատես. Իսկ քանդակագործության մեջ տեսե՞լ ես արդյոք որևէ մեկին, ով լավ է բացահայտում Մետիոնի որդի Դեդալոսի, Պանոպևսի որդի Էպեյոսի կամ սամոսցի Թեոդորոսի¹³ կամ որևէ այլ քանդակագործի երկերի արժանիքները, իսկ մյուս քանդակագործների աշխատանքները դիտելիս չի հասկանում դրանք, մնջում է և ասելու ոչինչ չունի:

Իոն. Ոչ, Ձևսը վկա, այդպիսի բան չեմ տեսել:

Սոկրատես. Բայց կարծում եմ, որ նաև ֆլետասհարության, կիթառահարության, կիթառի նվագակցությամբ երգեցողության կամ հագներգության մեջ նույնպես չես տեսել մեկին, ով լավ է խոսում Օլիմպոսի, Թամիրասի, Օրփեոսի, իթակեցի c հագներգու Թենիոսի¹⁴ մասին, իսկ էփեսոսցի Իոնի դեպքում սկսում է շփոթվել և չի հասկանում, թե ինչն է նրա հագներգության մեջ լավ, իսկ ինչը՝ ոչ:

Իոն. Սրա դեմ առարկելու ոչինչ չունեմ, Սոկրատես: Ես միայն լավ գիտեմ, որ բոլոր մարդկանցից առավել գեղեցիկ եմ խոսում Հոմերոսի մասին: Դա հաջողվում է ինձ, քանզի ուրիշներն էլ հաստատում են, որ նրա մասին լավ եմ խոսում, իսկ մյուսների մասին՝ ոչ: Փորձիր հասկանալ, թե ինչից է դա:

d Սոկրատես. Հասկանում եմ, Իոն, և պատրաստվում եմ պարզաբանել, թե ինչ կարծիք ունեմ դրա մասին: Ինչպես ասացի քիչ առաջ, Հոմերոսի մասին քո լավ խոսելը արվեստի արդյունք չէ, այլ աստվածային ուժ, որը շարժում է քեզ, ինչպես այն քարի ուժը, որը Եվրիպիդեսը կոչեց մագնեսիական, իսկ բազմությունը կոչում է հերակլյան¹⁵: Այդ քարը ոչ միայն դեպի իրեն է ձգում երկաթյա օղերը, այլև այնպիսի ուժ է հաղորդում դրանց, որ կարողանում են անել նույնը, ինչ այդ

քարը, այսինքն ձգել օղեր, այնպես որ երբեմն կազմվում է e միմյանց կպած երկաթյա բեկորների և օղերի երկար շղթա, որոնց ողջ ուժը հիշյալ քարի ուժից է: Այդպես էլ Մուսան ներշնչում է որոշ մարդկանց, և այդ ներշնչվածներից ձգվում է մյուս ներշնչվածների շղթան: Բոլոր լավ էպիկական պոետները ստեղծում են իրենց գեղեցիկ պոեմները ոչ թե արվեստի շնորհիվ, այլ ներշնչանքի և մոլեգնության մեջ: Այդպես նաև մելոսի պոետները, մոլեգնորեն պարող կորիբանտների պես¹⁶, մոլեգնության մեջ են ստեղծում իրենց գեղեցիկ երգերը: Այդժամ նրանց համակում է ներդաշնակությունն ու ռիթմը: Նրանք դառնում են մոլեգնած բաքոսներ: Չէ՞ որ մոլեգնած վիճակում են բաքոսուհիները գետերից մեղր ու կաթ հավաքում, իսկ երբ սթափ են՝ ոչ: Նույնն է անում նաև մելոսի պոետների հոգին. այդ մասին իրենք պոետներն են խոսում: Նրանք ասում են, թե մեղուների նման թռչում-գնում են Մուսաների այգիներն ու պուրակները¹⁷ և բերում են մեզ մեղրատու աղբյուրների մոտ հավաքած երգերը¹⁸: Եվ ճշմարիտ են ասում, քանզի պոետը թեթև, թևավոր ու սրբազան էակ է և չի կարող ստեղծել ռիթմ, եթե չի ներշնչվել, չի ընկել մոլեգնության մեջ ու կորցրել բանականությունը: Իսկ քանի դեռ մարդու միտքը տեղն է, նա չի կարող ստեղծագործել և գուշակել: Այնպես որ պոետները բազում լավ բաներ են անում ու ասում [մարդկանց] գործերի մասին, ինչպես դու՝ Հոմերոսի, ոչ թե արվեստի օգնությամբ, այլ աստծո սահմանումով: Յուրաքանչյուր ոք կարող է լավ ստեղծել միայն այն, ինչին նրան դրդել է Մուսան. մեկը՝ դիփիրամբոսներ¹⁹, մյուսը՝ ծոներ²⁰, սա՛ հիպորքեմներ²¹, նա՛ պոեմներ, իսկ մեկ ուրիշը՝ յամբոսներ²². մնացած բաներում նրանք բոլորն էլ թույլ են, չէ՞ որ խոսում են ոչ թե արվեստի ուժով, այլ աստվածային զորությամբ: Եթե նրանք արվեստի ուժով կարողանային գեղեցիկ խոսել մեկ բանի մասին, կկարողանային խոսել մնացյալի մասին ևս: Ահա ինչու աստված խլում է նրանցից խելքը և իրեն օգնական դարձնում նրանց, ինչպես որ օգնական է դարձնում գուշակներին և աստվածային մար-

534

b

c

- d** գարեներին, որպեսզի լսելով նրանց իմանանք, որ ոչ թե նրանք՝ խելքից՝ զրկվածներն են այդպիսի մեծարժեք բաներ ասում, այլ որ խոսում է ինքը աստված և նրանց միջոցով մեզ է փոխանցում իր խոսքը: Սրա լավագույն ապացույցն է քալկիդացի Տիննիքոսը, ով հիշարժան ոչինչ չի ստեղծել, բացառությամբ մի պեանի²³, որը երգում են բոլորը: Թերևս դա ամենաչքնաղ երգն է, և, ինչպես ինքն է ասում, դա «Մուսաների գյուտն էր»: Սրանով, կարծում եմ, աստված մեզ հստակ ցույց է տվել, որ մենք չպիտի մտածենք, թե այդ երկերը մարդկային են և պատկանում են մարդկանց. ոչ, դրանք աստվածային են և պատկանում են աստվածներին, իսկ պոետները ոչ այլ ոք են, քան աստվածների մեկնիչներ, որոնցից յուրաքանչյուրը համակված է այն աստծով, որը տիրում է նրան: Դա ապացուցելու համար աստված վատագույն պոետի միջոցով երգեց լավագույն երգը: Քեզ չի՞ թվում, որ ես իրավացի եմ, ո՛վ ի՞նչ:
- ԻՈՆ.** Թվում է, որ իրավացի ես, Ձևսը վկա: Քո խոսքերը դիպչում են հոգուս, Սոկրատես, և ես կարծում եմ, որ լավ պոետները աստվածային ներշնչանքով մեկնում են մեզ աստվածների խոսքը:
- Սոկրատես.** Իսկ դուք, հազներգուներդ, մեկնում եք պոետների՞ն:
- ԻՈՆ.** Դարձյալ ճշմարիտ ես ասում:
- Սոկրատես.** Հետևաբար դուք մեկնիչների մեկնիչներ՞ը եք:
- ԻՈՆ.** Միանգամայն ճիշտ է:
- b** **Սոկրատես.** Այդ դեպքում ասա՛ ինձ, ԻՈՆ, և մի՛ թաքցրու այն, ինչի մասին կհարցնեմ: Երբ դու լավ ես արտասանում պոետը և հատկապես զարմացնում հանդիսատեսին՝ պատմելով, թե ինչպես է Ոդիսևսը հանկարծ հայտնվում շեմին, բացահայտում իրեն փեսացուների առջև և ոտքի տակ թափում նետերը, թե ինչպես է Աքիլլեսը հարձակվում Հեկտորի²⁴ վրա, կամ տխուր մի բան Անդրոմաքեի, Հեկուբայի կամ Պրիամոսի²⁵
- c** մասին, մի՞թե ինքդ քեզնից դուրս եկած չես այդժամ և չի՞ թվում արդյոք քեզ, թե հոգիդ ներշնչանքի պահին գտնվում է

այնտեղ, ուր տեղի են ունենում անցքերը, որոնց մասին խոսում են՝ Իթակեում²⁶, Տրոյայում կամ այլուր:

Իոն. Որքա՞ն ճշմարիտ է բերածդ օրինակը, Սոկրատես: Կասեն առանց թաքցնելու: Երբ որևէ տխուր բան են արտասանում, աչքերս լցվում են արտասուքով, իսկ երբ արտասանում են ահարկու և դաժան ինչ-որ բան, մազերս ցից-ցից են կանգնում և սիրտս ուժգին բաբախում է:

Սոկրատես. Եվ ի՞նչ, Իոն, մի՞թե սթափ վիճակում է այն մարդը, որ խայտաբղետ զգեստ հագած և ոսկե պսակ դրած՝ լալիս է զոհաբերությունների և տոնակատարությունների ժամանակ, առանց իր հագ ու կապից որևէ բան կորցնելու, կամ սարսափ է ապրում, գտնվելով բյուրավոր բարեկամ մարդկանց մեջ, որոնցից և ոչ մեկը նրան չի թալանում և չարիք չի գործում:

Իոն. Ոչ, Սոկրատես, Ձևսը վկա, այդպիսի մարդը, ճշմարիտն ասած, բնավ էլ սթափ վիճակում չէ:

Սոկրատես. Իսկ գիտե՞ս, որ դուք նույն վիճակին եք հասցնում նաև հանդիսատեսներից շատերին:

Իոն. Շատ լավ գիտեմ: Ես հաճախ նայելով նրանց վերևից՝ բեմից, տեսնում եմ, թե ինչպես են արտասվում և երկյուղած հետևում իմ խոսքին: Չէ՞ որ ես պիտի շատ ուշադիր լինեմ: Քանզի եթե նրանց ստիպեմ արտասվել, ինքս, դրամ վաստակելով, կօծաղեն, իսկ եթե ստիպեմ ծփծաղել, զրկվելով դրամից՝ ինքս լաց կլինեմ:

Սոկրատես. Հիմա հասկանում ես, որ քո հանդիսատեսը վերջին օղակներից մեկն է, որոնք, ինչպես ասացի, միմյանց միջոցով ուժ են ստանում հերակլյան քարից: Մեջտեղում դու ես՝ հազներգուն և դերասանը, առաջին տեղում ինքը պոետն է, իսկ աստված ձեր բոլորի միջոցով տանում է մարդու հոգին ուր ցանկանա, մեկից մյուսին հաղորդելով իր ուժը: Եվ ասես քարից ձգվում է խորևտների²⁷, ուսուցիչների և աշակերտների երկար շղթան, որոնք օղակների միջոցով միացված են Մուսային: Մի պոետը միացած է մի Մուսային, մեկ ուրիշը՝ ուրիշին: 536

Մենք դա կոչում ենք «համակված լինել»: Եվ դա շատ մոտ է իրականությանը, քանի որ Մուսան համակում է նրան: Իսկ առաջին օղակներից՝ պոետներից, կախված են մյուս ներշնչվածները՝ ոմանք Օրփեոսից, ոմանք Մուսեոսից²⁸: Սակայն մեծամասնությունը համակված է Յոմերոսով, քանի որ նա համակում է նրանց: Նրանցից մեկն էլ դու ես, Իոն, և Յոմերոսը համակել է քեզ: Եվ երբ ոմն երգում է որևէ ուրիշ պոետի [երգ], դու ննջում ես ու դժվարանում ինչ-որ բան ասել, իսկ երբ այդ պոետի երգը՝ անմիջապես զարթնում ես, հոգիդ սկսում է պարել, և իսկույն ասելու բան ես գտնում: Որովհետև այն, ինչ

c ասում ես Յոմերոսի մասին, ո՛չ արվեստի, ո՛չ էլ իմացության միջոցով է, այլ աստծո սահմանումով և համակվածությունից: Ինչպես որ կորիթանոներն են սուր կերպով զգում միայն այն մեղեդին, որը գալիս է նրանց համակած աստծուց և որի համար նրանք հեշտությամբ շարժումներ ու խոսքեր են գտնում, մինչդեռ ուրիշ որևէ մեղեդի նրանց մտքով էլ չի անցնում, այդպես էլ դու, Իոն, երբ որևէ մեկը հիշում է Յոմերոսին, հմուտ ես, իսկ մյուսների դեպքում՝ ոչ: Իսկ պատճառը, եթե հարցնում

d ես ինձ, թե ինչու հմուտ ես Յոմերոսի դեպքում, իսկ մյուսների դեպքում՝ ոչ, այն է, որ դու ոչ թե արվեստի, այլ աստծո սահմանումով ես Յոմերոսի հմուտ գովերգիչը:

Իոն. Լավ ես ասում, Սոկրատես: Բայց ես կզարմանայի, եթե բացատրեիր և համոզեիր ինձ, որ ես գովերգում եմ Յոմերոսին համակվածության և մոլեգնության մեջ: Կարծում եմ, դու էլ այդպես չեիր մտածի, եթե լսեիր, թե ինչպես եմ խոսում Յոմերոսի մասին:

Սոկրատես. Ես ուզում եմ լսել, բայց միայն նրանից հետո, երբ կպատասխանես իմ հարցին: Յոմերոսի երգածից

e ինչի՞ մասին ես լավ խոսում: Ակնհայտ է, որ ոչ ամեն ինչի մասին²⁹:

Իոն. Վստահ եղիր, Սոկրատես, ամեն ինչի մասին:

Սոկրատես. Բայց ոչ այն մասին, ինչը կարող ես չիմանալ և ինչի մասին խոսում է Յոմերոսը:

Իոն. Այդ ինչի՞ մասին է խոսում Հոմերոսը, որ ես չգիտեմ:

Սուկրատես. Հոմերոսը հաճախ խոսում է ամենատարբեր արվեստների մասին, օրինակ՝ կառք վարելու արվեստի: Եթե հիշեմ, կարտասանեմ այդ հատվածը:

537

Իոն. Ինքս կարտասանեմ: Ես հիշում եմ:

Սուկրատես. Ուրեմն ասա ինձ, ի՞նչ է ասում Նեստորն իր որդուն՝ Անտիլոքոսին, խորհուրդ տալով զգույշ լինել շրջադարձերի ժամանակ Պատրոկլոսի պատվին անցկացվող կառքերի մրցավազքում:

Իոն.

*«Կառքի շքեղ աթոռակի վրա դու քեզ ամուր պահիր,
Փոքր-ինչ դեպի ձախ կողմ թեքված: Աշակողմյան քո*

b

խայտ ձիուն

Հաղթ մտրակիր սպառնաձայն՝ երասանը թույլ թողնելով:

Ձախ ձին այնժամ թող մոտիկից նշանն անցնի, սակայն

այնպես,

Որ կարծես թե գեղեցկակերտ կունդն անիվի շփվում է ճիշտ

Նշան-սյունի մակարդակին: Զգու՛յշ, քարին դու չգարկվես...»³⁰

Սուկրատես. Բավական է: Ո՞վ ավելի լավ կորոշեր, ճիշտ է արդյոք Հոմերոսի ասածը, թե ոչ, բժի՞շկը, թե՞ կառապանը:

c

Իոն. Իհարկե կառապանը:

Սուկրատես. Որովհետև տիրապետու՞մ է այդ արվեստին, թե՞ ուրիշ ինչ-որ պատճառով:

Իոն. Ոչ, որովհետև տիրապետում է այդ արվեստին:

Սուկրատես. Եվ յուրաքանչյուր արվեստին աստված թույլ է տվել իմանալ մեկ որևէ գո՞րծ: Քանզի այն, ինչ իմանում ենք նավավարության արվեստից, չենք կարող իմանալ բժշկությունից:

Իոն. Իհարկե ոչ:

Սուկրատես. Նմանապես բժշկությունից չենք կարող իմանալ այն, ինչ իմանում ենք շինարարական արվեստից:

d

Իոն. Իհարկե ոչ:

Սոկրատես. Իսկ մի՞թե այդպես չէ բոլոր արվեստների պարագայում. այն, ինչ իմանում ենք մի արվեստից, չենք իմանում մյուսից: Բայց նախ ասա ինձ. մի՞թե դու չես կոչում մի արվեստն այսպիսին, իսկ մյուսը՝ այնպիսին:

Իոն. Այո:

- e Սոկրատես. Եվ վարվում ես ինձ նմա՞ն. տեսնելով, որ մի արվեստը այսպիսի բաների արվեստ է, կոչում ես այսպիսին, իսկ տեսնելով, որ մեկ ուրիշ արվեստ այնպիսի բաների արվեստ է, կոչում ես այնպիսի՞ն:

Իոն. Այո:

Սոկրատես. Եթե այդ արվեստները լինեին նույն բանի իմացությունը, ինչու՞ պիտի կոչեինք դրանք տարբեր անուններով, երբ երկուսն էլ կարելի էր կոչել մեկ անունով: Այսպես, ես գիտեմ, որ սրանք հինգ մատներ են, քեզ դա նույնպես հայտնի է, և եթե ես հարցնեի քեզ՝ արդյո՞ք դա հայտնի է ինձ և քեզ միևնույն արվեստի՞ թվաբանության շնորհիվ, դու իհարկե կպատասխանեիր, որ միևնույն արվեստի շնորհիվ:

Իոն. Այո:

- 538 Սոկրատես. Իսկ հիմա ասա ինձ այն, ինչի մասին ուզում էի հարցնել. քո կարծիքով այդպես է բոլո՞ր արվեստների դեպքում և արդյո՞ք շնորհիվ մի արվեստի մենք անհրաժեշտաբար ճանաչում ենք մի բան, իսկ ուրիշ արվեստների՞ ոչ թե դա, այլ բոլորովին ուրիշ բաներ:

Իոն. Իմ կարծիքով այդպես է, Սոկրատես:

Սոկրատես. Եվ նա, ով չի տիրապետում որևէ արվեստի, ի վիճակի չէ լավ հասկանալ այդ արվեստի միջոցով ասվածը կամ արվա՞ծը:

- b Իոն. Շատ ճիշտ է:

Սոկրատես. Իսկ ո՞վ ավելի լավ գիտի՞ ճիշտ է արդյոք ասում Յոմերոսը քո արտասանած հատվածում, դու՞, թե՞ կառապանը:

Իոն. Կառապանը:

Սուկրատես. Բայց դու հազներգու ես, և ոչ կառապան:
Իոն. Այո:

Սուկրատես. Իսկ հազներգուի արվեստը տարբե՞ր է կա-
ռապանի արվեստից:

Իոն. Այո:

Սուկրատես. Եվ եթե տարբեր է, ապա ուրի՞շ ինչ-որ բա-
ների իմացություն է:

Իոն. Այո:

Սուկրատես. Իսկ երբ Հոմերոսը պատմում է, թե ինչպես **c**
է Հեկամեդեն՝ Նեստորի հարձը, բալասան տալիս վիրավոր
Մաքսոնին, և ասում է մոտավորապես այսպես.

*Խառնեց զհինին Պերաննայան: Պղնձակերտ նուրբ քերիչով
Վրան քերեց այծի պանիր, ապա ցանեց ճերմակ փոխինդ.*

Այդպես կազմած քաղցր ընպելին՝ առաջարկեց, որ վայելեն,³¹ **d**

ապա Հոմերոսի ճիշտ կամ սխալ լինելը հասկանալու համար
անհրաժեշտ է բժկությա՞ն արվեստը, թե՞ հազներգուի արվեստը:

Իոն. Բժկության արվեստը:

Սուկրատես. Իսկ երբ Հոմերոսն ասում է.

Նա անհատակ խորքը սուզվեց և մըխըրճվեց ինչպես

կապար,

Որը, կցված դաշտաբնակ արջառների կեռ եղջյուրին,

Սահում, տանում է անկշտում ձկներին մահ և կործանում,³²

ինչ կասենք, ո՞ր արվեստն է հարկավոր որոշելու համար՝ ճիշտ
է արդյոք նա ասում, թե ոչ, ձկնորսի՞, թե՞ հազներգուի:

Իոն. Ակնհայտ է, որ ձկնորսի, Սուկրատես:

Սուկրատես. Արդ, մտածիր հետևյալի մասին. եթե դու
հարցնեիր ինձ. «Սուկրատես, եթե դու Հոմերոսի մոտ գտնում **e**
ես այն, ինչը հատուկ է յուրաքանչյուր արվեստին, գտիր այդ-
պիսի մի բան նաև գուլակի արվեստի համար, որպեսզի նա էլ

դատի, թե ինչն է դրա մասին երգվում լավ, իսկ ինչը՝ ոչ»,—
 ես հեշտությամբ կպատասխանեի քեզ: «Ողիսականում» նա
 հաճախ է խոսում այդ մասին, օրինակ, Թեոկլիմենոս գուշակը՝
 Մելամպոսի տոհմից, այսպես է ասում փեսացուներին:

539

«Ո՛վ դժբախտներ, այս ինչպիսի աղետ է ձեր գլխին

կախված:

Մութն է պատում դեմքերը ձեր, ձեր գլուխներն ու ոտքերը,
 եվ ողբալուց ձեր աչքերը թացացել են արցունքներից:

Միջնասյուններն ու պատերը սև արյամբ են ցողված ահա:
 Գավիթն ու բակն արդ լցված են մեռյալների տեսիլներով,
 Որոնք անվերջ վազվզում են երեքոսի մութ քառուսում:

Իսկ արևը մթազնել է, թանձր խավարն է մեզ պատել»³³:

- b** Եվ նման հատվածները շատ են նաև «Իլիականում», այսպես, օրինակ, ամրոցի պատերի մոտ տեղի ունեցող ճակատամարտի հատվածում Հոմերոսն ասում է.

«Խորհում էին, ինչպես անցնել,— անդ երևաց մի մեծ հրաշք.
 Բարձրասլաց մի մեծ արծիվ հայտնվեց զորքի ձախակողմից՝
 ճանկերի մեջ բռնած մի օձ արյունախում ու ահռելի:

- c** Կենդանի էր տակավին օձն ու դեռ կռվում էր կատաղի.
 Նա գալարվեց, խայթեց կուրծքը իր գերողի՝ վզի մոտը,
 եվ արծիվը, վիրավորված, իսկույն օձին զցեց գետին:

- d** Վերևից օձն հանկարծակի թափով ընկավ զորքերի մեջ,
 Իսկ արծիվը ճիչ արձակեց և հողմահար թռավ հեռուն»³⁴:

Եվ ես ասում եմ, որ այսպիսի բաներ պիտի քննի և դիտարկի գուշակը:

Ի՞նչ. ճշմարիտ ես ասում, Սոկրատես:

Սոկրատես. Եվ դու նույնպես, Ի՞նչ, ճշմարիտ ես ասում:
 Իսկ հիմա, ինչպես որ ես «Իլիականից» հատվածներ ընտրեցի

- e** քեզ համար, որ վերաբերում են գուշակին, բժշկին և ձկնոր-

սին, այդպես էլ դու, քանի որ Յոմերոսի հարցում ինձնից ավելի փորձառու ես, ընտրիր ինձ համար այն, ինչ վերաբերում է հազներգուի արվեստին և ինչի մասին պիտի մտածի ու դատի հազներգուն:

Իոն. Ես կասեի՝ ամեն ինչի մասին, Սոկրատես:

Սոկրատես. Բայց դու չասացիր «ամեն ինչը», Իոն: Մի՞թե այդքան մոռացկոտ ես: Վայել չէ հազներգուին մոռացկոտ լինել:

Իոն. Բայց ի՞նչ եմ մոռացել:

540

Սոկրատես. Չե՞ս հիշում, ինչպես ասացիր, թե հազներգուի արվեստը տարբեր է ձկնորսությունից:

Իոն. Հիշում եմ:

Սոկրատես. Դու նաև համաձայն ես, որ եթե տարբեր է, տարբեր բանի իմացություն է:

Իոն. Այո:

Սոկրատես. Հետևաբար, քո ասելով, ամեն բան չէ, որ հայտնի է հազներգուի արվեստին և հազներգուին:

Իոն. Թերևս բացառությամբ այդ բաների, Սոկրատես:

b

Սոկրատես. «Այդ բաներ» ասելով նկատի ունես այն, ինչն առնչվում է ուրիշ արվեստներին: Բայց ի՞նչն է առնչվում հազներգուի արվեստին, եթե այն, ինչն առնչվում է, ամեն ինչը չէ:

Իոն. Կարծում եմ այն, թե որ խոսելակերպն է վայել տղամարդուն, որը՝ կնոջը, որը՝ ստրուկին, որը՝ ազատին, որը՝ հպատակին և որը՝ իշխանավորին:

Սոկրատես. Իսկ քո կարծիքով, փոթորկահույզ ծովում հայտնված նավի պարագայում ո՞վ ավելի ճիշտ կասի՝ ինչ է հարկավոր անել, հազներգու՞ն, թե՞ նավավարը:

Իոն. Ոչ, նավավարը ավելի լավ գիտի դա:

c

Սոկրատես. Իսկ թե ինչ է հարկավոր ասել հիվանդին, մի՞թե հազներգուն բժշկից ավելի լավ գիտի:

Իոն. Ոչ:

Սոկրատես. Դու գիտե՞ս ինչպես պիտի խոսի ստրուկը:

Իոն. Այո:

Սոկրատես. Օրինակ, թե ինչ պիտի ասի եզնարած ստրուկը, որը փորձում է սանձել կատաղած ցուլերին, քո ասելով, հազներգուն ավելի լա՞վ գիտի, քան ինքը եզնարածը:

Իոն. Իհարկե ոչ:

d բուրդ մանելու մասի՞ն:

Իոն. Ոչ:

Սոկրատես. Բայց գուցե հազներգուն գիտի, թե ինչ պիտի ասի զորավարը, գտնեպնդելով զինվորներին:

Իոն. Այո, հազներգուն գիտի դա:

Սոկրատես. Այսինքն հազներգուի արվեստը զորավարի արվեստ է:

Իոն. Ես անշուշտ կիմանայի, թե ինչ պիտի ասի զորավարը:

e Սոկրատես. Որովհետև դու, հավանաբար, հմուտ ես նաև զորավարության մեջ, Իոն: Չէ՞ որ եթե հեծյալ լինեիր և միննույն ժամանակ կիթառահար, կտարբերեիր լավ և վատ հեծյալին, ու եթե քեզ հարցնեի. «Ի՞նչ արվեստի միջոցով ես ճանաչում լավ հեծյալին, ո՞վ Իոն, շնորհիվ այն բանի, որ հեծյա՞լ ես, թե՞ որ կիթառահար ես», ի՞նչ կպատասխանեիր ինձ:

Իոն. Կպատասխանեի՝ հեծյալի արվեստի շնորհիվ:

Սոկրատես. Եվ եթե տարբերեիր լավ կիթառահարին, կհամաձայնեիր, որ տարբերում ես այն արվեստի օգնությամբ, որի շնորհիվ կիթառահար ես, այլ ոչ նրա, որի շնորհիվ հեծյա՞լ ես:

Իոն. Այո:

Սոկրատես. Իսկ երբ գիտես ռազմական արվեստը, ո՞ր իմացության օգնությամբ է դա՞ նրա՞, որի շնորհիվ զորավար ես, թե՞ որի շնորհիվ լավ հազներգու ես:

541 Իոն. Իմ կարծիքով այստեղ չկա տարբերություն:

Սոկրատես. Ինչպե՞ս թե: Դու ասում ես, թե չկա՞ տարբերություն: Մե՞կ արվեստ ես համարում հազներգուի և զորավարի արվեստը, թե՞ դրանք երկուսն են:

Իոն. Ըստ իս, դա մեկ արվեստ է:

Սոկրատես. Հետևաբար նա, ով լավ հագներգու է, նաև լավ զորավա՞ր է:

Իոն. Իհարկե, Սոկրատես:

Սոկրատես. Ուրեմն լավ զորավարը նաև լավ հագներգու՞ է: **b**

Իոն. Այդ մեկը չեմ կարծում:

Սոկրատես. Բայց դու կարծում ես, որ լավ հագներգուն նաև լավ զորավա՞ր է:

Իոն. Իհարկե:

Սոկրատես. Ուրեմն դու լավագու՞յն հագներգուն ես հեղինակների մեջ:

Իոն. Լավագույնը, Սոկրատես:

Սոկրատես. Նաև լավագույն զորավա՞րն ես հեղինակների մեջ, ո՞վ Իոն:

Իոն. Վստահ եղիր դրանում, Սոկրատես: Ես սովորել եմ դա Հոմերոսից:

Սոկրատես. Բայց հանուն աստվածների, ո՞վ Իոն, լիցելով հեղինակների մեջ լավագույն զորավարը և հագներգուն, ինչու՞ շրջելով Հունաստանով մեկ դու միայն հագներգությամբ ես զբաղվում, իսկ զորավարությամբ՝ ոչ: Մի՞թե կարծում ես, թե ոսկե պսակով զարդարված հագներգուն անչափ պիտանի է հեղինակին, իսկ զորավարը՝ ոչ: **c**

Իոն. Մեր քաղաքը, Սոկրատես, ձեր զորավարության տակ է, ահա ինչու զորավարի կարիք չունի, իսկ դուք և լակեդեմոնացիները ինձ զորավար չեն կարգի: Չէ՞ որ դուք կարծում եք, թե ինքներդ էլ ի վիճակի եք զորավարություն անել:

Սոկրատես. Ազնվագույն Իոն, չե՞ս ճանաչում կիզիկոսցի Ապոլլոդորոսին:

Իոն. Այդ ո՞վ է:

Սոկրատես. Նա, ում աթենացիները բազմիցս իրենց զորավար են կարգել, թեպետ օտարական է: Իսկ անդրոսցի Փանոսթենեսին և կլագոմենցի Հերակլիդեսին³⁵ վստահել են և՛ **d**

զորավարություն, և՛ իշխանության այլ ձևեր, որովհետև նրանք, թեպետ նույնպես օտարական են, սակայն ապացուցել են, որ արժանի են այդ պատիվներին: Ինչու՞ զորավար չկարգել և չպատվել էփեսոսցի Իոնին, եթե նա արժանի է դրան: Մի՞թե

e դուք՝ էփեսոսցիներդ, նախկին աթենացիներ չեք³⁶, կամ մի՞թե էփեսոսը որևէ քաղաքից պակաս քաղաք է: Եվ եթե դու, ո՛վ Իոն, ճիշտ ես ասում, թե տիրապետում ես Յոնեթրոսին գովերգելու արվեստին և իմացությանը, ուրեմն մեղք ես գործում, քանզի խոստանում ես ցույց տալ ինձ Յոնեթրոսի մասին քո բազում գեղեցիկ իմացությունները, սակայն խաբում ես և ամենկին էլ ցույց չես տալիս: Դու մինչև իսկ չես ցանկանում պատասխանել այն հարցին, որը երկար ժամանակ է արդեն տալիս եմ քեզ. ո՞րն է քո իսկական հմտությունը: Պրոտոսի³⁷ նման գալարվում ես, այս ու այն կողմ ընկնում, այնպես որ ինձնից

542 խույս տալու համար ի վերջո զորավար էլ դարձար, միայն թե ցույց չտաս, թե որքան ես հմուտ Յոնեթրոսի իմաստության մեջ: Եթե հմուտ ես, ինչպես քիչ առաջ ասացի, ուրեմն խաբում ես ինձ, որովհետև ցույց չես տալիս այն, ինչ խոստացար Յոնեթրոսի առնչությամբ, և հետևաբար արդար չես: Իսկ եթե հմուտ չես, այլ բազում և գեղեցիկ բաներ ես ասում Յոնեթրոսի մասին՝ աստվածային ներշնչանքով համակված, ինչպես և ասում էի քո մասին, ապա անարդար ոչինչ չկա: Ընտրի՛ր, ուզում ես համարվել անարդա՞ր, թե՞ աստվածային այր:

Իոն. Տարբերությունը մեծ է, ո՛վ Սոկրատես: Չէ՞ որ շատ ավելի գերադասելի է համարվել աստվածային:

Սոկրատես. Ուրեմն այդ գերադասելին էլ վայելիր, ո՛վ Իոն, և մեզ համար եղիր Յոնեթրոսի ոչ թե հմուտ, այլ աստվածային գովերգիչ³⁸:

ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԵՎ
ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՖԻԼԵՐՈՍ

ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆ

Սուրատեսը զրուցում է երիտասարդ Ֆիլեբոսի և Պրոտարքոսի հետ: Ի տարբերություն Պրոտարքոսի՝ Ֆիլեբոսը, թվում է, մտացածին կերպար է (այդպիսի կարծիք է հայտնում Ուլրիխ ֆոն Վիլամովից-Մյուլլենդորֆը): Կա տեսակետ (Կոնստանտին Ռիտտեր), որ սա իրական անձնավորություն է: Սրանք պաշտպանում են այն տեսակետը, ըստ որի հաճույքը մարդկային կյանքի հիմնական սկզբունքն է: Ֆիլեբոսը, որը նախքան այդ արդեն շարադրել է իր տեսակետը, խոսքը զիջում է Պրոտարքոսին: Վեճի գլխավոր կետը հաճույքի և խոհեմության համեմատական քննությունն է (11a–12b):

Հաճուքը և խոհեմությունը բազմազան են, այնպես որ պետք է քննել դրանց բոլոր դրսևորումները, մինչև որ կգտնվի դրանց լիակատար հակադրությունը: Հարցը խճճվում է, եթե հաճույքն ու խոհեմությունը դիտարկվում են բարիքի հարաբերությամբ: Եթե հաճույքի և խոհեմության տեսակները բազմաթիվ են, հարց է ծագում մեկի և բազումի մասին ընդհանրապես (12c–16c):

Մեկի և բազումի հասկացությունները իրենց ընդհանրացման բարձրագույն կետում առաջադրում են սահմանի և անսահմանության կատեգորիաները: Սակայն առանձին իրի առնչությամբ Պլատոնը պահանջում է կիրառել ոչ թե անմիջապես սահմանը և անսահմանությունը, այլ թիվը: Սա լավ երևում է հնչյունների օրինակով, որոնք անսահման են, բայց որոնցից յուրաքանչյուրը ո՛չ սահման է, ո՛չ էլ անսահմանություն: Մեկը թույլ չի տալիս

անմիջապես անցում կատարել դեպի անսահմանություն, հարկ է բաժանել այդ մեկը տարրերի որոշակի քանակի: Դիմելով անսահմանին, չի կարելի մնալ դրա տիրություն, այլ անհրաժեշտ է նկատի առնել մեկերի այն քանակը, որը սահմանվող իրի համար որոշարկվում է անսահմանության հարաբերությամբ: Ըստ այդմ հաճույքը և խոհեմությունը պիտի ըմբռնվեն ոչ միայն իբրև միավորներ, այլև որպես այդ միավորների տարալուծման արդյունքում ստացված որոշակի բազմություններ (16c–19a):

Բարիքի կատեգորիան, ի տարբերություն հաճույքի և խոհեմության հասկացությունների, ինքնաբավ է: Հետևաբար ո՛չ հաճույքն ինքնին, ո՛չ էլ խոհեմությունն ինքնին բարիք չեն (19a–20e):

Պլատոնը քննում է հաճույքը, որը բոլորովին զուրկ է խոհեմությունից: Քանի որ նման դեպքում հաճույքը չի ուղեկցվում խոհեմությանը բնորոշ բանական որևէ գործողությամբ, այն չի հիշվում և չի սպասվում, ինչի արդյունքում զրկվում է հաճույք կոչվելու հնարավորությունից (20e–21d): Համանման կերպով քննվում է նաև խելքը, որը զուրկ է հաճույքից (21d–e):

Քննվում է հաճույքի և խելքի միջանկյալ կետը կամ դրանց խառնուրդը: Հաճույքը և խոհեմությունը բարձրագույն բարիք չեն, ըստ այդմ զրուցակիցներն իրենց քննության մեջ հիմնվում են սահմանի և անսահմանության կատեգորիաների վրա: Անսահմանության եությունը կայացումն է, իսկ սահմանը կապված է որոշակի թվի հետ: Դրանց խառնուրդը տալիս է *գոյություն* և *չափ առողջության*, *երաժշտության*, *տարվա եղանակների բաժանման մեջ*, և հնարավոր է դառնում գեղեցիկը: Սակայն, անսահմանությունից, սահմանից և դրանց խառնուրդից բացի, պիտի լինի նաև խառնուրդի պատճառը: Հետևաբար առկա են որոշարկման չորս սկզբունքներ (21c–27b):

Հաճույքը, որ գոյանում է տառապանքի հետ միասին, կարող է լինել մերթ ավելի մեծ, մերթ ավելի փոքր, այսինքն՝ անսահման է և չունի ո՛չ սկիզբ, ո՛չ էլ վերջ:

Չորոշարկելով խելքը, Պլատոնն այն հռչակում է չորրորդ պատճառ, որն արարում է բոլոր իրերը: Նույն այդ պատճառը կարգավորում է տիեզերական ամբողջը՝ Արեգակը, Լուսինը, աստղերը և Համայնի ողջ շրջապտույտը, ինչպես նաև կենդանի էակների կազմությունը: Սահկանացու էակների հոգին որոշարկվում է տիեզերական հոգով կամ իմաստությամբ: Հոգին տվյալ դեպքում միավորվում է խելքի և իմաստության հետ: Հաճույքը դիտարկվում է որպես ոգեղեն մարմնի առողջության և ներդաշնակության արդյունք (27b–32c):

Գոյություն ունի հոգու այնպիսի վիճակ, որը զուրկ է հաճույքից և տառապանքից: Դա աստվածների կյանքն է: Սակայն տրամախոսությունը քննում է հաճույքի այն տեսակը, որը դիալեկտիկական կապի մեջ է խելքի հետ: Հիշողությունը և վերհուշը անհրաժեշտ են ճշմարիտ հաճույքի համար, որովհետև առանց դրանց հաճույքը, որպես զգայական ընկալման արգասիք, իր գոյացման պահին իսկ կչքանա: Սակայն հիշողությունը հոգեկան պրոցես է (33c–36a):

Հաճույքի և տառապանքի վիճակը հաստատում է ոչ թե մարմինը, այլ հոգին, որքանով որ կարծիք է կազմում դրա մասին: Կարծիքը թույլ է տալիս դատել հաճույքի և տառապանքի արատավորության, չափի, ճշմարտացիության և կեղծության մասին, ինչպես նաև հաճույքի դրական էության մասին, որը սոսկ տառապանքի բացակայություն չէ: Կարծիքը թույլ է տալիս գնահատել կյանքը եռակի՝ ըստ հաճույքի, ըստ տառապանքի և ըստ այդ երկուսի բացակայության (36a–44c):

Ճշմարիտ հաճույքը որոշվում է ոչ թե մեծ չափերով, այլ ողջախոսությամբ և չափավորությամբ: Ողջախոսությունը համարում է հաճույքը ճշմարիտ, երբ այն լիովին ձերբազատվում է տառապանքից: Տառապանքի հետ որևէ կապ չպահպանող հաճույքը կապված է ինքնին հավետ գեղեցիկ բաների հետ՝ գեղեցիկ գույների, ձևերի, բույրերի և հնչյունների: Ճանաչողության հաճույքը, եթե կապված չէ տառապանքի և դժվարության հետ, նույնպես ճշմարիտ է: Այսպիսի անխառն հաճույքները

կապված են ոչ թե անսահմանության հետ, այլ չափավորության (44c–53c):

Հարկ է տարբերել այն, ինչը գոյում է ինքն ըստ ինքյան՝ գոյությունը, նրանից, ինչը գոյում է միայն ուրիշի համար՝ կայացումից: Ամեն կայացում գոյություն ունի ողջ գոյության համար: Հաճույքը կայացման ոլորտից է, ահա ինչու այն բարիք չէ (ինքնաբավ չէ): Խելքը, իմացությունը և արվեստը վերաբերում են ոչ թե կայացմանը, այլ գոյությանը, քանի որ իրենց բարձրագույն դրսևորման մեջ դրանք ոչ թե արվեստ, փորձ, վարժվածություն և աշխատանք են, այլ ճշգրտագույն չափում: Հաշվելու արվեստը այդպիսի բարձրագույն դրսևորման օրինակ է: Անխառն իմացությունը գործ ունի ճշմարիտի, նույնականի և հավիտենականի հետ, ի տարբերություն, ասենք, Գորգիասի համոզման արվեստի, որը հիմնվում է ոչ հաստատունի, կայացողի վրա (53c–59a):

Եթե բարիքը ավելի բարձր է հաճույքի և խոհեմության, իմացության և ողջախոհության առանձին տեսակներից, դրան հասնելու համար անհրաժեշտ է խառնել ոչ թե պատահած իսկ հաճույքներն ու խորհրդածությունները, այլ միայն դրանց բարձրագույն, ճշմարիտ ձևերը: Այդպիսի խառնուրդի պատճառը արտահայտվում է երեք հիմնական կատեգորիաներով՝ գեղեցկությամբ, չափավորությամբ և ճշմարտությամբ: Համեմատելով խելքը այդ երեք կատեգորիաների հետ՝ կարելի է տեսնել, որ դրանց համապատասխանում է հենց խելքը և ոչ թե հաճույքը (59a–65c):

Հինգ բարիքների հիերարխիան հետևյալն է (հարկ է նկատել, որ այստեղ պահպանվում է Պլատոնի անխախտ պայմանը՝ միաձուլել էսթետիկական և բարոյական իդեալները)։

1. Այն ամենը, ինչ վերաբերում է չափին, չափավորությանը և պատկանում է հավիտենությանը,

2. Գեղեցիկը, կատարյալը, ինքնաբավը և այն ամենը, ինչ պատկանում է այս սեռին,

3. Խելքը և խոհեմությունը,

Ֆիլեբոս

4. Իմացությունը, արվեստը, ճիշտ կարծիքը,
5. Հոգու անխառն հաճույքները, որոնք ուղեկցում են իմացություններին և զգայություններին (66a–67b):

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թարգմանությունն արվել է Plato, Statesman. Philebos. Ion (Loeb Classical Library, Volume VIII, Harvard University Press) հին հունարեն/անգլերեն հրատարակությունից: Նկատի են առնվել հետևյալ թարգմանությունները. անգլերեն՝ Philebos, նշվ. հրատ., with an English translation by Harold North Fowler, գերմաներեն՝ Platon, Philebos, Sämtliche Werke in drei Bänden, Band III, Darmstadt, 2004, Übersetzt von Ludwig Georgii, ռուսերեն՝ Платон, Сочинения, том 3, Москва, 1970, Филеб, перевод Н. В. Самсонова:

¹ Ուրախությունը, հաճույքը և վայելքը բարիք էին համարում կիրենեացի Արիստիպպոսը և նրա հետևորդները: – 7

² Ճանաչելով հաճույքի դիցուհու՝ Ափրոդիտեի հաղթանակը (նախորդ դրվագում), Ֆիլեբոսը մաքրագործող զոհաբերություն է կատարել, որից հետո կարող է ուղղակիորեն դիմել դիցուհուն (deus ex machina) և կարիք չունի հաստատելու իր խոսքը քննությամբ: – 8

³ Ափրոդիտեի մասին Սոկրատեսի դատողությունները տե՛ս Պլատոն, Երկեր չորս հատորով, հատոր I, Ե., 2006, «Խնջույք», 38-րդ ծանոթագրություն: Դիցուհու անվան ստուգաբանության առնչությամբ տե՛ս «Կրատիլոս» (400d): – 9

⁴ Հաճույքի տեսակների համասեռությունը այսպերպ մերժվում է: Սոկրատեսը համոզված է, որ հաճույքի բոլոր տեսակները չէ, որ պատկանում են բարիքին: – 9

⁵ Խորհրդածությունը նման է նավի, որը քշվել-տարվել է

նավահանգստից և որը հարկավոր է դարձյալ ետ բերել: – 10

⁶ Կորած պատմությունը «կործանված պատմությունն» (μῦθος ἀπολόμενος) է, որ հակադրվում է փրկված հեքիաթին: «Պետության» մեջ ասվում է. «Այսպես, Գլավկոն, հիշյալ պատմությունը փրկվեց և չկործանվեց» (621b): – 11

⁷ Ի սկզբանե սոփեստական մտածելակերպ ունեցող Պրոտարքոսին Սոկրատեսն առաջարկում է բացահայտել նաև սեփական փաստարկներում օգտագործվող հնարքները: – 11

⁸ Տե՛ս «Պարմենիդես», 128a–128b, Պլատոն, նշվ. հրատ., հատոր II, Ե., 2008: – 12

⁹ Այս ասացվածքի հեղինակը հռոդոսցիներն են, որոնք չէին ցանկանում բարձրացնել ընկած արծանը: Յանս-Գեորգ Գադամերը կարծում է, որ ասացվածքի մեջ (μη κινειν εἰς κείμενον) κείμενον-ը (պառկած-ընկածը, նաև ընկողմանածը) հարկավոր է հասկանալ բառացի: Այդ դեպքում հասկանալի է դառնում, որ Պրոտարքոսը նկատի ունի Ֆիլեբոսին, ում Սոկրատեսը լիովին մեկուսացրել և դուրս էր մղել քննարկումից: Ընդունելով այս գաղափարը՝ Պաուլ Ֆրիդլենդերը կարծիք է հայտնում, որ Ֆիլեբոսը, որի իսկությունը վիճելի է, իր անունը կրող տրամախոսության մեջ մարմնավորում է հեղոնիզմը և, ըստ այդմ, Պլատոնի քննադատության թիրախը (տե՛ս P. Friedländer, Die Platonische Schriften, Berlin und Leipzig, 1930, S. 558): – 13

¹⁰ Պրոմեթևսի մասին խոսվում է նաև «Պրոտագորաս» տրամախոսության մեջ, 320d–322a: – 14

¹¹ Սահմանի և անսահմանության դիալեկտիկական ակնարկվում է նաև «Պարմենիդեսում» (158c): Այսպես, սահմանը հարկ է հասկանալ որպես ձևի, իսկ անսահմանությունը՝ մատերիայի սկզբունք: Առհասարակ զգայականը և երկրայինը Պլատոնի պարագայում սահմանափակվածի և անսահմանի խառնուրդ է: Յարկ է նկատի առնել նաև սահմանի ֆունկցիոնալ համաբանությունը Յամայնի հոգու հետ («Տիմեոս», 34b և հաջ.), որը միջնորդ է գաղափարների և մարմնավոր աշխարհի միջև: – 14

¹² Սոկրատեսը նկատի ունի, որ երաժշտական միջակայքերը

կարգավորվում են թվաբանական օրենքներով և չեն կարող կարգավորվել անսահմանությամբ: Ուսմունքը, որը երաժշտության մեջ հաստատում է ներդաշնակության և օրինաչափության թվային հիմքը, առաջադրել է Պյութագորասը: – 16

¹³ *Թևթ* աստվածությունը, որին կոչում էին նաև Թոթ, Եգիպտոսում համարվել է գրերի և օրենքների ստեղծողը: «Ֆեդրոսում» Պլատոնը հիշատակում է նրա դրույթը՝ կապված այն օգուտի (կամ վնասի) հետ, որ գիրը կարող է հասցնել հիշողությանը: Ինքը Թևթն, ըստ Պլատոնի, համոզված է, որ գրերը կոչված են կատարելագործելու հիշողությունը: Եգիպտոսի արքայի շուրթերով Պլատոնը հնչեցնում է հակառակ կարծիքը, թե գրերն առաջ կբերեն մոռացկոտություն, և բնական հիշողությունը, զրկելով ներքին ուժից, կախման մեջ կընկնի արտաքին նշաններից: Յնչյունների և տառերի դասակարգման մասին խոսվում է նաև «Ֆեդրոսում» (274c–275b), «Կրատիլոսում», (424c–d) և «Թետետոսում» (203b): *Քերականության* մասին տե՛ս «Սոփեստ» (253a–b): Տե՛ս նաև աստ, 33-րդ ծանոթագրությունը: – 17

¹⁴ *Կալլիաս* – «Սոկրատեսի պաշտպանականում» սա հիշատակվում է որպես Հիպպոնիկոսի որդի: Այս հարուստ աթենացին շատ դրամ էր ծախսում սոփեստների մոտ սովորելու համար: Սոկրատեսին համարում էր «ինքնագործ փիլիսոփա», այսինքն՝ մեկը, ով իր ուսուցման համար դրամ չի վերցնում (տե՛ս Քսենոփոն, «Խնջույք»): Հենց նրա տանն էր իջևանել սոփեստ Պրոտագորասը Պլատոնի համանուն տրամախոսության մեջ («Պրոտագորաս», 310e): – 18

¹⁵ *Երկրորդ նավարկություն* ասելով Սոկրատեսը նկատի ունի հարցի մետաֆիզիկական քննությունը: Նախասոկրատյան փիլիսոփաները (ֆիզիկոսները) կատարել են առաջին նավարկությունը, որը անհաջողության է մատնվել. զգայափասուն չի կարող բացատրվել զգայափասուով: Երկրորդ նավարկությունը նպատակ ունի որպես ամեն իրողության վերջին պատճառների բացատրության հիմք ընդունել մտափասուն («Ֆեդոն», 99d): – 18

¹⁶ *Ֆիլեբոսի դիցուհի* – նկատի ունի Ափրոդիտեին: – 23

¹⁷ Խառնուրդի այսպիսի դիալեկտիկական ըմբռնումը թույլ է տալիս Պլատոնին մեկ տարերքի մեջ համատեղել ընդհատությունը և անընդհատությունը, սահմանափակությունը և անսահմանությունը: – 28

¹⁸ Այստեղ դժվար է որոշել, թե որ դիցուհուն նկատի ունի Պլատոնը: Մարմնավոր պատիժներ (սահմանափակումներ և գրկանքներ) կարող է բերել երկնային Ափրոդիտեն (Ուրանիան, տե՛ս «Խնջույք», 180d–181b): Սակայն, մյուս կողմից, դա կարող է լինել թվերի և չափի ոգին՝ Մուսիկեն, որը կարգավորում է բոլոր արվեստներում առկա ներդաշնակությունը: Ինչպես ցույց է տալիս տրամախոսության ընթացքը, Ափրոդիտեի երկակի բնությունը ի սկզբանե ակնարկված էր որպես Ֆիլեբոսի և Սոկրատեսի գաղափարական ընդդիմություն (12b–d): Այսպես, երաժշտական ինտերվալների, ֆիզիկական առողջության և գեղեցկության, տարվա եղանակների հերթագայության օրինաչափության հիմքում ևս Սոկրատեսը տեսնում է դիցուհուն, որքանով սա ամեն խառնուրդի և համաչափության նախապայմանն է:

Այսպես, Bury-ն կարծում է, որ տվյալ դիցուհին կա՛մ Հիզիեյան է, կա՛մ Մուսիկեն: Վիլամովից-Մյուլլենդորֆը պնդում է, որ դա Կոյնոնիան է (Հաղորդակցությունը): Հիշելով էմպեդոկլեսին՝ նշված հատվածում կարելի է տեսնել հիպոստազավորված Հարմոնիային (Ներդաշնակությանը): Ֆրիդլենդերը կարծում է, որ պլատոնյան այս խորհրդածության հիմքում առհասարակ զգալի է հատկապես էմպեդոկլեսի մտածողության հետքը, քանի որ վերջինս տարրերի միավորման իր տիեզերական իմպուլսը՝ Ֆիլիան (Սերը), կոչում էր նաև Գեթոսինե (Ուրախություն) և Ափրոդիտե: Այս համատեքստում ակնհայտ է դառնում նաև *Ֆիլիայի* և հեղոնիստ *Ֆիլեբոսի* անունների զուգորդությունը: – 29

¹⁹ Ինչպես և «Ֆեդոնում», *երկրորդ նավարկությունը* ի հայտ է բերում ֆենոմենալ աշխարհի մտահասու պատճառը՝ միտքը, որի մասին առաջին ուսմունքը պատկանում է Անաքսագորասին: Տե՛ս Պլատոն, «Ֆեդոն» (97c–100a): – 32

²⁰ *Խելամիտ մարդ (ἀνὴρ δεινός)* – ամենայն հավանակամությամբ Պլատոնը հեզնաբար նկատի ունի հաստատուն ամեն բան մերժող սփեստին: – 33

²¹ *Համայնի հուր* ասելով Պլատոնը հավանաբար նկատի ունի Հեստիա դիցուհուն և նրա մասին պոլեմոսիայի ուսմունքը: Ըստ այդմ Հեստիան աշխարհակարգի օջախն է, որի շուրջ տեղակայված են մոլորակների ոլորտները: «Կրատիլոսում» (401b–e) տալով Հեստիայի անվան ստուգաբանությունը՝ Պլատոնը գրում է մասնավորապես հետևյալը «...իրերի էության անունը, որը մենք արտաբերում ենք որպես *ὄσσια*, ոմանք արտասանում են *ἔσσια*, իսկ ոմանք էլ *ὄσια*: Այնպես որ հարկ է մախ և առաջ ելնելով այդ անվան երկրորդ հնչումից՝ հեստիա կոչել մեզ շրջապատող իրերի էությունը»:

Պլուտինոսը իր «Էնենադներում» գրում է. «Ձի այն, ինչ կոչում ենք առաջին գոյ, այնտեղից շատ քիչ է հեռացել և նախապես չէր էլ կարող հեռանալ: Նա պարզապես ներշնչվել ու կանգ էր առել՝ մնացած բոլորի համար վերածվելով էության և հարազատ օջախի: Գիշտ՝ ինչպես [այդ բառերի] հնչումի պարագայում, արտաբերողի դիմադրությամբ կայանում է «հեն»-ը՝ բացահայտելով իր ծագումը Մեկից, մինչդեռ «օն»-ը, ըստ հնարավորի, ցուցանում է արտաբերողին: Այս կերպ Արարյալը, էությունը և Լինելությունը ներկայանում են իբրև Մեկի վերարտադրություն, քանզի արտահոսում են նրա ներուժից: Իր հերթին [մասնակի հոգին], որ տեսնում և ցնցվում է տեսածից, վերարտադրում է այդ՝ բացականչելով՝ «օն», «էյնայ», «ուսիա» «հեստիա»: Ձի այդ հնչյունները միտված են ցուցանելու արտաբերողի կողմից (արարման ցավերով) բացահայտված նախահիմքը» (Պլուտինոս, Էնենադներ, Գիրք V, «Հաղագս բանականի», թարգմ.՝ Ա. Ստեփանյանի, Ե., 1999, էջ 58 և հաջ.: Տե՛ս նաև Ed. Zeller, Grundriss der Geschichte der Griechischen Philosophie, Leipzig, 1893, S. 58): – 34

²² Ըստ Պլատոնի, ինչպես տիեզերքը՝ մակրոկոսմոսը, այնպես էլ մարդը՝ միկրոկոսմոսը, օժտված են հոգով: – 35

²³ Գլխավոր պատճառը, որ շարժման մեջ է դնում տիեզերական անցուդարձը (եռուզեռը), արդեն «Ֆեդոնում» առաջադրված սխեմայով կապված է իմացության և հոգու հետ: – 35

²⁴ Ձևսի և մյուս աստվածների հոգիների մասին խոսվում է «Ֆեդոնում» (246c–247b): – 35

²⁵ Երրորդ վիճակի մասին, որը չի համընկնում ո՛չ հաճույքի, ո՛չ էլ տառապանքի հետ, ավելի հանգամանորեն խոսվում է «Պետության» մեջ (538b–585d): – 39

²⁶ Մոռացությունը (Լեթե – **Λήθη**) Պլատոնը սահմանում է որպես զգայարանների բացակայություն: Տե՛ս նաև «Ֆեդոն» (75d), որտեղ Սոկրատեսն այն կոչում է «իմացության կորուստ»: Մարտին Գայդեզգերի համոզմամբ, սակայն, Լեթեն Պլատոնի պարագայում դեռևս որոշակիորեն պահպանում է այն իմաստը, որ ունեցել է հույն առաջին բանաստեղծների՝ Հոմերոսի, Հեսիոդոսի և փիլիսոփա Պարմենիդեսի պոեմներում: Այստեղ Լեթեն հակադրվում է ոչ թե իմացության հիշողությանը և վերհուշին, այլ ճշմարտությանը (**αλήθεια**), որը Հայդեզգերը ստուգաբանում է որպես անթաքույցություն: Այսպես, վկայակոչելով «Պետության» վերջին պարբերությունները, որտեղ Պլատոնը պատմում է Լեթեի հովտի մասին, Հայդեզգերը գրում է. «Ժամանակաշրջանում, երբ հելլենականությունը բաժանվում է իր էական պատմությունից, մեկ անգամ էլ պատմվում է այն էության մասին, որը հակասում է **αλήθεια**-ի էությանը, այսինքն՝ հայտնվում է պատումը՝ մյութսը **αλήθεια**-ի մասին» (M. Heidegger, Parmenides, Gesamtausgabe, Band 54, Frankfurt am Main, 1992, S. 180): – 41

²⁷ Հիշողության և վերհուշի մասին տե՛ս «Մենոն» (81b–86b), «Ֆեդոն» (249b–c) և «Ֆեդոն» (72c–76c): Գաղափարների տեսությանը զուգահեռ Պլատոնը զարգացնում է ուսմունքը հոգու մասին, որը նրա համակարգի կարևորագույն տարրերից է: Եվ եթե *հիշողությունը* (Մենոնսինեն) կապված է ավելի շուտ մակրոտիեզերքի ամբողջության հետ, ապա *վերհուշը* (Անամնեսիսը)

հոգու այդ ամբողջության հետ հաղորդակցվելու կարողությունն է: – 41

²⁸ *Տենչանքը* նաև Արիստոտելի կողմից համարվել է հոգու ունակություններից մեկը (De anima, II 3, 414a, 31–414b, 6): – 42

²⁹ Հմմտ. «Պետություն» (IX 585a–b): – 42

³⁰ *Ճշմարիտ և կեղծ հաճույքների* մասին խոսվում է նաև «Պետության» մեջ (IX 585a–b): – 45

³¹ *Կեղծ կարծիքի* մասին, որը համապատասխանում է *կեղծ հաճույքին*, տե՛ս ստորև (36d): Հարկ է նաև հիշել, որ ճշմարիտ կարծիքը նույնպես վերաբերում է զգայականի ոլորտին և այդ պատճառով միջին տեղ է զբաղեցնում իմացության և չիմացության միջև: Տե՛ս նաև «Պետություն» (V 476d–480a): – 45

³² Պլատոնը նկատի ունի աստվածների պարզունակ քանդակները և խորհրդանիշները: – 49

³³ Հոգու և գրքի այս համեմատությունից է ամենայն հավանականությամբ Ջոն Լոկը փոխառել մանկան հոգու, որպես մաքուր տախտակի (tabula rasa), իր փոխաբերությունը: Տե՛ս նաև «Թեթետոս» (191 և հաջ.):

Ժակ Դերրիդան, քննելով «Ֆիլեբոսի» և «Տիմոսի» համապատասխան հատվածները, ընդգծում է փաստը, որ գիրը և տպվածքները, որոնք մուտք են գործում հոգի, օտար և որոշ իմաստով կործանիչ են այն տարերքի համար, որը կոչված են լրացնել և ամբողջացնել, կախման մեջ են դնում և թուլացնում են այն: Ահա ինչու ճանաչողության մեջ արտաքին մուտքերին (իսկ ուրիշ աղբյուրներ կարծես թե չկան) առնչվող ամեն բան կապված է նաև կյանքի և մահվան հետ: Տե՛ս նաև 13-րդ ծանոթագրությունը: – 50

³⁴ Պլատոնը նկատի ունի երևակայությունը: Ի տարբերություն առաջին վարպետի, որը գործ ունի զգայականության և տպավորությունների հետ, այս երկրորդ վարպետը՝ գեղանկարիչը, աշխատում է միայն զգայական նախատիպից վերացարկված պատկերի հետ: Արևմտյան նորագույն փիլիսոփայության

մեջ մշակված *երևակայության* աղերսը պլատոնյան այս ինտուիցիայի հետ ակհայտ է: – 50

³⁵ Գեղանկարչության մեջ հեռանկարի մասին տե՛ս «Սոփեստ» (235d–236a): – 55

³⁶ Ամենայն հավանականությամբ նկատի ունի Զերակլիտոսին, որն ասում է. «Վեր և վար տանող ճանապարհը նույնն է» (DK, B 60): – 56

³⁷ Թե ում նկատի ունի այստեղ Պլատոնը, դժվար է որոշել: Զաճույքը մերժում էին ինչպես կինիկները, այնպես էլ ատոմիստներն ու պյութագորականները: Ֆրիդլենդերը նշում է նաև Սպեսիպպոսի անունը: – 59

³⁸ «Զափից ավելի՝ ոչինչ» ասույթը վերագրվել է յոթ իմաստուններից մեկին՝ Քիլոնին: Ավելի մանրամասն տե՛ս «Պրոտագորաս» (343a–b), ինչպես նաև 41-րդ ծանոթագրությունը: – 61

³⁹ Այսպես է ասում Պատրոկլոսի մահը սգացող Աքիլլեսը («Իլիական», XVIII 108 և հաջ., թարգմ.՝ Զ. Զամբարձույանի): – 64

⁴⁰ Այս *խառը* վիճակը հետագայում Պլատոնի աշակերտը՝ Արիստոտելը, կոչել է կաթարսիս (մաքրագործում): Պլատոնն այստեղ հավատարիմ է «Խնջույքում» արտահայտած իր այն մտքին, որ ողբերգությունն ու կատակերգությունը իրենց ակունքում համասեռ են (223d): Այժմ այդ միտքը կարծես ավելի է հստակվում: Զաճույքը, որ առաջ է բերում դրամատիկ ստեղծագործությունը, հաճույքի և տառապանքի խառնուրդ է: Ողբերգության ավարտին հանդիսատեսների արտասվելը ուղղակիորեն կապված է նրանց որոշակի բավարարման հետ: «Իոնում» (535e) հազներգուն իր ուժեղ կողմն է համարում հանդիսատեսին արցունքների հասցնելու կարողությունը: Կատակերգության մեջ այդուհանդերձ տառապանքի և հաճույքի խառնուրդն այդքան սերտ չէ, ահա ինչու հունական աշխարհընկալման համար միանգամայն անհասկանալի է «կյանքի կատակերգություն» արտահայտությունը: «Օրենքներում» (817e) Պլատոնն անչափ կարևորում է կատակերգությունը, քանի որ քաղաքացիները դրա

միջոցով հնարավորություն են ստանում զավեշտականի մեջ սովորել լուրջը: Սակայն նրանք պիտի դերասաններ պատվիրեն դրսից, որպեսզի ազատվեն սեփական քաղաքի արատավորության տկար նմանակումը դիտելու ավելորդ զբաղմունքից: – 64

⁴¹ Համաձայն ավանդության, յոթ իմաստունները՝ Թալեսը, Պիտտակոսը, Բիասը, Սոլոնը, Կլեոբուլոսը, Միսոնը և Քիլոնը, որոնք լակոնական դաստիարակության կողմնակիցներ էին, ամփոփելով իրենց իմաստության սկզբնաղբայնները երկու կարճ ասույթի ձևով, դրանք ձոնեցին Ապոլոնին և գրեցին Դելփիքում գտնվող նրա տաճարին: Այդ ասույթներն են «Ճանաչի՛ր ինքդ քեզ» և «Չափից ավելի՛ ոչինչ»: Ավելի մանրամասն տե՛ս «Պրոտագորաս» (343b): – 65


⁴² Թշնամիներին պատահած չարիքով ուրախանալու մասին տե՛ս նաև «Կրիտոն» (49c) և «Մենոն» (71c): – 67

⁴³ Գույները, լինելով մարմնավոր, ունեն նաև վերացական բնություն, քանի որ իդեալական են (տե՛ս նաև «Ֆիլեբոս», 51c–d): «Տիմեոսում» (67c–68d) Պլատոնը տալիս է առանձին գույների բնորոշումները՝ ելնելով դրանց խառը կամ պարզ կազմությունից: *Հնչյունները*, կազմելով ներդաշնակություն, ներդաշնակեցնում են հոգին («Տիմեոս», 47d), իսկ հնչյունների շարժումը տիեզերքում նմանակում է աստվածային ներդաշնակությունը («Տիմեոս», 80a–b, 47d): Բույրերն իրենց խտությամբ օդից հոծ են, սակայն իրենց պատճառած հաճույքը պակաս աստվածային է, քանի որ իրենց հիմքում ոչ թե պարզ տեսակներ են, այլ հաճելիի և տհաճի սեռերը («Տիմեոս», 67a): – 69

⁴⁴ Հետազոտողների մեծ մասը կարծում է, թե Պլատոնը նկատի ունի Արիստիպպոսին և կիրենականներին: Իրականում քննադատության թիրախ կարող են լինել հավասարապես նաև ատոմիստները, հերակլյանները և մեզարականները: – 72

⁴⁵ Փոխաբերությունը վերցված է բրուտագործությունից: Հմմտ. «Թենետոս» (179d): – 75

⁴⁶ Արվեստների պլատոնյան ստորաբաժանումը կարելի է պատկերել հետևյալ կերպ.



– 78

⁴⁷ *Գորգիաս* Լեոնտինացի (թ.ա. 483–375) – սուփեստության հիմնադիրներից մեկը: Ըստ ամենայնի եղել է էմպեդոկլեսի աշակերտը, ուսուցանել է Պերիկլեսին և Իսոկրատեսին: Առաջադրել է անտիկ ճարտասանության հիմնադրույթները և մշակել տրոպների և ֆիգուրների բարդ համակարգ: Նրա խոսքը աչքի է ընկել ճոխությամբ: Համաձայնելով Պարմենիդեսի այն մտքին, թե գոյությունը անփոփոխ և հավիտենական է, համոզված էր, թե բանականությունը, քանի որ փոփոխական և վերջավոր է, երբեք չի կարող ճանաչել այն: Մինչդեռ հռետորիկան ունի իր կոնկրետ գործնական նշանակությունը, քանի որ իր առարկայի մասին ոչինչ չիմանալով՝ այդուհանդերձ թույլ է տալիս համոզել մարդկանց: Տե՛ս Պլատոնի «Գորգիաս» և Քսենոփոնի «Խնջույք» տրամախոսությունները: – 80

⁴⁸ Զգայական աշխարհի ճանաչողությունը անհրաժեշտաբար ամփոփվում է ժամանակային (կայացման) աշխարհի սահմանների մեջ և չի ապահովում հավիտենական Համայնի իմացություն:

Պառլ Նատորպը 59a–d հատվածում տեսնում է վերադարձ պլատոնյան փիլիսոփայության արդեն հաղթահարած աստիճանին: Նրա համոզմամբ՝ հակասություն կա 59a (այստեղ ասվում է, որ այս աշխարհում խելք և բանականություն փնտրելու հարկ

չկա) և 28b (որտեղ ասվում է, որ մարդու բանականությունն արտածվում է Համայնի բանականությունից) հատվածների միջև: Սակայն նշված հակասությունը թվացյալ է: 59a հատվածում խոսքը բնափիլիսոփայության մասին է, իսկ նախորդ հատվածում՝ մաթեմատիկական աստղագիտության: – 81

⁴⁹ Այս ասույթը Պլատոնը մեկ անգամ էլ օգտագործում է «Գորգիասում» (499a): Սխոլիաստը վերագրում է այն Էմպեդոկլեսին: – 82

⁵⁰ *Հեփեստոս* – Ջևսի և Հերայի որդին: Դարբին էր և հնում ընկալվել է որպես ինքը հուրը:

Դիոնիսոս – Ջևսի և Սեմելեի որդին՝ գինու աստվածը: – 84

⁵¹ Տե՛ս Հոմերոս, «Իլիական», IV 452–454.

Ինչպես երկու մեծ հեղեղատ, լեռներից ցած սլանալով,

Հանդիպում են մի ձորի մեջ, խառնում իրենց ջրերը հորը:

(թարգմ.՝ Հ. Համբարձումյանի)

Բնագրում օգտագործված **μισθόγγκεια** գոյականը իմաստով ավելի շուտ հովիտ է, ոչ ձոր, ինչպես տալիս է հայերեն թարգմանությունը: – 86

⁵² Խելքի և խոհեմության անձնավորումը տվյալ հատվածում հիշեցնում է օրենքների անձնավորումը «Կրիտոնում» (50a–54d): Գրական այս հնարքը հանդիպում է նաև Քսենոփոնի «Հուշեր Սոկրատեսի մասին» երկում և Արիստոփանեսի «Ամպերը» կատակերգության մեջ: – 88

⁵³ Օրփեական այս տողը պահպանել է Պլուտարքոսը (De E ap. Delph, 391d), որտեղ խոսվում է հինգերորդ՝ մաքուր և տառապանքի հետ չխառնված հաճույքի մասին: – 92

⁵⁴ Սխոլիաստը նշում է, որ առաջին գավաթը հատկացվում էր օլիմպիական Ջևսին և օլիմպիական աստվածներին, երկրորդ՝ հերոսներին, իսկ երրորդը՝ փրկիչ աստվածներին: Տե՛ս նաև Եվրիպիդես, «Անդրոմեդա» (148): – 92

⁵⁵ Տրամախոսության կոնտեքստից ելնելով դժվար է որոշել, թե որ «մանրուքը» նկատի ունի Պրոտարքոսը: – 94

ՏԻՄԵՈՍ

ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆ

Ներածությունը պատկերում է Սուկրատեսի հանդիպումը Տիմեոսի, Կրիտիասի և Դերմոկրատեսի հետ: Նախորդ օրը միևնույն անձինք զրուցել են իդեալական պետության մասին: Այժմ նրանք փորձում են հիմնավորել այն որպես իդեալական տիեզերքի պատկեր (17a–27d):

Ջգայահասու տիեզերքն ինքը հավիտենական աստծո ժամանակային պատկերն է, որը նմանակում է նրան: Բայց քանի որ հավիտենական այդ աստծուն Պլատոնը պատկերում է որպես խելք, հետագա քննությունը առնչվում է տիեզերական խելքին ենթարկված զգայահասու աշխարհի համակարգին (28a–29d):

Տիեզերքը բանականությամբ օժտված կենդանի էակ է, ունի հոգի և մարմին: Այն ստեղծել է դեմիուրգոսը՝ նմանակելով հավիտենական մտահասու բնօրինակին: Նախնական խելքը իր այլագոյության մեջ վերածվում է հոգու, իսկ հոգին՝ տիեզերական մարմնի: Բնօրինակը ոչ թե առանձին էակ է, այլ ունիվերսալ գաղափար (29e–31b):

Տիեզերական մարմինը կազմված է չորս տարրերից՝ հող, օդ, ջուր և հուր, որոնք բաղադրված են որոշակի համաչափությամբ: Տիեզերական հոգու կատարելությունը պայմանավորված է ներդաշնակությամբ, որը համաբանորեն կարելի է տեսնել աստղային շարժումների և աստղերի միջև տարածությունների կանոնավորության օրինակի վրա (31b–37c):

Նկարագրվում է ժամանակը որպես այդպիսին և անշարժ

երկնքի և առանձին մոլորակների ժամանակային շարժումները (37c–39e):

Բարձրագույն կենդանի էակների (աստղերի) և դիցաբանական աստվածների ծագումը (39e–41a):

Մարդուն ստեղծում են աստվածները, որոնց օգնությամբ է դիմում դեմիուրգոսը: Մարդը գոյանում է հակադիր սկզբունքների՝ անմահության և վերջավորության համադրությունից: Մարդու հոգևոր և մարմնավոր շարժումները կապված են տիեզերական շարժումների հետ (41a–47c):

Նախնական նյութը համարժեք է զուտ կայացմանը և չունի որևէ ձևավորում: Այն չի համընկնում տարածության հետ, որովհետև տարածությունն արդեն որոշակիորեն ձևավորված է (47e–53c):

Երկրորդական նյութը տարրական հարթություններն ու մարմիններն են: Առաջնային երկու եռանկյունիներից գոյանում են չորս տարրական մարմինները և որոշարկվում են դրանցից յուրաքանչյուրի հատկությունները: Տարրերի փոխազդեցությունն ունի հստակ պայմաններ և սահմաններ: Շարժումն ու դադարը նույնպես ունեն իրենց պայմանները (53c–61c):

Զգայական ընկալումը պայմանավորված է մարմինների երկրորդական որակներով: Նկարագրվում են տաքի, սառի, կարծրի, փափուկի, ծանրության, թեթևության, հաճելիի և տհաճի զգայությունները: Ներկայացվում է չորս հիմնական զգայությունների՝ տեսողության (զույների ուսմունքը), լսողության, հոտառության և համի տեսությունը (61b–68d):

Ամփոփվում են տրամախոսության հիմնական կետերը (68e–69c):

Ներկայացվում է մարմնի ստեղծման պատմությունը: Մահկանացու հոգին բաղկացած է երկու մասից. մանրամասնորեն նկարագրվում է սրտի և լյարդի՝ կարևորագույն երկու օրգանների բնությունն ու աշխատանքը, մարմնի տարբեր հյուսվածքների նյութական ծագումը: Մարմնի սնուցումը, մարսողությունը, շնչառությունը, արյան շրջանառությունը, աճը, ծերացումը, կյան-

Մեկնություններ և ծանոթագրություններ

քը և մահը ներկայացվում են տիեզերական շրջաբերական պրոցեսներին համապատասխան (69c–77c):

Հիվանդությունները երկու տեսակ են՝ մարմնավոր և հոգեկան: Նախ պատմվում է մարմնավոր, այնուհետև հոգեկան հիվանդությունների մասին: Հոգու և մարմնի ներդաշնակ համադրությունը բազում արատներից զերծ մնալու պայման է (77c–90c):

Տրամախոսության վերջում նկարագրվում են կենդանի էակների բազմացումը, բաժանումը սեռերի և կենդանական աշխարհի տարբեր աստիճանները (90c–92b):

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թարգմանությունն արվել է Plato, Timaeus. Critias. Cleitophon. Menexenus. Epistles (Loeb Classical Library, Volume IX, Harvard University Press) հին հունարեն/անգլերեն հրատարակությունից: Նկատի են առնվել հետևյալ թարգմանությունները. գրաբար՝ Պղատոնի Իմաստասիրի Տրամախոսութիւնք. Եվթիփոն, Պաշտպանութիւն Սոկրատայ եւ Տիմէոս, ի Վենետիկ ի Վանս Սրբոյն Ղազարու, 1877, բաղդատեալ ընդ յոյն բնագրի՝ անխիղճ ուղղագրեալ զվրիպակս գրչին և զթարգմանչին ի Յ. Արս. Խուրեան, անգլերեն՝ Timaeus, նշվ. հրատ., with an English translation by R. G. Bury, գերմաներեն՝ Platon, Timaios, Sämtliche Werke in drei Bänden, Band III, Darmstadt, 2004, Übersetzt von Franz Susseihl, ռուսերեն՝ Платон, Сочинения, том 3, Москва, 1970, Тимей, перевод С. С. Аверинцева:

¹ *Կրիտիկաս* – ավանդաբար համարվել է Պլատոնի մորեղբայրը, երեսուն տիրամներից մեկը: XX դարի 20-ականներից այդ համոզմունքը խաբիւվեց, և մի շարք հետազոտողներ (ինչպես օրինակ՝ Ջ. Բըրնեթը, Ու. Ֆոն Վիլամովից-Մյուլլենդորֆը և

Պ. Ֆրիդլենդերը) տեսակետ հայտնեցին, որ տրամախոսության հերոսն իրականում վերոհիշյալ Կրիտիասի պապն է:

Տիմեոս (ծնվ. Ք.ա. 490) – հայտնի պյութագորյան փիլիսոփա և հասարակական գործիչ Իտալիայի Լոկրիս քաղաքից: Հաշվի առնելով Պլատոնի վրա պյութագորյան մտածողության հզոր ազդեցությունը, տիեզերաբանական որոշիչ ուսմունքը պյութագորյան փիլիսոփայի շուրթերով շարադրելու հնարքը ավելի քան խորհրդանշական է: Հարկ է հիշել, որ տիեզերական Համայնի կառուցման մեջ Պլատոնը մշտապես առաջնորդվում է թվային օրինաչափություններով:

Հերմոնի որդի Հերմոկրատես – սիկիլիացի պետական գործիչ, Պելոպոնեսյան պատերազմի տարիներին Սիրակուսեի փաստացի կառավարիչը: Նրա մասին հիշատակում է Թուկիդիդեսը իր «Պատմության» մեջ (VII 70–87): – 97

² Թե ով էր չորրորդ հյուրը, հայտնի չէ: Այս մասին տարբեր տեսակետներ են առաջադրվել սկսած նորպլատոնականությունից: Հետազոտողներից ոմանք կարծում են, թե Պլատոնը նկատի է ունեցել ինքն իրեն: Ռիտտերը կարծում է, որ չորրորդ անանուն կերպարի հնարքը թույլ էր տալիս Պլատոնին Տիմեոս–Կրիտիաս–Հերմոկրատես եռագրությունը հետագայում հասցնել քառագրության: – 97

³ Սոկրատեսը հիշում է իդեալական պետության մեջ դասակարգային բաժանումները, որոնց մասին խոսվել է նախորդ օրը («Պետություն», II 375a–e): – 98

⁴ Տե՛ս «Պետություն», II 375c, 376c: – 98

⁵ Մարմնամարզությամբ և մուսայական արվեստներով դաստիարակվելու մասին տե՛ս «Պետություն», II 376e–379a և III 398c–403c: – 98

⁶ Իդեալական պետության պահապանների կենսակերպը նկարագրվում է «Պետության» մեջ (III 415d–417b): – 99

⁷ Իդեալական պետության մեջ կանանց տեղի մասին տե՛ս «Պետություն», V 451c–457e: – 99

⁸ Կանանց և զավակների ընդհանուր սեփականության լինե-

լու և նրանց զբաղմունքի մասին խոսվում է «Պետության» մեջ (V 457d-461a): – 99

⁹ Քվեարկությամբ ամուսնության մասին տե՛ս «Պետություն», V 460a: – 99

¹⁰ «Ազնիվ» և «հռոճի» ծնողների զավակների հանդեպ տարբեր վերաբերմունքի մասին տե՛ս «Պետություն», III 415b-c, V 460c-d: – 99

¹¹ *Սոփեստների* մասին տե՛ս «Սոկրատեսի պաշտպանակարնը» (19e-20a) և «Սոփեստ» տրամախոսությունը: – 100

¹² *Իտալական Լոկրիս քաղաք*-պետության օրենքները սահմանել է Զալևկոսը (Ք.ա. մոտ. 650)՝ Պյութագորասի աշակերտը, (տե՛ս «Օրենքներ», I 438a): Առհասարակ իտալական քաղաքներում, ուր մեծ հեղինակություն էին վայելում պյութագորականները, օրենսդիրները հաճախ փիլիսոփաներ էին: Ինչպես հայտնի է, բարձր պետական պաշտոն է զբաղեցրել նաև Տիմեոսը: – 101

¹³ Սոլոն իմաստունը ապրել Ք.ա. մոտ. 635-560 թթ.: Տե՛ս նաև «Ֆիլեբոս» տրամախոսության 41-րդ ծանոթ.: – 102

¹⁴ Համաձայն սխոլիոնների, Դիոգենես Լաերտցու, Պլուտարքոսի և Պրոկլոսի՝ Կրիտիասի և Պլատոնի առասպելական տոհմածառն այսպիսին է. տոհմի հիմնադիրն է ծովերի աստված Պոսեյդոնը (թեսսալացի Նելեոսի հայրը), որի ծոռն էր Աթենքի վերջին արքա Կոդրոսը, իսկ սրա շառավիղներն էին Սոլոնը և Դրոպիդեսը: Ավագ Կրիտիասը Դրոպիդեսի որդին էր, կրտսեր Կրիտիասը՝ Դրոպիդեսի թոռը, իսկ Պլատոնը՝ ծոռը:

... *իր պոեզիայում*. Արիստոտելը «Հռետորիկայում» (I 15, 1375b 32-34) վկայում է, որ Սոլոնը հեղինակել է Կրիտիասին ուղղված էլեգիաներ: – 102

¹⁵ Նկատի ունի Աթենային: – 102

¹⁶ *Ապատուրիա* բառի ստուգաբանությունը հայտնի չէ: Հավանաբար այն նշանակում է ֆրատրիայի հայրերի տոն (*πατήρ*): Սոլոնի սահմանադրությամբ Աթենքում յուրաքանչյուր համայնք (*φύλη*) բաժանվում էր երեք ֆրատրիաների, իսկ յուրաքանչյուր

Ֆրատրիան՝ երեսուն ընտանեկան միավորման (γένη): Տոնը նշում էին հոկտեմբերին, և այն նվիրված էր Դիոնիսոսին: Ապատուրիայի երրորդ օրը կոչվում էր Կուրեոտիս, քանի որ տղաներն ու աղջիկները (κοῦροι և κόραι) այդ օրը ընդունվում էին հայրական ֆրատրիա: Սակայն հնարավոր է նաև, որ այդ օրն իր անվանումը ստացել է **κοῦρά** բառից, որ նշանակում է խուզ, որովհետև տղաներն այդ օրը աստվածներին էին զոհաբերում իրենց մազերի խրձակը (հմմտ. «Ֆեդոն», 89b): – 102

¹⁷ *Ֆրատեր* – Ֆրատրիայի առաջնորդ: – 102

¹⁸ Սոլոնի եգիպտական ճանապարհորդության մասին և Յելիոպոլիսի ու Սաիսի Աթենայի տաճարի քրմերի հետ ունեցած զրույցների մասին հաղորդում է Պլուտարքոսը (Սոլոն, XXVI): Հիշատակվող *խառնակությունները* սկսվել են հավանաբար Ք.ա. 571 թ., երբ Սոլոնը հեռացավ Աթենքից, իսկ նրա կրտսեր ազգականը՝ Պիսիստրատոսը, փորձեց դառնալ քաղաքի բռնակալ: – 103

¹⁹ *Սաիս* քաղաքը, որ հայտնի էր իր իմաստուններով, այդպես է կոչվել իր առաջին արքայի՝ Սաիսի պատվին, որը ծագումով փյունիկեցի էր:

Ամասիսը (Աահմես) եղել է եգիպտոսի թագավոր (Ք.ա. 569–525): Հերոդոտոսը հաղորդում է, որ նա թաղված է Սաիսի տաճարում (II 161–163, 169) և որ նրա թագավորության տարիները նշանավորվել են երկրի բարգավաճմամբ և հարստագույն տաճարների շինարարությամբ (II 172–182): – 103

²⁰ Աթենայի (կամ Նեիթի) տաճարը Սաիսում հայտնի էր մի աստվածության դամբարանով, որի անունը հիշատակելը Հերոդոտոսը մեծ մեղք է համարում (II 170): Կիկերոնը թվարկում է հինգ Միներվաների, որոնցից մեկին պաշտել են եգիպտացիները Սաիսում (De nat. deor., III 23, 59): Պլուտարքոսը (De Iside et Osiride, 9) գրելով Սաիսում Աթենայի տաճարի մասին, նշում է, որ եգիպտացիները Աթենային կոչում էին Իսիս, և նրա արձանի վրա գրված է. «Ես եմ անցյալը, ներկան և ապագան, և մահկանացուներից ոչ ոք դեռ չի բարձրացրել իմ քողը»:

Սախսի դիցուհուն է նվիրված Շիլլերի հայտնի բանաստեղծությունը՝ «Սախսի քողածածկ քանդակը»: Ոմն երիտասարդ, որոնելով ճշմարտությունը, գալիս է Սախս և բարձրացնելով դիցուհու արձանի քողը՝ անշունչ վայր է ընկնում: Նովալիսի «Աշակերտները Սախսում» վիպակում հերոսը, բարձրացնելով դիցուհու արձանի քողը, տեսնում է ինքն իրեն:

Եգիպտացիներն իրենց ազգակից էին համարում հույներին, քանի որ ըստ առասպելի՝ Ջևսի և Իոյի հետնորդները Եգիպտոսն ու Դանայոսն էին, որոնց որդիները պիտի կնության վերցնեին սեփական քույրերին: – 103

²¹ Փորոնևս – ըստ առասպելի Արգոսի արքա Ինաքոսի և օվկիանոսի Մելիայի որդին է: Պավսանիասը հաղորդում է (II 15, 5), որ նա է առաջինը միավորել առանձին մարդկանց հասարակության մեջ, իսկ վայրը, որտեղ նրանք առաջին անգամ հավաքվեցին, նրա անունով կոչվել է Փորոնիկոն: Ըստ Պավսանիասի (II 16, 1)՝ հետագայում երկիրը վերանվանվել է Փորոնևսի թոռ Արգոսի անունով:

Նիորե – Փորոնևսի և Տելեդիկե միմֆեի դուստրը: Ջևսի առաջին մահկանացու կինն է, որից երկու զավակ է ունեցել՝ Արգոսին և Պելասգոսին (Apollod., II 1, 1 և 1, 2):

Դևկալիոն – Պրոմեթևսի և Կլիմենեի որդին: Իր կնոջ՝ Պիրրայի հետ մահկանացու վերջին զույգն էր, որ փրկվեց Ջևսի ուղարկած ջրհեղեղից (Օվիդիոս, «Կերպարանափոխություններ», I): Դևկալիոնի և Պիրրայի նետած քարերից գոյացավ մարդկանց նոր սերունդը (նույն տեղում): Նրանց որդու՝ Գելլեոսի անունով կոչվեց հելլենների նոր ցեղը, որը հաջորդեց Փորոնևսի և նրա թոռան՝ Պելասգոսի սերնդին՝ պելասգներին: Տե՛ս նաև Թուկիդիդես (I 2, 3): – 103

²² Պլուտարքոսը հաղորդում է («Սոլոն», XVI), որ Գելիոսպոլիսում Սոլոնը զրուցել է Պսենոֆիսի, իսկ Սախսում՝ Սոքիոսի, «ամենաուսյալ քրմերի» հետ: «Տիմեոսի» գրաբարյան թարգմանության մեջ (նշվ. հրատ., էջ 83) կա ծանոթագրություն, ըստ որի քրմի անունն է Պատենիթ: Ամենայն հավանականությամբ,

այստեղ թյուրիմացաբար միացել են Պաշտօնեայ և Նեիդայ բաների առանձին միավորները: – 103

²³ Ապագայուն մարդկությանը սպասող արհավիրքների և աղետների մասին Պատոնը խոսում է նաև «Օրենքներում» (III 676a–677b): – 104

²⁴ Բելիոսի և Կլիմենեի որդի Ֆաեթոնի պատմությունը տե՛ս Օվիդիոսի «Կերպարանափոխություններում» (II 1–328): – 104

²⁵ Նկատի ունի Աթենային: – 105

²⁶ Հիզինոսի հաղորդմամբ Ատտիկայի բնակիչները ծագում են Բեփեստոսի սերմից, որ պատահաբար ընկել է հողի (Գեայի) մեջ, երբ Բեփեստոսը ցանկանում էր տիրանալ Աթենային: – 105

²⁷ Դարձյալ նկատի ունի Աթենային: – 106

²⁸ Գերակյան սյուներ – Գիբրալթար: – 107

²⁹ Ատլանտիս – այս խորհրդավոր երկրի մասին հիմնական տեղեկությունների աղբյուր են Պատոնի երկու տրամախոսությունները՝ «Տիմոսը» և «Կրիտիասը» (108e): Հարուստ և ծաղկող այդ պետության կործանումը կապված է երկրաբանական հզոր աղետի հետ: Արդեն անտիկ շրջանում եղել են հեղինակներ, որոնք կասկածի տակ են առել Ատլանտիսի մասին ավանդության ճշմարտացիությունը (Ստրաբոն): Պատոնականները և նեոպատոնականները հիմնականում ընդունել են «Տիմոսում» առկա տեղեկությունները՝ տեսնելով այստեղ խորհրդանշականփիլիսոփայական իմաստ:

Պլինիոս Ավագը «Բնական պատմության» մեջ (II 92) խոսելով Ատլանտիսի «հսկայական տարածքների» մասին՝ նույնպես վկայակոչում է Պատոնին:

Պրոկլոսը միանգամայն ճշմարիտ էր համարում ոմն Մարկելլուսի հաղորդումը մեծ կղզու մասին, որ մի ժամանակ գոյություն է ունեցել Ատլանտիկայում և նվիրված էր Պոսեյդոն աստծուն: – 107

³⁰ Տիրենիա կամ Էտրուրիա – մարզ միջին Իտալիայում, Տիրենյան ծովի հարևանությամբ: – 107

³¹ Հերակլյան սյուներից այն կողմ տիղմի մեծ զանգվածի մասին են խոսում նաև Արիստոտելը «Մետեորոլոգիայում» (I 354a 22) և Թեոֆրաստեսը «Բույսերի պատմության» մեջ (IV 6, 4): – 107

³² Նկատի ունի «Պետության» մեջ շարադրված գաղափարները: – 108

³³ Հունարեն արարիչ (*ποιητής*) բառը ի սկզբանե նշանակել է *անող, կատարող*, ըստ այդմ այն համարժեք է դեմիուրգոսին, այսինքն՝ վարպետին, արհեստավորին: Արարիչ եբրայական իմաստով, որպես արարող ոչնչից, հունական տիեզերաբանությունը չի ճանաչում: Այս հակադրությունը լավագույնս ցույց է տալիս, թե որքան օտար է սեմական աշխարհընկալման համար բնությունը և դրա ճանաչողության հարցը և, մյուս կողմից, որքան էական է այն հունական աշխարհընկալման համար: – 111

³⁴ *Գոյը* ունի հաստատունի հատկանիշներ, *գոյացումը*՝ փոփոխականի հատկություններ: Այս հակադրությունը Պլատոնը տարածում է *ճշմարտության* և *հավատի* հարաբերության վրա: – 111

³⁵ Աշխարհների բազմակիությանը հավատում էին Անաքսիմանդորոսը, Անաքսիմենեսը, Քսենոփանեսը, Արքելաոսը, Լևկիպպոսը և Դեմոկրիտոսը, աշխարհի միակությանը՝ Թալեսը, Պյութագորասը, Պարմենիդեսը, Էմպեդոկլեսը և Անաքսագորասը: Պյուրալիզմի կողմնակիցներ էին հատկապես ատոմիստները: Չնայած վերջիններիս հետ այսպիսի սկզբունքային անհամաձայնությանը, Պլատոնն այդուհանդերձ տիեզերաշինության շատ հարցերում հետևում է Դեմոկրիտոսի տրամաբանությանը: Այդպես է կարծում Ու. ֆոն Վիլամովից-Մյուլլենդորֆը: Վ. Վինդելբանդն ընդհակառակը՝ կարծում է, որ «Տիմեոսում» զարգացված գաղափարները Արիստոտելի միջոցով երկու հազար տարով հաղթանակ տոնեցին աշխարհի մեխանիկական բացատրության նկատմամբ (W. Windelband, Platon, Stuttgart, 1901, S. 115): Աշխարհների բազմակիությունը Դեմոկրիտոսի դեպքում պայմանավորված է քաոսիկ էներգիայի առկայությամբ: Պլատոնի

աշխարհակարգը նպատակահարմար ու օրգանական է (ոչ մեխանիկական): – 113

³⁶ Տարրերի փոխհարաբերություններն այսպերպ պայմանավորված են ոչ միայն դիալեկտիկորեն և վախճանաբանորեն, այլև երկրաչափորեն: – 114

³⁷ *Գունդը* անտիկ փիլիսոփաներից շատերի համոզմամբ ամենակատարյալ մարմինն է: Քսենոփանեսը համարում է, որ աստվածությունը գնդաձև է (A 1), իսկ Դեմոկրիտոսը՝ որ աստված խելք է գնդաձև հրի մեջ (A 74): Անաքսիմանդոսը գնդաձև է համարում երկիրը (A 1), իսկ պյութագորականները՝ տիեզերքը (B 1a): Գնդաձև է նաև մարդու գանգը, քանի որ պիտի պաշտպանի մարդու մեջ ամենից շատ կատարյալին ձգտող նյութական սկիզբը՝ ուղեղը: Մետաֆիզիկական դիմագիտության նախահայր Լաֆատերը գրում է. «...մեր գանգատուփը կորանում է, ինչպես երկինքը մեր գլխավերևում, որպեսզի նրանում կարողանա ամփոփվել հավիտենական ոլորտների մաքուր պատկերը» (մեջբերումն ըստ՝ U. von Wilamowitz-Moellendorff, Platon, Berlin–Frankfurt am Main, 1948, S. 483): – 115

³⁸ *Ինքնաբավ տիեզերքի* գաղափարը Պլատոնը փոխառել է պյութագորականներից: Հենց պյութագորականները շրջանառության մեջ դրեցին ուսմունքը կենդանի ինքնաբավ տիեզերքի մասին, որը բաղկացած է հրից, ջրից, հողից և օդից: Տե՛ս նաև «Պոլիտիկոս» (274a): «Ֆիլեբոսում» (20d) գերագույն բարիքն օժտված է երկու հիմնական որակներով՝ կատարելությամբ և ինքնաբավությամբ: Պլոտինոսի և նեոպլատոնական ավանդույթի համար ինքնաբավության հատկանիշը աստվածային գոյության արտահայտությունն է: – 115

³⁹ Տիեզերքի *հոգին* գտնվում է նրա կենտրոնում, գրեթե այնտեղ, որտեղ Ֆիլոլոսը տեղադրում էր Հեստիային՝ աշխարհի օջախը (տե՛ս նաև «Ֆիլեբոսի» 20-րդ ծանոթագրությունը): Ֆունկցիան, որն իր վրա է վերցնում Համայնի այս հոգին, «Ֆիլեբոսում» (25a) ստանձնում է սահմանը, որը ամեն կարգ ու չափի հիմքն է: Պլոտինոսը գրում է «Էննետադներում». «Եվ

Հոգու իմաստուն առաջնորդությամբ երկինքն սկսում է շարժվել հավերժական ընթացքով՝ վերածվելով երջանիկ էակի» (Պլոտինոս, նշվ. հրատ., էջ 35): – 116

⁴⁰ Հոգին ստեղծվում է հավիտենական և ժամանակային էություններից: Երկու այդ էությունները միանում են երրորդի շնորհիվ, իսկ խառնուրդի պատճառն է դեմիուրգոսը: Երեք հիմնական բաղադրիչների ընտրությունը նախորոշված է «Սոփեստուն» (244a–245a), որտեղ խոսվում է գոյության հիմնական սեռերի մասին: – 116

⁴¹ Յոթ թվերը կարելի է ներկայացնել երկու գծով՝ ցույց տալու համար այն շարքերը, որոնց մասին պատրաստվում է խոսել Տիմոնը:

	1	
	(Առաջին)	
	—	—
	2	3
	(Երկրորդ)	(Երրորդ)
	—	—
	4	9
	(Չորրորդ)	(Հինգերորդ)
	—	—
	8	27
	(Վեցերորդ)	(Յոթերորդ)

Ձախ կողմում կրկնակի արանքներն են (քառակուսիները), աջ կողմում՝ եռակիները (խորանարդները): – 117

⁴² Թվերի նշված հաջորդականությունը՝ 1, 3, 9, 27 և 2, 4, 8, ունեն զուտ մարմնավոր իմաստ, քանի որ Պլատոնը կարծում է, թե 1-ը բացարձակ անբաժանելի միասնություն է, 3-ը քառակուսու կողմն է, 9-ը քառակուսու մակերեսն է, 27-ը՝ խորանարդի ծավալը, որի միստը հավասար է 3-ի: Այսպես, թվերի տվյալ հաջորդականությունը արտահայտում է ֆիզիկականի և երկրաչափականի նույնականությունը: Բայց քանի որ տիեզերքը՝ միայն հաստատուն և որոշակի գոյ չէ, բովանդակվում է նաև այլի, անորոշի և հարահոսի կայացումը, որը նույնպես

Տիմեոս

արտահայտելի է թվերով՝ 2, 4, 8, և զուգակցվում է այն թվերի հետ, որոնք արտահայտում են որոշակիություն: Այսկերպ տիեզերքն ամբողջությամբ կազմում է հետևյալ շարքը՝ 1, 2, 3, 4, 8, 9, 27, որտեղ համատեղված մեկը և ուրիշը, նույնակամությունը և տարբերությունը, ընդհատությունը և անընդհատությունը, որոնք կազմում են տիեզերքի եռաչափ մարմինը: Սա է, ըստ Պլատոնի, տիեզերական բոլոր ոլորտների կառուցվածքը: Կենտրոնում երկիրն է, հետևաբար 1-ը Լուսնի՝ երկրին ամենամոտ ոլորտն է, 2-ը Արեգակի ոլորտն է, 3-ը՝ Վեներայի ոլորտը, 4-ը՝ Մերկուրիուսի ոլորտը, 8-ը՝ Մարսի ոլորտը, 9-ը՝ Յուպիտերի ոլորտը, իսկ 27-ը՝ Սատուռնի ոլորտը: Տիեզերական այս յոթնամղամի թվերի միջև կան օրինաչափություններ, որոնք արտահայտելի են դրանց արանքները լրացնող թվերով: Բոլոր $\frac{4}{3}$ արանքները Տիմեոսը լրացնում է $\frac{9}{8}$ արանքներով: Յուրաքանչյուր $\frac{4}{3}$ արանքում տեղ կա երկու $\frac{8}{9}$ արանքների համար: Սակայն միշտ մնում է կենտ կոտորակ, որն արտահայտվում է $\frac{256}{243}$ հարաբերությամբ: Այսպես օրինակ՝ 1-ի և $1\frac{1}{3}$ -ի միջև, որը $\frac{4}{3}$ արանքն է, մա ներմուծում է $\frac{9}{8}$, $\frac{81}{64}$, այնպես որ դա ստանում է այսպիսի տեսք.

$$1 \cdot \frac{9}{8} \cdot \frac{81}{64} \cdot \frac{4}{3}:$$

Այստեղ առաջինի ու երկրորդի և երկրորդի ու երրորդի միջև արանքը $\frac{9}{8}$ է, իսկ վերջին երկուսի միջև՝ $\frac{256}{243}$: Սա տեղի է ունենում ամեն անգամ, երբ հանդիպում է $\frac{4}{3}$ արանքը: Այսկերպ լրացնելով քառակուսի արանքների շարքերի արանքները՝ ստանում ենք նոր շարքեր, որոնք ունեն քսաներկու անդամներ և հետևաբար քսանմեկ արանքներ: Այդ արանքները կազմում են հետևյալ հաջորդականությունը.

$$\frac{9}{8}, \frac{9}{8}, \frac{256}{243}, \frac{9}{8}, \frac{9}{8}, \frac{9}{8}, \frac{256}{243},$$


և այս ամբողջը երեք անգամ:

Տիմեոսը չի ասում, թե ինչպես պիտի լրացվեն խորանարդ արանքների շարքերը: Սակայն կարելի է տեսնել, որ քառակու-

սի արանքները և խորանարդ արանքները իրականում մեկ շարք են: Օրինաչափությունները, որ գործում են տիեզերական յոթնանդամի թվերի միջև, արտահայտվում են թվաբանական (1, $1\frac{1}{2}$, 2) և ներդաշնակ (1, $1\frac{1}{3}$, 2) օրինաչափություններով: Խորանարդ արանքների շարքում գոյություն ունի միայն մեկ անդամ ($\frac{9}{2}$), որը հնարավոր չէ գտնել քառակուսի շարքերում:

Նշված օրինաչափությունները համապատասխանում են երաժշտական տոների հարաբերակցությանը, և հետևաբար պլատոնյան տիեզերքի հիմքում երաժշտական ներդաշնակության սկզբունքն է: – 117

⁴³ Թե ինչպես են միանում իրար թվարկված հատվածները, կարելի է պատկերել հետևյալ կերպ.



Տեղը, որով դրանք անցնում են միմյանց երկայնքով, ուղղահայաց օղակի ներսի կողմն է և նշված է կետով: Տեղը, որտեղ յուրաքանչյուր հատվածի ծայրերը միացել են իրենք իրենց և միմյանց, հորիզոնական օղակի մոտակա կողմն է և նշված է գծիկով: Արտաքին օղակը, ինչպես ասում է Տիմեոսը, Նույնի շրջապտույտն է, իսկ Ներքին օղակը՝ Ուրիշի շրջապտույտը: – 117

⁴⁴ Ներքին օղակը այժմ շրջվում է այնպես, որ թեք անկյուն է կազմում արտաքին օղակի հետ, որը հորիզոնական դիրքում է: Նույնի շրջապտույտը այսկերպ ներկայացնում է երկնային հասարակածը, որը հորիզոնական դիրքով շարժվում է դեպի աջ (Արևելքից Արևմուտք), իսկ Ուրիշի շրջապտույտը՝ արեգակնածիրը, որը շարժվում է հակառակ ուղղությամբ (Արևմուտքից Արևելք) կազմելով հասարակածի հետ թեք անկյուն: Արեգակնածիրը Տիմեոսը բաժանում է յոթի՝ ներկայացնելու համար յոթ մոլորակները: – 117

⁴⁵ Այսինքն՝ 2, 3, 4, 8, 9, 27: – 117

⁴⁶ Այսինքն՝ երկակիներից 2, 4, 8 և եռակիներից 3, 9, 27:
– 117

⁴⁷ Երեք շրջաններն իրագործում են Արեգակը, Վեներան և Մերկուրիուսը, իսկ չորս շրջանները՝ Լուսինը, Մարսը, Յուպիտերը և Սատուռնը: Երկնային ոլորտների շարժումը անհավասարաչափ է: Պլատոնը նշում է (38d), որ փոքր ոլորտներում շարժումն ավելի արագ է: Ընդ որում Արեգակը, Վեներան («Լուսաստղը») և Մերկուրիուսը («Չերմեսի աստղը») օժտված են միևնույն շարժումով: – 117

⁴⁸ Տիեզերական հոգու կառույցը պայմանավորված է թվաբանական և երաժշտական օրինաչափություններով: Հմնտ. «Ֆեդոն» (85e–86b), որտեղ հոգին համեմատվում է լարած գործիքի հետ:
– 118

⁴⁹ «Անխոս ու անծայն» սկզբնավորվող և ապա արտաբերվող խոսքի մասին այս դրույթը հիմք դարձավ «իմմանենտ խոսքի» (**λόγος ενδιάθετος**) և «արտաբերված խոսքի» (**λόγος προφορικός**) մասին ստոիկյան ուսմունքի համար, օրինակ՝ Քրիսիպպոսի մոտ (SVF II, 135, 223, Arn.): – 118

⁵⁰ *Ժամանակի և հավիտենականության* նշված բնորոշումը պլատոնիզմի առանցքային գոյաբանական կետերից է, որն ընդհանուր է գրեթե բոլոր իդեալիստական համակարգերի համար: Ինչպես ցանկացած պատճեն (սիմուլյակր), այս մեկը՝ ժամանակը, նույնպես հաղորդակից է իր նախատիպին՝ հավիտենականությանը, միայն մասնակիորեն: Հենց այս մասնակիությունից էլ գոյանում են ժամանակի երեք չափումները՝ անցյալը, ներկան և ապագան: Ժամանակի համար հենց սրանք են էական, և հավանաբար դրա մասին մտորումներն են ներշնչել «Ֆեդոնի» ամենախոր հատվածները: Այս տեսության կարևորագույն առանձնահատկություններից է այն, որ «ունի՞ արդյոք աշխարհը սկիզբ ժամանակի մեջ» հարցը Պլատոնի համակարգում անիմաստ է: Տե՛ս նաև Ս. Ստեփանյան, *Ժամանակի երկու ընթերցում*. **ԿՅՐԻՍ** և **մյդոսո՛նդ**, Ե., 2009, էջ 53–55 և 127–129: – 119

⁵¹ Հեսիոդոսի «Թեոգոնիայում» Գիշերը ծնվում է Քաոսից և Խավարից ծնվում է Ցերեկը: – 119

⁵² Մոլորակների անունների մասին Պլատոնը խոսում է նաև «Էպինոմիսում» (987b–d): – 120

⁵³ Ուրիշի և Նույնականի շարժումների մասին տե՛ս 43-րդ ծանոթագրությունը: – 120

⁵⁴ Տե՛ս 51-րդ ծանոթագրությունը: – 121

⁵⁵ Մեծ համաշխարհային տարին ամփոփվում է, երբ բոլոր մոլորակները միաժամանակ վերադառնում են իրենց մեկնակետին: Դրա տևողությունը հաշվվում է տարբեր կերպ: Պլատոնը վերագրում է դրան 36 000 տարվա տևողություն (տե՛ս «Պետություն», 546b և հաջ.): – 121

⁵⁶ Նկատի ունի աստղերը: – 122

⁵⁷ Աստվածային սեռին են պատկանում աստղերը և նրանց ոլորտները: «Տիմեոսում» աստղերը բաղադրված են հրից: Մինչդեռ ըստ Հոմերոսի և Հեսիոդոսի նրանք բնակվում են եթերի (հրե նրբագույն նյութի) մեջ: Զուտ հրից Պլատոնը ստեղծում է բարձրագույն աստվածներին, իսկ եթերից՝ տեսանելի էակներին: – 122

⁵⁸ Այսինքն՝ Նույնականի բարձրագույն ոլորտի մեջ (տե՛ս **Փրօնդիսիզ**-ի (բանականության) ստուգաբանությունը **Փորά** (շարժում) հիմքից «Կրատիլոսում») (402b): – 122

⁵⁹ Ակնհայտ է հեզնանքը: Հմմտ. «Կրատիլոս» (402b) և «Ֆիլեբոս» (66c): – 123

⁶⁰ Հմմտ. Հեսիոդոսի «Թեոգոնիայի» հետ (126–138 և 237, և հաջ.): – 123

⁶¹ Նկատի ունի օդում, ջրում և ցամաքում բնակվողներին: – 123

⁶² Հմմտ. «Օրենքներ» (899a): – 124

⁶³ Հմմտ. 90e: – 125

⁶⁴ *Հոգիների սփռումը* – հունական տարածված դիցույթ է. օրինակ, սպարտերի ծագումը վիշապի սփռված ատամներից (Paus., IX 10, 1; Apollod., III 4, 3–5): – 125

⁶⁵ Մահկանացու էակը ստեղծված է տիեզերական մարմնի նմանությամբ, սակայն մահկանացու սկիզբը խոչնդոտում է դրաներդաշնակ և բանական շարժմանը: Դեմիուրգոսը, ստեղծելով մարդու անմահ հատվածը, մի կողմ է քաշվում է և մահկանացու հատվածի արարումը թողնում է արարված աստվածներին: Սրանք մնում են անանուն և անբնութագիր: – 126

⁶⁶ **Αἴσθησις** (զգայություն) բառը տվյալ դեպքում ստուգաբանվում է **αἴσσω** (մղվել) հիմքից: – 126

⁶⁷ *Չաղես* – մեռյալների թագավորություն: – 127

⁶⁸ Տեսողությունը բացատրվում է «նմանը ճանաչվում է նմանով» սկզբունքով (այդպես էր մտածում նաև Էմպեդոկլեսը): – 128

⁶⁹ Նկատի ունի Անաքսագորասին և ատոմիստներին: – 130

⁷⁰ Հմմտ. «Ֆիլեբոս» (16c): – 130

⁷¹ Սա Եվրիպիդեսի «Փյունիկուհիների» 1762 տողի խաղարկումն է: – 131

⁷² Կրթության պրոցեսում երաժշտության կարևորության մասին տե՛ս նաև «Պետություն» (401b), «Օրենքներ» (666d) և «Տիմեոս» (80b): – 131

⁷³ Տվյալ դրվագում Պլատոնը խաղարկում է **στοιχεῖα** բառի երկու իմաստները՝ *տարրեր* և *տառեր*: – 132

⁷⁴ Հմմտ. Հերակլիտոսի հետևյալ ասույթի հետ. «Հուրը ապրում է երկրի մահով, օդը՝ հրի մահով, ջուրը՝ օդի մահով, իսկ երկիրը՝ ջրի մահով» (B 76): – 133

⁷⁵ Եռանկյունին դեռևս նախասոկրատյան փիլիսոփայության մեջ համարվել է ձևակազմիչ մարմին: – 134


⁷⁶ *Պահի* մասին, երբ Մեկը փոխվում է Ուրիշի, տե՛ս «Պարմենիդես» (152c–153a և 156c) և այդ տրամախոսության 15-րդ և 17-րդ ծանոթագրությունները (Պլատոն, նշվ. հրատ., հատոր II): – 134

⁷⁷ *Խելքի* և *ճշմարիտ կարծիքի* մասին տե՛ս «Թեետետոս» տրամախոսությունը (նշվ. հրատ., հատոր II): – 136

⁷⁸ Այսինքն՝ ուղղանկյուն հավասարասրուն եռանկյունին և ոչ

հավասարակողմ եռանկյունին: Բոլոր մյուս եռանկյունիները կարող են կառուցվել սրանցով: – 138

⁷⁹ Այսինքն՝ հավասարակողմ եռանկյունու կեսը: Այսպես, եթե մենք ունենք ABC հավասարակողմ եռանկյունի, որը զագաթից հատված է AD գծով, այն բաժանվում է հավասար եռանկյունների՝ ADB և ADC:




– 139

⁸⁰ ABC հավասարակողմ եռանկյունու դեպքում $AB = 2BD$ և $(AB)^2 + (AD)^2$, հետևաբար $4(BD)^2 = (BD)^2 + (AD)^2$ և $3(BD)^2 = (AD)^2$:

– 140

⁸¹



Հավասարակողմ եռանկյունին (ABC) բաժանված է վեց ոչ հավասարակողմ եռանկյունիների՝ միացնելով A, B, C կետերը հակադիր կողմերին (D, E, F): Ներքնաձիգը յուրաքանչյուր այդպիսի եռանկյունու դեպքում ամենակարճ կողմի քառակուսին է (օրինակ՝ $AD = 2FO$): FAO անկյունը հավասար է ուղիղ անկյան մեկ երրորդին, իսկ FOA անկյունը՝ ուղիղ անկյան երկու երրորդին: «Երեք հարթ անկյուններից» յուրաքանչյուրը կազմում է 60 աստիճան, միասին՝ 180 աստիճան: – 140

⁸² Տետրահեդրոն կամ բուրգ (հրի ֆիգուրը): – 141

⁸³ Օկտահեդրոն (օղի ֆիգուրը): – 141

⁸⁴ Իկոսահեդրոն (ջրի ֆիգուրը): – 141

⁸⁵ Խորանարդ, որը կազմված է 6×4 ուղղանկյուն հավասարակողմ եռանկյուններից (երկրի ֆիգուրը): – 141

⁸⁶ Դոդեկահեդրոն: Թե ինչպես աստված օգտագործեց սա

Համայնը զարդարելու համար, մութ է մնում: Այստեղ հնարավոր է աղերսը կենդանակերպի տասներկու նշանների հետ: – 141

⁸⁷ ἄπειρος (անսահման) բառը տվյալ դեպքում արտահայտում է իր հակառակ իմաստը (սահմանափակ), քանի որ իր մեջ կրում է նաև իր երկրորդ իմաստը (անփորձ): – 141

⁸⁸ Տե՛ս վերը՝ 57c–d: – 144

⁸⁹ Մասնավորապես մետաղները, քանի որ հալչող են, դասվում են ջրին: – 145

⁹⁰ Ադամաս (բառացիորեն՝ անհաղթ) անտիկ շրջանում կոչել են կարծր մետաղները և երկաթը՝ գուցե պլատինիումը: Ռիտտերը կարծում է, որ խոսքը պողպատի մասին է (C. Ritter, Platons Dialoge, Stuttgart, 1903, S. 122):

Ադամաս անունը հունական (հատկապես պլատոնյան) շատ ուրիշ անունների թվում փոխառել է գերմանացի բանաստեղծ Ֆրիդրիխ Յյոլդեռլինը իր «Հիպերիոն» վեպի հերոսին անվանելու համար: Յյոլդեռլինյան Ադամասը գլխավոր հերոսի՝ Հիպերիոնի փիլիսոփայության ուսուցիչն է: – 146

⁹¹ Պլատոնը հավանաբար նկատի ունի բազալտը: – 148

⁹² Հոմերոսը «Իլիականում» աղը կոչում է «աստվածային» (IX 214): – 148

⁹³ Հավանաբար ակնարկում է Դեմոկրիտոսին: – 150

⁹⁴ Հետևաբար «վերև» և «ներքև» հասկացությունները լիովին հարաբերական են: – 151

⁹⁵ Տե՛ս «Պետություն» (583c) և «Ֆիլեբոս» (31d և 45b): – 153

⁹⁶ Նյարդերի ֆունկցիան այստեղ վերագրվում է երակներին: – 154

⁹⁷ Հոգու մահկանացու մասի զուգորդումը *գազանի* հետ հմմտ. հոգու՝ որպես «խայտաբղետ և բազմազուլիս գազանի» զուգորդության հետ («Պետություն», IX 588b–d): – 161

⁹⁸ Որ լյարդը հույների համոզմամբ կապված է գուշակության հետ, ապացուցում է Պրոմեթևսի (գուշակի) դիցույթը. տիտանին պատժելու համար (իբրև գուշակ՝ սա գիտեր Ջևսին գահընկեց

անելիք նոր աստվածության անունը և չէր ցանկանում այն հայտնել աստվածների հորը) Ջեսը պատվիրում է իր արծվին անվերջ հոշոտել ժայռին գամված տիտանի լյարդը: Տե՛ս Էսքիլոսի «Պրոմեթևսը շղթայված» ողբերգությունը:

Պլատոնյան թեզը որոշակի կապ ունի նաև զոհաբերությամբ կատարվող գուշակությունների ավանդույթի հետ: Ջոհաբերված կենդանու փորոտիքի (հատկապես լյարդի) օգնությամբ գուշակում էին ապագան: Լյարդի հետ է ամենայն հավանականությամբ կապված ուսմունքը բնավորության չորս տիպերի մասին, որոնք պայմանավորված են լյարդի մեջ արտադրվող լեղիի (խոլերիկ), մաղձի (մելանխոլիկ), լորձի (ֆլեգմատիկ) և արյան (սանգվինիկ) գերակշռությամբ (տե՛ս A. Gastiglioni, A History of Medicine, 1958, pp. 144–146): Հատկանշական է, որ լյարդին վերագրվում են հոգեկան ֆունկցիաներ: – 162

⁹⁹ Ներշնչանքի և աստվածային համակվածության (մոլեզնության) մասին է Պլատոնի «Իոն» տրամախոսությունը: – 162

¹⁰⁰ Հմմտ. Դելփիքի տաճարին գրված պատգամը՝ «Ծանիր զքեզ»: – 162

¹⁰¹ Նկատի ունի գլխի և կրծքավանդակի ոսկորները: – 165

¹⁰² Ձայների արագության և բարձրության փոխհարաբերությանը անդրադառնում է Արիստոտելը իր «Կենդանիների ծագման մասին» տրակտատում (V 7): – 172

¹⁰³ *Հերակլյան քար* – մագնիս: Տե՛ս նաև «Իոն», 15-րդ ծանոթագրություն: – 172

¹⁰⁴ Նկատի ունի ջղաձգությունն ու ջղակծկումը: – 178

¹⁰⁵ Նկատի ունի ընկնավորությունը: – 178

¹⁰⁶ Հեսիոդոսը «Աշխատանք և օրեր» պոեմում հաղորդում է, որ մահանալուց հետո Ոսկեդարի մարդիկ դարձան «երանելի դեմոններ», որոնք հետևում և պահպանում են մարդկանց (121–124): – 184

ԻՈՆ

ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆ

Սոկրատեսը հանդիպում է հռչակավոր հազներգու Իոն Էփեսոսցուն, որն Աթենք է ժամանել Էպիդավրոսի մրցույթում տարած հաղթանակից հետո: Սոկրատեսը գովաբանում է հազներգուի և Հոմերոսի արվեստները (530a–d):

Սակայն Սոկրատեսը համոզված է, որ իսկական հազներգուն պիտի կարողանա մեկնել բանաստեղծին և լավ հասկանա նրան: Իոնը պնդում է, որ հենց դա է իր արվեստը և դրանով է նա գերազանցում մյուս բոլոր հազներգուներին (530c–d):

Սոկրատեսը կարծիք է հայտնում, որ Իոնը պիտի որ լավ հասկանա ոչ միայն Հոմերոսին, այլև մյուս բանաստեղծներին: Սակայն Իոնն իր ասելով լավ է հասկանում միայն Հոմերոսին (531c–532c):

Սոկրատեսը եզրակացնում է, որ Իոնը գիտի Հոմերոսին ոչ վարժանքի և իմացության շնորհիվ: Պոետները ստեղծում են աստվածային ուժով, ներշնչանքով կամ սահմանմամբ: Դա լավագույնս երևում է աննշան պոետների օրինակի վրա, որոնք կյանքում գրել են միայն մեկ լավ բանաստեղծություն, և դա էլ հավանաբար աստծո կամ մուսայի ներշնչանքով: Իոնը զարմանում է, որ Սոկրատեսի կարծիքով ինքը որպես հազներգու աստվածային ներշնչանքից բացի ուրիշ ոչնչից չի օգտվում (532c–536d):

Սոկրատեսը նշում է, որ Հոմերոսը պոետներում ներկայացնում է տարբեր արվեստներ՝ կառապանի, բժշկի, նավավարի և շինարարի, որոնցից յուրաքանչյուրը պահանջում է ուսում և գիտելիք: Իրենց արվեստում կառապանը, բժիշկը, ձկնորսն ու

գուշակը ավելի իմաստուն են Հոմերոսից և մանավանդ նրա հազներգուից: Հետևաբար հազներգուն այդ արվեստներից ոչինչ չի հասկանում, չնայած որ ներշնչանքով գովերգում է դրանք (537a–539e):

Շփոթված Իոնը հայտարարում է, որ հասկանում է ոչ թե առանձին արվեստներ, այլ բոլորը: Քանի որ ամեն ինչ իմանալն անհնար է, նա ուղղում է իրեն և ասում, թե կարող է ներկայացնել տարբեր կերպարների բնավորությունները (539e–540c):

Այստեղ էլ, սակայն, նա խոստովանում է, որ հիշյալ կերպարները ավելի լավ են ճանաչում իրենց արվեստները, քան ինքը: Ի վերջո պնդում է, թե հասկանում է միայն զինվորական արվեստը: Սոկրատեսը վիճարկում է այդ պնդումը՝ ասելով, որ Իոնը երբևէ զորավար չի կարգվել և որ հազներգուն բնավ զորավար չէ (540c–541e):

Վերջապես Սոկրատեսը հաստատում է, որ Իոնի համար ավելի լավ է լինել աստվածային ներշնչանքով օժտված հազներգու, քան Հոմերոսի հմուտ գովերգիչ:

1915.info

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թարգմանությունն արվել է Plato, Statesman. Philebus. Ion (Loeb Classical Library, Volume VIII, Harvard University Press) հին նունարեն/անգլերեն հրատարակությունից: Նկատի են առնվել հետևյալ թարգմանությունները. անգլերեն՝ Ion, նշվ. հրատ., with an English translation by Harold North Fowler, գերմաներեն՝ Platon, Ion, Sämtliche Werke in drei Bänden, Band I, Darmstadt, 2004, Übersetzt von Franz Susemihl, ռուսերեն՝ Платон, Сочинения, том I, Москва, 1970, Ион, перевод Я. М. Боровского:

¹ Էփեսոսցի հազներգու Իոնին պետք չէ շփոթել հայտնի քնարերգու և ողբերգակ Իոն Քիոսցու (Ք.ա. V դար) հետ: Ինչ-

որ իմաստով սա Պլատոնի համար հավաքական կերպար է, այնպես, ինչպես սոփեստը, որը «Կրտսեր Հիպպիասում» մեկնում է Սինոնիդեսի բանաստեղծությունը: – 191

² *Էփեսոս* – Փոքր Ասիայի հունիական քաղաք, որտեղ համաձայն ավանդության ծնվել է Հոմերոսը: Այստեղ մեծ համարում են ունեցող Հոմերոսի երգերը կատարող հագներգուները: – 191

³ *Էպիդավրոս* – քաղաք Արգոլիս գավառում, հայտնի է եղել բժշկության աստծո՝ Ապոլլոնի որդի Ասկլեպիոսի պատվին անցկացվող տոնակատարություններով: Այստեղ է գտնվել Ասկլեպիոսի տաճարը: Տե՛ս նաև «Ֆեդոն», 59-րդ ժանոթագրություն (նշվ. հրատ., հատոր I): – 191

⁴ *Պանաթենականք* – Աթենա դիցուհու պատվին նվիրված տոնակատարություն, որ տեղի է ունեցել Աթենքում չորս տարին մեկ: Գոյություն ուներ նաև «Փոքր Պանաթենականքը», որը նշվում էր յուրաքանչյուր տարվա հուլիսին: – 191

⁵ *Լամպսակոսցի Մետրոդորոս* – չշփոթել Էպիկուրի աշակերտ Մետրոդորոս Լամպսակոսցու հետ: Ապրել է Ք.ա. V դարի առաջին կեսին: Եղել է Անաքսագորասի ընկերը և գրել է Հոմերոսի պոեմների այլաբանական մեկնություններ:

Թասոսցի Ստեսիմբրոտոսին հիշատակում է նաև Քսենոփոնը «Խնջույքում» (III 6): Եղել է հագներգու, Հոմերոսի մեկնիչ և պատմիչ: Կինոնի և Պերիկլեսի ժամանակակիցն է:

Գլավկոն – ամենայն հավանականությամբ սա Հոմերոսի այն մեկնիչն է, որին Արիստոտելը հիշատակում է իր «Պոետիկայում» (25 16): – 192

⁶ *Հոմերիդներ* – հագներգուների ընկերություն, որոնք Հոմերոսի պոեմների լավագույն գիտակներն ու պահպանողներն էին Քիոս կղզում: Համարվում էին «Հոմերոսի որդիներ»: – 192

⁷ *Հեսիոդոս* – «Աշխատանք և օրեր» և «Թեոգոնիա» պոեմների հեղինակը (Ք.ա. VII): – 192

⁸ *Արքիլոքոս* – պարոսցի յամբագիր պոետ (Ք.ա. VI դար): – 192

⁹ Տե՛ս «Տիմեոսի» 67-րդ ծանոթագրությունը: – 193

¹⁰ *Ամբողջը (ճևոն)* պլատոնյան էսթետիկայի կարևորագույն հասկացություններից է: – 195

¹¹ Բանաստեղծների և հագներգուների հետ միևնույն շարքում գտնվող դերասանները պլատոնյան փիլիսոփայական համակարգում նույնպես անհաղորդ են ճշմարտությանը որպես հաստատուն իմացության: Նրանք ևս գործում են ներշնչանքի ազդեցությամբ: Այսպես, բանաստեղծը, դերասանը կամ հագներգուն և հանդիսատեսը գտնվում են ինչ-որ օտար, արտաքին իրողության ազդեցության տակ, որը երբեք չի կարող դառնալ գիտակցության առարկա: Մյուս կողմից, սակայն, այն, ինչ հանդիսատեսը ակնկալում է դերասանից, չի կարող և չպիտի համընկնի նրա հետ, ինչ ակնկալվում է բանասերից կամ փիլիսոփայից: Այս դեպքում Պլատոնի համար թերևս կարևոր է ցույց տալ, որ դա չպիտի ակնկալվի նաև հագներգուից: (Մանրամասն տե՛ս Ս. von Wilamowitz-Moellendorff, Platon, Berlin–Frankfurt am Main, 1948, S. 99): Էքստատիկ ճանաչողությունը Պլատոնի համակարգում մշտապես ստորակա դիրք է զբաղեցնում փիլիսոփայական ճանաչողության նկատմամբ: Պլատոնականության պատմության մեջ այս տեսակետը միշտ չի եղել տիրապետող: Պլոտինոսը համոզված է, որ բարձրագույն ճանաչողությունը կարող է լինել միայն էքստատիկ (Պլոտինոս, նշվ. հրատ., էջ 42): – 195

¹² *Ազլատփոնի որդի Պոլիզոնտոս* – նշանավոր գեղանկարիչ (Ք.ա. V դար): Պատմիչ Պավսանիասը հաղորդում է Դելփիքում գտնվող նրա նկարների մասին, որոնք պատկերում են Իլիոնի կործանումը (X, 25–27) և Ոդիսևսին Հադեսում (X, 28–29): Հայտնի գեղանկարիչ էր նաև նրա եղբայր Արիստոփոնը: Տե՛ս նաև «Գորգիաս» (448c): – 195

¹³ *Մետիոնի որդի Դեդալոս* – դիցաբանական գյուտարար և գեղանկարիչ, Կրետեի լաբիրինթոսի շինարարը: Տե՛ս նաև «Եվթիփոն» (11) և «Մենոն» (97d):

Պանոպևսի որդի Էպեոս – կառուցողը փայտե ձիու, որի

օգնությամբ հույները կարողացան մուտք գործել Տրոյա և ոչնչացնել այն («Ողիսական», VIII 493):

Սամուցի Թեոդորոս – բրոնզի ձուլման վարպետ: Պատրաստել է մատանի Պոլիկրատեսի (Յերոդոտոս, III 41) և գավաթ Կրոսոսի համար, որը համաձայն լեգենդի նվիրված էր Դելփիքի պատգամախոսին (Յերոդոտոս, III 41): – 196

¹⁴ *Օլիմպոս* – դիցաբանական ֆլեյտահար: Տե՛ս «Խնջույք» (215e):

Թամիրաս, կամ Թամիրիս – թրակացի երգիչ, որը մրցեց մուսաների հետ և կուրացվեց նրանց կողմից: Տե՛ս «Իլիական» (II 594 և հաջ.)

Օրփեոս – կիթառի նվագով կարողանում էր դյուքել վայրի կենդանիներին: Փորձելով դուրս բերել մեռյալների թագավորությունից իր կնոջը՝ Էվրիդիկեին, հմայել է անգամ Չադեսին:

Թենիոս – հազներգու Իթակեից, Ողիսևսի պալատական երգիչը, որին արքան խնայեց փեսացուների սպանդի ժամանակ: Տե՛ս «Ողիսական» (I 154, XVII 262 և XXII 230 և 330): – 196

¹⁵ *Մագնեսիական* – այսպես է կոչվում փոքրասիական Մագնեսիա քաղաքի անունով: Մագնեսիայի հարևանությամբ գտնվող Չերակլեա քաղաքը նույնպես հարուստ է եղել մագնիսի հանքերով: **Μαγνητις λίθος** արտահայտությունը հանդիպում է Եվրիպիդեսի «Էնեաս» դրվագում: Այստեղից է քարի երկրորդ՝ «*հերակլյան*» անվանումը: Մագնիսի «հերակլյան քար» անվանումը ստուգաբանվում է նաև Չերակլեսի անվան հիմքով. այստեղ ակնարկվում է հերոսի ուժը: Տե՛ս նաև «Տիմեոս» (80c): Տվյալ հատվածում մագնիսի հետ համեմատությունը ուշագրավ է նրանով, որ ճիշտ այնպես, ինչպես մագնիսը, ձգելով մետաղները, օժտում է դրանք իր ուժով, այնպես էլ բանաստեղծը իր հազներգուին է փոխանցում իր ներշնչանքը: – 196

¹⁶ *Մելոսի պոետներ* – մելոսի, այն է՝ երգային լիրիկայի ստեղծողները (Ալկայոս, Սափո, Անակրեոն, Ալկման, Ստեսիբորոս, Իբիկոս, Պինդարոս, Բակքիլիդես):

Կորիթանոներ – աստվածների Մեծ Մոր (փռյուզիական

դիցուի Կիբելայի կամ կրետական մեծ Յոնայի) քրմերն են, որ հափշտակության մեջ փառաբանում էին նրան ֆլեյտաների և ծնծղաների նվագակցությամբ: Տե՛ս Եվրիպիդեսի «Բաքոսուիկներ» ողբերգությունը, ինչպես նաև Պլատոնի «Կրիտոն» տրամախոսությունը: – 197

¹⁷ Մուսաների այգիներում և պուրակներում, այսինքն՝ Պառնասում և Յելիկոնի հովիտներում (Բեովտիա), որոնք նվիրված էին Ապոլլոնին և Մուսաներին: – 197

¹⁸ Այս համեմատության ակունքը Արիստոփանեսի «Թռչուններ» (750) կատակերգությունն է, որտեղ հեղինակը փառաբանում է վաղ ողբերգակ Փրիմիքսին: Յիմներգու Պինդարոսը ինքն իր մասին հաղորդում է, որ մուսաները մեղուների տեսքով այցելել են իրեն քնած ժամանակ և մեղրով լցրել իր բերանը: Քսենոփոնին քաղցրահունչ գրելաոճի համար կոչել են «ատտիկյան մեղու»: – 197

¹⁹ *Դիթիրամբոս* – հիմն Դիոնիսոսի պատվին: Այդպես են կոչել նաև հենց աստծուն: – 197

²⁰ *Չոն (Ξγκώμιον)* – *Ξγκωμιάζω* բայից, որ նշանակում է փառաբանել: – 197

²¹ *Չիպորքեմ* – երգ, որ ուղեկցվում էր պարով: – 197

²² *Յամբոս* – արտասանվող չափածոյի տարատեսակ, որի դեպքում երկվանկ ոտքի մեջ կարճ վանկին հաջորդում է երկարը: – 197

²³ *Քալկիդացի Տիննիքոս* – պոետ, պեանների հեղինակ: Պեան – հիմն Ապոլլոնի պատվին: – 198

²⁴ Յոմերոս, «Ողիսական», XXII 1–4.

*Մերկանալով իր քուրջերից, Ողիսսը հնարամիտ
Մի ոստյունով կանգնեց շեմքին, ձեռքին բռնած միզակն ամուր
Եվ կապարճը՝ նետերով լի, սլաքները նա դատարկեց
Եվ իր առջևը կիտելով, այսպես դիմեց սեղեխներին:*
(Թարգմ.՝ Ս. Գրքաշարյանի)

և «Իլիական», XXII 131 և հաջ.

Այդպես կանգնած միտք էր անում, մինչ Աքիլլեսը մոտեցավ՝
խրոխտ ու քաջ, որ հավասար էր Էնիալիս կորդակածոճ:

(Թարգմ.՝ Գ. Համբարձումյանի): – 198

²⁵ Թվարկում է Հոմերոսի «Իլիականի» հերոսներին՝ *Անդրո-
մաքեին*՝ Հեկտորի կնոջը, *Հեկուբային*՝ Հեկտորի մորը, և *Պրիա-
մոսին*՝ Տրոյայի արքային և Հեկտորի հորը: – 198

²⁶ *Իթակե* – Ողիսևսի հայրենի կղզին: – 199

²⁷ *Խորևտ* – երգչախմբի անդամ: – 199

²⁸ *Մուսեոս* – դիցաբանական պոետ և գուշակ, Օրփեոսի
աշակերտը: Նրան են վերագրվել «Էվմոլպիա» և «Թեոգոնիա»
պոեմները: Տե՛ս Հերոդոտոսի «Պատմությունը» (VIII 6 և 96),
ինչպես նաև Պլատոնի «Պետությունը» (II 363c): – 200

²⁹ Սոկրատեսը կասկած է հայտնում, որ Իոնը (ինչպես և
ցանկացած ուրիշ հագներգու), քանի որ զբաղվում է Հոմերո-
սով, գիտի ամեն բան և ամեն արվեստ (տե՛ս նաև «Սոկրա-
տեսի պաշտպանականը»): Հագներգուն միայն նմանակում է և
չի դիպչում ճշմարտությանը (տե՛ս նաև «Պետություն», X 598e–
601a): Ընդ որում, եթե սովորական արհեստավորը, ասենք կոշ-
կակարը, իր ստեղծագործության մեջ նմանակում է գաղափար-
ներն ու ստեղծում դրանց առանձին առարկաները, բանա-
ստեղծն ու հագներգուն նմանակում են առարկաները: Ուշա-
գրավ է Պլոտինոսի մերժումը, երբ Ամելիոս Կվինտիլիանոսը,
նկարիչ հրավիրելով, փորձել է հանոզել նրան՝ թույլ տալու
նկարել իրեն. «Քեզ համար քի՞չ է այն վերարտադրությունը,
որի մեջ դրել է ինձ բնությունը, և ցանկանում ես ստեղծել
վերարտադրության վերարտադրություն... ասես դրանում դիտար-
ժան որևէ բան կա» (Porphyr., Vita, I 10): Հմմտ. Գյոթեի հե-
տևյալ դատողության հետ. «Ճշմարիտ միջնորդը արվեստն է:
Արվեստի մասին խոսել նշանակում է ցանկանալ միջնորդել
միջնորդին, և այդուհանդերձ դա շատ օգտակար է» (մեջբե-
րումն ըստ՝ P. Friedländer, Die Platonischen Schriften, Berlin und
Leipzig, 1930, S. 134): – 200

³⁰ «Իլիական» (XXIII 335–340, թարգմ.՝ Գ. Համբարձումյանի):
– 201

³¹ «Իլիական» (XI 638, թարգմ.՝ Գ. Համբարձումյանի):

Մաքառնը Ասկլեպիոսի որդին է և հույների բժիշկը տրոյական արշավանքի ընթացքում:

Պերանսյան գինու մասին ոչինչ հայտնի չէ բացի նրանից, որ սա «թանձր և սննդարար» էր (տե՛ս Արիստոտելի «Աթենական հասարակությունը», 10b): – 203

³² «Իլիական» (XXIV 80–82, թարգմ.՝ Գ. Համբարձումյանի):

Այս հնարքը հիշատակում է նաև Պլուտարքոսը (*De sollertia animal*, 977): – 203

³³ «Ողիսական» (XX 351–357, թարգմ.՝ Ս. Գրքաշարյանի):

Թեոկլիմենոս – Մելամպոսի որդին: Մելամպոսը դիցաբանական զուշակ է, քուրմ, Դիոնիսոսի պաշտամունքի հիմնադիրը Հունաստանում: Առաջին մահկանացուն էր, որ օժտված էր զուշակության շնորհով: – 204

³⁴ «Պարսպամարտ» – այսպես է վերնագրված «Իլիականի» տասներկուերորդ երգը: Մեջբերվում են 201–207 տողերը (թարգմ.՝ Ս. Գրքաշարյանի): – 204

³⁵ *Կիզիկոսցի Ապոլլոդորոս, կլազոմենցի Հերակլիդես, անդրոսցի Փանոսթենես* – աթենական զորավարներ, որոնք ծնունդով Փոքր Ասիայից էին: Աթենացիները նրանց քաղաքացիություն են շնորհել:

Փանոսթենեսը հայտնի է նրանով, որ գերեվարել է թուրիացի ծովակալ Դորիսսին Ք.ա. 407 թ.: Տե՛ս Քսենոփոնի «Հելլենական պատմությունը» (I 5, 18–19): – 207

³⁶ Համաձայն Հերոդոտոսի՝ «Բոլոր հոնիացիները ծագում են Աթենքից...» (I 147): Տվյալ դեպքում էփեսոսին, որպես հոնիական քաղաքի, վերագրվում է աթենական ծագում: – 208

³⁷ *Պրոտես* – ծովային աստված, որը հայտնի է իր կերպարանափոխություններով և զուշակություններով: – 208

³⁸ «Իոնի» առնչությամբ Պաուլ Ֆրիդլենդերը գրում է. «Պլատոնի նպատակը տրամախոսության մեջ Սոկրատեսի և ոմն

Ի ո ն

ամբարտավան հագներգուի հանդիպումը երգիծաբար ներկայաց-
նելը չէ: Այստեղ նա ավելի շուտ որպես մտածող հասկանում է
իր կրկնակի բնությունը և որպես արվեստագետ ներկայացնում
է այն» (նշվ. աշխ., էջ 136): – 208

ԱՆՎԱՆԱՑԱՆԿ

Ազլաոփոն 195
Աթենա 103
Ամասիս 103
Ամինանդր 102, 103
Անդրոնաքե 198
Անտիլոքոս 201
Ապոլլոդորոս 207
Ասկլեպիոս 191
Արքիլոքոս 192, 194
Ափրոդիտե 9
Աքիլլես 198

Գեա 105, 123
Գլավկոն 192
Գորգիաս 79–81

Դեդալոս 196
Դեկալիոն 103
Դիոնիսոս 84
Դրոպիդես 102

Եվրիպիդես 196

Ջեսս 35, 42, 45, 123, 195, 196, 198, 199

Անվանացանկ

Էպեյոս 196

Էրոս 125

Թամիրա 196

Թեմիոս 196

Թեոդորոս 196

Թեոկլիմենոս 204

Թևթ 17

Իոն 191, 193–196, 198–200, 204–208

Կալլիաս 18

Կրիտիաս 97, 100, 101, 109

Կրիտիաս (ավագ) 102, 103, 108

Կրոնոս 123

Ջելիոս 104

Ջեկամեդես 203

Ջեկտոր 198

Ջեկուբա 198

Ջեսիոդոս 103, 192–194

Ջերա 123

Ջերակլիդես 207

Ջերմես 120

Ջերմոկրատես 97, 100, 101, 108

Ջեփեստոս 84, 105

Ջոմերոս 86, 103, 191–197, 200–205, 208

Ջռեա 123

Մելամպոս 204

Մետիոն 196

Մետրոդորոս 192

Մուսեսոս 200

Անվանացանկ

Նեիթ 103

Նեստոր 201, 203

Նիոբե 103

Ոդիսևս 198

Պանոպևս 196

Պատրոկլոս 201

Պիրրա 103

Պոլիզնոտոս 195, 196

Պրիամոս 198

Պրոմեթևս 14

Պրոտարքոս 7–13, 15, 17, 21, 22, 24, 26, 27, 29, 31, 32,
34–36, 42, 45, 47, 48, 54, 56, 59–63, 65, 66, 72, 73,
77, 79, 80, 83, 84, 87, 90, 91

Պրոտևս 208

Սոլոն 102, 103, 105, 107–109

Սոկրատես 7–10, 12–16, 18–20, 22–24, 26, 27, 29, 31–35,
37, 42, 45, 48, 53, 55, 56, 59, 62, 63, 65, 68–71, 74,
75, 77, 79, 82, 84, 86, 88, 89, 91, 92, 94, 97, 100,
101, 108–111, 191–196, 198–200, 202–205, 207, 208

Ստեսիմբրոտոս 192

Տեթիս 123

Տիմոն 97, 100, 101, 109, 112

Տիմոկրոս 198

Ուրանոս 123

Փանոսթենես 207

Փորկիս 123

Փորոնևս 103

Անվանացանկ

Օլիմպոս 196

Օվկիանոս 123

Օրփեոս 92, 196, 200

Ֆաեթոն 104

Ֆիլեբոս 7–9, 13, 14, 16–19, 23, 28, 31, 32, 59, 62, 69,
81, 82, 89, 92, 93

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՖԻԼԵԲՈՍ	5
ՏԻՄԵՈՍ	95
ԻՈՆ	189
Մեկնություններ և ծանոթագրություններ	209
Անվանացանկ	254

Պլատոն

Պ 678 **Երկեր չորս հատորով, Հատոր III /** Հին հուն. թարգմ. և ծանոթագր.՝
Ս. Ստեփանյան. – Եր.: Սարգիս Խաչենց, ՓՐԻՆՏԻՆՖՈ, 2011. – 262 էջ

‘ԻՍԱՑՈՒԹՅՈՒՆ’ ԳՐԱԴԱՐԱՆԸ ներկայացնում է հույն փիլիսոփա Պլատոնի (թ.ա. 428/7–348/7) երկերի ժողովածուի երրորդ հատորը, ուր տեղ են գտել փիլիսոփայի հասուն շրջանի երկու տրամախոսություն՝ «Ֆիլեբոս» և «Տիմեոս», ինչպես նաև վաղ շրջանին վերագրվող «Իոն» տրամախոսությունը:

«Ֆիլեբոսում» Պլատոնը քննում է գաղափարների և մարմնավոր աշխարհի հաղորդակցության հարցը, «Տիմեոսում» տալիս է իր տիեզերաբանությունը: «Իոնը» նվիրված է արվեստի փիլիսոփայության խնդիրներին:

ՀՏԴ 1/14
ԳՄԴ 87

*Հրատ. խմբագիր՝ Սամվել Խաչատրյան
Էջադրում՝ Արա Խաչիկօղլյան, Անժելա Մանուկյան*

Սարգիս Խաչենց հրատարակչություն ՍՊԸ

0010 Երևան, Արամի փ. 1, Ազգային պատկերասրահ
հեռ./ֆաքս. (37410) 56-36-61, e-mail: sargiskhachents@gmail.com

ՓՐԻՆՏԻՆՖՈ ՀՁ ՍՊԸ

0043 Երևան, Շարուրի 37/1
հեռ. (37410) 46-53-80, ֆաքս. (37410) 46-53-84
e-mail: info@printinfo.am
www.printinfo.am

՝ԻՄԱՑՈՒԹՅՈՒՆ՝ ԳՐԱԴԱՐԱՆ

լույս է տեսել՝

1. Վահան Սարգսյան, Ուրարտական քաղաքակրթությունը և բասկերի նախահայրենիքի հարցը, 1998
2. Պիեռ Տեյար դը Շարդեն, Մարդու ֆենոմենը, 1998
3. Ռուդոլֆ Շտայներ, Ազատության փիլիսոփայություն, 1998
4. Պլոտինոս, Էննեադներ, գիրք V, 1999
5. Անրի Ֆոսիյոն, Չևերի կյանքը, Գովք ձեռքին, 1999
6. Իմմանուել Կանտ, Պրոլեգոմեններ ապագա ամեն մետաֆիզիկայի, 2000
7. Գոտֆրիդ Վիլհելմ Լայբնից, Մետաֆիզիկական երկեր, 2001
8. Քսենոփոն, Սոկրատյան երկեր, 2001
9. Անրի Բերգսոն, Բարոյականության և կրոնի երկու աղբյուրները, 2001
10. Պլուտարքոս, Կենսագրություններ, 2001
11. Արամ Թովչյան, Մովսես Խորենացու հունական աղբյուրների խնդիրը, 2001
12. Հենրիկ Հովհաննիսյան, Դերասանի արվեստի բնույթը. էսթետիկական քննություն, 2002
13. Յուրգիս Բալտրուշայտիս, Ուսումնասիրություն վրաց և հայ միջնադարյան արվեստի, 2003
14. Ռուդոլֆ Շտայներ, Թեոսոֆիա, 2003
15. Բլեզ Պասկալ, Մտքեր, 2003
16. Անրի Բերգսոն, Մետաֆիզիկայի ներածություն, Ստեղծարար էվոլյուցիա, 2003
17. Հենրիկ Հովհաննիսյան, Միջնադարյան բեմ, 2004
18. Շառլ Դիլ, Բյուզանդիայի պատմության հիմնախնդիրները, 2005
19. Պլատոն, Երկեր չորս հատորով, Հատոր I, 2006
20. Իմմանուել Կանտ, Չուտ բանականության քննադատություն, 2006
21. Էմիլ Դյուրկհայմ, Սոցիոլոգիական մեթոդի կանոնները, 2006
22. Ռուդոլֆ Շտայներ, Ինչպե՞ս հասնել բարձրագույն աշխարհների ճանաչողության, 2007

23. Ոոբին Ջորջ Քոլլինզվուդ, Արվեստի հիմունքները, 2007
24. Յոհան Գայդինգա, Homo Ludens. Մշակույթի խաղային տարրի սահմանման փորձ, 2007
25. Ունե Ուելլեք, Օսթին Ուորրեն, Գրականության տեսություն, 2008
26. Էռնստ Կասսիրեր, Էսսե մարդու մասին. Մարդկային մշակույթի փիլիսոփայության ներածություն, 2008
27. Ֆերդինանդ դը Սոսյուր, Ընդհանուր լեզվաբանության դասընթաց, 2008
28. Գրիգոր Պըլտեան, Երկխոսութիւն Նարեկացիի հետ, 2008
29. Պլատոն, Երկեր չորս հատորով, Հատոր II, 2009
30. Դենրիկ Էդոյան, Շարժում դեպի հավասարակշռություն, Գոգվածներ, էսսեներ, 2009
31. Գրիգոր Պըլտեան, Հայկական ֆուտուրիզմ, 2009
32. Սերգեյ Ստեփանյան, Ժամանակի երկու ընթերցում, 2009
33. Պլատոն, Երկեր չորս հատորով, Հատոր III, 2011

'ԻՄԱՑՈՒԹՅՈՒՆ' ԳՐԱԴԱՐԱՆ

պատրաստվում է հրատարակության՝

1. Թելման Գևորգյան, Համամասնությունները հայ ճարտարապետության մեջ
2. Սերգեյ Ստեփանյան, Ֆրիդրիխ Յյուդեռլին
3. Գրիգոր Պըլտեան, Կրակե շրջանակը. Դանիել Վարուժանի շուրջ
4. Գրիգոր Պըլտեան, Տարմ
5. Գրիգոր Պըլտեան, Հայկական սիմվոլիզմ
6. Լյուդվիգ Վիտգենշտայն, Տրամաբանա-փիլիսոփայական տրակտատ, Օրագիր 1914–1916
7. Պլատոն, Երկեր չորս հատորով, Հատոր IV
8. Ժակ Լը Գոֆֆ, Միջնադարյան Արևմուտքի քաղաքակրթությունը
8. Մարկ Բլոկ, Պատմության ապոլոգիա
9. Ռուդոլֆ Շտայներ, Գաղտնագիտության ակնարկ
10. Քեննեթ Զլարկ, Քաղաքակրթություն
11. Ալբերտ Այնշտայն, Գաղափարներ և կարծիքներ
12. Ռիչարդ Թառնաս, Արևմտյան մտածողության պատմություն
13. Ժորժ Բաթայ, Ներքին փորձառություն
14. Երվանդ Տեր-Խաչատրյան, Կոստան Ջարյանը և արևմտյան մշակույթը
15. Լասլո Մոհոյ-Նադ, Նոր տեսողություն
16. Մարկուս Ավրելիոս, Խորհրդածություններ
17. Քեննեթ Զլարկ, Բնանկարն արվեստում
18. Գ. Վ. Ֆ. Հեգել, Տրամաբանության գիտություն
19. Սերգեյ Ստեփանյան, Բանաստեղծության ասպեկտները
20. Սերգեյ Ստեփանյան, Խոսքի և լռության մետաֆիզիկա